# ԷՋՄԻԱԾԻՆ



Ը

2002

ԾԸ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Օգոստոս
2002

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՎԱՀԵ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարման Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . . . . . 3

**ՀՈՎԱԿԻՄ ԱԲՂ. ՄԱՆՈՒԿՅԱՆ** - ԱՄՆ եկեղեցիների Ազգային Խորհրդի և Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսի ներկայացուցիչները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . . . . . . . . 13

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Հոգեշնորհ Տ. Շնորհք ծայրագույն վարդապետ Գասպարյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . 19

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Մասիս Եթերյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 21

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Շաքե Եթերյան-Սքեյլըին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . . 23

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին . . . 25

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ Հոգեշնորհ Ֆիլիպ Սթոր Վենթըրին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանին՝ քահանայագործության 40 և Բերիո թեմի առաջնորդական պաշտոնավարության 25-ամյակների առիթով . . . . . . . . . . . 29

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից բարձրագույն կրթական հաստատության կարգավիճակ շնորհելու մասին . . . 31

Հայրապետական գնահատություն . . . . . . . . . . . . . . . . . . 34

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Արկադի Ղուկասյանին՝ ԼՂՀ նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ . . 35

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը նոր ուսումնական տարվա առիթով . . 36

Համաձայնագիր Հայ Առաքելական Եկեղեցու և

ՀՀ Կառավարության միջև . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 37
Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդը և Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերրին իրենց աջակցությունն են հայտնում Ամենայն Հայոց Հայրապետին Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի կալվածքի կապակցությամբ . . . . . . . . . . . . . . . . . 38
Գարեգին Երկրորդի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակված Խորեն աբեղա Հովհաննիսյանը . . . . . 39

**Հանդիսություններ՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակին**

Հանդիսավոր նիստ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի ծննդյան 70-ամյակին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 40
Հանդիսություններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին . . 41
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայում երջանկահիշատակ Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ . . . . . . . . . . . . . . . 45
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսությանը Վեհարանի հանդիսասրահում . . . . . . . . . . . . . . . 47
**ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԷՄԵԱՆ** - Գարեգին Ա. Մեծ Հոգեւորականը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 49
**ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃԵԱՆ** - Բարի յիշենք Հայր Գարեգինը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 52
**ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ** - Հոգևոր Մեծ գործչի գիտամշակութային վաստակը . . . . . . . . . . . . . . . 60
**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ** - Սուրբ Էջմիածինը Գարեգին Ա-ի մտածումներում Ամենայն Հայոց Կաթողիկոսության շրջանում . . 68
**ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ** - Իմաստուն և նվիրյալ Հայրապետը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 73
**ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ** - Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակի առթիվ . . . . . . . . . . . . 76

**ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ**

Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . 79
Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանի քարոզը՝ խոսված

Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 82
Տ. Սահակ աբեղա Շաքարյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում «Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» առիթով . . . . . . 84

**Անցյալի հոգևոր ժառանգությունից**

Անհայտ մի հեղինակի Վերափոխմանը նվիրված ճառը . . . . . . . . . 86

**ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ՄԱՆԵ ՇԻՐԻՆՅԱՆ** - «Ոփխտի մանկունք» և «Մանկունք Եկեղեցւոյ» . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 90
**ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ** - Բառարանագրության հնագույն տեսակը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 111
**ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ** - Գևորգ Սկևռացի մանրանկարիչը . . . . . 117

**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ**

Գարեգին Բ Կաթողիկոսն օրհնեց Մարմաշենի վերանորոգված եկեղեցին . . . . . . . . . . . . . 124
Վեհափառ Հայրապետը «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց Անգլիկան Եկեղեցու ներկայացուցչին . . . . . . . . . . 125
**ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռամբ Վեհափառ Հայրապետի կատարվեց նոր միաբանական մասնաշենքի հողօրհնեքը . . . . . . . . . . 126
**ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - Գյումրիում օծվեց Ս. Հակոբ եկեղեցին . 127
**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ** - «Ս. Էջմիածնի գանձերը» Վիեննայում . . 131

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Գեղարքունյաց թեմի 40 ուսուցիչներ ստացան Հայ Առաքելական Եկեղեցու պատմության և կրոնի դասավանդման վկայականներ . 133
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց «Ճապոնիա-Հայաստան բարեկամություն» միության անդամներին . . . . . . . . . . . . 134

Հանգիստ Արժանապատիվ Տ. Հակոբ ավագ քահանա Կեպենյանի . 135

Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 136
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 138
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . 141
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . 145

ՀՐԱՄԱՆԱւ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 17-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, եռօրյա այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի:

## ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԵՎ ՏՈՒՐԿՈՒԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ
(Համառոտ կենսագրական տվյալներ)

1998 թ. Տուրկուի առաջնորդանիստ եկեղեցու երիցապետ և աստվածաբանության դոկտոր Ջուկկա Պաարման (55 տարեկան հասակում) արքեպիսկոպոսական ընտրությունների ժամանակ ձայների մեծամասնությամբ ընտրվում և նշանակվում է Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս՝ փոխարինելով Հովհաննես Վիկստրոմ արքեպիսկոպոսին: 1999 թ. հունվարի 6-ին տեղի է ունենում նրա գահակալությունը և ձեռնադրվում է որպես Ս. Հենրիի գահի 53-րդ հաջորդը Օլավի Ռիմպիլաինեն եպիսկոպոսի կողմից*:

Ծնվել է 1.12.1942, Լապպեենրանտայում, Օսկար Պաարմայի ընտանիքում: Ջուկկա Պաարման քահանա է ձեռնադրվել Տամպերեի եպիսկոպոս Էլիս Գուլինի կողմից 1967 թ.: 1967-1972 թթ. ծառայել է Լահթիում որպես ծխական քահանա, ապա 1972-1982 թթ. ծառայել է որպես Վալկեկոսկիի առաջնորդի օգնական: 1982-1988 թթ. եղել է Տուրկուի թեմական խորհրդի փոխ-նախագահը: 1982-1999 թթ. եղել է Տուրկուի Մայր Տաճարի պեստւչը:

Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարման Եկեղեցական Սինոդի կողմից նշանակվել է մի քանի կազմակերպությունների անդամ, ինչպես նաև՝ անդամ Եկեղեցու Խորհրդի և Եպիսկոպոսների Խորհրդի: Նա եղել է Ֆինն Եկեղեցական Օգնության Հոգաբարձուների Խորհրդի անդամ՝ 1984-1997 թթ, Ֆիննական Կիրակնօրյա Դպրոցների Ընկերության անդամ՝ 1989 -1996, Ֆինն Եկեղեցու Տան Առաքելութ-

---

* Հարկ է նշել, որ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցին Ռեֆորմացիայի շրջանին պատկանող այն եզակի Եկեղեցին է, որն ամբողջությամբ պահպանել է առաքելական հաջորդականությունը, հետևաբար նրա պետն իր լիազորություններով համարվում է առաքելական Աթոռի ժառանգորդ: Տես՝ The Church in Finland, Մատտու Սինեմակի, Հելսինկի, 1973, էջ 12:

յան Ասոցիացիայի անդամ՝ 1995-1999, և 1991-1997՝ Ֆինն Եկեղեցու Փոքր Գործերի ասոցիացիայի անդամ:

1986 թվականից սկսած Եկեղեցական Սինոդի անդամ է: 1980 թվականին նրան շնորհվել է աստվածաբանության դոկտորի կոչում եկեղեցական պատմության բնագավառում: Նրա թեզն է «1554 և 1604 թվականների թեմական ադմինիստրացիան Ֆինլանդիայում»:

Ջուկկա Պաարման ամուսնացած է: Նրա կինը՝ Պիրջո Պաարման, աստվածաբանության մագիստրոս է, ունի երկու դուստրեր՝ Հաննա-Կաիսան և Լաուրան, և մեկ թոռ:

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի պատվիրակության կազմում ընդգրկված էին Հայր դր. Ռիստո Կանտելը՝ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու Միջազգային կապերի տնօրենը, Արքեպիսկոպոսի քարտուղար Հեկկի Ցասկելիայնեն և Արքեպիսկոպոսի գրասենյակի քարտուղար Հայր Տիմո Ռոսքվիստը:

Օգոստոսի 17-ի առավոտյան «Զվարթնոց» օդանավակայանում հյուրերին դիմավորելու էին եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանն ու Մայր Աթոռի հյուրընկալ Հոգեշնորհ Տ. Գնել աբեղա Սողոմոնյանը:

Պատվիրակության համար կազմվել էր եռօրյա հագեցված ծրագիր, որն ընդգրկում էր այցելություններ Սուրբ Գայանե, Հռիփսիմե և Խոր Վիրապի վանքեր, Ամբերդ, Սևանի Վազգենյան Հոգևոր Ճեմարան, Ծիծեռնակաբերդ, Գառնի և Գեղարդի վանք, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, Նորքի Հայորդյաց Տուն և նորակառույց Ս. Սարգիս եկեղեցի:

Օգոստոսի 17-ի առավոտյան Մայր Աթոռում, եկեղեցականների թափորով, Տրդատա Կամարի մոտ հյուրերին դիմավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, ապա թափորը եկեղեցու զանգերի ղողանջների ներքո ուղղվեց Մայր Տաճար, ուր, Էջման Ս. Սեղանի առջև ողջույնի խոսքեր փոխանակելուց և կարճատև բարեգալստյան արարողությունից հետո, թափորը շարժվեց Վեհարան, ուր Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Հայաստանյայց թեմերի առաջնորդներին, իսկ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու պետը՝ իր պատվիրակության անդամներին:

Օգոստոսի 18-ին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց Մայր Տաճարում: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Սրբազան արարողությանը ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եօրյա այցով Մայր Աթոռում գտնվող Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս դր. Ջուկկա Պաարմայի, ինչպես նաև ներկայացուցիչներ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուց:

Պատարագի ավարտին երկու Եկեղեցիների հովվապետերն իրենց ողջույնի խոսքն ուղղեցին բարեպաշտ ժողովրդին:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ, ՏՈՒՐԿՈՒԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱՅԻ ԱՅՑԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՀԸՆԹԱՑՍ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

*Ձերդ Վերապատվելիություն,*

*Հոգու բերկրանքով ենք ողջունում Ձեզ և Ձեզ ուղեկից ուխտապահ եկեղեցականաց հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գոհություն և փառք Տիրոջը, որ առիթը պարգևեց Մեզ սիրեցյալ Մեր եղբոր՝ Տուրկուի և համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի և Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու հոգևոր մեր եղբայրների հետ սրբազան այս կամարների ներքո միասնաբար աղոթք բարձրացնելու առ Աստված՝ վասն անսասանության Քրիստոսի Սուրբ Եկեղեցու և մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների զորացման ու ամրապնդման:*

*Մեզ համար խորհրդանշական է, որ Ձերդ Վերապատվելիության Հայաստան այցի հետ այսօր համընկավ մեր ժողովրդի կողմից ջերմորեն սիրված եկեղեցական տոներից մեկը՝ տաղավար հինգ տոներից Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը, երբ կատարվում է նաև խաղողի օրհնության արարողություն: Երջանիկ այս զուգադիպության մեջ զգում ենք, որ Սուրբ Կույսը հովանավոր է մեզ՝ մեր ժողովուրդների բարեկամության ու եղբայրության զորացման փոխադարձ մեր ջանքերի մեջ:*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, համայնավարական աստվածմերժության շրջանում տասնամյակներ շարունակ մեր ժողովուրդը զրկված էր հնա-*

բավորությունից ազատորեն արտահայտելու իր հավատքը և համաժողովրդական խանդավառության մեջ մասնակիցը լինելու եկեղեցական արարողություններին ու հանդիսություններին: Փառք Երկնավորին, այսօր հետևում են մնացել հալածանքներն ու բռնությունները, և մեր ժողովուրդը Հայաստանում ու Արցախում վերագտել է իր անկախ պետականությունը, հաստատել ազատության հանդեպ իր սերն ու ազատ ապրելու իր կամքը:

Ազատ ու անկախ Հայոց երկու պետությունների հովանու ներքո Հայ Եկեղեցին այսօր հնարավորությունն ունի ազատորեն ծառայելու Բանին Կենաց քարոզության իր սուրբ առաքելությանը: Հավատացյալ մեր ժողովուրդը վերստին գտել է ճանապարհը դեպի իր հոգու ծննդավայրը՝ Հայ Առաքելական Եկեղեցին, իր լինելիության ու հարատևության ակունքներն ու նվիրական սրբությունները:

Ձեզ հայտնի է, որ Հայաստանը քրիստոնյա աշխարհի հնագույն երկրներից մեկն է, հայ ժողովուրդը շուրջ երկու հազար տարի փարված է քրիստոնեական հավատքին՝ առաջինը այն հռչակելով պետական կրոն 301 թվականին: Շնորհաբաշխ այդ օրերից հայ ժողովուրդը մեկ է դարձել առաքելահիմն իր Եկեղեցու հետ, հաստատվել քրիստոնեական իր ուրույն նկարագրի մեջ՝ ուրույն սովորույթներով ու ավանդույթներով, ապրել Քրիստոսով ու դարեր շարունակ վկայել Քրիստոսին:

Ինչպես պատմության ընթացքում, այսօր էլ Հայ Եկեղեցուն բնորոշ է էկումենիկ ոգին, ըմբռնումն ու կեցվածքը, որը հաստատել են երանաշնորհ մեր Հայրապետներն իրենց եղբայրասեր գործունեությամբ: Մեր հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ առավել սերտացել են հատկապես քսաներորդ դարասկզբին Թուրքիայի իրականացրած հայոց սոսկալի ցեղասպանությունից հետո, երբ յաթաղանին զոհ գնաց մեկ և կես միլիոն հայություն, իր բնիկ ժողովրդից դատարկվեց Արևմտյան Հայաստանը, իսկ հազարավոր հայեր մազապուրծ ապաստանեցին տարբեր երկրներում: Այսօր Ֆինլանդիայի հյուրընկալ հողում նույնպես հայկական համայնք կա, որը սպասում է նաև իր հոգևոր հովվին ու եկեղեցական կյանքի կազմակերպմանը: Մենք խորապես զգացված ենք ֆինն ժողովրդի հյուրընկալ ոգուց, որը հնարավոր դարձրեց Հելսինկիում կազմակերպել «Հայ Եկեղեցու գանձերը» խորագրով ցուցահանդես՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-րդ տարեդարձին:

Քրիստոնեական իր ուրույն ճանապարհն է անցել ֆինն ժողովուրդը՝ Ավետարանի լույսն ընդունելով 11-12-րդ դարերում և քրիստոնեական հավատքը դարձնելով իր կյանքի աղբյուրն ու զորությունը: Քրիստոնեական արժեքների հանդեպ ֆինն ժողովրդի հավատարմության վկայություններից



ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ

*մեկն է այն իրողությունը, որ Ֆինլանդիայի անունն այսօր անբաժան է մարդու իրավունքների պաշտպանության նվիրական գաղափարներից:*

*Միացյալ եղբայր ի Քրիստոս, մենք նույն առաքելությունն ունենք Աստծո ու մարդկանց առջև՝ Քրիստոսի Կենաց Խոսքով դեպի փրկություն առաջնորդել մարդկանց, որ չպակասի Լույսն աշխարհի: Քրիստոնեական մեր եղբայրությունը զորացնում է մեզ և միավորում՝ հաղթահարելու համար արդի ժամանակների ընդհանուր մարտահրավերները: Ներկա ճգնաժամային գործընթացների պայմաններում, երբ մարդիկ ավելի հեշտությամբ են հեռանում Արարչից, մենք՝ քրիստոնյաներս, առավել ևս պարտավորված պետք է զգանք բերելու հավատի մեր վկայությունն ու միասնաբար պատասխաններ գտնելու մարդկության առջև ծառացած խնդիրներին:*

*Հայ Եկեղեցին ողջունում է քրիստոնեական Եկեղեցիների երկխոսությունն ու սերտ համագործակցությունը՝ ի սեր Քրիստոսի Եկեղեցու, ի սեր իր հոտի, հանուն աշխարհի խաղաղության ու մարդկանց համերաշխության:*

*Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությունն ենք հայցում առ Տերը, որ Իր օրհնությունն ու խաղաղությունը պարգևի Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցուն, Ձեզ՝ նրա քաջակորով Առաջնորդին, և Ձեր բարեջան ծառայակիցներին, անխախտ պահի ու հանապազ զորացնի քրիստոնյա մեր ժողովուրդների ու Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները:*

*Ի Քրիստոս սիրով կրկին ողջունում ենք Ձեզ 1700-ամյա Սուրբ Էջմիածնում:*

*Սէր Աստուծոյ եղիցի ընդ մեզ եւ ընդ ամենեսեանն այսօր եւ միշտ. ամէն:*

## ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԵՎ ՏՈՒՐԿՈՒԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ

*Ձերդ Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց, սիրելի և պատվելի եղբայր ի Քրիստոս.*

*Թույլ տվեք նախ հայտնել իմ երախտագիտությունը Ձեր ջերմ ընդունելության և այս առիթի համար, որը տրվեց ինձ և Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու պատվիրակությանը՝ այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայ Առաքելական Եկեղեցու այլ սրբավայրեր, որոնք մեծ նշանակություն ունեն նաև քրիստոնեության այլ ավանդությունների տեր քրիստոնյաների համար: Եվ ամենից առաջ Ձեր հրավերը հնա-*

*րավորություն է տալիս մեզ փոխանակելու մեր ընդհանուր հավատքի հարստությունները, աղոթելու միասին և մեկմեկու ավելի սերտորեն ճանաչելու:*

*Այս օրերի ընթացքում մենք՝ ֆիններս, կարող ենք ավելացնել աշխարհի ամենահին քրիստոնեական Եկեղեցիներից մեկի մասին մեր գիտելիքները: Ես ասում եմ՝ ավելացնենք, քանզի մենք արդեն որոշակի գիտելիքներ ենք ձեռք բերել մեր միջև եղած ավելի վաղ հարաբերությունների ընթացքում, ինչպես նաև ձեր Եկեղեցու և ազգի պատմությանը բավականին տեղյակ են Ֆինլանդիայում:*

*Երբ երրորդ հազարամյակի շեմին ձեր Եկեղեցին տոնախմբում էր իր հիմնման 1700-ամյակը, մենք Ֆինլանդիայում տոնախմբում էինք մեր ազգային Եկեղեցու՝ Տուրկուի տաճարի հիմնադրման 700-ամյակը: Չնայած ժամանակային առկա տարբերությանը, այս տոնակատարությունների մեջ ընդհանուր էր այն, որ երկուսում էլ արտասանվեց Նիկիական Հավատո Հանգանակը, և մենք խոստովանել և խոստովանելու ենք, որ մենք հավատում ենք Մեկ, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցուն: Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցին իրեն համարում է Քրիստոսի Մեկ, Սուրբ և Առաքելական Եկեղեցու մի մասնիկը: Մեր Եկեղեցին կարևորում է Քրիստոսի Եկեղեցու և նրա ընդհանրականության պատմական շարունակականությունը: Մեր արմատները գալիս են միջին դարերի Արևմտյան Եկեղեցուց և 1500-ականների Ռեֆորմացիայից: Էկումենիկ մտածողությամբ մենք հպարտանում ենք այն պատմական իրողությամբ, որ քրիստոնեությունը Ֆինլանդիա է մուտք գործել նախքան Արևմտյան և Արևելյան Եկեղեցիների միջև մեծ բաժանումը: Քրիստոնեական առաջին ազդեցությունը մենք միևնույն ժամանակ ստացանք և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Եկեղեցիներից դեռևս երկրորդ հազարամյակի սկզբներին: Անշուշտ եղան ժամանակներ, երբ արևմտյան և արևելյան քրիստոնյաների միջև կապը ոչ այնքան բարեկամական էր, սակայն այս հարյուրամյակների ընթացքում մենք սովորեցինք ինչպես ապրել միասին և միմյանցից շատ բան ուսանեցինք:*

*Ճշմարիտ լյութերական նույնությամբ են բնորոշվում մեր բոլոր էկումենիկ շփումները: Մենք հիմնադիր անդամներից ենք նաև Համաշխարհային Լյութերական Դաշնության, ԵՀԽ-ի, Նորդյան էկումենիկ խորհրդի և Ֆիննական էկումենիկ խորհրդի: Մենք անդամակցել ենք նաև Եվրոպական Եկեղեցիների Խորհրդին նրա հիմնադրման իսկ պահից ի վեր: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի շփումների շրջանակներում տեղի ունեցած հարաբերությունների ընթացքում ավելի մոտիկից ճանաչեցինք Հայաս-*

*տանյաց Առաքելական Ս. Եկեղեցու այնպիսի պատկառելի և պատվելի անձնավորությունների, ինչպիսիք էին Գարեգին Ա երջանկահիշատակ և Արամ Ա Կաթողիկոսները:*

*Ինչպես ֆինն Եկեղեցու և ժողովրդի պարագային, այնպես էլ՝ Հայ Եկեղեցու, պատմությունը նույնպես սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմությանը: Գիտենք, որ քրիստոնեության ընդունումը հայերի համար մի պարզ իրադարձություն չէր, այլ պատմական տևական մի գործընթաց: Երբ քրիստոնեության ընդունման վճռորոշ քայլը կատարվեց, պայքար սկսվեց այն ուժերի դեմ, որոնք կամենում էին խափանել Աստծո ծրագիրը: Սա մեծապես վերաբերում է Հայ Եկեղեցու և ժողովրդի պատմությանը. Եկեղեցու հալածանքները նաև ժողովրդի հալածանքներն էին, և ժողովրդի հալածանքները՝ Եկեղեցունը: 1700 տարիների ընթացքում Եկեղեցու և պետության միջև պաշտոնական հարաբերությունները հաճախ են տարբեր փոփոխություններ կրել, բայց այդ պաշտոնական հարաբերություններից առավել կարևոր է եղել Եկեղեցու և ժողովրդի միջև եղած հարաբերությունը: Ես հասկացա, որ այս հարաբերությունն այնքան տևական է եղել, որ Եկեղեցին դարձել է Սփյուռքի հայերին միավորող գլխավոր հզոր ուժը:*

*Վերջին տարիներին մեզ ուրախացրեց կրոնական ազատության սկզբունքների իրագործումը քրիստոնեական այն Եկեղեցիներում, որտեղ կրոնական ազատությունը նախապես սահմանափակ էր:*

*Մեր Եկեղեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ հանդիպում է ունեցել աստվածաբանական երկխոսությունների շուրջ, և մեր քննարկումներում մենք հայտարարել ենք, որ Սուրբ Երրորդությունը կրոնական ազատության համաշխարհային օրենքի տեսակետից մի միջոց է, որով նա Եկեղեցիներին արտաքին ազատություն է տալիս՝ գործելու համաձայն իր էության և առաքելության, որ է՝ Ավետարանի ազատ քարոզչություն ամենքին և Սուրբ խորհուրդների մատակարարում: Պետության և հասարակության համար կրոնական ազատությունը մարդկային հիմնական իրավունքն է: Այդ իրավունքը փայփայելով հասարակությունը միևնույն ժամանակ իր սեփական շահն է փնտրում, քանի որ գիտակցում է, որ կրոնական ազատությունը պաշտպանելով՝ ապահովում է խաղաղություն և սեր յուրաքանչյուր անհատի, ինչպես նաև ողջ հասարակության կյանքում:*

*Կրոնական ազատության այս կերպ հասկացված սկզբունքը նաև կարևոր է Եկեղեցիների մեծամասնության համար, որպիսիք են Ֆինլանդական Ավետարանական-Լյութերական Եկեղեցին և Հայ Առաքելական Եկեղեցին, որոնց երկուսի անդամներն էլ կազմում են իրենց երկրների բնակ-*

*չության 90 տոկոսը, քանի որ մենք իրականացնում ենք մեր Աստվածատուր ծառայությունը մեր ժողովրդի մեջ:*

*Օգտվելով այս առիթից, ես կամենում եմ ողջունել Չհրդ Սրբությանը. ի Քրիստոս քույրերին և եղբայրներին Ֆինն էկումենիկ խորհրդի անունից. որն այժմ ընդգրկում է 12 անդամ Եկեղեցի և 19 դիտորդական կազմակերպություն:*

*Արդեն իսկ 1998 թ. այս խորհրդին է միացել նաև Ֆինլանդիայի Կաթոլիկ Եկեղեցին, իսկ այս տարի՝ Շվեդական Հոգեգալստականները՝ իբրև դիտորդ:*

*Հարաբերականորեն փոքրիկ այս մարմնի կարևորությունը, թերևս. գլխավորապես երևում է անդամ Եկեղեցիների և դիտորդների կողմից նշանակված անձանց ընդարձակ ցանկի մեջ: Այս ներկայացուցիչները ներգրավված են խորհրդի ինը հանձնաժողովների մեջ և զբաղվում են բազմապիսի խնդիրներով՝ սկսած հավատքի և եկեղեցական կարգերի հարցերից մինչև ընկերային-քաղաքական խնդիրները:*

*2000 թ. հոբելյանական տարվա ընթացքում Ֆինլանդիայում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ, որոնք կազմակերպվեցին Եկեղեցիների միացյալ ջանքերով. և այժմ Ֆինն էկումենիկ խորհուրդն իրականացնում է 2003 թ. էկումենիկ «կիրխենթագի»՝ Եկեղեցիների համաժողովի նախապատրաստական աշխատանքները: Երկար տարիներ այս խորհուրդը նախագահել է Օրթոդոքս արքեպիսկոպոս Ջոնը, մինչև 1999 թ., երբ ես փոխարինեցի նրան այս պաշտոնում: Այս խորհրդի գլխավոր քարտուղարը հովիվ Յան Էդստրոմն է՝ Ֆինլանդիայի Շվեդական Մկրտչական Եկեղեցուց:*

*1998 թ. Հելսինկիում ես հնարավորություն ունեցա անձամբ դիտելու մի շատ նշանակալի ցուցահանդես: Արվեստի և դիզայնի թանգարանում բացված այդ ցուցահանդեսի անունն էր «Սուրբ Խաչ. Հայ Եկեղեցու գանձերը»: Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Խաչը մեր Եկեղեցիների ամենամեծ գանձն է: Այն իր մեջ ընդգրկում է ողջ Ավետարանը: Մեր Եկեղեցիներն այլ գանձեր նույնպես ունեն, սակայն դրանք առավել կարևոր, էական չեն, քան այս մեկը: Սուրբ Խաչն անգերազանցելի է:*

*Եկեղեցու պատմության մեջ եղել են ժամանակներ, երբ փորձեր են կատարվել Եկեղեցին խաչից զրկելու: Եղել են ժամանակներ, երբ Եկեղեցին ստիպված է եղել պատսպարվելու չորս պատերի մեջ, կա՛մ կատակոմբներում, կա՛մ էլ՝ թանգարաններում: Սակայն Եկեղեցու անդամներն իրենց մկրտության ժամանակ իրենց վրա դրոշմված խաչը իրենց սրտերում են կրել: Նրանց համար հարկադրաբար բավարար է եղել Քրիստոսի խաչի խորհրդի ներքին գիտակցությունը:*

*Ահա սա նկատի ուներ Լյութերականներիս գլխավոր ուսուցիչ Մարտին Լյութերը, երբ գրում էր, որ բավարար չէ և անօգուտ է Աստծուն Իր փառքի մեծության մեջ ճանաչելը, առանց Նրան ճանաչելը խաչի նվաստացման և ամոթի մեջ:*

*Հովհաննու Ավետարանի 14-րդ գլխում Հիսուս՝ Աստծուն իր Փառքի մեջ տեսնել ցանկացող Փիլիպպոսին ասում է, որ դրա համար միայն մեկ բան է հարկավոր. «Ով ինձ տեսավ, տեսավ նաև Հորը»: Այսպիսով, ճշմարիտ աստվածաբանությունը և աստվածգիտությունը Խաչեցյալ Քրիստոսի մեջ է:*

Հավարտ Սուրբ Պատարագի, Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի պատվիրակությունը, գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի, մասնակցեց Խաղողօրհնեքի հոգեզմայլ և սրբազան արարողությանը, որը տեղի ունեցավ Ս. Տրդատա Բաց Խորանի վրա, և որից անմիջապես հետո Ս. Խորանի շուրջ համախմբված ողջ հավատացյալ ժողովրդին բաժանվեց օրհնված խաղող:

Նույն օրը, երեկոյան, Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարման հոգևոր դասի ուղեկցությամբ այցելեցին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց, ուր Դպրանոցի սաները նրանց դիմավորեցին «Հրաշափառ»-ի երգեցողությամբ: Գարեգին Բ Կաթողիկոսը Տուրկուի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմային և նրա գլխավորած պատվիրակությանը ներկայացրեց Դպրանոցի հիմնադրման պատմությունը և ուսանողների առօրյան: Հյուրերը ծանոթացան նաև Սևանա վանքի բազմադարյան պատմությանը: Այնուհետև գեղարվեստական հայրագրով ներկաներին ողջունեցին Դպրանոցի սաները, որից հետո Սևանի Ս. Առաքելոց եկեղեցում կատարվեց հանդիսավոր երեկոյան ժամերգություն:

Օգոստոս 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարման այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Պսակների զետեղումից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն, որի ընթացքում դր. Ջուկկա Պաարման իր աղոթքն առաքեց առ Աստված՝ նահատակների հոգիների հանգստության համար: Երկու Եկեղեցիների հոգևոր պետերն այցելեցին նաև Ցեղասպանության թանգարան, ուր ցեղասպանության ինստիտուտի տնօրեն փիար Լավրենտի Բարսեղյանը հյուրերին հանգամանալից ներկայացրեց անցյալ դարասկզբին հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը:

Այնուհետև Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ու արքեպիսկոպոս Ջուկկա Պաարման այցելեցին ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

Պատվիրակությունն այցելեց Գառնի և Գեղարդի հոյակերտ վանք. իսկ երեկոյան Վեհարանի համդիպությունների դահլիճում Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ և գլխավորությամբ տեղի ունեցավ հրաժեշտի երեկո և ընթրիք:

Օգոստոս 20-ի առավոտյան պատվիրակությունն այցելեց Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի՝ աղոթելու առ Բարձրյալն Աստված՝ ի խաղաղություն և ի բարօրություն համայն քրիստոնյա աշխարհի:

Նույն օրը հյուրերը մեկնեցին Հայաստանից:

*ՎԱՀԵ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

# ԱՄՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱԹՈԼԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

2002 թ. օգոստոսի 22-ից 25-ը, որպես ուխտավորներ, հոգևոր այցով Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի և Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսի ներկայացուցիչները: Խումբը բաղկացած էր Խորհրդի անդամ Հայ Առաքելական, Լյութերական, Եպիսկոպոսական, ինչպես նաև Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների ներկայացուցիչներից, որոնց թվում էր և ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի գլխավոր քարտուղար դր. Ռոբերտ Էդգարը: Ուխտագնացությունն անմիջականորեն կազմակերպել էր Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի ներկայացուցիչ և Էկումենիկ գրասենյակի տնօրեն Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը: Ստորև ներկայացնում ենք պատվիրակության անդամներին*.

Դր. Ռոբերտ Էդգար, ԱՄՆ Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի գլխավոր քարտուղար՝ Նյու Յորք,

Հայր դր. Լոուել Ալմեն, ԱՄՆ Ավետարանական-Լյութերական Եկեղեցու քարտուղար և Եպիսկոպոսների Կոնֆերանսի անդամ՝ Չիկագո,

Գերապայծառ Տեր Մանվել եպիսկոպոս Բատակյան, ԱՄՆ Հայ Կաթոլիկ Եկեղեցու Առաքելական փոխանորդ՝ Նյու Յորք,

Քրիստոֆեր եպիսկոպոս Էպթինգ, ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցու Էկումենիկ քարտուղար՝ Նյու Յորք,

Հայր Ռոնալդ Ռոբերսոն, ԱՄՆ Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսի Էկումենիկ և Միջկրոնական Գործերի Քարտուղարության փոխտնօրեն՝ Վաշինգտոն,

Տիար Գևորգ Թորոյան, Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Ներկայացուցիչների Խորհրդի նախագահ՝ Նյու Յորք:

Մայր Աթոռում հյուրերին ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, նույն բաժնի գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանը, ինչպես նաև բաժնի մյուս աշխատակիցներն ու Մայր Աթոռի հյուրընկալ Հոգեշնորհ Տ. Գնել աբեղա Սողոմոնյանը:

---

* Պատվիրակության անդամ էր նաև Բալթիմորի Արքեպիսկոպոս, Կարդինալ Վիլյամ Կելերը, որը հիվանդության պատճառով չկարողացավ միանալ ուխտավորներին:

Հագեցած ծրագրով եռօրյա այցելությունների ընթացքում պատվիրակության անդամները օգոստոսի 24-ին հանդիպեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հետ: Այս հանդիպմանը, որն իր բնույթով ավելի ճանաչողական և ներկայանալի էր, մասնակցում էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը և ԵՀԽ Հայաստանի «Կլոր Սեղան»-ի կոորդինատոր դր. Կարեն Նազարյանը: Նորին Սրբությունը ողջունեց խորհրդի անդամների ներկայությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ կարևորելով խորհրդի դերը ԱՄՆ-ի հասարակության կրոնական կյանքում: Վեհափառ Հայրապետը հանգամանալից կերպով ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը և Մայր Աթոռի 1700-ամյա առաքելությունը հայ ժողովրդի կյանքից ներս:

Օգոստոսի 25-ին ուխտավորներն Էջմիածնի Մայր Տաճարում մասնակցեցին Պատարագի սրբազան արարողությանն ու Գարեգին Ա Ամենայն Հայոց երջանկահիշատակ Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակի առիթով լուսահոգի Հայրապետի շիրմի առջև մատուցված հոգեհանգստյան պաշտոնին: Քարոզի ընթացքում օրվա պատարագիչ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի անունից ողջունեց ներկաներին (տե՛ս էջ 79), որոնց անունից Մայր Տաճարի Խորանից պատասխան խոսքով հանդես եկավ Քրիստոֆեր Էփթինգ եպիսկոպոսը.

*«Ձերդ Սրբություն,*

*Հանուն մեր պատվիրակության անդամների, թույլ տվեք շնորհակալություն հայտնել ողջույնի Ձեր ջերմ խոսքերի համար: Ճշմարտապես մեզ համար մեծ պատիվ է լինել Ձեզ հետ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից կառուցված և Ձեր Սուրբ Հայ Եկեղեցու հավատացյալ անդամների ջերմագին աղոթքներով և Սուրբ Պատարագի անհամար արարողություններով 1700 տարի սրբացած այս ամենասուրբ վայրում:*

*Մենք եկել ենք Սուրբ Էջմիածին որպես ուխտավորներ հեռավոր մի երկրից: Մենք եկել ենք այստեղ լսելու աթեիստական իշխանության 70-ամյա դաժան հալածանքներից հետո ձեր Եկեղեցու ապաքինման մասին և այն բազում կարիքների, որ ձեր Եկեղեցին դեռ ունի: Բայց մենք այստեղ ենք եկել նաև հարգանքի տուրք մատուցելու դարերի ընթացքում Քրիստոսի Ավետարանին հայ ժողովրդի մատուցած անխոնջ վկայության համար: Որպես առաջին քրիստոնյա ժողովուրդ, Հայաստանն ամբողջ աշխարհում քրիստոնյաների համար հավետ կմնա որպես փարոս, որպես օրինակ անընկուն հավատարմության բազում փորձությունների դեմ հանդիման, որոնց*

*մասին շատ քրիստոնյաներ անգամ չեն կարող պատկերացնել:*

*Եվ հետևաբար, Ձերդ Սրբություն, մենք այստեղ ենք եկել խոնարհությամբ, պատրաստ լսելու և բաց սրտով, պատրաստ սովորելու ձեզանից և ուսանելու ձեր Եկեղեցու իմաստությունը: Որպես Ամերիկայի քրիստոնյաներ և մի երկրի, որը շատ տարբեր է ձեր [երկրից]՝ ավելի կարճ պատմությամբ, քիչ ենթարկված տառապանքների, սակայն իր ուրույն պատմությամբ, պայքարով և տեսիլքներով, մենք նույնպես հույս ունենք ձեզ հետ կիսելու մեր փորձառությունը: Այս ձևով մենք հույս ունենք արտահայտելու այն եղբայրական կապերը, որ մենք զգում ենք այսքան խորը քրիստոնյա ազգի հետ:*

*Անցած երկու օրերին մենք արդեն տեսանք քրիստոնեական հավատքի շարունակական բաբախումները, որը երկար դարեր սնել է ձեր ժողովրդին: Արդեն մենք զգացել ենք նրանց հյուրընկալության ջերմությունը և տեսել ենք մի քանի պատմական հուշարձաններ, որոնք միաձուլված են ձեր գեղեցիկ երկրի բնապատկերին: Մենք պատրաստ ենք ավելին ուսանելու և այցելելու ձեր և քույր Եկեղեցիների այլ հաստատություններ:*

*Ձերդ Սրբություն, որպես եզրափակում, մենք ցանկանում ենք մեր կողմից կրկնել այն խոսքերը, որ Հովհաննես-Պողոս Երկրորդ Պապն ասաց անցած սեպտեմբերին Հայաստան կատարած իր այցելության ավարտին՝ հրաժեշտի արարողության ժամանակ. «Թող Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և հայ սրբերի ու մարտիրոսների մեծ համաստեղությունը պահպանի ձեզ այժմ և ապագայում, և թող Քրիստոսի Մայրն ու Նոր Ուխտի տապանակը առաջնորդեն հայերին դեպի խաղաղություն, որն ընկած է Ջրհեղեղից այն կողմ, Աստծո խաղաղությունը, որն ամպերի մեջ իր ծիածանն է կապել որպես հավերժական սիրո նշան» (տե՛ս Ծննդ. Թ 13):*

Հյուրերն այցելեցին նաև Խոր Վիրապի, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե ու Սևանա վանքերը, եղան Բյուրականում, Ամբերդում, Հայաստանում գործող Ավետարանչական Եկեղեցում, ինչպես նաև Հայոց մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրում՝ Ծիծեռնակաբերդում:

Ծիծեռնակաբերդ կատարած այցելության մասին հյուրերը գրեցին. «Իր պարզության մեջ հուշարձանն ամբողջովին հայ ժողովրդի մեծ վերքի և ապագայում նմանօրինակ սարսափազդու դեպքերից խուսափելու համար համատեղ գործունեության անհրաժեշտության զորավոր խիշատակն է»:

Կիսելով իրենց տպավորությունները, պատվիրակության անդամներն արտահայտեցին իրենց գնահատանքը Եկեղեցու վերազարթոնքի կապակցությամբ, որը տասնամյակներ շարունակ զրկվել է աթեիստական և համայնավարական իշխանության ներքո. «Չնայած ակնհայտ է, որ դեռ կարիքները շատ են, և Եկեղեցու

ամբողջական վերանորոգումը բազում փարիներ կպահանջի. բայց արդեն նշաններ կան, որ գործընթացն սկսված է»:

Քննարկումների ժամանակ պատվիրակները նաև խոսեցին Ամերիկյան Եկեղեցիների ջանքերի մասին՝ օգնելու Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի կալվածքների խնդրի լուծմանը: Նրանք իրենց գոհունակությունը հայտնեցին, որ Իսրայելի կառավարությունը պատրաստ է եփ կանգնել իսրայելցիներին և պաղեստինցիներին միմյանցից բաժանող պատի շինարարության միջոցով հայկական կալվածքը բաժանելու մտադրությունից. և անհամբեր սպասում են հիմնախնդրի լուծմանը: Հարկ է ավելացնել նաև, որ արձագանքելով Վեհափառ Հայրապետի՝ Եկեղեցիների պետերին և Էկումենիկ կազմակերպություններին ուղղված նամակին, նրանք իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել՝ նամակով դիմելով Իսրայելի Վարչապետ Արիել Շարոնին:

Ստորև բերում ենք նամակի թարգմանությունն ամբողջությամբ.

«ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐԻԵԼ ՇԱՐՈՆԻՆ
Հուլիս 31, 2002 թ.

Հարգելի Պարոն Վարչապետ,

ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի անունից, որի հետ իրենց հարանվանությունների միջոցով հարաբերվում են ավելի քան 50 միլիոն ամերիկացիներ, ես դիմում եմ Ձեզ՝ ներկայացնելով մի հրատապ խնդրանք:

Միազանգի զգացումով ես գրում եմ հայցելով ձեր աջակցությունը, լուծում գտնելու այն իրավիճակին, երբ Իսրայելի կառավարության վերջին գործողությունների պատճառով վտանգված են Հայ Ուղղափառ Եկեղեցու իրավունքները*: Ես նկատի ունեմ Բեթղեհեմի հյուսիսային արվարձանում Հայ Եկեղեցու սրբազան կալվածքի բռնագրավումը, որը 1641 թվականից եղել է Հայ Եկեղեցու սեփականությունը:

Մենք հասկանում ենք, որ «Պարոն Տեր» անունով հայտնի կալվածքն ընդգրկում է Հայ Առաքելական Եկեղեցու վարչական, ուսումնական և կրոնական առանձնացման կենտրոնը, եկամուտ ապահովող ձիթապտղի պուրակը: Այն հնագիտական և աշխարհով մեկ սփռված հայերի համար պատմական և հոգևոր կարևորության մի վայր է: «Պարոն Տեր»-ի վտանգված կալվածքներում են և այն ձիթենիները, որոնցից մի քանիսն ունեն 500 տարվա հնություն: Համաձայն ավանդական կարգի, դրանցից ստացված ձեթը օգտագործում են Երուսաղեմում՝ Ս. Մեղրովի եկեղեցում, Քրիստոսի ավանդական գերեզմանի վրա, և Բեթղեհեմ-

* Հայ Առաքելական Եկեղեցին Էկումենիկ շրջանակներում շատ հաճախ կոչվում է Ուղղափառ, (Orthodox), որպես Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների (Oriental Orthodox Church) ընտանիքի անդամ (Հովակիմ աբեղա Մանուկյան):



ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ՈՂՋՈՒՅՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱԹՈԼԻԿ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ

մում՝ Ս. Ծննդյան եկեղեցում, որը պաշտվում է, որպես Քրիստոսի ծննդյան վայր, կանթեղները վառելիս:

Որպես Միացյալ Նահանգների մի ազգային էկումենիկ մարմին՝ բաղկացած 36 Ուղղափառ և Բողոքական հաղորդություններից, ներառյալ Ամերիկայում Հայ Եկեղեցու մեր քույրերն ու եղբայրները, մենք պարտավորված ենք զգում ձայն բարձրացնելու սուրբ վայրերը մասնատելու և, կալվածքը կիսող միջնապատ կառուցելով, այն ոչնչացնելու ծրագրերի մասին զեկույցների առնչությամբ: Որպես արդյունք, Պատրիարքարանը կարող է կորցնել այս սրբազան ու պատմականորեն կարևոր կալվածքը, ինչպես նաև դրա փված եկամուտը՝ մեկ այլ հարված փոքրամասնություն կազմող քրիստոնեական համայնքին, որն արդեն մեծապես ճնշվել է: Մենք երկյուղ ունենք, որ այս բռնությունները ոչ մի լավ բան չեն գուշակում նաև Իսրայելում ապրող կրոնական այլ փոքրամասնությունների համար:

Ավելին, մենք փեսնում ենք, որ «Պարոն Տեր» կալվածքների բռնագրավումը փեղի է ունենում՝ չնայած Պատրիարքարանի շարունակական ջանքերին՝ կանխելու կալվածքի մասնատումը և լուծելու խնդիրը երկկողմանի փոխընդունելի եղանակով: Մենք համեստորեն խնդրում ենք Ձեզ՝ Ձեր իշխանությամբ նպաստելու խնդրի լուծմանը մի ճանապարհով, որ կհետապնդի սուրբ վայրի վերադարձը իր իսկական տերերին և կերաշխավորի Իսրայելում ապրող հայ և այլ կրոնական փոքրամասնությունների անվտանգությունը:

Այս խնդրանքի հետ միասին վստահեցնում ենք, որ Ձեր և աշխարհի այլ առաջնորդների, Մերձավոր Արևելքում խաղաղության համար մեր հաղորդությունների անդամ 144000 համայնքերում կանոնավոր աղոթքներ են մատուցվում: Թող Աստված առաջնորդի և օրհնի Ձեզ այս դժվար օրերին:

Անկեղծությամբ՝

***ՌՈԲԵՐՏ Վ. ԷԴԳԱՐ***
***Գլխավոր քարտուղար***

Նամակն առաքվել է նաև նախագահ Ջորջ Երկրորդ Բուշին, քարտուղար Քոլին Փաուելին, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյան Պատրիարքին, Խաժակ արքեպս. Պարսամյանին, պր. Ջիմ Թովեյին»:

Պատվիրակությանը ուղեկցող Տ. Վիգեն եպս. Այքազյանը հայտարարեց, որ «ամերիկացի այցելուներն ուրախությամբ են նշում, որ Հայ Առաքելական Եկեղեցին կրկին գրավում է իր արժանի տեղը աշխարհի քրիստոնեական Եկեղեցիների շարքում: Հնագույն հայկական ավանդությունը, ճնշված տասնամյակներ տևած հալածանքներից, հարուստ է և բազմազան, որը մեծ պարգև է աշխարհի քրիստոնեական Եկեղեցիների համար»: «Պատվիրակության անդամները մեծ

հույսեր ունեն, որ փորձառու աստվածաբանների մասնագիտացման միջոցով Հայ Եկեղեցու ներդրումը նմանապես կգնահատվի և կարժևորվի ամբողջ քրիստոնյա աշխարհում»,- ավելացրեց Սրբազան Հայրը։

Հրաժեշտից առաջ պատվիրակության անդամները խնդրեցին փոխանցել իրենց ջերմ եղբայրական ողջույնները Հայաստանի իրենց քրիստոնյա եղբայրներին ու քույրերին՝ նշելով, որ այս ուխտագնացությունը ուժեղացրեց իրենց համոզմունքը, որ «Հայաստանում Հոգին կենդանի է և ամուր։ Թեև աշխարհագրական առումով ձեր երկիրը շրջապատված է ցամաքով և ծովային ելք ու հաղորդակցություն չունի, բայց անկասկած Հոգին վերացնում է բոլոր այն արգելքները, որ բաժանում են մեզ, և ստեղծում է մի կապվածություն, որը երբեք չի մոռացվում»։

*ՀՈՎԱԿԻՄ ԱԲՂ. ՄԱՆՈՒԿՅԱՆ*
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՇՆՈՐՀՔ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՈՐ Ի ՌՈՏ ԱՅԼԸՆՏ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում երկարամեայ նուիրեալ ու անձնդիր Ձեր սպասաւորութեան համար:

Սիրելի Հայր Սուրբ, չորս փասնամեակ առաջ խորին խոնարհումով Բարձրեալ Աստծոյ առջեւ անմնացորդ ծառայելու ուխտ կնքեցիք՝ ստանձնելով հայ եկեղեցականի դժուարին, բայց միաժամանակ քաղցր պարտաւորութիւնը:

Այսօր ուրախ ենք անդրադառնալու շնորհաշատ եւ բազմավաստակ հոգեւորականիդ ազգօգուտ ու եկեղեցաշէն գործունէութեանը, որ արդիւնաւորւում է աստուածահաճոյ գործերով ու նախաձեռնութիւններով: Մենք առանձնակի սիրով ենք յիշում Մեր ուսումնառութիւնը Գէտրգեան Հոգեւոր ճեմարանում՝ Ձեր փեսչութեան ներքոյ, երբ մուտք գործելով հոգեւոր ասպարէզ, ականատես եղանք Ձեր նուիրումին առ Հայոց Եկեղեցին ու վայելեցինք Ձեր հոգածու վերաբերմունքը Եկեղեցու ապագայ սպասաւորների հանդէպ: Ամենուր Ձեր ծառայութեան մէջ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Կոստանդնուպոլսի ու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւններում, ԱՄՆ Արեւելեան ու Կանադայի հայոց թեմերում Դուք դրսեւորել էք Ձեր անխախտ հաւա-

պարմութիւնն ու նախանձախնդրութիւնը Տիրոջ սպասաւորի սուրբ կոչման նկատմամբ:

Ձեր հաւատքի եւ հայրենանուիրութեան նոր վկայութիւնն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հաստատուող ծերանոցի հովանաւորութեան ստանձնումը եւ այս նպատակով կատարուած մեծագումար նուիրատուութիւնը: Հայրենի մեր երկրի ներկայ սոցիալական դժուարութիւնների պայմաններում բարեգործական այս հաստատութիւնը իր կարեւոր նշանակութիւնը պիտի ունենայ միայնակ ու կարիքաւոր ծերերի կեանքում՝ զօրացնելով նրանց յոյսն ու լաւատեսութիւնը առ Բարձրեալն Աստուած:

Սիրելի Հայր Սուրբ, Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ պիտի շարունակէք նոյն եռանդով ու պատրաստակամութեամբ ծառայել հոգեւոր սպասաւորութեան նուիրական գործին՝ ի մխիթարութիւն հաւատաւոր մեր ժողովրդի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Մեր սրտաբուխ աղօթքն է, որ Բարին Աստուած Իր հովանաւոր Աջը զօրավիգ ու մարդակից դարձնի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, բարի գործերով եւ մնայուն ձեռքբերումներով լեցուն երջանիկ ծառայութիւն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 6-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 101

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՄԻՍ ԵԹԵՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՄԻՍ ԵԹԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՍԷՅՆԹ ՓՕԼ ՄԻՆԻՍՈԹԱ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ողջունում ենք Ձեզ եւ բերում Հայրապետական Մեր օրհնութիւնը՝ գոհութեան աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ այսօր Ձեր բարերարութեամբ հայկական մի նոր եկեղեցի է օծւում Սէյնթ Փօլ Մինիսոթայում, եւ Հայոց Հայրապետս արդար ուրախութիւնն ունի գնահատանքի խօսք ուղղելու եւ բարձր շնորհի արժանացնելու առ մեր Սուրբ Եկեղեցին ու ժողովուրդը ունեցած Ձեր սէրը գործերով վկայած մեծազնիւ հայորդուդ:

Մեծապէս ուրախ ենք, որ ի յաւելումն Ձեր եկեղեցանուէր ընթացքի, Դուք Ձեր քրոջ հետ միասին անկեղծ սիրով ու իշխանական ոգով ստանձնեցիք նաեւ ԱՄՆ Սէյնթ Փօլ Մինիսոթա քաղաքում եկեղեցու գնման եւ վերանորոգութեան հովանաւորութիւնը՝ գնահատելի աւանդ բերելով քաղաքի հայորդեաց հոգեւոր կեանքի զօրացմանն ու վերազարթօնքին: Սուրբ Սահակ սքանչելագործ Հայրապետի անունը կրող սրբավայրի լուսաւոր ու աղօթաբոյր յարկի ներքոյ բարեպաշտ հաւատացեալները այսօր եւ ընդմիշտ պիտի փառաբանեն Բարձրեալն Աստծուն եւ արժանանան Նրա օրհնութեանը՝ բարի մաղթանքով եւ երախտագէտ հոգով յիշելով նաեւ մեծազնիւ բարերարներիդ:

Փառք Երկնատէրին, որ արթուն եւ արարող է հայութեան մէջ բարեգործութեան ոգին ի սփիւռս աշխարհի վարձք ամբարելով երկնքում եւ յոյս, հաւատ ու սէր՝ մարդկանց սրտերում:

Համայն հայութեան Մայր Աթոռից Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ, որ Ձեր հոգում մշտարթուն կրելով հաւատն առ Աստուած եւ որդիական սէրն ու նուիրումը առ Մայր Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը, երբեք չէք փարակուսել Ձեր ծառայութիւնները բերելու ազգային-եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Բերկրաշատ հոգով ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, այսու Կոնդակով սիրով Ձեզ շնորհում ենք Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Սրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը եւ զօրավիգ լինի Ձեզ բարի ու հայրենանուէր բոլոր իրագործումներում՝ պարգեւելով երկնատուր բիւր բարիքներ եւ յարանորոգ յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Մէյնթ Փօլ Մինիսոթայի Սուրբ Սահակ եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաւատացեալներին:

*«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան ամէն»:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 107

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՇԱՔԵ ԵԹԵՐՅԱՆ-ՍՔԵՅԼԸՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ՏԻԿԻՆ ՇԱՔԷ ԵԹԷՐԵԱՆ-ՍՔԵՅԼԸՆ, ՈՐ Ի ՍԷՅՆԹ ՓՕԼ ՄԻՆԻՍՈԹԱ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ողջունում ենք Ձեզ եւ բերում Հայրապետական Մեր օրհնութիւնը՝ գոհութեան աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ այսօր Ձեր բարերարութեամբ հայկական մի նոր եկեղեցի է օծւում Սէյնթ Փօլ Մինիսոթայում, եւ Հայոց Հայրապետս արդար ուրախութիւնն ունի գնահատանքի խօսք ուղղելու եւ բարձր շնորհի արժանացնելու առ մեր Սուրբ Եկեղեցին ու ժողովուրդը ունեցած Ձեր սէրը գործերով վկայած ազնուաշուք հայուհուդ:

Մեծապէս ուրախ ենք, որ ի յաւելումն Ձեր եկեղեցանուէր ընթացքի, Դուք Ձեր եղբօր հետ միասին անկեղծ սիրով ու իշխանական ոգով ստանձնեցիք նաեւ ԱՄՆ Սէյնթ Փօլ Մինիսոթա քաղաքում եկեղեցու գնման եւ վերանորոգութեան հովանաւորութիւնը՝ գնահատելի աւանդ բերելով քաղաքի հայորդեաց հոգեւոր կեանքի զօրացմանն ու վերազարթօնքին: Սուրբ Սահակ սքանչելագործ Հայրապետի անունը կրող սրբավայրի լուսաւոր ու աղօթաբոյր յարկի ներքոյ բարեպաշտ հաւատացեալները այսօր եւ ընդմիշտ պիտի փառաբանեն Բարձրեալն Աստծուն եւ արժանանան Նրա օրհնութեանը՝ բարի մաղթանքով եւ երախտագէտ հոգով յիշելով նաեւ մեծազնիւ բարերարներիդ:

Փառք Երկնաւորին, որ արթուն եւ արարող է հայութեան մէջ բարեգործութեան ոգին ի սփիւռս աշխարհի վարձք ամբարելով երկնքում եւ յոյս, հաւատ ու սէր՝ մարդկանց սրտերում:

Համայն հայութեան Մայր Աթոռից Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ, որ Ձեր հոգում մշտարթուն կրելով հաւատն առ Աստուած եւ որդիական սէրն ու նուիրումը առ Մայր Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը, երբեք չէք փարակուսել Ձեր ծառայութիւնները բերելու ազգային-եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Բերկրալից խոցով ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գե- րաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, այսու Կոնդակով սիրով Ձեզ շնորհում ենք Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Սրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած Իր հանապազ օրհ- նութեան ներքոյ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը եւ զօրավիգ լինի Ձեզ բարի ու հայրենանուէր բոլոր իրագործումներում՝ պարգեւելով երկնատուր բիւր բա- րիքներ եւ յարանորոգ յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Սէյնթ Փօլ Մինիսոթայի Սուրբ Սահակ եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատա- պէս շնորհազարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաւատացեալներին:

*«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 108

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՆՈՒԻՐԵԱԼ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ԱՒՍՏՐԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ու ջերմօրէն ողջունում եւ շնորհաւորում ենք Ձեզ ծննդեան 70-ամեայ եւ յԱւստրիա հոգեւոր Ձեր սպասաւորութեան 40-ամեայ յոբելեանների առիթներով եւ յղում Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը:

Սիրելի Սրբազան, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարի եւ քաջեռանդ սպասաւորիդ նուիրումին, նախանձախնդրութեանն ու կարողութիւններին, հայրենասէր, արի ոգուն ծանօթ ենք դեռեւս Աւստրիայում ուսումնառութեան տարիներից, երբ Մեզ ուսուցիչ եղաք՝ առաջնորդելով հոգեւոր ծառայութեան մեր անդրանիկ քայլերը:

Մեծ է Տիրոջ Սուրբ Սեղանի սպասաւորութեան եւ մեր ժողովրդին դէպի Աստուած առաջնորդութեան բազմամեայ Ձեր վաստակը, որի բարձր գնահատանքով երջանկայիշատակ Վազգէն Ա Հայրապետը վստահեց Ձեզ Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակի պատասխանատու պաշտօնը: Աւստրիա Հովուական Մեր այցելութեան օրերին վերստին առիթն ունեցանք ականատես լինելու Ձեր բարեջան ծառայութեան արգասիքներին, Ձեր առաջնորդութեան շրջանում Վիեննայում յառնած առաջնորդանիստ Սուրբ Հռիփսիմէ եկեղեցու շուրջ հայորդեաց համախմբութեանը, «Պրօ Օրիէնթէ» կազմակերպութեան Համանախագահ լինելու հանգամանքով Ձեր շնորհակալ ներդրումին քրիստոնէական Եկեղեցիների եղբայրական յարաբերութիւնների զօրացման գործում եւ Ձեր նկատմամբ Կաթոլիկ Եկեղեցու եւ Աւստրիոյ պետութեան ներկայացուցիչների յարգանքին ու վստահութեանը:

Ձեր կրկնակ յոբելեանների այս նշանակալի հանգրուանին այսօր բերկրանքով ենք առանձնացնում նաեւ Ձեր գիտական գործունէութեան երախտիքը, կարեւորութիւնը հայագիտական եւ աստուածաբանական ուսումնասիրութիւնների՝ հրապարակուած տարբեր լեզուներով, տարբեր պարբերականներում եւ առանձին գրքերով,

րոնք՝ խփացնելով Ձեր անմնացորդ սէրը մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի նախանձ. լայն ճանաչողութիւն են մատուցում հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու պատմութեան, դաւանաբանութեան ու ծէսի մասին՝ բայց մանաւանդ՝ զօրացնում հաւատքի լոյսը ընթերցողների հոգում:

Հայոց Հայրապետիս համար հոգու խնդութիւն է Հայրապետական այսու Կոնդակով արդար գնահատանքի արժանացնել Ձեր անսակարկ ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու ժողովրդին եւ շնորհել Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Թող Բարձրեալն Աստուած Իր օրհնութեան ներքոյ անսասան պահի մեր Եկեղեցին, խաղաղ ու ապահով եւ հաւատքով զօրացեալ՝ համայն հայոց աշխարհի բոլոր կողմերում եւ թող, սիրելի Սրբազան, աննուազ շարունակի լուսաւորել «լոյս Ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս Ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայր Ձեր, որ յերկինս է» (Մատթ. Ե 16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 100

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՖԻԼԻՊ ՍԹՈՐ ՎԵՆԹԸՐԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՖԻԼԻՊ ՍԹՈՐ ՎԵՆԹԸՐ, ՈՐ Ի ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ջերմ ողջոյնը, սրտաբուխ բարեմաղթանքներն ու Հայրապետական օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Քրիստոսի հաւատարիմ զինուորիդ եւ հայ ժողովրդի ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամիդ:

Հոգեշնորհ Հայր Ֆիլիպ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Անգլիկան քոյր Եկեղեցու ներկայացուցչի պաշտօնում Ձեր ծառայութեան առիթով Մենք հնարաւորութիւն ունեցանք ճանաչելու Ձեզ եւ Ձեր արդիւնաշատ գնահատելի գործունէութիւնը:

Զօրացած Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով, Դուք, որպէս Տիրոջ հաւատարիմ սպասաւոր, հոգու եւ մտքի Ձեր կարողութիւններն անձնուիրաբար ի սպաս էք դնում Հայ եւ Անգլիկան քոյր Եկեղեցիների միջեւ էկումենիկ յարաբերութիւնների զօրացմանն ու ամրապնդմանը, կենաց խօսքի սրբազան առաքելութեան իրականացմանը եւ առաքելական ոգին նորոգելու աստուածահաճոյ նպատակին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նորընծայ երիտասարդ միաբանների ուսումը խորացնելու նպատակին բերած Ձեր աջակցութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի ու Անգլիայի բանտերի հոգեւոր սպասաւորների փոխադարձ այցելութիւնները նախաձեռնելու եւ կազմակերպելու Ձեր ջանքերը խօսուն վկայութիւն են մեր երկրում Ձեր աստուածահաճոյ բազմարդիւն ծառայութեան: Մենք մշտապէս յիշելու ենք Ձեզ որպէս սիրելի բարեկամի, ով իր հոգում կրում է անգլիացի ժողովրդի ազնուութիւնը, բարի կամեցողութիւնը եւ մանաւանդ՝ հաւատաւոր նկարագիրը:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով, Հայաստանում Ձեր պաշտօնավարութեան աւարտի առիթով, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տէրն առատապէս օրհնի Ձեզ եւ յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Եւ թող Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ խաղաղ ու անվրդով, եղբայրական սիրոյ ու համագործակցութեան մէջ պահի աշխարհը համայն եւ քրիստոնեական բոլոր Եկեղեցիները:

*«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 12-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 103

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԹԱՐՈՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 40 ԵՎ ԲԵՐԻՈ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ 25 - ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԹԱՐՈՅԵԱՆ, ՈՐ Ի ՀԱԼԷՊ, ՍԻՐԻԱ

Ուրախութեամբ փեղեկացանք, որ այս փարի լրանում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդասփանում Ձեր քահանայագործութեան քառասուներորդ եւ Բերիոյ Տիրախնամ թեմում առաջնորդութեան քսանհինգերորդ փարեդարձը:

Սիրելի Սրբազան,

Աեաւասիկ, Բարձրեալի կամքով Դուք չորս փասնամեակ կարգուած էք իբրեւ հոգեւոր սպասաւոր Տիրոջ փոքր հօփին՝ մեր ժողովրդին, որը Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալների քարոզութեամբ արժանացաւ Քրիսփոսի փըրկարար լոյսը ճանաչելու շնորհին եւ շուրջ երկու հազար փարիներ ճաշակում է քրիսփոնէական հաւափի կենսապարգեւ պփուղները:

Մենք քաջածանօթ ենք ուխփապահ հոգեւորականիդ անմնացորդ նուիրումին եւ առանձնակի հաճոյքով ենք յիշում Քրիսփոնէութիւնը Հայասփանում պեփական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանական փարում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջինի հետ Տէր-Զոր կափարած Մեր ուխփագնացութիւնը, երբ գոհունակութեամբ ականափես եղանք յանուն մեր ժողովրդի ու Սուրբ Եկեղեցու Ձեր անյոգնաբեկ ջանքերին, հաւափաւոր ու ծառայասէր Ձեր ընթացքի բարի արգասիքներին, ինչպէս նաեւ հայ եւ սիրիացի մեր երկու ժողովուրդների բարեկամութեան ամրապնդման գործում բերած Ձեր ներդրումին:

Քաջ ու բարի հովուի Ձեր յանձնառութիւնը օրհնութիւն է Բերիոյ բարեպաշփ մեր ժողովրդի կեանքում: Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ իրագործուել եւ իրագործւում են բազում եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր եկեղեցական, կրթական, ընկերային ու մշակութային կեանքի փարբեր ոլորփներում, որով Դուք արժանապէս վայելում էք սէրն ու գնահափանքը բարեպաշփ հայորդեաց:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Մայր Հայրենիքում Ձեր իրագործած նախաձեռնութիւններին, ի մասնաւորի երկրաշարժից աղէտեալ գօտում իրագործած... կարիքաւոր հայորդեաց բերած Ձեր օժանդակութեանն ու Հայրենիք-Սփիւռք կապերի զօրացմանը ներդրած Ձեր ջանքերին: Ձեր բազմաթիւ գործնական այցելութիւնները Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին լաւագոյն վկայութիւն են առ Հայրենի մեր երկիրն ու լուսոյ խորան Սուրբ Էջմիածինը Ձեր որդիական մշտավառ սիրոյ, որը խանդավառում է նաեւ Ձեր հօտի բարեպաշտ անդամներին:

Սիրելի Սրբազան,

Ցիշարժան Ձեր յոբելեանների առիթով համազգային մեր հոգեւոր կենտրոն Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը եւ ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած Բարձրեալ օրհնութիւնն ու օգնականութիւնը հայցելով Ձեզ:

Թող Ամենակալ Տէրը քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ, որպէսզի Դուք Ձեր հարուստ փորձառութեամբ ու հոգեւոր խանդավառութեամբ շարունակէք Ձեր անսակարկ սպասաւորութիւնը՝ ի պայծառութիւն Բերիոյ Տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

*«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ամենեսեան ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 21-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 293

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ԳԵՒՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Բերկրալից հոգով գոհութիւն ու փառք ենք մատուցում Բարձրեալին, որ Մայր Աթոռիս Գէւորգեան Հոգեւոր Ճեմարանը ուսումնական նոր տարին սկսում է բարձրագոյն կրթական հաստատութեան կարգավիճակով: Այս մասին Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան 2002 թ. յունիսի 19-ի հրամանագիրը Հայոց Պետութեան արժանի գնահատականն է մեր ժողովրդի հոգեւոր կրթութեան, գիտութեան ու մշակոյթի ասպարէզներում Գէւորգեան Հոգեւոր Ճեմարանի բերած անփոխարինելի աւանդի, 130-ամեայ հարուստ ժառանգութեան ու վաստակի, մեր ժամանակներում օրստօր նորոգուող ու ընդարձակուող գործունէութեան եւ ներկայ գիտա-կրթական ու հոգեւոր ներուժի: Արդարեւ՝ «ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ՝ ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն...» (Մատթ. Ե 15):

Գէւորգեան Հոգեւոր Ճեմարանը՝ օրհնուած Գէւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Հայոց Հայրապետի հիմնադիր աջով, գործում է 1874 թուականից: Հաստատման օրից կրթօջախը՝ շարունակելով Սուրբ Էջմիածնի Մաշտոցեան դպրոցի, Հայոց հրանելի Հայրապետների եւ մեծ ուսուցչապետերի դպրոցաշէն աւանդները, մշտապէս հաւատարիմ է եղել բարձրակարգ կրթութիւն մատուցելու իր կոչմանը, հաւատաւոր, հայրենանուէր ու եկեղեցասէր, քաջամիտ ու կորովի հայ հոգեւորականներ կրթելու իր առաքելութեանը: Այս տեսիլքով է հիմնադրուել հաստատութիւնը Գէւորգ Դ Հայրապետի կողմից, ով սկզբում դպրոց էր կառուցում, ապա՝ եկեղեցի, որպէսզի եկեղեցի մտնողը գիտենայ, թէ ո՛ւր եւ ինչո՛ւ է եկել:

Բարձրագոյն կրթական հաստատութեան կարգավիճակով Գէւորգեան Հոգեւոր Ճեմարանը շարունակելու է գործել նորոգ քաջալերութեամբ ու նախանձախնդրութեամբ յատկապէս, երբ հաստատութեան շրջանաւարտները հնարաւորութիւն ունեն գիտական աստիճաններ հայցելու Հայրենիքում եւ արտերկրում՝ իրենց կարողու-

թիւնները ապրուածճանաչողութեան շինարար դիրքերից ծառայեցնելով հայ գիտութեանն ու բազմադարեայ մշակոյթին:

Նոր էջ է բացւում պատմութեան մէջ Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի՝ Մեզ համար թանկ ու նուիրական կրթական հաստատութեան, որի՝ հոգեւոր ճանաչողութեան ու հաւատի լոյսով լեցուն պատերից ներս սկսուել է նաեւ հոգեւորականի Մեր ուղին: Ցոյսերով ու լաւատեսութեամբ ներշնչուն նոր այգաբաց ենք դիմաւորում Հայոց Հայրապետս, Ճեմարանի ողջ փեսչութիւնն ու դասախօսական կազմը, կրթօջախի հարիւրաւոր շրջանաւարտները, որ այսօր հովւում են աշխարհասփիւռ Մեր զաւակներին, ներկայ ուսանողութիւնը եւ համայն ժողովուրդը մեր՝ հաւատով, որ Հայրենի պետականութեան ազատ երկնքի ներքոյ հայոց հոգեւոր կեանքի լուսառատ նոր հորիզոններ են գծուելու: Հաւատով, որ Մայր Աթոռիս հոգեւոր կրթօջախը՝ առ Աստուած խոնարհութեամբ, հայրենեաց սուրբ ժառանգութեան սիրով, կրթական այս հաստատութեան երախտաւորների հանդէպ պատասխանատուութեամբ շարունակելու է իր ծառայութիւնը բերել Մեր ժողովրդին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հայոց պետութեանը՝ իր աղօթախօս անդաստանից ճամփելով կենաց խօսքով զինեալ հաւատի զինուորներ:

Արդ, «աղօթք հանդերձ ծունր դնելով» եւ գոհաբանութեամբ Աստուած փառաւորելով Հայրապետական սրբատառ Կոնդակով հաստատում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր բարձրագոյն ուսումնական հաստատութեան պաշտօնական անուանումը, որ այնքան ծանօթ, սիրելի ու հարազատ է մեր ժողովրդին.

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ:

Բարձրագոյն ուսումնական հաստատութեան կարգավիճակ ստանալու առիթով ջերմօրէն ողջունում եւ շնորհաւորում ենք հոգեւոր կրթօջախի յարգարժան տեսչութեանն ու դասախօսներին, մեծազնիւ բարերարներին, շրջանաւարտներին եւ ուսանողներին, ի սփիւռս աշխարհի Մայր Աթոռիս հարազատ բոլոր զաւակներին եւ բերում ենք Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Ի խորոց սրտի աղօթքով առ Աստուած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսոյ խորանից օրհնում ենք յիշատակը կրթօջախիս հիմնադրի, բայց նաեւ՝ հոգեւոր ուսումնական գործը շարունակող ու զօրացնող երանեալ Հայրապետների, երջանկայիշատակ բարերարների, ուսման մշակների, որոնց նուիրեալ ծառայութեամբ նաեւ ծբրեւ բարձրագոյն հաստատութիւն կայացաւ Մայր Աթոռիս կրթօջախը:

Թող Աստուած իր հանապազ խնամքի ներքոյ հաստատուն ու շէն պահպանի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի լուսաբաղձ յարկը, իմաստութեան ու շնորհի մէջ՝ դաստիարակող մանկավարժներին, մտքով ու հոգով զօրացեալ՝ բոլոր ուսանողներին:

Յարգարժան դասախօսներ եւ շատ սիրելի ուսանողներ, ի մասնաւորի Ձեզ ուղղելով Մեր խօսքը, ուզում ենք անդրադառնալ, որ որքան էլ հոգածու ձեռքերում լինի Ճեմարանը, որքան էլ ապահովուած ուսուցման արդիական միջոցներով ու հնարաւո-

րութիւններով, կրթական գործի յաջողութիւնը շարունակում էք ապահովել դուք: Դասաւանդողի եւ ուսանողի երկխօսութիւնն է կրթութիւնը, մտքի եւ հոգու ներդաշնակ այն զրոյցը, որը արդիւնքի առումով չունի վախճան, եւ Մենք ուզում ենք, որ այս գիտակցութեամբ սկսուի ու աւարտուի ձեր օրը:

Եւ թող Ճեմարանի համբաւի հետ միշտ բարձրօրէն հնչի պայծառ անունը Գէորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Հայոց Մեծագործ Հայրապետի՝ կրթութեան ու լուսաւորութեան մեծ ջատագովի ու տարածողի, առ Քրիստոս հաւատի ուխտապահ, պահանջկոտ սպասաւորի:

«... Որդւոցս ընդ նոյն հարցն պարտ է ընթանալ՝ զնոյն հաւատս ունելով, զնոյն վաստակս յանձին բերելով...», որպէսզի մեր ժողովրդի կեանքի բոլոր ճանապարհները՝ ողողուած հոգեւոր իմանալի լոյսով, անսայթաք առաջնորդեն դէպի Եկեղեցի, Աստծոյ Սուրբ Տաճար այսօր եւ միշտ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 104

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2002 թվականի օգոստոս ամսվա ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Մաքսիմ Հակոբյան (Սյունյաց թեմ)
Հովհաննես Երիցյան (Արմավիրի թեմ)
Լևոն Սարգսյան (Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմ)

**Օրհնության գիր** է տրվել.
Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ծխական համայնքին (Բրազիլիայի հայոց թեմ)
Ս. Փրկիչ եկեղեցու ծխական համայնքին (Բրազիլիայի հայոց թեմ)
Ջանբազյան Պարարվեստի ակադեմիային (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Նարեկ վարդապետ Պերպերյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Եզնիկ քահանա Կյուզելյան (Բրազիլիայի հայոց թեմ)

**Ավագության պատիվ** է տրվել.
Եփրեմ քահանա Գըլըճյան (ԱՄՆ Արևելյան թեմ):

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ՝ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շնորհավորական նամակ է հղել Արկադի Ղուկասյանին՝ ԼՂ Հանրապետության Նախագահի պաշտոնում վերընտրվելու առիթով: Նամակում ի մասնավորի ասվում է.

«ԼՂ Հանրապետության Նախագահի ընտրությամբ Արցախի հերոսական ժողովուրդը վերստին հաստատեց ազատ ապրելու իր կամքը և իր պատրաստակամությունը՝ ընթանալու Արցախի պետականության զորացման, երկրի կայունության ամրապնդման և բարգավաճման ճանապարհով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսո խորանից աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ ու ապահով պահպանի հայոց Արցախ աշխարհը և աջակից ու առաջնորդ լինի Ձեզ Նախագահի բարձր ու պատասխանատու պաշտոնում՝ հանուն հավատավոր մեր ժողովրդի հայրենաշինական իղձերի իրականացման:

Թող Տերը պարգևի Ձեզ քաջառողջություն, ուժ, կորով ու եռանդ»:

*12 օգոստոսի 2002 թ.*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում և նոր ուսումնական տարվա բացման առիթով շնորհավորում ենք բոլոր աշակերտներին և ուսանողությանը, նրանց ծնողներին, մանկավարժներին և կրթության շնորհակալ գործի բոլոր նվիրյալներին:

Աղոթում ենք առ Տերը, որ իմացության սերը միշտ զորավոր լինի Մեր զավակների հոգում և գիտելիքների ամբարումով ու նաև արժեքների ճանաչմամբ առաջնորդի դեպի հոգևոր խարսխացում: Թող նոր ուսումնական տարին բազմարդյուն լինի և՛ առավողների, և՛ ուսուցանելու կոչված շնորհընկալների՝ դասավանդողների համար՝ հանուն իր նոր կյանքը կերտող մեր ժողովրդի, մեր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու:

Թող Լույսն Իմանալի լուսավորի ձեզ, և Աստվածային շնորհները լինեն ձեզ վրա այսօր և միշտ. ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
1 սեպտեմբերի 2002 թ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Օգոստոսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից ստորագրվեց համաձայնագիր Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ Կառավարության միջև, որի համաձայն 2003 թ. հունվարից Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում դասավանդվելու է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան:

Բարձր գնահատելով համաձայնագրի կնքումն ու արժեվորելով նոր առարկայի մուտքը հանրակրթական դպրոց՝ ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը նշեց. «Անուրանալի է Հայ Եկեղեցու դերը մեր մշակույթի, ոգու, մեր ազգի պահպանման գործում: ... Փաստորեն մանուկ հոգիների որսագողության ճանապարհին ենք մենք փակում և մեր երեխաներին դաստիարակում ենք ազգային ոգով, որը նպաստելու է մեր պետության հետագա զորացմանը, զարգացմանը»:

Ամենայն Հայոց Հայրապետը ևս, կարևորելով պատմական նշանակություն ունեցող այս իրադարձությունը, ասաց. «Մենք հավատում ենք, որ արդյունքում պիտի ունենանք ոչ միայն մեր պատմությանը քաջածանոթ, գիտակ նոր հայորդյաց սերունդ, այլև պիտի ունենանք հայրենասեր, նվիրյալ, բարի քրիստոնյաներ, ազնիվ քաղաքացիներ մեր երկրի, որոնց հայացքի առջև ավելի հստակությամբ պիտի գծվի մեր ժողովրդի վաղվա օրը, նրա առաքելությունը դեպի նոր դարեր, նոր հազարամյակներ»:

Հանդիպմանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը և Կառավարության մի շարք անդամներ:

*22 օգոստոսի 2002 թ.*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ ԵՐԿՐՈՐԴԸ ԵՎ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՐՋ ՔԵՐՐԻՆ ԻՐԵՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿԱԼՎԱԾՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հատուկ գրություն էր առաքվել քույր Եկեղեցիների հովվապետերին՝ կապված Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը պատկանող «Պարոն Տեր» կալվածքի շուրջ ծագած խնդիրներին:

Ի պատասխան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նամակի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի և Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերրիի նամակները:

Երկու Եկեղեցիների հոգևոր պետերն իրենց մտահոգությունն ու անհանգստությունն են կիսում Վեհափառ Հայրապետի հետ՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը զորակցելու և աջակցելու խնդրի բարվոք լուծմանը:

*21 օգոստոսի 2002 թ.*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԱԾ ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը օգոստոսի 7-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանին, որը, հրաժարականի դիմում ներկայացնելով, ինքնակամ լքել է հոգևոր ծառայությունը և առանց հայրապետական արտոնության մեկնել արտասահման:

Կարգալույծ արված հոգևորականն այլևս դասվում է աշխարհականների շարքը և կկոչվի ավազանի անունով՝ Նշան Հովհաննիսյան:

*8 օգոստոսի 2002 թ.*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 70 - ԱՄՅԱԿԻՆ

# ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Օգոստոսի 23-ին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի ծննդյան 70-ամյակին, որին ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, բարձրաստիճան հոգևորականներ, գիտնականներ, մտավորականներ և հյուրեր:

Հանդիսավոր նիստն սկսվեց միասնական «Տերունական աղոթք»-ով, որից հետո ողջույնի և բացման խոսքով ներկաներին դիմեց ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Անդրադառնալով լուսահոգի Հայրապետի, գիտնականի, մտավորականի, ազգի և Եկեղեցու նվիրյալի անցած կյանքի ուղուն՝ նա ասաց. «Կարճ ապրեց լուսահոգի Վեհափառը, ընդամենը 67 տարի, բայց ապրեց հանուն և լեցուն, հայրենիքին, ազգին, Հայ Առաքելական Եկեղեցուն անհունորեն նվիրված մի մեծ և ուսանելի կյանք»:

Ակադեմիայի նախագահը նաև Գարեգին Բ Հայրապետին հանձնեց լուսահոգի Գարեգին Ա Կաթողիկոսին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր ակադեմիկոսի կոչումը շնորհելու դիպլոմը:

Այնուհետև զեկուցումներով հանդես եկան ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը՝ «Գարեգին Ա մեծ հոգևորականը» (տե՛ս էջ 49), Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը՝ «Բարի հիշենք Հայր Գարեգինը» (տե՛ս էջ 52) թեմաներով, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, որն անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսության տարիներին Գարեգին Առաջինի ծավալած շինարարական գործունեությանը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Վարդան Դևրիկյանը՝ «Ս. Էջմիածինը Գարեգին Առաջինի մտածումներում Ամենայն Հայոց Կաթողիկոսության շրջանում» (տե՛ս էջ 68) թեմայով:

Վերջում ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը (տե՛ս էջ 45):

Նիստն ավարտվեց «Հայր մեր»-ով և Վեհափառի «Պահպանիչ»-ով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ՍԿՍՎՈՒՄ Է ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է «ԵՂԻՇԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ» ԵՎ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ» ՀՈՒՇԱՔԱՐԸ

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Օգոստոսի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գարեգին Ա հոգելույս Հայրապետի հարազատները, ինչպես նաև ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ դր. Ռոբերտ Էդգարի:

Պատարագիչ Սրբազան Հայրն իր քարոզում անդրադարձավ Մայր Աթոռում գահակալության շրջանին Գարեգին Առաջինի կատարած վարչական բարեփոխումներին, գրահրատարակչական գործունեությանն ու քրիստոնեական Եկեղեցիների միջև հարաբերությունների սերտացմանն ուղղորդված ջանքերին (տե՛ս էջ 79):

Հավարտ Ս. Պատարագի լուսահոգի Հայրապետի շիրիմի մոտ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, տեղի ունեցավ «Եղիշե Մանուկյան մատենադարանի» և «Գարեգին Ա Աստվածաբանական, հայագիտական հետազոտական կենտրոնի» հուշաքարի օրհնությունը՝ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հանուն Մայր Աթոռի միաբանության բացման խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Տաթև եպս. Սարգսյանը: Սրբազան Հայրն իր շնորհակալությունը հայտնեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին այս գեղեցիկ նախաձեռնության համար, ապա ներկայացրեց Հայ Եկեղեցու ազգային բարերարներ Եղիշե Մանուկյանի և նրա որդու՝ Վաչե Մանուկյանի ազգանվեր գործունեությունը. «Եղիշե Մանուկյանը եղեռնի վերապրող սերնդի ներկայացուցիչներից էր, մարդ, ով իր օրը սկսում էր ուսուցչությամբ, կեսօրից հետո լծվում էր խմբագրի տքնաջան աշխատանքին, իսկ երեկոյան ժամերը անցկացնում էր սպորտային աշխույժ կյանքով: Իսկ Գարեգին Ա Վեհափառը բոլորիդ ծանոթ է, այն մեծ աստվածաբանը, այն գիտնականը, ով առավոտից երեկո գրքերի հետ էր, իր սենյակի ամեն կողմը գիրք էր: Եվ եթե գիրք չկարդար, կարծես կամաչեր մարդկանցից և Աստծուց, որովհետև ինքը հավատում էր, որ Աստված մեզ իմացականություն և բանականություն է տվել, որպեսզի մենք իրեն նմանվենք ստեղծագործ կյանքով: Նա առանց գրքի չէր պատկերացնում հայ հոգևորականին, քանզի գրքով է եկեղեցականը մոտենում Աստծուն և մտավորականի լուրջ աշխատանքին»:

Այնուհետև Տաթև Սրբազանն ընդգծեց, որ «Գարեգին Ա Աստվածաբանական, հայագիտական հետազոտական կենտրոնի» բացումը ամենամեծ հարգանքի արտահայտությունն է Հայրապետի անձի նկատմամբ:

Հուշաքարի օրհնությունից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ ասելով.

*«Սիրելի բարեպաշտ հայորդիք, հոգևոր ուրախությունը Մեր սրտում. այսօր Մենք ձեզ հետ միասին աղոթքով և շարականների երգեցողությամբ կատարեցինք օրհնությունը և բացումն այս հուշաքարի, օրհնությունն այս հողակտորի, որի վրա պիտի կառուցվի Եղիշե Մանուկյան մատենադարանը և Գարեգին Ա-ի անվան Աստվածաբանական, հայագիտական հետազոտական կենտրոնը՝ ի նշանավորումն երջանկահիշատակ մեր նախորդի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակի:*

*Ինչպես արձանագրությունից է երևում, այս կառույցն իրականություն պետք է դառնա շնորհիվ ազնիվ նվիրաբերության ազգային բարերար Վաչե և Թամար Մանուկյանների, ովքեր այս մեծ նախաձեռնությամբ իրենց սերն ու հարգանքն են արտահայտում երանաշնորհ Հայրապետի նկատմամբ: Պատահական չէ, որ հուշաքարի վրա քանդակված են երկու անձանց և հաստատությունների անուններ: Եղիշե Մանուկյանը հայրն է Վաչե Մանուկյան մեր բարերարի, որ սնել է նրան, խնամել, աճ ու հասակ պարգևել, բայց նաև նրա հոգու մեջ սերմանել բարեգործության ոգին:*

*Գարեգին Վեհափառը մեր բարերարի հոգևոր ծնողն էր, ով նրա կյանքի ուղին առաջնորդել և ուղեգծել է արդարության, աստվածպաշտության և սիրո ճանապարհներով: Մենք գիտենք ձեզ հետ միասին, թե ինչպիսի սիրով էր մշտապես շրջապատում Մանուկյան ընտանիքը Գարեգին Ա Վեհափառին: Հարազատ զավակի պես նրանք միշտ նրա կողքին եղան՝ թե՛ նրա գահակալության գործնեության տարիներին և թե՛, մասնավորապես, կյանքի վերջին օրերին, հիվանդության ժամանակ՝ իրենց ներկայությամբ սփոփելով ցավը Հայոց Հայրապետի:*

*Բարերարների այս ձեռնարկը՝ մատենադարան և Աստվածաբանական, հայագիտական կենտրոն, մի հաստատություն, որ հետաքրքրությունների առանցքն էր կազմում երջանկահիշատակ Հայրապետի, լավագույն և արժանի հատուցումն է:*

*Գիրքն իր արժեքով նույնացած էր հոգելույս Գարեգին Ա Կաթողիկոսի անձի և էության հետ և այդ առումով, թերևս, ամենաարժանավոր հետնորդն էր մեր հայրերի, մեր նախնյաց: Այսօր, երբ մենք արժեվորում ենք նրա կյանքն ու գործունեությունը, վստահաբար մեր կյանքում առանձնակի տեղ պիտի գրավի գիրն ու գրականությունը և այդ ոլորտում արձանագրված երջանկահիշատակ Հովվապետի վաստակը:*

*Հուշաքարի բացման այս ուրախ առիթով Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված Հայոց Հայրապետի արդար հոգու համար և հայցում, որ նա երկնքից շարունակի իր օրհնությունը հովանի դարձնել հայոց աշխարհի և մեր ժողովրդի զավակաց վրա, որպեսզի մեր ընթացքը լինի անշեղ, մեր իրագործումները լինեն եկեղեցանվեր ու հայրենաշեն:*

*Այս կապակցությամբ Մենք ուզում ենք նաև Մեր գնահատանքի խոսքն ուղղել ազնիվ բարերարներին, ովքեր թեև հիմա այստեղ չեն, բայց իրենց հոգով, աղոթքներով ու զգացումներով այսօր մեզ հետ են: Մեր գնահատանքն ենք բերում նրանց ոչ միայն այս կառույցի իրականացման հովանավորությունը ստանձնելու համար, այլ նաև բոլոր այն բարեգործությունների, այն զորակցության համար, որ նրանք դրսևորեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ երջանկահիշատակ Հայրապետի գահակալության շրջանում, ինչպես և Մեր հայրապետության առաջին իսկ օրից:*

*Աղոթքով հայցենք առ Աստված, որ Տերն Իր հոգածության և խնամքի ներքո պահի ու պահպանի Մանուկյան ընտանիքը, նրանց պարգևի կյանքի արևշատ օրեր և նրանց մտաց ու ձեռաց գործերին՝ լիակատար հաջողություններ: Տիրոջ օրհնությունը մեզ ամենքիս, և թող Հայոց Հայրապետի բարեխոսությամբ Աստված պահապան լինի մեր երկրին, Եկեղեցուն ու ժողովրդին այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն»:*

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակին նվիրված հուշ-երեկո՝ բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Գիտության և կրթության նախարար Լևոն Մկրտչյանը, հոգևոր Հայրապետի խարազատներ և մտավորականներ:

Բացման խոսքով հանդես եկավ Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը. «Բոլորդ էլ կարող եք վկայել, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս Վեհատունն այլևս դարձել է կարծես մեր բոլորի խորհրդածությունների, վերլուծությունների, զանազան արժեքների գնահատման և թաթախման վայրը: Այսօր մենք Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հավաքվել ենք հիշելու և նշելու Գարեգին Ա Վեհափառի ծննդյան 70-ամյակը: Ես այսօրը ուզում եմ բնութագրել իր իսկ խոսքերով, համաձայն որի՝ մեծերին պատվելիս նրանց չէ, որ պատիվը գնում է, այլ մենք ենք դրանով մեծանում: Ինձ համար, որպես Գարեգին Ա Կաթողիկոսի հոգևոր զավակի, այս պահին դժվար է որևէ բան ասել: Որպես Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ, մեր առաջին քայլերը նրա շնչի ներքո ընթացան, և մեզ համար նա մնաց և մնալու է իբրև հոգևոր հայր, իբրև մի տեսլապաշտ կաթողիկոս և տեսլապաշտ հայ մտավորական»:

Խոսքի վերջում Հայր Սուրբը շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին, ով իր նախանձախնդիր ձեռնարկումներով ողջ միաբանությանը նույնպես մղում է բոլոր մնայուն արժեքներին արժանի գնահատական տալ:

Այնուհետև բանախոսությամբ հանդես եկավ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Սրբազան Հայրն իր խոսքում անդրադարձավ իմաստուն և նվիրյալ Հայրապետի կյանքին և գործունեությանը (տե՛ս էջ 73): Բանախոսություններով հանդես եկան նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի և ՀՀ Սահմանադրական դատա-

րանի անդամ Ռաֆայել Պապայանը (տե՛ս էջ 76), ՀՀ Գիտության և կրթության նախարար Լևոն Մկրտչյանը: Գիտության և կրթության նախարարը նշեց, որ կրկնակիորեն խորհրդանշական է Հայագիտական, Աստվածաբանական կենտրոնը Գարեգին Առաջինի անունով կոչելը, քանի որ հայ հոգևորականի կերպարն ընդհանրապես և ի մասնավորի Գարեգին Առաջինինը մեզ ներկայանում է անխզելիորեն կապված գրքի և գիտության հետ:

Վերջում ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը (տե՛ս էջ 47):

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: Գեղարվեստական հայտագրով ներկաների առջև հանդես եկավ Երևանի Կամերային երգչախումբը՝ ղեկավարությամբ Հարություն Թոփիկյանի:

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(23 օգոստոսի 2002 թ.)

Սիրելի ներկաներ.

Ուրախ սրտով ողջունում ենք այս տոնական հանդիսությունը, որը նվիրված է երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակին: Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում ձեզ բոլորիդ և Մեր գնահատանքը՝ Ազգային Ակադեմիայի Նախագահությանը՝ այս հավաքը կազմակերպելու համար:

Եկել ենք այստեղ մխիթարված հոգով, քանզի Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայում Գարեգին Ա Հայրապետի՝ Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամի հիշատակի մեծարումը մեր ժողովրդի երախտիքի մատուցումն է իր արժանավոր, մեծագործ զավակին, հանձին նրա՝ Հայ Եկեղեցուն, ինչպես նաև նոր վկայություն, որ օրեցօր մեր կյանքում զորանում են հավատն ու աստվածճանաչողությունը:

Արդարև, աստվածճանաչողության լուսեղեն ընթացքը էր հոգելույս Հայրապետի կյանքն ու գործը, դեպի Տերը ճանապարհ, որ սկսվեց Անթիլիասի Դպրեվանքից, բարի պտուղներ հավելեց Հայ Եկեղեցու անդաստանում, Հայրապետական խնամք՝ Կիլիկիո տարագիր Աթոռին, որը զորացավ ու պայծառացավ նրա 18-ամյա գահակալության շրջանում: Աներեր ընթացքով Տիրոջ ճանապարհին առաջնորդեց նրան դեպի Ս. Էջմիածին, և Լուսավորչի Աթոռի 131-րդ շնորհազարդ Գահակալը, նոր ավյունով լցված, շինարար գործեր, սեր ու նվիրում հավելեց Մայր Աթոռին Հայոց ու աղոթախոս իր հանգրվանը գտավ հայրենի հողում, Աստվածակառույց Մայր Տաճարի հովանու ներքո:

Սիրելի ներկաներ, այսօր հոբելյանական տարեդարձի առիթով մենք վերստին արժևորում ենք Գարեգին Ա Հայրապետի վաստակը և թողած ժառանգությունը իր ժողովրդին, որ ոգեղեն խոսք է, հոգևորականաց սերունդ, բառնած ու նորոգված եկեղեցի, ուսումնասիրություն ու գիրք՝ ծնունդ առած հոգևորականի առաքելության ամբողջական գիտակցումով ու ապրումով, որպեսզի առ Աստված հավատով ու առ Հայրենին սիրով միշտ միացյալ լինի մեր ժողովուրդը և կրի իր հոգում միասնական ու ազատ իր Հայրենիքի պատկերը ու երբեք չխոտորվի դեպի Աստված իր հաղթա-

կան ընթացքից: Ինչպես մեկ անգամ ասել ենք՝ կյանքը նրա նվիրում էր, գործը՝ սեր ու ծառայություն: Առանց սիրո չկա ծառայություն: Գարեգին Ա Հայրապետը մեծ եղավ իր ծառայության մեջ, քանզի մեծ էր նրա սերը Աստծո, իր ժողովրդի ու Հայրենիքի, Հայ Եկեղեցու հանդեպ: Առ Աստված վստահությամբ իբրև քաջ հովիվ, նա հովվեց իր հոտը՝ առանց հոգնելու, առանց դադար առնելու, անձնդիր ծառայեց իր ժողովրդին և այդ ճանապարհով՝ մարդկությանն ու Աստծուն:

Մենք խավատում ենք, որ նրա գիտա-գրական ժառանգությանը նվիրված քննարկումները մեր կյանքում արժեվորվելու են հատկապես իբրև փորձառություն հայոց խոհուն, իմաստուն Հայրապետի, ով գիտնական աստվածաբան ու ոգեշունչ քարոզիչ էր, հավասարազոր շնորհալի մանկավարժ, գրող ու հրապարակախոս, միջեկեղեցական ճանաչված գործիչ:

Այսօր, երբ մենք ազատ ու ինքնիշխան մեր Հայրենիքում երախտիքի մեր տուրքն ենք մատուցում Գարեգին Ա Հայրապետի հիշատակին, պարտավոր ենք հիշել նաև ներեկեղեցական մեր կյանքում պառակտումը վերացնելու և Հայ Եկեղեցին միավորված տեսնելու ձգտումով գործադրած նրա անդուլ ջանքերը: Ավա՜ղ, նա նույնպես փակեց իր աչքերը այս երազով: Վախճանից առաջ նրա վերջին պատգամը, որ այսօր էլ նույն հուզմունքով է համակում Մեր սիրտը, ուղղված է ոչ միայն միաբաններին, այլև ամեն հայի. «Հոգեկան խոր հուզումով կը բաժնուիմ ձեզմէ, կը միանամ Աստծոյ՝ Յարուցեալ Տիրոջս: Փափագս է, որ դուք մնաք Աստծոյ հետ, քաջ ըլլաք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը սիրէք և անոր սուրբ, կրօնական և ազգային ծառայութիւնը չէն պահէք»:

Այո, այսօր մեզ հետ է Գարեգին Ա լուսահոգի Հայրապետը: Մեզ հետ է հոգևոր, գրական ու գիտական իր վաստակով, իր անունը կրող Աստվածաբանական, հայագիտական կենտրոնի նորընթաց գործունեությամբ, իր քարոզների ու գրքերի վերահրատարակությամբ, մեծարումի այս հանդիսությամբ, մեզ հետ է անմար իր հիշատակով և միշտ լինելու է մեր ժողովրդի՝ իր սիրեցյալ հոտի հետ՝ միշտ պատգամելով. «Մոտեցեք Տիրոջը և լույս առեք... » (Սաղմ. ԼԳ 6):

Վերստին Մեր օրհնությունն ենք բերում և գնահատանքը ձեզ՝ հիշատակի ու մեծարումի այս հանդիսության կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին:

*«Շնորհք, սէր և խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ. ամէն»:*

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀՈՒՄ

(25 օգոստոսի 2002 թ.)

Փառք և գոհություն ենք վերառաքում Ամենակալ Տիրոջը այս երջանիկ պահի համար, երբ կարող ենք միմյանց հայացքում տեսնել հիշատակն ու մեծարումը Հայոց շնորհազարդ Գարեգին Ա Հայրապետի, Լուսավորչի Գահի 131-րդ Գահակալի, որի ծննդյան 70-ամյան հիշատակելու համար հավաքվել ենք այստեղ՝ Վեհարանի այս հանդիսասրահում, ուր դեռ պահպանվել է արձագանքը նրա ձայնի, որ հորդորում է հոգում կրել ճառագող լույսը Ս. Էջմիածնի, Հայրենիքի սերը, և միշտ միասնական լինել, ուժեղ՝ միմյանցով, հավատավոր ու ծառայասեր:

Մեծապես ուրախ ենք, որ, նախանձախնդրորեն արձագանքելով Մայր Աթոռի հրավերին, հեռու և մոտիկ վայրերից եկել եք այսօր Ս. Էջմիածին, որպեսզի միասին ի խորոց սրտի աղոթք բարձրացնենք հոգելույս Հայրապետի համար և խոնարհումով երախտիքի մեր տուրքը մատուցենք նրա անանց հիշատակին: Անանց ոչ միայն այն հարուստ ժառանգությամբ, որ թողել է Գարեգին Ա Հայրապետը, այլ նաև այն հիշողություններով, որոնք յուրաքանչյուրիս հոգում ծրարված՝ անձնական են ու առանձնահատուկ: Այն, ինչ մեր հոգում է, անհնար է մեզանից բաժանել:

Այստեղ ներկաներից շատերը հոգելույս Հայրապետի հիշատակը կրում են իրենց հոգում իբրև ուսուցչի, շատերը հիշում են նրա հետ հարազատի իրենց մտերմությունը, շատերն էլ գիտեն Գարեգին Ա Հայրապետին նրա գրքերի և ներշնչուն, հոգուց բխող ու դեպի հոգի գնացող խոսքի միջոցով: Հիրավի, նրան ճանաչողները գիտեն, թե ինչպես խոհի ու մտածումի խորությամբ և իր խոսքի զորությամբ նա կարող էր բացել հույսի ու հավատքի դռները, խանդավառել, հայրենանվեր ոգի փոխանցել հայ հավատացյալին՝ օգնելով սիրել կյանքը և գործել հանուն կյանքի: Նրան հասկացել ու սիրել են բոլորը, ովքեր հաղորդակցվել են նրա հետ:

Հայրենաբնակ հավատավոր մեր ժողովուրդը, ցավոք, կարելիությունը չունեցավ ճանաչելու իր Հովվապետին, քանզի վաղաժամ հրաժեշտ տվեց երկրավոր կյանքին ու դարձավ հավերժի ճամփորդ: Այսօր մենք վերստին ապրում ենք ափսոսանքը նրանից անժամանակ բաժանման: Սակայն հավատում ենք, որ նրա հոբելյանական տարեդարձին նվիրված միջոցառումները նույնպես քայլ են դառնալու՝ առավել ճանաչելու համար լուսահոգի Հայրապետին, նրա անհատականությունն ու մեծությու-

նը, արժեվորելու նրա գործը և, մանավանդ՝ ունկնդիր լինելու նրա ձայնին. նրա պատգամներին:

Սիրելի հոգևոր եղբայրներ և աշխարհական հայորդիններ, Գարեգին Ա Հայրապետը, իբրև ճշմարիտ հոգևորական, իր անձով ու գործունեությամբ եկավ մեկ անգամ ևս հաստատելու ու իմաստավորելու հայ եկեղեցականի կոչումն ու առաքելությունը, զորացնելու Հայ Եկեղեցու դերը ազգային կյանքում: Նրա խոսքերն են. «Ս. Գրիգոր Լուսաւորիչը և իր լուսափիառ շառաւիղները խօսեցան հոգիի և միտքի ուժով և այդ ուժը դրին հայ եկեղեցականի սքեմի մէջ»: Այսպես էր զգում ու պատկերացնում Հայ Եկեղեցու դերը երջանկահիշատակ Հայրապետը՝ մտնել ազգի մեջ հոգու և մտքի ուժով և նրան կյանքով նորոգել. Քրիստոսի Հարուցյալ կյանքով, նախնյաց փառքով ներկան իմաստավորել ու վստահորեն գալիքին նայել, հավատալ ու առաջ ընթանալ:

Քրիստոնեական հավատքն ու ազգային պատկերը դաշնորեն ու հարազատորեն շաղախած իր մեջ՝ Գարեգին Ա լուսահոգի Հայրապետը առանց հոգնելու արդյունավորեց իր օրն ու ժամը, իր ամեն քայլը հոգևոր գործունեության բոլոր հանգրվաններում լինի փեսչություն, առաջնորդություն, թե կաթողիկոսություն: Այդպիսին էր նա, քանզի առաջնորդվելու իր սկզբունքը, ապրելու իր նպատակը, իր կոչումը ծառայությունն էր Աստծուն, ազգին, Եկեղեցուն ու Հայրենիքին:

Վառ պահենք նրա հիշատակը և ավելի վառ՝ այն սերը, որով Հայոց հոգևոր Հայրապետները, մեր սուրբ նախնիք պայծառ են պահել Հայ Եկեղեցու լույսը, իրենց կյանքով քար ու շաղախ գումարել առաքելահաստատ վեմին հոգևոր մեր փառ: Սա է նրանց, նաև լուսահոգի Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մեծագույն պատգամը, հայրական խորհուրդն ու խրատը մեզ: Եվ չկա ավելի մեծ գնահատական նրանց կյանքին ու գործին, քան մեր հավատարմությունը նրանց թողած ժառանգությանը, քան մեր հավատարմությունը դեպի Աստված նրանց արդար ընթացքին: Եվ թող այսպես լինի այսօր և միշտ. ամեն:

*ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԷՄԵԱՆ*

# ԳԱՐԵԳԻՆ Ա ՄԵԾ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ*

Գարեգին Ա. երջանկայիշատակ Կաթողիկոսն Ամենայն Հայոց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի շրջանակներու մէջ ներկայացուց Հայ եկեղեցականի փայլուն անձնաւորութիւնը եւ խոր կերպով պատուեց բոլոր Եկեղեցիներու բարձրաստիճան եկեղեցականները: Մեր փորձառութեամբ կրնանք վկայել, թէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի մեծ ժողովներուն արձակուած իր խօսքը միշտ եղած է իմաստութիւն: Երբ օրակարգի վրայ կուգային օրուան մեծ փացնապներուն վերաբերեալ հարցեր, ինչպէս Հարաւային Ափրիկէի ցեղախտրական քաղաքականութիւնը կամ Լիբանանի քաղաքացիական պատերազմը, Կիպրոսի հարց, ինչպէս նաեւ հայ ցեղասպանութեան հետ կապուած հարցեր, անոր խօսքը կը բանաձեւէր հաւասարակշռուած, պերճախօս եւ բարձրաստիճան եկեղեցականի պատկառելի ոճը: Չկար օտար բարձրաստիճան եկեղեցական, որ չնկատէր զայն, իբրեւ Հայ Եկեղեցւոյ պայծառ դէմքը:

Իբրեւ Կիլիկեան Աթոռի գահակալ, թէեւ ան շարունակեց իր նախորդներու քաղաքականութիւնը Մայր Աթոռին նկատմամբ, բայց եւ այնպէս անոր գրաւիչ անձնաւորութիւնը յաջողեցաւ շահիլ յուսահոգի Վազգէն Ա. Հայրապետի համակրանքը, որուն արդիւնքը եղաւ ի վերջոյ անոր ընտրութիւնը, իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Մենք կը հաւատանք, թէ երջանկայիշատակ Կաթողիկոսը պիտի գտնէր յարմար առիթը լուծելու համար Մայր Աթոռի եւ Կիլիկեան Կաթողիկոսութեան միջեւ զարգացած փացնապները եւ հաստատէր վերջնական խաղաղութիւն ընդմէջ երկու Աթոռներուն: Վազգէն Ա. մեծ Կաթողիկոսի մահը չտուաւ այդ առիթը Գարեգին Բ. Կաթողիկոսին. «Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ»:

Իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս անոր հանդիպումները նախագահներու եւ եկեղեցական պետերու հետ եղած են միշտ շատ տպաւորիչ: Այստեղ կ'ուզեմ յիշել անցեալ դեկտեմբերին Վեհափառ Հայրապետի Ֆրանսայ այցելութեան առիթով նախագահ Շիրակի վկայութիւնը Գարեգին Ա. Սարգիսեան անձի մասին: Երբ կը գտնուէինք Ֆրանսայի նախագահի գրասենեակի մէջ, նախագահը ըսաւ. «Ես ճանչցայ Ձեր նախորդին եւ խոր տպաւորուեցայ անոր խարիզմատիկ անձնաւորութենէն»:

Երջանկայիշատակ Հայրապետին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան տարիները եղան, գլխաւորաբար, դժուար տարիներ, որովհետեւ նոր պետականութիւնը

---

* Զեկուցում կարդացված ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում:

Եկեղեցու եւ պետութեան միջեւ կային հիմնական հարցեր, որոնք չգտան անհրաժեշտ լուծում մը.

ա) Նոր Սահմանադրութեան մէջ յիշուեցաւ միայն պետութեան եւ Եկեղեցիի բաժանումը:

բ) Խիղճի եւ կրօնի ազատութեան օրէնքի հրապարակումէն ետք կառավարութեան առընթեր Կրօնական գործերու խորհուրդը զանազան հարցերով կրօնական շարժումներ արձանագրեց իբրեւ եկեղեցիներ Հայ Առաքելական Եկեղեցւոյ շարքին: Օրինակ, իբրեւ եկեղեցի ճանչուեցան արեւորդիները, իբրեւ հեթանոս հայեր, կրիշնայականները նոյնպէս եւ զանազան աղանդներ, ինչպէս խարիզմատներ, հոգեգալըստականներ եւ վերջին օրերու սուրբեր:

գ) Եկեղեցապատկան կալուածներու հարցը. Եկեղեցւոյ կալուածներէն քիչերը վերադարձուեցան Մայր Աթոռին եւ շատերը մնացին իբրեւ պատմական յուշարձաններ:

Հայաստանի կառավարութիւնը չընդառաջեց երջանկայիշատակ Կաթողիկոսի դիմումներուն՝ մերժելով վերադարձնել Մայր Աթոռին հարակից տարածքներ, հակառակ անոր բոլոր ճիգերուն: Այսօր, երբ ետ կը նայինք այդ չորս տարիներու պատմութեան, կունենանք այն տպաւորութիւնը, որ երջանկայիշատակ Կաթողիկոսին յարաբերութիւնը պետութեան հետ չանցաւ օրուան նախագահին հետ անձնական բարեկամութեան մը սահմանները:

Կ'ուզենք յիշատակել այստեղ երկու կարեւոր ձեռնարկներ, որոնց իրագործումը այնքան պիտի ուրախացնէր Գարեգին Ա. Կաթողիկոսի հոգին:

ա) Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցիի կառուցումը. այն Մայր եկեղեցին, որուն առաջին հիմնարկէքը կատարեցին երկու երջանկայիշատակ Կաթողիկոսները՝ Վազգէն Ա. եւ այն ատեն դեռ Կիլիկիոյ Գարեգին Բ.: Այն ատեն Վազգէն Ա. զգալի յուզումով մը ըսած էր փակաւին Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.-ին. «Եթէ իմ օրովս չօծուի նորակերտ Մայր եկեղեցին, անպայման դուք կը տեսնէք երջանիկ այդ օրը»: Արդէն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. կրցաւ օծել միայն Մայր եկեղեցւոյ հիմնաքարերը: Որքան երջանկութիւն կար անոր դիմագիծին վրայ Ս. Գրիգոր Լուսաւորիչի հիմնաքարերու օրհնութեան եւ օծումի օրը: Անոր դէմքին վրայ կերեւէր արդէն խսկ կառուցուած Մայր եկեղեցիին հեռանկար տեսիլքը: Սակայն, ամենակալն Աստուած ուզեց, որ փառքի այդ օրը պատկանի այսօրուան մեր նոյնանուն Վեհափառ Հայրապետին:

Նոյնպէս, երկրորդ մեծ հարցը, որ լուծումի կը սպասէր, Եկեղեցւոյ եւ պետութեան միջեւ կրթութեան նոր օրէնքն էր եւ դպրոցներու մէջ կրօնի դասաւանդման օրինականացումը: Լուսահոգի յոբելեարն էր, որ զարկ տուաւ Քարոզչութեան Կենտրոնի գործունէութեանը, կիրակնօրեայ վարժարաններու զարգացմանը եւ տարածումին այն յոյսով, որ նոր սերունդի կրօնական կրթութեան ծրագիրը պիտի հայ դպրոցէն ներս զարգանայ կրթական օրէնքի բարեփոխութեամբ: Աստուծոյ կամքն էր, որ Գարեգին Ա.-ի ծրագրածը նոյնպէս իրագործուի մեր Վեհափառ Հայրապետի

ջանքերով, որուն համար կ'ուզենք Ակադեմիայի այս բեմէն շնորհաւորել Ն. Ս. Օծու-թիւն Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառ Կաթողիկոսը եւ անոր կցել մեր շնորհաւորութիւ-նը՝ ուղղուած Հայաստանի այսօրուան կառավարութեան:

Ամփոփելով մեր խօսքը, կրնանք ըսել, թէ երջանկայիշատակ Հայրապետը եղաւ այն Կաթողիկոսը, որ յաջողեցաւ Մայր Աթոռի իրավիճակը հիմնապէս փոխել, այ-սինքն՝ պետական հիմնարկի մը վիճակէն վերածել Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մայր Աթոռի կարգավիճակին:

Տեղն է այստեղ յիշել նաեւ, թէ ան քաջալերեց մեզ հիմնելու Հայ Առաքելական Եկեղեցւոյ ուսանողական միութիւնը: Ան միշտ խանդավառուեցաւ բոլոր այն ծրա-գիրներով, որոնք կապ ունէին հայ համալսարանականներու հետ:

Երեւանի պետական համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետի առա-ջին փարուայ ուսանողութիւնը եւ դասախօսական կազմը երբեք չպիտի մոռնան մեր առաջին այցը Կաթողիկոսին Մայր Աթոռ եւ անոր գրաւիչ դասախօսութիւնը Հայ Ա-ռաքելական Եկեղեցւոյ մասին: Առինքնող իր խօսքով, խորիմաստ իր բացատրու-թիւններով, ներշնչող պատկերներով եւ օրինակներով՝ ան յուզելու չափ փպաւորեց բոլորը եւ հարստացուց հոգեպէս: Նման հանդիպումներ մեր ուսանողութեան հետ կրկնուեցան մի քանի անգամներ համալսարանէն ներս եւ արձանագրուեցան մեր ֆակուլտետի պատմութեան մէջ իբրեւ անմոռանալի պահեր, որոնք բոլորիս սրտի մէջ արթնցուցին սէրը մեր Եկեղեցիին հանդէպ, խորիմաստ ըմբռնումը մեր Եկեղեց-ւոյ առաքելութեան եւ անմար բոցը մեր հայրերու հաւատքին:

Կրնանք այստեղ երկարօրէն յիշել Գարեգին Ա. Սարգիսեանի փայլուն իմացա-կանութիւնը, ոսկեբերան ճարտարախօսութիւնը, գիտական մեծ շնորհները եւ մարդ-կային ազնիւ բնաւորութիւնը: Այդ ամենին ծանօթ ենք բոլորս եւ առիթն է այս փառք տալու Աստուծոյ, որ Գարեգին Ա.-ին յաջորդեց Գարեգին Բ., որպէսզի Առաջինին մեծ երազները դառնան լուսաւոր իրականութիւններ, որպէսզի Հայ Առաքելական Եկեղեցին վերականգնուէ ո՛չ միայն քարաշէն իր գեղեցկութեամբ, այլ նաեւ վերա-կանգնուի հայ հոգիին մէջ եւ բացուի այնտեղ գաղտնի այն ճամփան, որ մեզ երկրա-ւորէն կը բարձրացնէ դէպի երկնայինը, ինչպէս կ'ըսէ Թէքէեանը.

*Եկեղեցին հայկական*
*Ամէն քարի տակ գաղտնի*
*Դէպի երկինք բարձրացող*
*Գաղտնի ճամփա մը ունի:*

Օրհնեալ ըլլայ յիշատակը Գարեգին Ա. Կաթողիկոս Սարգիսեանի եւ անմոռաց անոր ծառայութիւնը մեր ժողովուրդին:

*ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃԵԱՆ*

# ԲԱՐԻ ՅԻՇԵՆՔ ՀԱՅՐ ԳԱՐԵԳԻՆԸ*

(Խօսք Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառի ծննդեան 70-ամեակի առթիւ)

Գարեգին Վեհափառը 20-րդ դարու երկրորդ կէսի հայ կեանքի ամենէն շքեղ եւ փայլուն անձնաւորութիւններէն մէկն էր, իմաստուն, խոհեմ, զգաստ, հեռատես, դիւանագէտ անձնաւորութիւն ըլլալէ եւ մնալէ յետոյ՝ հմուտ աստուածաբան, հոգեւորական, եկեղեցական մեծ գործիչ, հաւատաւոր էկումենիստ, ուսուցիչ, փայլուն հռետոր, գրասէր եւ գրագէտ Հայրապետ, բազմագիտակ գիտնական, առաջնորդ, հայ լեզուի ռսկերիչ: Իր այս բոլոր շնորհներով իրեն համար Հայ Եկեղեցին փոքր էր: Ատոր համար ինք դարձաւ ճառագայթող անձնաւորութիւն մը համաշխարհային մակարդակի մը վրայ եւ հանդիսացաւ աշխարհի մէջ ամենէն շատ ճանչցուած հայերէն մին: Ռահվիրայ եղաւ տարբեր-տարբեր ճակատներու վրայ, որովհետեւ ինք ուր որ եղաւ, ինչ որ ըրաւ՝ իրագործեց խորունկ հաւատքով եւ ամենէն գեղեցիկ կերպով: Ինք փայլուն աշակերտ էր եղած Անթիլիասի Դպրեվանքին մէջ: Դարձաւ Դպրեվանքի տեսուչ, դարձաւ եռանդուն վարդապետ: Գնաց Օքսֆորտ, ուր եւ երկուքուկէս տարի ուսանեցաւ եւ բոլորին համար դարձաւ Արեւելքէն եկած գեղեցիկ եւ իմաստուն վարդապետը: Վերադարձաւ Անթիլիաս ու դարձաւ Զարեհ Առաջին Կաթողիկոսի մօտիկ գործակիցներէն մին, եղաւ տեսուչ Դպրեվանքի, դասախօս՝ Ամերիկեան Համալսարանի, եւ ըստ ամենայնի արժեւորեց ինքզինքը: Եղաւ Լիբանանի բեմերուն զարդը, բազմաթիւ սերունդներու համար՝ եռանդուն քարոզիչը, ուսուցիչը, դաստիարակը:

Վեհափառը կազմաւորուած էր յատկապէս Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսի եւ Շահան Պերպերեանի շունչով: Եւ կը կարծեմ, որ այս երկու անձնաւորութիւններն էին, որ ամենէն խորունկ կերպով դրոշմած էին զինք եւ կազմաւորած իր անհատականութիւնը: Ժամանակակից հոգեւորականութենէն իրեն համար օրինակներ եղած էին Երուսաղէմի Թորգոմ Գուշակեան Պատրիարքը, Դերենիկ եպիսկոպոսը եւ Զարեհ Վեհափառը: Այս փիպարներու շունչին տակ կազմաւորուած անձնաւորութիւնը, Օքսֆորտի մէջ մշակուած միտքը, Քեսապի՝ իր ծննդավայրի աւանդութեամբ յագեցած իր հոգին զինք դարձուցին իւրայատուկ անձնաւորութիւն, եւ միշտ մեծական ակնկալութիւններ կապուեցան իրեն:

*
* *

Այսօր տակաւին շատ կանուխ է գնահատելու համար զինք իբրեւ մարդ, իբրեւ

* Բանախոսություն՝ կարդացված Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայում, Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում:

Կաթողիկոս, բայց կուզեմ վրձնի արագ հարուածներով ներկայացնել զինք իբրեւ գրագէտ, գրասէր, բանասէր, առաջնորդ եւ հայ լեզուի ոսկեգրիչ, ոսկեգործ եւ յատկապէս իբրեւ ուսուցիչ եւ դաստիարակ:

Մարդը իր մէջ զուարթ էր, աշխոյժ, սրամիտ: Մակերեսային անմիջականութիւն մը ունէր, որ, սակայն, որոշ տեղ մը կանգ կ'առնէր եւ ինք թոյլ չէր տար, որ մարդիկ փորձեն ճանչնալ զինք իր բուն էութեան մէջ: Միշտ խորհուրդ մը կը պահէր իր անձին շուրջ: Երախաններու հետ մտերիմ էր, զուարթ, աշխոյժ: Ընկերային շրջանակի մէջ միշտ կ'աշխատէր ըլլար խօսակցութիւն ղեկավարողը, առանց որ երբեք ըլլար անձնակեդրոն մարդ: Հոգեւորականը իր մէջ կը ներկայանար իբրեւ անկեղծ, հաւատաւոր քրիստոնեայ: Ան եղաւ Աւետարանին գեղեցիկ քարոզիչը, իրեննն էր այն, ինչ որ Թորգոմ Գուշակեան Պատրիարքը կ'ըսէր եւ կը բանաձեւէր հետեւեալ կերպով. «Կոչումի գիտակցութիւնն է, որ կը կատարելագործէ մարդը»: Այդ կոչումի գիտակցութիւնն էր, որ զինք տարաւ միշտ դէպի կատարելութիւն, դէպի ոգեկանութիւն եւ ինք յաջողեցաւ մարդիկը Աստուծոյ բերել, զիրենք ամենէն գեղեցիկ ճամբաներէն առաջնորդելով, ամենէն զուլալ աղբիւրներէն անոնց խմցնելով Աւետարանի կենդանի ջուրը: Իբրեւ հոգեւորական եւ ազգային գործիչ, եղաւ նախաձեռնող, ազգասէր Հայրապետ: Ինքը ազգին համար պատրաստ էր շատ մեծ զոհողութիւններու, միայն թէ այնպէս չըլլար, որ իր հաւատքը, իր հոգեւորականի գիտակցութիւնը եւ արժանապատւութիւնը զոհուէր:

Գարեգին Վեհափառը եղաւ մեծ աստուածաբան: Մեր վերջին յիսուն տարիներու ընթացքին մտքի վրայ համրուող աստուածաբաններէն եղաւ, թերեւս ամենէն ժողովրդականը: Այն, որ կրցաւ Շնորհալիին նման, ամենէն խորունկ եւ բարդ ճշմարտութիւնները արտայայտել պարզագոյն եւ գեղեցկագոյն ձեւով: Անշուշտ ունէինք եւ ունինք աստուածաբաններ, որոնք սակայն չոր են կամ ձեւով մը իրենց բիւրեղեայ դղեակին մէջ են պարփակուած: Բայց Գարեգին Կաթողիկոսը երբ կը խօսէր Հայ Եկեղեցւոյ մասին եւ կը քարոզէր Հայ Եկեղեցւոյ ճշմարտութեանց մասին, կը բացատրէր Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը՝ Աստուածածնի անձը, Քրիստոսի անձը, Աստուծոյ բնութիւնը, մարդու բնութիւնը, այս բոլորի մէջ պարզութիւն մը կը դնէր եւ մատչելիութիւն մը կուտար, որով պարզ ընթերցողը կամ համեստ կրթութեան տէր անձնաւորութիւն մըն ալ կարենար լսել եւ հասկնալ զինք: Որպէս աստուածաբան իր ամենէն մեծ գործերէն մէկը եղաւ այն աւարտաճառը, որ գրեց «Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու» նիւթին շուրջ, որը դժբախտաբար ցարդ անտիպ կը մնայ: Անգլերէնով ունեցաւ կարեւոր հրատարակութիւններ, որոնցմէ մին՝ «Հայոց Եկեղեցին եւ Քաղկեդոնի ժողովը», դարձաւ դասագիրք եւ է ու կը մնայ վերջին հարիւրամեակի հայկական աստուածաբանական ամենէն արժէքաւոր գործերէն մին: Ինք բազմաթիւ լեզուներով հրատարակեց աստուածաբանական եւ հայրաբանական գործեր, եւ յատկապէս Հայ Եկեղեցին օտարներուն ծանօթացնելու կոչուած հատորներ: Իբրեւ էկումենիստ՝ Եկեղեցիներու միութեան հաւատացող անձ, ինքը եղաւ ռահվիրայ մը:

Գրագէտ էր Գարեգին Վեհափառը, գրագէտ այն իմաստով, որ իբրեւ հոգեւորա-

կան, իբրեւ քարոզիչ, բնական է՝ որ գրող ըլլար, բայց ինք անդրանցաւ այդ հանգա-մանքը եւ չեղաւ միայն քարոզիչ մը կամ աստուածաբան մը, այլ պարձաւ նաեւ հայ լեզուի ծառան, հայ մշակոյթի ծառան, եւ իբրեւ գրող գրագէտ ալ ուզեց ճանչցուիլ, գնահատուիլ եւ սիրուիլ ալ, եթէ կ՚ուզէք: Փորձեր ըրաւ, գրեց, եւ խսկապէս հաճոյք էր իրեն, երբ իր ստորագրութիւնը կ՚երեւէր, ըսենք, «Բագին» կամ «Անեկան» ամսագրե-րուն մէջ: Եւ իբրեւ մտաւորական, յատկապէս իբրեւ գրագէտ ան կ՚առնէր դրուագ-ներ, դէպքեր, հայոց պատմութենէն էջեր, կամ ալ երբեմն ուղիղ իրենցմէ կողմէ անմշմար անցած, փոքրիկ երեւոյթ մը եւ այդ կը վերածէր գրական էջի մը:

Գրասէր էր Վեհափառը բառին բովանդակ առումով: Գէթ հայ իրականութեան մէջ չեմ ճանչնար ես որեւէ աշխարհական կամ եկեղեցական անձ, որ այնքան կապ-ուած ըլլար գիրքին: Գիրքը իրեն համար պաշտամունքի առարկայ էր, եթէ կ՚ուզէք, կը սիրէր գիրքը, ինչի մասին ալ որ ըլլար եւ ուր որ երթար, որ քաղաքը որ այցելէր, կարծէք աղօթքէն յետոյ իր առաջին գործը կ՚ըլլար գրատուն մը փնտռել: Կ՚երթար, ժամերով կը յամենար, դարակներուն մէջ կը խորասուզուէր. տեսած եմ զինք Փարիզ, տեսած եմ Լոնդոն, տեսած եմ զինք Տորոնթօ, Շիքակօ, Մոնրեալ, Լոս Անջելըս կամ Նիւ Եորքի մի քանի աստուածաբանական գրախանութները, ուր որ կը մտնէր, կը պրպտէր, կը կարդար եւ գիրքեր կը հաւաքէր, հոգ ալ չէր ըներ, թէ որքա՛ն ծանր պի-տի ըլլան, փոխադրումը ինչպէ՛ս պիտի ըլլայ. կը հաւաքէր, եւ հիանալին այն էր, որ կը կարդար, կը կարդար եւ ամենահեռաւոր շրջաններուն մէջ, ուր որ ապրած էր, ը-սենք, Նոր Ջուղա կամ Անթիլիաս, նոյնիսկ պատերազմի տարիներուն, կամ Հայաս-տան, ուր որ եղաւ, ամենէն նոր եւ այժմէական գիրքերը իր տրամադրութեան տակ էին. գիրքերը կ՚առնէր, կը կարդար, կը նօթագրէր եւ իր պզտիկ կարմիր գիրքին մէջ կ՚արձանագրէր կարեւոր մտածումներ ու օրը կուգար, ժամը կուգար, երբ որ դասա-խօսութեան մը ընթացքին, քարոզի ընթացքին ինք գեղեցկօրէն կը մէջբերէր այդ մտածումը եւ այդ մտածումին կուտար նոր կեանք, նոր թռիչք:

Եւ, վերջապէս, Վեհափառը նաեւ հայ լեզուի ոսկերիչ էր. գեղեցիկ բառեր, գեղե-ցիկ արտայայտութիւններ իրեն հաճոյք կը պատճառէին, չէր գոհանար եղած բառա-մթերքով, չէր գոհանար մտածումի կոկուած հուներէն ընթանալով, միշտ գեղեցիկին, քաղծրին հետամուտ էր, եւ երբեմն զոհ կ՚ըլլար այս ճիգին, եւ ոլորապտոյտ նախա-դասութեանց մէջ կրնար կորսնցնել իր ընթերցողը, բայց միշտ կը ջանար գեղեցիկին սպասարկուն ըլլալ: Ատոր մէջ իրեն նպաստած էին հայ բանասիրութեան իր խոր ծանօթութիւնը, հայ մատենագրութեան իր խոր հմտութիւնը: Խորենացի կամ Եղիշէ, Կորիւն, Յովհաննէս Դասմաբան, Շնորհալի, Լամբրոնացի, Տաթեւացի, այս բոլորէն ինք քաղած էր, ջանասէր մեղուի նման ամենէն համեղ արտայայտութիւնները, բա-ռերը, դարձուածքները եւ իր խօսքերը կը համեմէր մեր հայրերու խօսքով, մտածում-ներով:

Ինք ծանօթ էր նաեւ միջնադարեան գրականութեան եւ մեր արդի գրականու-թեան. իր պաշտած գրողներէն էր Վահան Թէքէեանը, իրեն անծանօթ չէին Սիա-մանթօն, Վարուժանը, Իսահակեանը կամ նորագոյն բանաստեղծներէն Մուշեղ Իշխանը, Պարոյր Սեւակը, Համօ Սահեանը, Կոստան Զարեանը, Աբրահամ Ալի-

քեանը. Վահէ Օշականը: Երբեմն մեզի անծանօթ գրողներ կային, բայց ինք արդէն իսկ ճանչցած էր զանոնք, եւ առիթ որ ըլլար, կը գնահատէր, կ'ապրեցնէր զանոնք: Ցետոյ, իր լեզուի գործածութիւնը ուրիշ ճոխութիւն ունէր. վերջերս առիթ ունեցայ ընթերցելու յօդուած մը իր լեզուին իմացութեան մասին, եւ այդտեղ հաճոյքով կարդացի վերլուծումը եւ ուսումնասիրութիւնը այդ հայաստանեան հեղինակին, որ կ'ըսէր, թէ շուրջ հազար նորաբարութիւններ ունի Գարեգին Վեհափառը հայերէնի մէջ, նոր ածանցումներ, նոր բարդութիւններ, ըսելու նոր կերպեր, բառերու նոր շեշտաւորումներ, բառաստեղծումներ: Վստահ եմ, որ վաղը երբ ուսումնասիրութիւն ատոնք եւ քիչ մը աւելի տարածուին, պիտի ճոխացնեն հայ լեզուի գանձարանը, հայ լեզուի բառարանը:

Բայց այս համապատկերը լման պիտի չըլլար, եթէ չներկայացնէի Գարեգին Վեհափառը իբրեւ ուսուցիչ ու դաստիարակ, եւ յատկապէս իբրեւ Հայր Գարեգին:

Եթէ մենք փորձենք ամփոփել Գարեգին Ա. Վեհափառի ուսուցչական-կրթական-դաստիարակչական գործունէութիւնը, շշմեցուցիչ թիւերու առջեւ պիտի կանգ առնենք:

Ինք որ հազիւ 67 տարի կեանք ունեցաւ, անոր 50 տարին՝ սկսած իր սարկաւագութեան օրերէն եւ Անթիլիասի Մեսրոպեան վարժարանի ուսուցչական գործունէութենէն, նուիրեց կրթութեան: Ուսուցանեց, քարոզեց, քաջալերեց, պատմեց, գրեց, ապրեցաւ իբրեւ ուսուցիչ: Իր կէսդարեա հոգեւոր գործունէութեան ամբողջ ընթացքին Վեհափառը երբեք չդադրեցաւ ուսուցիչ ըլլալէ:

Հայր Գարեգին: Մեր ամենասիրած անձնաւորութիւնը մեր ուսուցիչ Հայր Գարեգինն էր: Վեհափառը ինծի ուսուցիչ եղաւ Պէյրութի Ս. Նշան վարժարանին մէջ, ուր մեզի կը դասաւանդէր հայոց պատմութիւն եւ քրիստոնէական բարոյագիտութիւն: Դպրեվանքի մէջ մեզի ուսոյց Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, աստուածաբանութիւն, հովուական աստուածաբանութիւն: Շատ աշակերտ ունեցաւ ան, Դպրեվանք, Պէյրութի Հ.Բ.Ը.Մ. Դարուհի Յակոբեան վարժարան, Պէյրութի Համազգայինի Ճեմարան, Ամերիկեան համալսարան եւ Գէորգեան Հոգեւոր Ճեմարան: Աբեղայութենէն մինչեւ Կաթողիկոսութիւն ան եղաւ ու մնաց ուսուցիչ բառին ամենէն ազնուական եւ ամբողջական իմաստով: Բայց ես կը հաւատամ, որ իր ամենասիրած նիւթը Հայ Եկեղեցւոյ պատմութիւնն էր, եւ եթէ պատահեցաւ, որ կարգ մը դասանիւթեր ստիպուած ըլլար զիջիլ ուրիշներու, միշտ իրեն վերապահեց Հայ Եկեղեցւոյ պատմութեան նիւթը, եւ այնպիսի ոգիով, այնպիսի սիրով կ'ուսուցանէր, որ յաջողեցաւ մեզ եւս անհուն սիրով կապել Հայ Եկեղեցիին: Այն իրականութիւնը, որ մեզ միշտ աշակերտ նկատեց՝ տարբեր բան. մեզմէ ոմանք կը նեղուէին ատկէ, ուրիշներ յարգանքով կ'ընդունէին այդ, բայց Գարեգին Վեհափառը բոլորիս համար միշտ ալ մնաց ուսուցիչ, եւ իբրեւ ուսուցիչ մեզի համար ինք միշտ Հայր Գարեգինի պատկերով ալ մնաց, մեծցաւ ինք, մեծ դէմք հանդիսացաւ, եպիսկոպոս, Կաթողիկոս դարձաւ, Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ հանդիսացաւ այն առաջին անձը, որ Կիլիկիոյ Աթոռէն բարձրացաւ Ս. Էջմիածնի գահը, բայց մեզի համար ամենէն գեղեցիկը, ամենէն վսեմը, ամենէն սիրելին՝ Հայր Գարեգինը մնաց: Անթիլիասի Դպրեվանքի մեր փեսուչը, մեր եղբայրը, մեր ներշնչումի պատկերը: Ու հիմա ափսոսանքով կը մղուիմ ըսելու, թէ երա-

նի միշտ Հայր Գարեգին մնար:

Գարեգին Վեհափառը բուրեբանի փաբար քանքսւրաթաքոյց չեղաւ Դուրեան Սրբազանի մը պէս, եւ կամ ալ ժպտ՝ իր գրութեան մէջ: Բայց ափսոս, որ ճ.մարիտ է լատիներէն ասացուածքը.

Խօսքը կը թռչի.

Գիրը կը մնայ:

Եւ այսօր եթէ մենք ալ չենք լսեր մեր ուսուցիչը, մեր դաստիարակը, մենք ունինք իր կարգ մը դասախօսութիւնները, նկարահանումները, հայկական հեռուստատեսու-թենէն ձայնասփռուած իր պատգամները, իր քարոզներէն ոմանք: Բայց ո՛վ, ո՛վ կրնայ կրկնել իր անպատկերելի ձայնը, շեշտը, ներշնչման գեղեցկութիւնը:

Վաղուան ուսանողը, բարեբախտաբար, իր գրասեղանին վրայ պիտի ունենայ Գարեգին Վեհափառի մի քանի կրթական ձեռնարկները.

- Քրիստոնէական բարոյագիտութիւն
- Տէսական աստուածաբանութիւն
- Հովուական աստուածաբանութիւն
- Հայ Եկեղեցւոյ պատմութիւն
- Հայ եկեղեցագիտութիւն:

Երանի թէ այս բոլորը յատուկ խմբագրութեամբ մը հրատարակուէին, քանի որ անոնք ոչ միայն օգտակար պիտի հանդիսանային մեր դպրեվանքերում՝ իբրեւ դասագիրք, այլեւ առհասարակ դաստիարակչական-ուսուցողական մեծ արժէք ունեցող գիրքեր պիտի ըլլային ընթերցող լայն շրջանակներու համար:

Իբրեւ ուսուցիչ եւ իբրեւ դաստիարակ շատ բան կարելի է ըսել Գարեգին Վեհափառի մտատիպարի մասին, բայց թերեւս լաւ կ'ըլլայ իր իսկ խօսքերով ներկայացնել իր ըմբռնումը հայ գրքին, մտատրականին եւ հոգեւորականի մասին:

Պաշտամունք ունէր Վեհափառը գիրին հանդէպ: Դպրեվանքի սաներուն ուղղուած իր մէկ գրութեան մէջ ան կ'ըսէր.

- Կը զգա՞ք, սակայն, թէ ինչ կը նշանակէ գրել: Ամէն թուղթի վրայ գրուած ամէն սեւ ձեւ, որքան ալ ըլլայ իր արտաքին գիծերուն մէջ հայ գիր՝ գիր չէ՛, սակայն, մեր ազգային իմացողութեան մէջ, երբ ցատարկ է այն հոգիէն, որ հայ գիրին ձեւին մէջ մարմնացաւ առաջին վայրկեանէն իսկ անոր գոյատեւման եւ մնաց կենդանի՝ մարմնին մէջ անկէ սկզբնատրող շունչային:

Առաջին պայմանը ձեր գրելուն՝ կ'ուզեմ, որ ըլլայ հաղորդութիւնը մեր անցեալի մեծագործութեան մէջէն բացուող հոգիին: «Զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»... («Գլածոր», Ա. տարի, 1957 թ.):

Վեհափառը իր յատուկ ըմբռնումը ունէր նաեւ մտատրականին եւ մտատրականութեան հանդէպ: Լսենք իր դատումը.

- Մտատրականութիւնը, ըսուած է, կրկնուած է, բազմիցս հռչակուած է, թէ ազգի մը ուղե՛ղն է, ղեկավա՛րն է: Մտատրականութիւնը, իբրեւ աշխարհը, մարդը, կեանքը, արժէքները դիտելու եղանակ, երբեք յատուկ չէ դասակարգի մը: Մտատրական չէ անպայման այսինչեանը, որովհետեւ այսինչ դպրոցը աւարտած է կամ այսինչ վկա-

յականը ունի, ո՛չ: Մտաւորականութիւնը հայեցողութիւն մըն է, ըմբռնողութիւն մըն է կեանքին մէջ: Կարեւոր չե՛ն, պիտի ըսէք, ճարտարագիտական, թեքնոլոճիք նուաճումները. անշո՛ւշտ՝ են: Կարեւոր չե՛ն տնտեսական նուաճումները. անշուշտ՝ են: Բայց արժէքներու նուիրապետական կարգին (hierarchie) մէջ մտաւորականութիւնը ունի իր որոշադրիչ, իրայատուկ եւ անփոխարինելի դերը:

Այս հարցը կը դնեմ այսօր. ո՞վ է մտաւորականը. մտաւորականը ան է, որ իր միտքին մէջ ունի ըմբռնումներ, գաղափարներ, ծանօթութիւններ եւ տեսութիւններ. Մտաւորականը այն է նաեւ, որ ե՛ւ իր աստուածատուր շնորհքը, ե՛ւ իր ջանքով ձեռք բերուած հմտութիւնն ու կարողականութիւնը կը դնէ ի սպաս Աստուծոյ, մարդկութեան, ազգին, հայրենիքին, ուրիշներուն: Երբ հանրային տարածքը (dimension) չկայ մտաւորականութեան մէջ՝ այդ մտաւորականութիւնը կը դադրի հարազատօրէն մտաւորականութիւն ըլլալէ (Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի Ա. վկայականաց բաշխման հանդիսութեան առթիւ, 5 Յուլիս,1993 թ., Պէյրութ):

Եւ, վերջապէս, ամէն բանէ վեր՝ Գարեգին Վեհափառը հոգեւորական էր, ժողովուրդին ծառան: Նայէք, թէ առիթով մը ի՜նչ կ'ըսէր.

- Մենք հոգեւորական ենք, սա սքեմը ունինք, եւ ժողովուրդը մեզի այդպէս կը նայի. պիտի արժեցնենք զայն. ոչ թէ հովէն եկող, ծովէն եկող տեսակ-տեսակ խօսքերու, նոր-նոր ճաշակներու ետեւէն երթանք: Թող իրենք մեզի գան, ո՛չ թէ մենք իրենց երթանք: Եւ ա՛յս է ձեր կոչումը, որ ըլլաք, մնաք, տեւէք, խորանաք այս ձեր գիտակցութեանը մէջ եւ ոչ թէ տերեւի նման երթաք ու գաք, ճիւղին նման տատանիք կամ եղէգին պէս ծռիք: Տոկուն եղէք, պղաք: Երբ այս եկեղեցիին մէջ շարականներ երգէք՝ համով-հոտով, ապրումով, հասկացողութեամբ, գեղեցկութեամբ, ժողովուրդը կը հիանայ ձեր վրայ. երբ քարոզը տաք, ձեր հոգիին մէջէն Աստուծոյ խօսքը անցընէք, մեր հայութեան խօսքը բերէք, ժողովուրդը կը հրճուի, կ'ուրախանայ, կը հարստանայ, եւ ափիկա կ'ըլլայ ձեր գերագոյն երջանկութիւնը: Երբ գրէք, ու ժողովուրդը ձեր գրածը կարդայ ու անկէ բարիք քաղէ, անոր մէջ տեսէք ձեր արժանիքը: Երբ կը ծառայէք, պարզ գործերու մէջէն վարչական, կազմակերպական կամ խնամատարական, անոր մէջ զգացէք ձեր խնդութիւնը: Այս է իմ հայրական խրատը ձեզի:

Դուք բոլորդ ալ գիտէք, որ երբեմն-երբեմն ես մեր Եկեղեցւոյ մեծ դէմքերուն գրութիւնները կը կարդամ, անոնցմով կը ներշնչուիմ եւ ձեզի ալ բաժին կը հանեմ իմ այս ընթերցումներէն:

Երէկ գիշեր «Դէպի Լոյս եւ կեանք» հատորէն հատուած մը կարդացի, իմ նախորդներէն Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին գրած քարոզներէն, որոնցմէ մէկը հետեւեալ վերնագիրը ունի. «Մարդ է որ Գործէ Ջերկիր». Աստուածաշունչի խօսքն է: Մարդն է, որ երկրին մէջ աշխատելով, երկրին, հողին, աշխարհին իմաստ կու տայ (Կաթողիկոսարան Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, «Հաւատարիմ Դպրեվանքի կոչումին», 14 Յունիս 1992 թ.):

Եւ փակելու համար այս բաժինը, դարձեալ փոխ կ'առնեմ իր գրիչը, որպէսզի անգամ մը եւս լսենք մեր ուսուցիչը, որ մեզի ցոյց կուտար կեանքի եւ ծառայութեան

ճամբան դէպի ժողովուրդը.

Աստուած մարդը ստեղծած է ու Իր Որդին տուած է, որ մա՛րդ եղած է, մարդուն համար եւ մարդուն հետ ու մարդուն մէջ: Քրիստոսակիր ճշմարտութիւնը՝ արժէքը, գաղափարը, վայելքը բաժնե՛լն է եւ անով հաղորդուե՛լն է:

Դիտեցէք մեր պատմութիւնը. գացէք մինչեւ 5-րդ դար, ձեզի նման տղաք, երիտասարդներ գացին մինչեւ Եդեսիա, մինչեւ Աղեքսանդրիա, մինչեւ Կ. Պոլիս եւ Աթենք ու այլ կեդրոններ, հմտութիւն քաղեցին ընդհանուր աշխարհի այդ օրերու բարձրագոյն ոլորտներէն, մտաւորական կեանքի սնունդով աճեցան, զօրացան, մեծցան, բայց այնտեղ չմնացին. չեղան միայն Պարոյր Հայկազն մը, Աթէնքի մէջ վարկ շահած ու այսօր մեր եպարպութեան առարկան դարձած: Եկան, խառնուեցան ժողովուրդին մէջ, գացին Գողթան գաւառ, գտան հայոց Գիրը, վերածեցին Աստուծոյ խօսքը հայու խօսքին. մէկ խօսքով՝ շաղախուեցան իրենց ժողովուրդի կեանքին մէջ, ճշմարտութիւնը թարգմանեցին կեանքով, գործով եւ գիրով:

Եթէ ուզէնք ճանչնալ հոգեւոր Վեհափառը իբրեւ ուսուցիչ եւ պեսիլքի տէր դաստիարակ՝ բառի հին իմաստով, պէտք է դիմենք նոյն ինքն իրեն, եւ իր խօսքերու մէջէն ճանչնանք իր մտածումի աշխարհը, իր դաստիարակի, ուսուցչի հոգեբանութիւնը:

Նախ՝ իր տեսիլքը եւ գնահատութիւնը՝ մեր մտաւորական սերունդին հանդէպ: «Աշակերտութիւն եւ առաջնորդութիւն» խորագիրը կրող յօդուածի մը մէջ Հայր Գարեգին կը վերլուծէր աշակերտութեան եւ առաջնորդութեան յղացքները եւ կ՚ըսէր.

- Աշակերտիլ հարկ էր՝ աշակերտելէ առաջ: Ինչպէս՝ լեցուիլ՝ լեցնելէ առաջ: Առնել՝ տալէ առաջ:

Աշակերտութիւնը, իր խորքին մէջ, ուրիշ բան չէ, արդարեւ, եթէ ոչ հետեւողութիւն մը մտածումի մը, գաղափարի մը, վարդապետութեան մը: Իմացական հասկացողութեամբ կամ սովորութենական փրամադրութեամբ ընդունում մը, իւրացում մը գաղափարաբանութեան մը:

Եւ ապա կ՚եզրակացնէր.

- Առանց առաջնորդութեան՝ իմաստ պիտի չունենար ընտրեալներու աշակերտութիւնը: Մին՝ սկիզբ. միւսը՝ վախճան: Մին՝ ամփոփուած ոյժ, միւսը՝ այդ ոյժին բանալին, անոր իրագործումը պայմանաւորող, զայն իսկապէս, իրապէս, ոյժ ընող: Հետեւաբար՝ իրարմով զիրար կ՚ամբողջեն, զիրար կ՚արդարացնեն:

Հեռուներէն երբ մեր նայուածքը մօտեցնենք մեր ժամանակներուն՝ երկու մեծ ճակատներու վրայ Արեւելահայաստանի եւ Արեւմտահայաստանի աշակերտութեան եւ առաջնորդութեան պատկերը նոյնն է, իր խորքի հիմնական գիծերուն մէջ գոյներն են միայն տարբեր՝ ժամանակէն եւ միջավայրէն եկող՝ առաւելաբար:

Դորբատի սերունդը, Էջմիածնական սերունդը Արեւելեան ճիւղին վրայ՝ գերմանական մշակոյթի տիրապետող ազդեցութեամբ կազմուած՝ կազմեցին գաղափարական եւ բանասիրական-գրական այն մեծ շարժումները, որոնք ԺԹ. դարու մեր ազգային եւ մշակութային կեանքին հարազատագոյն եւ զօրաւորագոյն արտայայտութիւնները եղան, իբրեւ առաջնորդական գործունէութեան արգասիքներ:

Միւս կողմէ, Զարթօնքի, Սահմանադրական սերունդը եւ անոնց անընդհատ շա-

րունակութեամբ յաջորդող ալիքները հայ ուսանողութեան Պոլիսէն ու գաւառներէն դէպի Եւրոպա, այս անգամ ֆրանսական մշակոյթի ուժեղ ներգործութեան տակ, իրենց կարգին, սպացածով ու եղածով - աշակերտութեան ճամբով - յեղաշրջեցին մեր ամբողջ կեանքը Արեւմտեան թեւին վրայ, հաւասարապէս ազգային եւ մշակութային ուղղութիւններու մէջ, աշակերտութիւնը վերածելով առաքելութեան:

Բոլորը աշակերտեցան նախ: Բայց բոլորը առաքելութեան անցան ապա: Այդ անցքն էր, որ պայծառացուց անոնց դէմքերը հերոսական ու պատմական դափնեպսակներով մեր ժողովուրդի հոգեհայեացքին դիմաց: Անոնց պսակները, հետեւաբար, քրփինը չեն իրենց փքնութեան՝ աշակերտութեան մէջ, այլ անցքին գինը մէկ ափէն միւսին, յաշակերտութենէ յառաքելութիւն, գերագոյն գոհողութեան որ՝ անձին ամբողջական, անհաշիւ ու անպայման ընծայումի աքթովը միայն կարելի եւ ծանրօրէն արժեւոր («Ազդակ», Բագատիկ, 1957 թ.):

Ինչ ըսեմ, փորձեցի այս կարճ խօսքերու մէջէն ներկայացնել բազմարդիւն, բազմաշնորհ, բազմատաղանդ անձ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Վեհափառը, Ամենայն Հայոց Գարեգին Ա. Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսը, հրաշք անձնաւորութիւն մը, հիանալի մարդ մը, մեծ հոգեւորական մը, խոհուն աստուածաբան մը, բայց որ հակառակ անոր, որ եղաւ լեզուի ոսկերիչ, հռչակուեցաւ Ոսկեբերան, Երկրորդ Շնորհալի, մտածումի, թռիչքի լաւագոյն արտայայտիչ, Աստուծոյ մէկ անքննելի կամքով դարձաւ լուռ տառապանքի մարդը, ինք, որ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մասին երբ կը քարոզէր, կը գործածէր շարականին բառերը՝ «Քնար քաղցրախօս», ինքը դարձաւ «խորտակուած քնար»:

Երկու տարի առաջ մենք բոլորս անհուն ուրախութեամբ ողջունեցինք մեր սիրելի Վեհափառի՝ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի որոշումը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ հաստատել Գարեգին Ա. աստուածաբանական եւ հայագիտական կեդրոն մը, որ պիտի ըլլար իր հոգեւոր նախորդին հանդէպ սիրոյ, գնահատութեան գերագոյն արտայայտութիւն, եւ կեդրոն, ուր պիտի զարգանայ հայ աստուածաբանական միտքը, եւ հայագիտութիւնը նոր ճախրանքներ պիտի ունենայ:

Հայաստանի ներկայ կացութեան մէջ նման քայլ մը Գարեգին Բ. Կաթողիկոսի կողմէ նաեւ յոյսի՛ քայլ է դէպի ապագան, եւ վստահաբար, Հայաստանի գիտական միտքը եւ Սփիւռքը իր հնարաւորութիւններով միասնաբար պիտի ծաղկուն եւ ճառագայթուն կեդրոնի մը վերածեն այս կաճառը:

Ես կը յուսամ, որ այս կեդրոնի գործունէութեան շնորհիւ ապագայ սերունդները աւելի լաւ եւ հանգամանալից կերպով պիտի ճանչնան այն՝ որուն դժբախտութիւնը եղաւ իր ժամանակէն առաջ ծնած ըլլալը, եւ որ այդ կեդրոնի շնորհիւ հաջորդ սերունդներու համար պիտի ըլլայ մեծ ուսուցիչ եւ դաստիարակ:

Օրհնեալ ըլլայ իր յիշատակը, բարի յիշենք զինք մեր աղօթքներուն մէջ, մեր սիրելի եւ թանկագին Հայրապետը՝ Գարեգին Վեհափառը եւ սիրելի ուսուցիչը, Հայր Գարեգինը:

*ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ*
*Ակադեմիկոս. Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ*

# ՀՈԳԵՎՈՐ ՄԵԾ ԳՈՐԾՉԻ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՍՏԱԿԸ*

Լրացավ Եվրոպայում հիմնավոր կրթություն ստացած, քրիստոնեության իմացաբանական-ճանաչողական ավանդներով զինված, ազգային լայնախոհ ու խելամիտ գործիչ, փայլուն հրապարակախոս, Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկահիշատակ Գարեգին Ա-ի ծննդյան 70 տարին:

Ազգային գործչի մեծ պատիվ էր վերապահվում նրան ոչ միայն և թերևս ոչ այնքան զբաղեցրած հոգևոր բարձր պաշտոնների, որքան իր գործունեության իմաստավորված ու նպատակաուղղված բնույթի, թողած գիտական ժառանգության համար: Նա հայոց պատմությունը, Հայ Եկեղեցու անցյալի հարուստ ժառանգությունը չէր դիտում իբրև սոսկ հպարտության աղբյուր, այլ մշտապես ջանում էր անցյալի դասերն ու պատմական փորձը ծառայեցնել ժողովրդի արդի կացությանը, ազգի ժամանակակից հիմնախնդիրների լուծմանը:

«Մեր ժողովուրդը,- գրում է Գարեգին Ա-ն,- կարիք ունի իր պատմութիւնը, իր հաւաքական ինքնակենսագրութիւնը ճիշդ ըմբռնելու: Պատմական կեանքի համայնական առողջ յիշողութիւնը նոր կեանքի ներշնչման աղբիւր է: Անյիշողութիւնը մահուան նախադուռ, իսկ վատ, սխալ, այլափոխեալ յիշողութիւնը ազգային խաթարման ճանապարհ... Մի խօսքով պատմութիւնը անցեալի վերապրեցումն է մեր ներկայի կեանքի անդաստանների մէջ: Կարելի չէ լինել անցեալապաշտ, բայց նոյնքան եւ կարելի չէ լինել անցեալամոռաց, պէտք է գնալ յառաջ. դա կեանքի սկզբունք է. կեանքն ինքնին կրկնողութիւն չէ, յառաջդիմութիւն է: Բայց յառաջ գնալու համար հարկ է իմանալ ուրտեղի՞ց ենք եկել եւ ո՞ւր ենք այսօր»[1]:

Նա հաճախ էր հիշում Աբրահամ Լինքոլնի խոսքը. «Այն հողը, որ մենք այսօր ունենք, մեռածների համար չէ, ապրողների համար է»:

Ահա արդի ժամանակաշրջանի հեքին հետևելու նման աշխարհայացքով է գործունեություն ծավալել և ստեղծագործել երջանկահիշատակ Վեհափառը: Պատմագիտական և մշակութային նրա վաստակի մասին գաղափար ենք կազմում ոչ միայն նրա գրչի արգասիք հանդիսացող բազմաթիվ աշխատություններից և մեծաքանակ հոդվածներից, այլ նաև վերջերս լույս տեսած հարցազրույցային բնույթի մեկ գրքից:

---

* Կարդացվել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում:

[1] **Գարեգին Բ. Կաթողիկոս**, Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մէջ, Անթիլիաս, 1994, էջ 14, 16:

1997 թ. հունիսին Ավստրիայի Գրաց բնակավայրում Եվրոպայի Եկեղեցիների Միության էկումենիկ ժողովի բացումը վերապահվում է Գարեգին Ա-ին: Հայ Եկեղեցու պետը անդրադառնում է վերջին փասնամյակում Եվրոպայում կատարված վերափոխումներին և Եկեղեցիների կյանքում դրանց ունեցած հետևանքներին: Ունկնդիրներին զարմացնում է վերլուծումների խորությունն ու թարմությունը, հարցադրումների լայնախոհությունն ու լավատեսությունը:

Միջազգային գիտաժողովի մասնակիցներից, Ուղղափառ Եկեղեցու մասնագետ, Եվրոպայի երկրներում եղած, վերջին փասը տարիներին Մոսկվայում հանգրվանած այնտեղի համալսարանի դասախոս, իտալացի Ջովաննի Գուայտան հարցազրույց է խնդրում Գարեգին Ա-ից: Ինչպես հարցադրումների հեղինակն է փաստում, նրա հանդիպումներում շոշափվել են քրիստոնեական հավատքի, Հայոց Եկեղեցու ու Հայաստանի, ժամանակակից կյանքի տարբեր կողմերին վերաբերող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրներ: Գուայտան նշում է, որ հաճախ տվել է անսպասելի ու սադրիչ, սուր ու փշոտ հարցեր, և զրուցակիցը մշտապես ընդունել է մարտահրավերը և առանց խուսանավելու հստակորեն պատասխանել հարցերին: Հարցուպատասխաններով այդ գիրքը հրատարակվել է ֆրանսերեն: Երեք տարի առաջ (1999-ին) Վեհափառի նվիրյալ սան Գերաշնորհ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ջանքերով այն հրատարակվեց հայերեն[2]:

Ընթերցում եմ 300 էջանոց այս գիրքը, hիանում հանգուցյալ Վեհափառի իմացության և գիտելիքների վրա, ոչ միայն Աստվածաբանության և Հայ Եկեղեցու ու հայոց պատմության մարզում, այլև Արևելքի ու Արևմուտքի շատ ժողովուրդներին վերաբերող խնդիրներում: Գնահատելի է հատկապես այն հանգամանքը, որ Վեհափառի մեկնաբանությունները, աստվածաբանական-փիլիսոփայական դիտարկումներն ամենևին չեն հակասում կամ տարանջատվում իր աշխատություններում զարգացրած գաղափարներից, ընդհակառակը՝ լրացնում ու ամբողջացնում են նրա գիտական ժառանգությունը:

Գարեգին Ա-ն իր հոգեմտավոր խառնվածքով, ինչպես նշեցինք, լայնախոհ և ընդգրկուն աշխարհայացք ունեցող անհատականություն էր: Վեհափառը Հայ Առաքելական Եկեղեցու, ազգային պատմության ու մշակույթի հիմնախնդիրները չի քննարկել առանձնացված, մեկուսի եղանակով, այլ դիտել է իրենց շփումների, հարաբերությունների ոլորտում, միջազգային ցետնի վրա: Պատմական իրողություններր լայն պաստառում տեսնելու ունակության շնորհիվ է, որ տակավին 1955 թվականից ընդգրկված է եղել էկումենիկ շարժման մեջ և գործուն մասնակցություն բերել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և միջեկեղեցական այլ կազմակերպությունների աշխատանքներին: Նա գրել է «Կիլիկիա կամ էկումենիկ Հայաստան» վերնագրով մի հոդված, որը հրատարակվել է Փարիզում: Հոդվածի թեզերով փայլուն զեկուցում է կարդացել Հալլե-Վիտենբերգում, Մարտին Լյութերի անվան համալսա-

[2] Տես Զրույցներ Ջովաննի Գուայտայի հետ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս. Ս. Էջմիածին, 1999 (այսուհետև՝ զրույցներ):

բանում, ուր ցույց է տվել, որ 5-րդ դարից սկսած Եկեղեցիների միության շարժումը հատուկ է եղել նաև Հայ Եկեղեցուն:

Գարեգին Ա-ն տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել է ազգային պատմության խնդիրներին: Ջովաննի Գուայտայի այն հարցմանը, թե ո՞րն է եղել Ձեր կյանքի ամենաուրախ օրը, տվել է հետևյալ պատասխանը. «Առաջինն այն օրը, երբ 20 տարեկանում նվիրվեցի Աստծո ծառայությանը... Մյուսն այն օրն է, երբ Հայաստանը դարձավ ազատ, անկախ երկիր... Այդ օրն ինքս ինձ ասացի. կատարվեց իմ նախնիների երազանքը: Արդ, կարող եմ ասել, որ այդ օրն ինձ համար իբրև հայի ամենաուրախալի օրն էր»[3]: Անկախ պետության կառուցումը իրավամբ համարում է հասարակության բոլոր անդամների պարտականությունը: «Պետք է կարողանանք հասնել այն գիտակցությանը,- գրում էր նա,- որ մեզանից յուրաքանչյուրն իր նպաստն է բերում ընդհանուր գործին, նրան հաղորդում ազդակ, ինչն էլ կշարունակեն ուրիշները»[4]: Եվ ապա շարունակում է իր միտքը. «Մեր քաղաքական անկախությունը պետք է սնվի ինքնաբավ տնտեսությունից, որը բոլորին հնարավորություն կտա բարձրացնելու կենսամակարդակը և վերականգնելու մարդկային արժանապատվությունը»[5]:

Մեծանուն հոգևոր գործչի ուշադրության կենտրոնում է եղել հայոց պատմության ամենից ողբերգական դրվագը՝ Մեծ եղեռնը: Եղեռնի 70-ամյա տարելիցին հրապարակ հանեց հատուկ աշխատություն՝ «Անցյալը անցած չէ՛» խոսուն խորագրով: Գրքում անդրադարձավ եղեռնի ներկայի ու անցյալի արծարծումներին և ամենուրեք իրեն հատուկ գրավիչ խոսքով ու կուռ տրամաբանությամբ տվեց հստակ ու ճշգրիտ բնութագրումներ: Հիշատակենք դրանցից մի քանիսը: «Տէր-Զօր երթալ և Տէր-Զօրէն վերադառնալ ու մնալ նոյն անձը՝ ո՛չ մարդկային է եւ ո՛չ մանաւանդ հայկական»: «Պէտք է քար ըլլալ - ո՛չ մարդ եւ ո՛չ մանաւանդ հայ - այս բոլորէն ետք ըսելու համար, թէ ցեղասպանութիւնը պատմութիւն է...»: «Մեր ուսերուն վրա ամուր եւ բարձր պիտի պահենք անոնց թողած սուրբ շալակը՝ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու ճանաչումն ու յարգումը որպէս ազատ եւ անկախ ազգութիւն»[6]:

Եղեռնի յոթանասունամյակի առթիվ յոթ ողջույն է հղում Մայր Հայաստանին, Լիբանանին, արաբական երկրներին: Չորրորդ և հինգերորդ ողջույններում ասվում է. «Ողջո՜յն» քեզ-մեղա՛յ, հազա՛ր մեղայ քեզ Աստուած - Ի՜նչ ողջոյն, Ամօ՛թ քե՛զ, Թուրքիա, որ կը շարունակես այսպէս ժողովուրդին դէմ գործած մահափորձէն ետք, մահ տալ ճշմարտութեան, յամառօրէն եւ անպատկառօրէն կ՚ուրանաս կատարածդ վատահամբաւ գործը, որուն ահատր անգթութեան, անմարդկայնութեան այնքան քաջ ես ծանօթ, որ կը վախնաս անոր բացայայտեալ եւ բացայայտիչ դրսեւորումէն»:

---

[3] Զրույցներ, էջ 44:

[4] Նույն տեղում, էջ 303:

[5] Նույն տեղում, էջ 221:

[6] **Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց**, Հոգեմտաւոր ճառագայթումներ, Ս. Էջմիածին, 1997, էջ 265-267:

«Ողջո՜յն» քեզ, ով մարդկութիւն, ազգեր համայն աշխարհի, եւ դուք մանաւանդ, հզօր պետութիւններ, որ աշխարհի նժարին հետ այնքան դիւրին կը խաղաք ձեր շահի եւ ձեզի յատուկ խաղի օրէնքներուն համաձայն»[7]: Ապա ավելացնում է. «Կը հաւատամ, որ աշխարհին անիւը օր մը այնպէս կը դառնայ, որ այսօրուան ուրացողները վաղը պիտի ամչնան, իսկ այսօրուան ընդունողներն ու համակրողները վաղը պիտի հրճուին:

Մինչ այդ մենք անշեղ պիտի քալենք ճշմարտութեան ճամբայէն...»[8]:

Ջովաննիի՝ եղեռնի մասին տրված հարցին հաջորդում է հետևյալ պատասխանը. «Ես երջանիկ եմ, որ վերջերս մի քանի պետություններ ճանաչեցին և դատապարտեցին 1915 թվականի հայոց ցեղասպանությունը: Ես դրանում տեսնում եմ մեր ժողովրդի հանդեպ աներկբայելի համակրանքի արտահայտություն»[9]:

Այդ ամենի հետ մեկտեղ, լինելով ժողովուրդների համագործակցության ու բարեկամության ջատագով, չէր անտեսում նաև երևույթի հակառակ կողմը: Այն պարագան, թե ինչպես հայկական, այնպես էլ հրեական եղեռնի ժամանակ եղել են թուրքեր. գերմանացիներ, որոնք իրենց կյանքը վտանգի ենթարկելով հակադրվել են ջարդերին:

«Հող, մարդ և գիր» տպավորիչ խորագիրը կրող և տարբեր տարիների իր մտածումները ներկայացնող գիրք-ժողովածուն[10] Վեհափառ Հայրապետի արտասահմանյան տարբեր երկրներում ապրած կյանքի կամ այցելությունների էական դրվագների պատմափիլիսոփայական ընդհանրացումն է: Հափշտակությամբ կարդում ես գիրքը և համոզվում, թե հայկական գյուղից ծնունդ առած հոգևոր գործիչն իր արմատներով որքա՜ն սերտ է կապված մնացել ժողովրդի հետ, ինչքա՜ն լավ է հասկանում և ապրում նրա ցավերով ու հոգսերով: Եվ թե ինչպիսի՜ հմտությամբ է կարողանում վեր կանգնել մանավանդ արևելցուն հատուկ տեղայնությունից և իր ասելիքը հանրությանը ներկայացնել բարձր մակարդակով ու քաղաքակիրթ ձևով: Որքա՜ն համոզիչ և հուզիչ է ներկայացնում հայրենիքի, հայրենի հողի գաղափարը: Խոսելով Արևմտյան Հայաստանի մասին՝ գրում է. «Մեր հողը մեր իրաւունքն է, գոյութեան կռուանն ու գրաւականը: Մեր յուշարձանները՝ մեր պատանդին արգասիքը: Մենք թէեւ ամէն տեղ ենք այսօր, բայց միշտ հոն ենք, որովհետեւ մեր ողջ պատմութիւնը հոն է, հոն են խաչքարերը մեր հայրերուն, հոն են հետքերը սփեդծագործ հանճարին: Բայց ահա կը տեսնես այս էջը: Դեռ կը քանդեն, քանդուածը երկրորդ անգամ կը քանդեն: Բայց հո՜ն ենք մենք, ո՛ւր ալ ըլլանք, մեզ ա՛լ չեն կրնար քանդել...»[11]:

Եվ ապա՝ «Հողն ալ սիրտ ունի, եթէ սիրտ ունինք այդ սրտին տրոփը զգալու:

Հողն ալ կեանք ունի, եթէ շունչ ունինք այդ կեանքին շունչը զգալու»[12]:

---

[7] Նոյն տեղում, էջ 278, 280:

[8] Նոյն տեղում, 281:

[9] Ջրոյցներ, էջ 281:

[10] Գարեգին Բ Կաթողիկոս, Հող, մարդ և գիր, Անթիլիաս, 1991թ.:

[11] Նոյն տեղում, էջ 47:

[12] Նոյն տեղում, 21:

Գարեգին Ա-ն, որպես ասպվածաբան, հոգևոր գործիչ, քարոզում էր սոցիալական համասարության գաղափարը և դրա հիմքում դնում աշխատանքը: Միայն «Ծանիր գքեզ» գրքի ենթավերնագրերի թվարկումը բավարար է պատկերացում կազմելու, թե մարդկային կյանքում ինչպիսի նշանակություն էր տալիս աշխատանքին: «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո», «Աշխատանքը մարդու ինքնարտահայտությունն է», «Աշխատանքը սրբության ճամբա է», «Աշխատությունը բարերար է, երբ ճիգը հարատև է», «Աշխատանքի որակը գերիվեր է, քան տեսակը», այսինքն՝ աշխատանքի որակն է կարևորը և ոչ տեսակը: Այս առիթով գրում է. «Բանուորութիւն ընելը, աղիւս կրելը, պատ հիւսելը... ծորակ նորոգելը, կար ընելը նոյնքան կարեւոր եւ օգտաշատ ու պատուաբեր գործեր ընել կը նշանակեն. որքան Աստուծոյ խօսքը քարոզելը, գիր ու լեզու եւ գիտութիւն ուսուցանելը, գրիչ շարժելը, մեքենագրութիւն կատարելը, ճարտարագիտութեան ծրագիրներ պատրաստելը»[13]:

Իրեն ուղղած **Եկեղեցին և ընկերային արդարությունը** հարցին տալիս է ծավալուն պատասխանը. «Ունևորների և չքավորների միջև տնտեսական բավականին կտրուկ խզման վտանգն առկա է Հայաստանում: Արդեն նկատելի են ընկերային տնտեսական անհավասարության նշաններ, որոնք խանգարում են ընդհանուր բարեկեցության զարգացմանը. վախենում եմ, թե դրանք թյուրըմբռնված դրամատիրության նշաններ են: Այս իրավիճակում Եկեղեցին, անտարակույս, պետք է բարոյապես կողմնորոշի հանրությանը և իր վրա պարտավորություն վերցնի հոգ տանելու ընչազուրկների մասին»[14]: Եվ ապա շարունակում է իր միտքը. «Երջանիկ լինել՝ նշանակում է մոռանալ քեզ, գնալ դեպի ուրիշները: Այս իմաստով ոչ, արտոնյալների, կարիքավորների հանդեպ պատասխանատվությունը, իմ կարծիքով, մարդկության հոգևոր առաջընթացի կողմնորոշիչ տարր է: Այն առաջընթացը, որ հոգևոր լիցքեր չի պարունակում, մարդիկ իրենց ապրելակերպը չեն կիսում նրանց հետ, ովքեր ստորադասված են, ովքեր հալածված են, կեղեքված, իրական առաջընթաց չէ... Երջանկության երբեք հնարավոր չէ հասնել բախման, հակամարտության, թշնամանքի կամ ատելության դիրքերից: Նրա գաղտնիքը փոխադարձ հարգանքի ու սիրո մեջ է»[15]:

* * *

Երջանկահիշատակ Վեհափառը Եկեղեցու հոգևոր ոլորտը նաև մշակույթին նվիրված գործընթաց էր համարում: Նման նպատակով նա լայն տեսադաշտում անընդմեջ արծարծել է մշակութային հիմնախնդիրներ: Այս մարզում ևս հավատարիմ մնալով իր աշխարհընկալմանը՝ շեշտում է մշակութային փոխազդեցությունների, փոխհարստացման հանգամանքը, որն ամենևին չի բացառում տարբեր ժողովուրդ-

---

[13] Գարեգին Ա, Հոգևմտավոր ճառագայթումներ, էջ 173:

[14] Զրույցներ, էջ 220:

[15] Նույն տեղում, էջ 299-300:

ների ինքնատիպ մշակույթն ու նրա զարգացումը, այլ, ընդհակառակը՝ մեկը լրացնում է մյուսին: Ասվածը փաստարկելու միտումով մեջբերենք քաղվածքներ, մանավանդ որ հեղինակի խոսքը անհամեմատ ավելի լավ ու պատկերավոր է, քան մերը:

«Ժողովուրդների և նրանց մշակույթների միջև շփումները օգտաշատ են: Մեծ քաղաքակրթությունները ծնվել են մշակութային խաչմերուկում, զանազան մշակույթների հանդիպման արդյունք են: «Մշակութային երկխոսությունը», որի մասին այսօր այդքան հաճախ են խոսում, ուղի է հարթում դեպի խաղաղություն և մարդկային բարեկեցություն»[16]:

Մշակութային շփումները չեն վերացնում կամ համահարթում ամեն մի ժողովրդի մշակութային ինքնատիպությունը: «Ես այն կարծիքին եմ,- շարունակում է իր միտքը Վեհափառը,- որ իր ազգության, իր անկրկնելիության գիտակցումը նշանակում է այլ ազգության ճանաչում և ընդունում: Մյուս կողմից, ընդունելով ուրիշի մշակույթը, կարելի է ու անհրաժեշտ է հավատարիմ մնալ սեփական ինքնությանը»[17]: Այդ առիթով շոշափում է նաև Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը: «Ես կարծում եմ, որ ներկա պահին Հայաստանում մենք, միաժամանակ, մասնակից ենք և՛ ազգային զարթոնքին, և՛ աշխարհի մնացյալ մասի հետ փոխհարաբերությունների զարգացմանը: Այս երկու շարժումների ներդաշնակ զուգորդությունը շատ խոստումնալից է»[18]:

Ազգային և ընդհանուր մշակույթների մասին իր միտքն ավարտում է հետևյալ կերպ. «Հայությունս ինձ համար միայն այն ժամանակ է իմաստավորվում, երբ ես շփման, հաղորդակցության մեջ եմ այլ ազգությունների հետ: Այս տեսանկյունից ես հուսով եմ, որ երրորդ հազարամյակի մարդիկ խորությամբ կգիտակցեն ազգերի միասնության նշանակությունը, բազմակերպության մեջ միասնության, ինչը կբացառի դիմակայությունը, այն լարվածությունները, որոնք հաճախակի հրահրվում են ներքաղաքական չափազանց նեղ նկատառումներով»[19]:

Հիրավի՝ փորձով իմաստնացած մարդու պատգամային խոսքեր:

Տարբեր առիթներով մշակութային հարցեր արծարծելուց զատ Գարեգին Ա-ի «Հայաստանեաց Եկեղեցին իր "ծառայական կերպ-ին" մէջ» գիրքը հիմնականում նվիրված է մշակույթին: Այդ գրքում հայկական աղբյուրների վրա հիմնվելով, ինչպես նաև տեղական և արտասահմանյան գրականությունն ուսումնասիրելով անդրադառնում է հայ հին և միջնադարյան մշակույթի խնդիրներին: Աշխատությունն սկսվում է Աստվածաշնչի թարգմանությանը նվիրված խոսքով, այնուհետև անդրադառնում է թարգմանական շարժմանը, ինքնուրույն գրականության առաջացմանը: Ապա վերլուծվում է քանաստեղծությունը, հեղինակի խոսքերով ասած՝ «մարդկային հոգու ամենից ավելի անմիջական. հարազատ ու խորունկ արտահայտությունը», դրա մեջ նկատի առնելով նաև հոգևոր երգերը՝ շարականները: Բնութագրվում են

---

[16] Նույն տեղում, էջ 82:

[17] Նույն տեղում, էջ 83:

[18] Նույն տեղում, էջ 235:

[19] Նույն տեղում, էջ 84:

սրբախոսական, մեկնողական, բառոյախոսական, աստվածաբանական, դավանաբանական, ծիսական գրականությունը, փիլիսոփայությունը, պատմագրությունը:

Արվեստի ճյուղերից անդրադառնում է մանրանկարչությանը, հիշատակելով իր ուսուցիչ, նշանավոր հայագետ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի վաստակը, քանդակագործությանը, ճարտարապետությանը: Վկայակոչելով Շարլ Դիլին, Յոզեֆ Ստրժիգովսկուն, բացահայտում է 7-13-րդ դարերի հայ ճարտարապետության դերը Արևելքի և Արևմուտքի քրիստոնեական արվեստի պատմության մեջ: Նկատի առնելով հայոց պատմության յուրահատկությունը, գիրքն ավարտվում է հետևյալ ընդհանրացումով. «Մշակութային արժէքների իր գանձարանը, ըստինքեան հարուստ, բայց միշտ կողոպտուած գանձարան է եղել, աւարի թիրախ՝ աւերիչ ոյժերի համար: Բայց «գանձ»-ը ինք եղել է «անկողոպտելի»: Այսինքն՝ ստեղծագործելու կամքն ու տաղանդը, կիրքն ու ձիրքը, ձգտումն ու պրկումը, շնորհն ու գործօնութիւնը մնացել են անկապտելի եւ անխորտակելի»[20]:

Գարեգին Վեհափառը ոչ միայն գրում էր ու բանավոր հանդես գալիս մշակույթի մասին, այլ նաև մշակութային դրվատելի գործունեություն էր ծավալում: 1979 թվականից մինչև 1994 թվականը, 16 տարի շարունակ, Բեյրութում կազմակերպում էր գրքի ընդարձակ ամենամյա ցուցահանդեսներ: Ամեն տարվա աշնանը կազմակերպվող ու մեծ հետաքրքրություն առաջացնող ցուցահանդեսների հանդիսավոր բացումը կատարում էր Վեհափառը: Համակ ուշադրությամբ էր ունկնդրվում նրա խոսքը գրքի, գրի ու գրականության նշանակության, դրանց լուսավորչական, մշակութային անփոխարինելի դերի մասին: Նրա բացման խոսքերը տպագրվեցին առանձին գրքով՝ «Հայ մարդը հայ գրքին դիմաց» խորագրով:

Ընթերցում ես գիրքը և պատկառանքով լցվում հեղինակի հանդեպ: Միևնույն խնդրին նվիրված ամենամյա 16 ելույթները բոլորովին չեն կրկնում մեկը մյուսին, ամեն անգամ նոր մոտեցում, նոր ու թարմ խոսք: Գրքի նկատմամբ ունեցած պաշտամունքի հասնող վերաբերմունքի մասին գաղափար կազմելու համար կրկին դիմենք հեղինակի խոսքին. «Գիրքով բարձրացաւ հայ մարդը: Գիրքով ծաղկազարդուեցաւ հայոց երկիրը: Եւ այդ օրէն մինչեւ այսօր դարերու ճամբաներով քալեց այդ Գիրը եւ մշտնջենաբուխ շունչ տուաւ հայ մտքին ու սրտին»[21]: «Մեր հոգեկան եւ ազգային տոկունութեան ժայռանման կռուանն է եղած մշակոյթը առհասարակ եւ գրականութիւնը՝ մասնաւորապէս: Մեր պատւին է եղած գիրքը: Բարձր պահենք այդ պատիւը, մեր անունին պէս»[22]: «Այո՛, մենք կանք մեր լեզուին շունչը մեր ազգին մէջ կենդանի պահող գիրով ու գիրքով»[23]: «Ս. Մեսրոպի... Հայոց Այբուբէնը, մնաց եւ իրեն հետ մնացին ու կը մնան այն ժողովուրդն ու երկիրը, որ այդ գիրը ունեցան եւ ունին որպէս դրօշ»[24]:

---

[20] **Գարեգին Բ. Կաթողիկոս**, Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մեջ, Անթիլիաս, 1994, էջ 142-143:

[21] **Գարեգին Բ. Կաթողիկոս**, Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց, Անթիլիաս, 1990, էջ 16:

[22] Նույն տեղում, էջ 20:

[23] Նույն տեղում, էջ 32:

[24] Նույն տեղում, էջ 71:

Նա տեղեկատվական միջոցների մեջ գերադասությունը անվերապահորեն տալիս էր գրքին. «Ձայնասփիւռ, հեռատեսիլ,- գրում է նա,- շարժանկար և այլ տեսողական-լսողական գործնական արդի միջոցներ ճաշակ մը կուտան, երբեմն ճաշակ կը սրեն, բայց բուն ճաշը ընթերցումն է, խոր, հալալ վայելք, որովհետև մարդկային ինքնածին ճիգ կայ անոր մէջ, խորանալու, մտերմանալու աւելի մեծ կարելիութիւն»[25]:

Գիտության և հատկապես մշակույթի վերաբերյալ Գարեգին Ա Կաթողիկոսի թողած ամբողջ ժառանգությունը ներկայացնել համառոտ մի հոդվածի շրջանակներում անհնարին է, ուստի սահմանափակվենք այս ոլորտում նրա մոտեցումների, միտումների ուրվագծային այս լուսաբանմամբ:

*

* *

Լայնախոհ ու արդարամիտ աշխարհայացքով նա մեծ ծրագրեր ուներ անկախության հասած իր ժողովրդի վերազարթոնքին ծառայելու: Ցավոք, անժամանակ կտրվեց նրա կյանքի թելը, և Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնում, նվման կետում մնացին նրա մտահղացումներն ու ծրագրերը: Կարճատև հայրապետությունը հնարավորություն չտվեց մեր ժողովրդին ըստ արժանվույն ճանաչելու բնությունից շռայլորեն օժտված նվիրյալ իր զավակին:

Վեհափառ Հայրապետի մահվան տարելիցին միանգամայն իրավացիորեն նշեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, թե մեզ հետ չէ նրջանկահիշատակ Գարեգին Առաջինը, սակայն մեզ հետ է նրա արգասավոր գրչի արդյունքը՝ նրա հարուստ գրական ժառանգությունը, որը հոգևոր ու մտավոր սննդի շտեմարան է մեր ժողովրդի զավակների, հատկապես երիտասարդության համար:

---

[25] Նույն տեղում, էջ 33:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՄՏԱԾՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ*

Վեհափառ Տեր,

Հարգարժան ներկաներ,

Գարեգին Ա-ին նվիրված մեր խոսքը կցանկանայինք սկսել հետևյալ զուգահեռով.

Երջանկահիշատակ Վազգեն Ա-ն ասում էր. «Աստված որոնելու ճանապարհին ես գտա Սուրբ Էջմիածինը և խոնարհվեցի ճակատագրի առջև»:

Ս. Էջմիածին բերող այս ճանապարհը առավել տևական ու բարդ եղավ Գարեգին Ա-ի համար՝ իր արտացոլումը գտնելով նաև նրա ստեղծագործություններում և հրապարակային խոսքում, որն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո հանգեց շարունակական ընդգծմանը այն գաղափարի, որ աշխարհասփյուռ հայության հետագա հայապահպան ընթացքը անպատկերացնելի է առանց իր հոգևոր միասնական կենտրոնի շուրջը համախմբվածության:

Հայոց Եկեղեցու գաղափարը երջանկահիշատակ Հայրապետը խտացրեց Էջմիածնի խավաքական կերպարում, հոգևոր խոսքի տարբեր ժանրերում՝ կոնդակ, օրհնության գիր, քարոզ, ելույթներ ու դասախոսություններ, այդ կերպարը ամեն անգամ լավագույնս արտահայտելով նորովի անդրադարձումներով, որոնց առաջին և ամենաբնորոշ օրինակը հայրապետական ընտրությունից հետո տրված Հայրապետական Անդրանիկ կոնդակն էր:

Այս կոնդակները, որոնք նաև ուղենշային ծրագրեր են հայրապետական սկսվող գործունեության, սովորաբար տրվում են, այսինքն՝ գրվում և հռչակվում կաթողիկոսական ընտրությանը հաջորդող մոտակա ազգային-եկեղեցական նշանակալից տոներից մեկին:

Խորհրդանշական է, որ Գարեգին Ա-ը, ընտրվելով ապրիլի 4-ին, իր անդրանիկ կոնդակը տվեց հունիսի 18-ին՝ Սուրբ Էջմիածնի տոնին: Ինչպես ինքն է գրում՝ «Իմաստալից զուգորդութեամբ՝ ընտրեցինք այս տօնը իբրեւ առիթ եւ թուական մեր Հայրապետական Անդրանիկ կոնդակին: Այս օրը Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի հիմնադրման հրաշազան դրուագին վերակենդանացման պահն է ողջ հայութեան գիտակցութեան եւ կեանքին մէջ»[1]:

Կոնդակը հոգևոր գրականության ամենակայուն կանոնական ժանրն է՝ իր առա-

---

* Կարդացվել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում Գարեգին Առաջինի 70-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում:

[1] «Էջմիածին», 1995 թ., Զ - Է, էջ 5:

վել ավանդական գրական բանաձևերով ու արտահայտություններով, սակայն որոնցում ցեղարվեստորեն նորովի են վերամեկնաբանվում ավանդական տարբեր հասկացություններ:

Քանի որ Գարեգին Ա-ի կոնդակը տրված էր Էջմիածնի տոնի առթիվ, իսկ Մայր Տաճարը հիմնվել է Գրիգոր Լուսավորչի տեսիլում հայտնված գծագրման հիման վրա, ինչպես Ագաթանգեղոսի պատմության մեջ է ասվում «Եւ լոյսն հոսեալ վերուստ ի վայր մինչեւ յերկիր հասանէր»[2], ուստի Էջմիածնին տրված բնորոշումներում գերիշխում է լույսի գաղափարը:

Հայոց լեզվում լուսանկար բառն իսկ ժամանակին եղել է Էջմիածնին տրված բնորոշումը և նշանակել է լույսով նկարված, այսինքն՝ տեսիլքում լույսով գծագրված տաճար, և հետո՝ վերջին հարյուրամյակում է, որ այն սկսվել է գործածվել այսօրվա իմաստով:

Գարեգին Ա-ը ևս կոնդակը խարսխել է լույսի այս գաղափարի վրա և Հայոց Հայրապետական Աթոռի առաքելահաստատ լինելն ու Միածնի իջմամբ լուսեղեն գծագրվելն արտահայտել ավանդական այդ պատկերի հետևյալ նորովի ներկայացմամբ. «Հաստատեալ ի վերայ հիմանց սրբոց Առաքելոցն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի, լուսաձեւ կերպատրեալ երկնակամար տեսլեամբն Հօրն մերոյ հաւատոյ՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի»[3]:

Անդրանիկ և ընդհանրապես նշանակալից կոնդակներում Հայոց Հայրապետները ողջույնի իրենց խոսքից առաջ թվարկում էին Հայրապետական Աթոռի ավանդական նվիրական հասկացությունները և սրբությունները՝ դրանով շեշտելով, որ իրենց օրհնության զորությունը խարսխված է այս հասկացությունների և ոչ թե միայն իրենց անհատական խոսքի վրա:

Նույն կերպ Գարեգին Ա-ն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանգամանքով գրած Անդրանիկ կոնդակում, հավաքականորեն դիմելով հայ ժողովրդին, ասում է. «Եւ առաջին իսկ վայրկեանէն կ'ուզենք, որ գիտնաս, որ Մեր տկար անձէն չի բխիր ողջոյնի այս խօսքը, որ կը փոխանցուի քեզի Անդրանիկ կոնդակի այս բառերէն: Ան կու գայ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ամենայաղթ եւ անյաղթելի հաւատքէն, որուն խտացեալ եւ մարմնացեալ անունն է ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ և մականունը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ»:

Ընդհանուր քրիստոնեական գրականության մեջ հաճախ է շեշտվել այն միտքը, որ Աստծո Որդին երկիր իջավ, որ մարդը երկինք բարձրանա: Մեր եկեղեցական մատենագրությունում էլ ասվում է, որ Միածնի իջմամբ և Մայր Տաճարի վեր բարձրացմամբ երկինքն ու երկիրը իրար հանդիպեցին, միախառնվեցին: Անդրանիկ այս կոնդակում շարունակելով իր խոսքը խարսխել Էջմիածնի նվիրականության վրա, երկնքի ու երկրի այս միախառնման մասին գրում է. «Այս խօսքը կու գայ ձեզի սրբաճաճանչ այն վայրէն, ուր մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհաձիր եւ հրաշագործ

[2] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983 թ., էջ 414:

[3] «Էջմիածին», 1995 թ., Ձ-Է, էջ 5:

ձեռքը ոսկի ուռնակով բախեց եւ օրհնեց Հայոց հողը, ուր երկնքի ու երկրի սուրբ համբոյրը դրոշմուեցաւ որպէս հիմնախարիսխը սուրբ եկեղեցւոյ գոյատեւման իբրեւ սեփական եկեղեցին Հայաստան աշխարհիս, հայրենի պետութեան եւ հայկազեան ազգիս»:

Մեկ այլ առիթով էլ եկեղեցու բեմից դիմելով ժողովրդին՝ ասում է. «Գիտեք, ինչ կնշանակի ինձ համար Էջմիածին. Աստծո համբույրը մեր հողին»[4]:

Ժողովրդական հավատքով Լուսավորչի տեսիլի հետ անխզելիորեն կապված է Լուսավորչի կանթեղը, որում, համաձայն ավանդության, անմար կերպով սրբի արցունքներն են վառվում յուղի տեղակ: Քանի որ Ամենայն Հայոց Կաթողիկոսները հաջորդներն են Լուսավորչի գահի, ուստի, դիմելով յուղ-արցունքի այս պատկերին, Անդրանիկ կոնդակում Հայոց Հայրապետների գործունեության համար ասում է, որ նրանք «տիւ եւ գիշեր իրենց կեանքը վերածեցին իւղ-արցունքի Լուսաւորչի կանթեղին լոյսը անմար եւ մշտարծարծ ու շողարձակ պահելու համար հայ ժողովուրդի կեանքի ճանապարհներուն որպէս ճրագ ուղեցոյց»:

Անդրանիկ կոնդակից հետո նորընտիր Հայրապետների երկրորդ նշանակալից խոսքը լինում է ընտրությանը հաջորդած շրջանի Սուրբ Ծննդյան կամ Սուրբ Հարության՝ Զատիկի անդրանիկ քարոզ-պատգամները: Ս. Ծննդյան իր այս անդրանիկ պատգամը Գարեգին Ա-ը վերնագրել է «Բեթղեհէմի աստղին լոյսը՝ Սուրբ Էջմիածնի պրիսմակէն»[5]:

Այս վերնագրում իսկ շեշտվում է, որ մեր ժողովրդի համար Բեթղեհեմի լույսը, այսինքն՝ Ավետարանի քարոզությունը տարածվելու է, բեկվելու և անդրադարձվելու է Հայոց Եկեղեցու միջոցով՝ կենտրոն ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Էջմիածինը Վեհափառն անվանում է **մայրամսուր**, որովհետև ինչպես բեթղեհեմյան աստղի լույսը իջավ Բեթղեհեմի Ծննդյան մսուրին և այնտեղից տարածվեց աշխարհով մեկ, այնպես էլ Միածնի իջմամբ նույն լույսը հայոց աշխարհում նախ իջավ Էջմիածնում և այնտեղից, որպես Հայոց Բեթղեհեմից, տարածվեց մեր ժողովրդի մեջ: Գարեգին Ա-ի բնորոշմամբ՝ «Մեր Հայաստան աշխարհը Վաղարշապատ անունով ճանչցուած վայրին մէջ դարձաւ Հայոց Բեթղեհէմը՝ ԷՋՄԻԱԾԻՆ անունով: Այստեղ էր, ուր մեր Հաւատոյ Հայրը իր լուսահեղեղ տեսիլքին մէջ տեսաւ զՔրիստոս, որ իջաւ ի Հայաստան, որ այսպէս, այդ իջումովն իսկ, կերպարանափոխուեցաւ եւ դարձաւ Բեթղեհէմը հայ ժողովուրդի հաւատքին: Սուրբ Էջմիածնով, ամեն մէկ հայու հոգին դարձաւ մսուր ծննդեան Քրիստոսի ի Հայաստան աշխարհի եւ վասն համայնութեանն ազգիս հայոց»[6]:

Մեկ այլ քարոզում Էջմիածնի՝ որպես Հայոց Բեթղեհեմ լինելու մասին այսպես է գրում. «Այստեղ, Իջման Սեղանին Քրիստոսի ձեռքն է դիպել: Սրանից ավելի սուրբ տեղ ես չեմ կարող երևակայել հայ ազգի համար: Աստված Ինքը իջավ ու մեր հողի

---

[4] «Էջմիածին», 1995 թ., Ե, էջ 22:

[5] «Էջմիածին», 1996 թ., Ա, էջ 20:

[6] Նույն տեղում, էջ 23:

վրա այս եկեղեցու՝ Իր ներկայության տեղը ցույց տվեց»[7]:

Վերջին տասնամյակներում և հատկապես վերջին տարիներին շատ է խոսվել և գրվել Հայոց Եկեղեցու միասնության, մեր Եկեղեցու նվիրապետական Աթոռների հարաբերակցության մասին: Կաթողիկոսական ընտրությանը հաջորդած գահակալության ընթացքին տված քարոզում այդ հարաբերակցությունը Գարեգին Ա-ը ներկայացնում է հետևյալ հստակ բանաձևմամբ. «Մեր Եկեղեցին կը դառնայ ներքնապէս աւելի կենսալից եւ իր գործունէութեամբը աւելի բարերար, երբ կը գործէ որպէս մէկ Եկեղեցի, ընդ գլխաւորութեամբ եւ հովանաւորութեամբ Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսութեան, զոր ողջ հայ ժողովուրդը կը դաւանի որպէս Մայր Աթոռ»[8]:

Նույն այս միտքը գրեթե համանման ձևակերպմամբ գտնում ենք և վերը հիշված Անդրանիկ կոնդակում. «Հարկ ի վերայ մեր կայ, որ Հայ ժողովուրդի պատմական կեանքին մէջ շրջադարձային կարեւորութիւն ունեցող այս օրերուն գործենք որպէս մէկ Եկեղեցի, որովհետեւ ենք մէկ Եկեղեցի, ընդ հոգեւոր վերին գլխաւորութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ ներդաշնակ լծակցութեամբ մեր նուիրապետական Աթոռներուն»:

Այս բանաձևումները, իրեն բնորոշ կերպով հիմնավորելով նաև հոգևոր-գրական ավանդույթով, գահակալության նույն այս առաջին տարում Տիրամոր Վերափոխմանը նվիրված քարոզում և մի շարք այլ դեպքերում հոգևոր առանձնակի մի խորհուրդ է գտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը տրված Մայր Աթոռ բնորոշումում. «Տիպար մօր կերպարը այնպիսի գեղեցիկ պատկերացումով ըմբռնած է հայ ժողովուրդը, որ **ՄԱՅՐ** բառը նկատած է իր բառարանի գեղեցկագոյն, ընտրելագոյն, ազնուագոյն բառերից մէկը, եւ զայն առնչած է իր գերազանց արժէքներին: Այսպէս, իր Եկեղեցին կոչած է **ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**, իր լեզուն կոչած է **ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ**, իր հայրենիքը կոչած է **ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ**, իր Սուրբ Աթոռը՝ Էջմիածինը, կոչած է **ՄԱՅՐ ԱԹՈՌ**»[9]:

Գարեգին Ա-ը գրում էր, որ Էջմիածինը և հայրենիքը ոչ միայն կարոտի աղբյուր պետք է լինեն աշխարհասփյուռ հայության համար, այլև մագնիս, որ հայը ոչ միայն կարոտելու է իր հայրենիքը ու հոգևոր կենտրոնը, այլև ձգտելու և ձգվելու է դեպ նրանք:

Այս առումով բնորոշ են Մայր Տաճարում սփյուռքից եկած ուխտավորներին ուղղված հետևյալ խոսքերը. «Դուք ինչպես եկաք, ես չգիտեմ, բայց վա՜յ ձեզի, հազար անգամ վա՜յ ձեզի, եթե երթաք՝ ինչպես որ եկաք: Չեք կարող վերադառնալ այնպես, ինչպես էիք գալուց առաջ: Մագնիսով բռնվեցիք: Այդ մագնիսը Սուրբ Էջմիածինն է, Հայաստանի հողն է, այդ հողին վրա մեր հավատքին վկայություններն են»[10]:

---

[7] «Էջմիածին», 1996 թ., Ժ-ԺԱ, էջ 27:

[8] «Էջմիածին», 1995 թ., Դ, էջ 74:

[9] «Էջմիածին», 1995 թ., Ը-Թ, էջ 8:

[10] «Էջմիածին», 1998 թ., Ը-Թ, էջ 100:

Էջմիածնի ու նրա հոգևոր դերն ու կարևորությունը մեր ժողովրդի կյանքում շեշտելու համար Գարեգին Ա-ը երբեմն դիմում էր այնպիսի արտահայտչամիջոցների ու համեմատությունների, որոնք ոչ միայն անհարիր էին ավանդական մտածողությանը, այլև մեր իսկ ընդունված ըմբռնումներին:

Այսպես, օրինակ, Թբիլիսիի Հավլաբարի եկեղեցում հայ մարդկանց հոգիները մեր ազգային-հոգևոր արժեքների առջև միշտ բաց և մաքուր պահելու Էջմիածնի առաքելությունը շեշտելով, ասում է. «Եղբայրներ ու քույրեր, եթե եկեղեցու սա ջահը միշտ առանց սրբելու մնա, կփոշոտվի: Ես եկել եմ Սուրբ Էջմիածնի ավելով՝ ձեր հոգիների միջի փոշին սրբելու»[11]:

Հայության աշխարհասփյուռ փարածվելուն զուգընթաց, Մայր հողում ի դեմս Էջմիածնի, կենտրոնաձիգ ազգային հոգևոր կենտրոն ունենալու ձգտմամբ հայ մտածողությունում այն միտքն էր շեշտվում, որ Էջմիածինը արեգակն է, իսկ այնտեղ օծնվող և աշխարհում փարածվող Սրբալույս Մյուռոնը՝ նրա ճառագայթները, որոնք իրենց նյութական քարեղեն արտահայտությունն էին գտնում հայկական գաղթավայրերում կառուցված եկեղեցիներում: Այս պատկերին նա քանիցս անդրադարձել է Գարեգին Ա-ը և բնականաբար հենց Սփյուռքի եկեղեցիներում: Այսպես, 1997 թ. Վիեննայի Սուրբ Հռիփսիմե եկեղեցում փրված քարոզում ասում է. «Աշխարհում չկա մեկ հայ եկեղեցի, որի մեջ Էջմիածինը ներկա չլինի: Էջմիածինը արևն է, և մեր եկեղեցիները՝ ճառագայթները: Աշխարհի չորս ծագերում գտնվող մեր եկեղեցիները արևից ճառագայթված շառավիղներ են և արևի լույսը ունեն իրենց մեջ»[12]:

Համանման ձևով Օդեսայի Ս. Գրիգոր Լուսավորիչ նորակառույց եկեղեցու օծման ժամանակ, 1995 թ., ասում է. «Այսօր դուք Էջմիածնի մի փոքրիկ կայծ եք այստեղ վառում այս եկեղեցիով»[13]:

Նույն նպատակամղվածությամբ հայրենիքում այս պատկերին անդրադառնում է սփյուռքի հայությանը դիմելիս: Այսպես, 1998 թ. օգոստոսին Մայր Աթոռում, դիմելով տարբեր երկրներից եկած սփյուռքահայ ուխտավորներին, ասում է. «Այնտեղ, ուր մի նոր հայ եկեղեցի է կառուցվում, այնտեղ Սուրբ Էջմիածնի լույսից մի կաթիլ է ցողում Մայր Աթոռից, մեր ծննդավայրից մի նոր լույս է ծագում, ինչ ուրիշ անուն էլ որ ունենա այդ եկեղեցին՝ Սուրբ Հակոբ, Սուրբ Գևորգ կամ Սուրբ Հովհաննես, այնտեղ Լուսավորիչն է իր տեսիլքովը ապրում և Էջմիածինն է իր ժողովրդի հոգու մեջ պաճար դառնում Աստծո կենդանի»[14]:

Գարեգին Ա-ի երազանքն էր, որ 1700-ամյակի խորհրդով պայծառակերպվի, այսինքն՝ հոգևոր մի նոր վերածնություն ապրի մեր ժողովուրդը, և Էջմիածինը, իր իսկ բառերով, «դառնա հոսանք, դառնա ջրտուք մեր ժողովուրդին հոգևոր կյանքին մեջ, դառնա առաքելություն, որ խմորե մեր ժողովուրդին կյանքը քրիստոնեական հավատքի և մեր հայկական Եկեղեցվո զորացումով»[15]:

---

[11] «Էջմիածին», 1995 թ., Ը-Թ, էջ 79:

[12] «Էջմիածին», 1997 թ., Զ-Է, էջ 67:

[13] «Էջմիածին», 1995 թ., Ժ-ԺԲ, էջ 42:

[14] «Էջմիածին», 1998 թ., Ը-Թ, էջ 97-98:

[15] «Էջմիածին», 1997 թ., Բ-Գ, էջ 49:

*ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ*

# ԻՄԱՍՏՈՒՆ ԵՎ ՆՎԻՐՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԸ*

*«Հերքով անցնիլը ունի մէկ անուն. արփայինը,*
*ոգեշունչ և բարձրահայեաց՝ անմահութիւն»:*

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

Բարձրահայաց անմահության հեփքով անցավ երկրային կյանքի 67-ամյա իր ճանապարհը Գարեգին Առաջին հոգելույս Հայրապետը, որ յուրահատուկ, անձնազոհ կյանքով զգաց, խորհեց և գործեց Աստծո և հայության համար: Նա ճշմարիտ հոգևորական էր, մեկ և ընդհանրական Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անձնդիր պատարագյալը, որ ինքնանվիրմամբ ձգտեց իրականություն դարձնել Կաթողիկոսական Աթոռների միասնության տեսիլքը: Նա մեր մեկ՝ Ընդհանրական Եկեղեցու սրբազնասուրբ Սեղանի առաջին պատարագիչն էր, այդ անավարտ պատարագի առաջին սաղմոսերգուն:

Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ կարճատև գահակալության շրջան ունեցավ Ս. Էջմիածնում: Այդ կարճ ժամանակահատվածում արդյունավետ գործունեությամբ շենացրեց Հայ Առաքելական Եկեղեցու անդաստանը, վերանորոգեց, նոր կյանք ու լիցք հաղորդեց նրա առաքելությանը:

20-րդ դարավերջի հայ սրբեքի հոգևորականն ու մեծ մտավորականն անժամանակ արժեքների մի արտացոլում էր ժամանակի մեջ, որի լույսը որքան հեռանում, այնքան ահագնանում ու զորեղանում է:

Այսօր ընդամենը 70 տարեկան է նա՝ աշխարհի երևելիներից մեծարանքի արժանացած, աշխարհի գիտունների հետ բանավեճ վարած մեր իմաստուն ու նվիրյալ, մեսրոպատոճ ու շքեղաշուք հովվապետը:

Բարձրյալն Աստված կաթողիկոսների դարապտույտի երթում նրան ռահահորդի հաղթական քայլը շնորհեց՝ Անկախության Հայրապետ հռչակելով՝ կորուսյալ երկրի ստրանդական Աթոռին 18 տարի գահակալած մաշտոցազգյաց կաթողիկոսին:

Նրա իմաստնությունը սոսկ տեսական չէր, գիտելիքների հանրագիտարանային պաշարը՝ ոչ թանգարանային: Անսակարկ նվիրումով ու անսպառ եռանդով նա կյանքի էր կոչում ամբարած իմաստնությունը: Իր կյանքն ինքնին իմաստնության ու նվիրումի համադրյակցում էր. անսահման նվիրումի բարբառուն վկաները նրա կատարած գործերն են, իսկ հզոր ճարտասանությունը՝ իմաստնության արտահայտման

---

* Բանախոսություն՝ կարդացված Վեհարանի հանդիսությունների դահլիճում Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսությանը:

ծնը։ Նվիրումը նրա էության ներքին կոչնակն էր, որ փրված էր ի վերուստ. իմաստնությունը՝ այդ նվիրումի պտուղները։

Անմեկնելի ներշնչանք ուներ, հզոր երևակայություն։ Անձնապաշտ չէր և անքանքարաթաքույց կերպով իր անսպառ իմացությամբ հարստացնում էր մեր ներաշխարհը, պայծառացնում մեր միտքը։ Թումանյանական զորություն կար նրա մեջ. մեր ազգային զգացումների, հույզերի ու խոհերի, ժողովրդական իմաստնության խտացում էր։

Երբեք չհեռացավ իր արմատներից, չդավաճանեց ազգային ոգուն։ Աշխարհում ամենասիրած վայրը Գալաթուրանում Ծովի թաղի իր այգին էր՝ թզենու հովը, մտերմիկ զրույցի սրտամոտ միջոցը՝ քեսպնօքը՝ Քեսապի բարբառը, սիրտը հովացնող ջուրը՝ Կասիոս լեռն ի վեր Սուսլիի աղբյուրը, մշտահունչ խրատապտուն դպրեվանքի վերտառությունը՝ «Խորհէ՛ և մտի՛ր»։

Արևմուտքում անցնելով հոգևոր և իմացական կյանքի դպրոցները՝ Արևելքը կրեց իր մեջ, հղկեց ազգային պրիսմակով՝ դառնալով արևմտյան և արևելյան արժեքների կատարյալ համադրություն, ներդաշն հոգևոր-բարոյական, իմացական կառույց։ Որքան խստակ էր միտքը, այնքան ջերմ էր սիրտը։ Հաղորդական էր, մատչելի, պարզ, սակայն միաժամանակ վեհ և անհասանելի իր անսպառ ու խորախորհուրդ էությամբ։ Որպես աստվածային բարձրարվեստ ստեղծագործություն՝ աչքի պես պարզ էր ու աչքի պես բարդ։

Հոգևորականի կատարյալ տիպար էր, որ իր անձնականի դիմաց գրել էր՝ բացակա։ «Ես հովիվ եմ»,- ասում էր նա, և անանձնական նվիրումով մղվում դեպի իր հոտը։ Որպես ճշմարիտ վարդապետ՝ Հիսուսի օրինակով ելավ ժողովրդի մեջ, քարոզեց նրա համար, սիրեց նրան՝ մոտիկից ապրելով նորանկախ հանրապետության տարտամ գույները։ Որպես հորդահոս ջրտուք՝ ուզեց թափանցել անհավատության երկարամյա թմբիրի միջով, կամեցավ փխրեցնել աստվածամերժ հոգիները։ Ջրտուքը շռնդալից էր ու անսպասելի, կորդացած հոգիները՝ անպատրաստ ռոգման... Սակայն այսօր շատերի հոգիներն են աստիճանաբար ներծծվում կենսապարգև զորությամբ այդ և ըմբռնում ան-ժամանակ իրողությունների իսկական արժեքը։

Մեզ բախտ վիճակվեց ծնրադիր աշակերտելու նրան, նրա մյուռոնաբույր մատների միջով զգալու աստվածային օրհնության ու հոգևոր փրկչության բերկրանքը, ապրելու հավատքի ուխտի վերանորոգությունը։ Նրա հետ յուրաքանչյուր հաղորդակցություն կյանքի մեծագույն դաս էր ասյալի համար։ Նա վերարթնացրեց էջմիածնադիր ուխտը մեր, վերարժևորեց անաստվածությամբ կողպված լուսավորչատուր հավատքը։

Նա Ավետարանի թարգմանն էր, Ս. Մեսրոպի սուրհանդակը, ոսկեղենիկ մեսրոպյան լեզվի գանձապետը, որ լավագույնս հնչեցրեց այն աշխարհի տարբեր ծագերում։ Ոսկեբերան քարոզիչ էր և իր խոսքը որպես պատարագի նշխար բաժանեց ամենքին։

Ինչպես Մովսեսը 40 տարի շարունակ խոսեց և առաջնորդեց իր ժողովրդին դեպի Ավետյաց Երկիր և Մովաբի լեռան վրա մի վերջին հայացք գցելով Ավետյաց

Երկրի հորիզոնին՝ փակեց աչքերը, այդպես էլ Գարեգին Ա-ն 40 տարի աշխարհին խոսեց Քրիստոնյա Հայաստանի 1700-ամյակի մասին՝ սևեռելով բոլորի ուշադրությունը ի Հայաստան, ի բեթղեհեմյան միածնաէջ մայրամուտ, սակայն իր աչքերը փակեց այդ մեծ տոնակատարության նախաշեմին Սուրբ Էջմիածնում՝ դեռևս չբոլորած իր 67 տարին:

Սիրում էր Վեհափառը օշականյան սրբավայրը և հաճախ իր այցելություններով իմաստավորում մեր օրը, երջանկություն պարգևում մեզ: Իսկ յուրաքանչյուր այցելություն նրա համար մի մտմտուք էր՝ ամենահայ հայի ցերեկմանը բարեզարդելու, մեսրոպյան ոսկեդարը մեր օրերում վերարթնացնելու մտահոգությամբ: Ջերմեռանդությամբ բարենորոգեց սրբարանը, հիմնեց «Մեսրոպ Մաշտոց» դպրատունը: Որպես սրտացավ փանտեր՝ ուրախանում էր աշխատանքների հաջողություններով: Մեր երազներից, խոհերից ու խոկումներից, անքուն օրերի խոնջանքից ծնված այդ դպրատան կամարների ներքո այսօր մենք տեսնում ենք Գարեգին Հայրապետին, զգում նրա կենդանի շունչը:

Օշականում, որպես Ընդհանրական Հայրապետի, անդրանիկ այցելության առիթով մի հուշակոթող ենք կանգնեցրել, որի բացման արարողության ժամանակ ասաց. «Այս քարը այլևս դադարում է քար լինելուց, այն խոսում է, որովհետև անլռելի զանգակատուն է»: Այսօր Սուրբ Էջմիածնի զանգակատան կողքին գտնվող նրա լուսահորդ շիրիմը դադարում է քար լինելուց: Մեզ համար այն անլռելի զանգակատուն է, և այդ զանգակատան կոչնակները պիտի հնչեցնենք մենք՝ նրա անմահության վկաները, նրա երախտագետ ժառանգորդները:

- Որտե՞ղ հանդիպենք նրան,- կհարցնենք, և նա կտա իր պատասխանը.

«Ես հոն եմ, Օշականի մէջ, իմ արժանի առաջեալին և իմ Անտարանին հայերէնախօսութեան սկզբնածին վարդապետին մեսրոպաբոյր ու յաւերժաբարբառ շիրմին մօտ»:

Այսօր բարձր փնօրինությամբ մեծությունը արժևորող ճշմարտախոս Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հնչեցին Մայր Տաճարի կոչնակները, Սուրբ և անմահ Պատարագով վերակենսավորվեց մեր մեջ Գարեգին Մաշտոցաշունչ Կաթողիկոսը և ի ոգեկոչումն նրա՝ կատարվեց հոգեհանգստի կարգ և հիշատակի հանդիսություն:

Եկեք մենք էլ մեսրոպաբարբառ աղոթքներ առաքենք երկինք՝ երանաշնորհ Հովվապետի հոգու խաղաղության համար, որը մեր միասնության, մեր համերաշխության, մեր փոխըմբռնման ու համերաշխության, մեր կիսատ երազների իրականացմանը նվիրված առաքյալը եղավ:

*ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ*
*Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ,*
*ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ*

# ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ*

Վեհափառ Տե՛ր, սրբազան հայրե՛ր, պատվարժան հյուրե՛ր.

«Տիրոջ համար մեկ օրը՝ ինչպես հազար տարի, եւ հազար տարին՝ ինչպես մեկ օր» (Բ Պետր. Գ 8): Առաքյալի այս խոսքում վերակենդանացված է դարեր առաջ հնչած Սաղմոսի տողը. «Հազար տարին Տիրոջ աչքում երեկուայ օրուայ պես է» (Սաղմ. Ղ 4):

Իրոք, Աստծո համար զրոն՝ զրո է, որքան էլ ավելանա թվին, միևնույն է՝ 7 օրը, 7 տարին, 7 տասնամյակը թե 7 հարյուրամյակը, մնում են որպես նույն աստվածային 7-ը: Շատերն են նշել մի օրինաչափություն. գնալով ժամանակն ավելի սրընթաց է դառնում, «սեղմվում է»: Աստվածաշնչյան ժամանակների կայսրությունը՝ Եգիպտոսը, 7 հարյուրամյակի կյանք ունեցավ, մեր ժամանակների կայսրությունը՝ 7 տասնամյակի: Բիբլիական ժողովուրդը 4 հարյուրամյակ եղավ գերության մեջ, իսկ նրա ճանապարհը դեպի ազատություն և ազատ պետականություն տևեց 4 տասնամյակ: Այդ 4 տասնամյակների առաջնորդը՝ Մովսեսը, գիտեր, որ ինքը չի տեսնելու ապագա ծաղկող պետությունը, այլ դրա նախաշեմին պիտի մահանա, և ուրեմն գիտեր, որ իր քառասնամյա տքնանքը՝ իր համար չէր, այլ իր ժողովրդի ապագայի կերտման համար:

XX դարավերջին հայ ժողովրդի համար Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետին էր վիճակված կատարել այս նույն դերը: Նա իր ողջ հոգով, մտքով ու հավատով ընկալում էր հայ ժողովրդին իբրև աստվածընտրյալ: Մեր պետականության կերտման առաջին քայլերի ընթացքում մեր հոգևոր առաջնորդը եղավ մի անձ, որի համար, ըստ ժամանակի վերոհիշյալ «օրինաչափության», մովսեսական 4 տասնամյակը վերածվեց 4 տարվա: Արդեն անցած 4 տասնամյակի հոգևորական սպասավորության ուղի, 4 տարով էլ կանչվեց՝ ողջ հայությանը առաջնորդելու դեպի հոգու ազատագրում, ինչը վստահաբար դիտում էր որպես միակ պայման, որով կարող է կայանալ այ՛ն ազատ պետությունը, որի յուրաքանչյուր քաղաքացուն հասու է լինելու ճշմարիտ ազատությունը՝ ոչ որպես հռչակված, այլ իրապես ձեռքբերված: Ինչ-

* Բանախոսություն՝ կազմակերպված Վեհարանի հանդիսությունների դահլիճում Գարեգին Առաջինի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսությանը:

պես Մովսեսը՝ ծառայության կոչվելու պահին բացականչեց՝ «Ես ո՞վ եմ, որ այս ժողովրդին հանեմ Եգիպտացիների երկրից» (Ելից Գ 11),- ու խոստովանելով իր տկարությունը, ապավինեց Աստծուն, այնպես էլ Հայոց Հայրապետն իր առաջին իսկ քարոզում ասաց. «Ուսերս տկար էին», բայց նան անհապաղ ավելացրեց՝ սաղմոսերգուի խոսքերով դիմելով Երկնավոր Հորը. «Տուր զօրութիւն ծառայի Քո»(Սաղմ. ՁԵ 16): Եվ վերցրեց իրեն հանձնած բեռն իր ուսերին՝ երբեք չակնկալելով երախտագիտություն, որովհետև գիտեր, որ նույնիսկ Մովսեսի դեմ բազում անգամ ընդվզեց նրա հոտը, քանզի երկրպագեց ոսկե հորթին:

Երջանկահիշատակ Հայրապետը խոր համոզմունք ուներ, որ ինչքան էլ խեղդված լինի ազատության զգացումը, միևնույն է, այն հարատևել է իր ժողովրդի մեջ ու չի սպանվել, որ ֆիզիկապես գերված իր ժողովուրդը միևնույնն է՝ ազատատենչ է եղել անգամ ազատատենչության դաժան արգելքի պայմաններում, և ուրեմն հոգեպես անկախ է եղել: Ուստի գահակալության արարողության ժամանակ չասաց «անկախացած», այլ՝ «վերանկախացյալ Հայրենիք»: Նա երբեք չկասկածեց, որ հայ ժողովրդի աստվածճանաչության ծգտումը ինչքան էլ ճնշված լինի, միևնույն է, հարատևել է, և Փրկչի Սուրբ Ծննդյան տոնի իր քարոզում հորդորեց. «Այլեւս չպարտինք միշտ ըսելու եւ կրկնելու, որ 70 տարիներ մենք Հայաստանի մէջ մնացինք զուրկ քրիստոնէական դաստիարակութիւնէն: 70 տարիներն ի՞նչ կ'արժեն 1700 տարիներու այնքան լիացած քրիստոնէական կեանքի արժէքներուն պատմական փորձառութեան հարստութեան դիմաց...: 70 տարիներու սովը չի կրնար 1700 տարիներու ազատութիւնը ջնջել, մոռցնել տալ կամ սյուների տակ դնել...»: Եվ բազում անգամ կոչ արեց՝ «չըսելու» ոչ միայն ինքնարդարացման այս սին խոսքերը, այլ ընդհանրապես, այսուհետ չխոսելու, այլ գործելու. «Շատ խոսեցանք, կբավե, լծվինք գործի»: Ու լծվեց նախ ինքը:

Մովսեսի պես, որն առաջ տարավ իր ժողովրդին առանց փրփնջալու, որ չի կարող խոսել, Գարեգին Վեհափառը չտրտնջաց, երբ անկարող եղավ խոսել, որովհետև իրեն էլ էր հասցեագրում խոսքից գործի անցնելու իր իսկ կոչը: Զաքարիա քահանայապետն էլ լռեց, բայց դա աստվածատուր նշան էր՝ ապագա համընդհանուր դարձի ու մկրտության: Բաղձալի է այս ավետարանական խորհրդի լույսի ներքո ընկալել Վեհափառի լռությունը: Այդ հզոր անձնավորությունը եկավ Ամենայն Հայոց գահին՝ իրեն տկար հայտարարելով, և գնաց՝ կրկնեց նույնը. «Անտանելիօրէն տկար եմ. դո՛ւք մնաք զօրաւոր»: Երբեք չընկալենք սա որպես թուլության նշան, այլ ընդունենք այն քրիստոնեական իմաստավորումով, որով ասված է և որով էլ պարտավոր է ընդունել 1700-ամյա քրիստոնեական ազգը իր Հայրապետի ցանկացած խոսք: Նրա շուրթերում սա ոչ այլ ինչ էր, քան հոգու վեհության և միաժամանակ խոնարհության վկայություն՝ երկու հատկանիշ, որոնց միաձուլմամբ է կայանում իսկական հոգևոր հովիվը: Ուստի ի դեմս Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հայ ժողովուրդն իրոք ուներ «Վեհ», ինչպես մտերմորեն անվանում էին Նրան:

Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Հայրապետի գահակալությունն այդքան կարճատև եղավ, որովհետև իր գործով, աստվածաբանական ժառանգությամբ,

հովվական առաքելության անբիծ կատարումով, հոգևոր կեցվածքով, բարու սերմնացանության շռայլությամբ նա ապրեց բազում մարդկային կյանք, և ինքը արդեն հասունացրել էր այն պահը, երբ մարդը դառնում է Աստծո պատկանելիք: Ինչպես Ենոքը՝ Ադամից յոթերորդը, որ դեռ Ջրհեղեղից առաջ մեղսավոր աշխարհին ավետեց Փրկչի գալուստը (Հուդա Ա 14) և ապրեց մինչջրհեղեղյան նահապետների հետ անհամեմատ կարճատև երկրային կյանք, բայց հենց նրա մասին է, որ, ի տարբերություն մյուսների, Սուրբ Գիրքը չի ասում, թե «մեռավ», այլ հաստատում է, որ «նա սիրելի եղաւ Աստծուն: Նա անյայտացաւ, որովհետև Աստուած նրան փոխեց Իր մօտ» (Ծննդ. Ե 24):

Վեհափառ Հայրապետի զորությունը ոչ թե սպառվեց, այլ, Տիրոջ մոտ գնալիս, նա այն փոխանցեց բոլոր միաբաններին ու նաև մեզ՝ ասելով. «Մնա՛ք զօրաւոր»: Ուրեմն պահենք մեզ նվիրաբերած այդ ուժը, մնանք զորավոր, մանավանդ գիտակցելով, որ հայ ժողովրդի ծոցից ծնվում են այսպիսի անհատներ: Լինենք վստահ, որ Վեհափառը ինչպես իր կյանքի օրոք գործեց նույնիսկ լռակյաց, այնպես էլ հետմահու գործելու է ու գործում է և երկրի վրա՝ իր ժառանգությամբ, երկնքում՝ Տիրոջ առջև իր ժողովրդի համար բարեխոսությամբ: Քաջ գիտակցենք, որ Հայ Եկեղեցին Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի հովվությամբ հաստատակամ շարունակում է նույն գործը, ինչպես Գարեգին Առաջին և Գարեգին Երկրորդ անուններն են իրար շարունակում: Վստահ լինենք, որ Հայ Եկեղեցին պահպանում է երջանկահիշատակ Վեհափառի ոգին, և որ իրականանալու է Մայր Տաճարի խորանից մեզ հաղորդած նրա բաղձանքը. «Աստուած ըլլայ մեզ հետ՝ մեր լինելովն Իրեն հետ, վասն շինութեան եւ բարգաւաճութեան ազգիս Հայոց, եւ վասն բարօրութեան համայն մարդկութեան եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան. ամէն»:

## Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 օգոստոսի 2002 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ.

Այսօր Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի 8-րդ օրն է: Տիրամայրը մեծ տեղ է գրավում ամեն մի հավատացյալի կյանքում, որովհետև Ամենասրբուհի Կույսը մեծ նշանակություն է ունեցել ընդհանրապես քրիստոնեության տարածման գործում ոչ միայն այն բանի համար, որ նրա միջոցով է Աստծո Միածին Որդին՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս, աշխարհ եկել, այլ նաև այն առաջնորդության համար, որ կատարել է մեր Տիրոջ մայրը Քրիստոսի համբարձումից հետո: Երբ Քրիստոս խաչվեց, հարություն առավ և համբարձվեց, Նրա աշակերտները հաճախ էին հավաքվում Աստվածածնի մոտ, որպեսզի իրենց Տիրոջ կարոտը նրանից առնեն: Եվ երբ առաքյալները սկսեցին իրենց քարոզության առաջին քայլերն անել և Քրիստոսի ուսմունքը տարածել ամբողջ աշխարհով մեկ, նրանց մեջ տարբեր կարծիքներ և տարբեր խմբավորումներ առաջացան:

Առաքյալների մի մեծ խումբ, Պետրոս առաքյալի գլխավորությամբ, հիմնականում պահանջում էր, որ նոր քրիստոնյաները պահպանեն հրեական բոլոր սովորությունները, ինչպես, օրինակ, թլպատությունը, և հիմնականում նրանք իրենց քարոզությունը կենտրոնացնում էին այն երկրներում, որտեղ որ հրեական համայնքներ կային, և իրենց քարոզությունը հիմնականում ուղղված էր նրանց:

Առաքյալների մեկ այլ խումբ, սակայն, Պողոս առաքյալի գլխավորությամբ, ավելորդ էր համարում հրեական ծիսական սովորությունների պահպանությունը նորադարձ քրիստոնյաների համար, որովհետև նրանք իրենց քարոզությունը հիմնականում ուղղել էին հեթանոսներին և չէին ցանկանում հրեական ծիսական արարողություններով վանել նրանց, որովհետև առաքյալների հիմնական նպատակն էր հեթանոսներին դարձնել Աստծո նոր ժողովուրդը:

Ինչպես Տիրամոր Վերափոխման պատմությունում է պատմվում, Ամենասրբուհի Կույսի երկրային կյանքի ավարտին Աստվածածնի սնարի առջև սակայն երբ հանդիպում են Պետրոս և Պողոս առաքյալները՝ նրանք հաշտվում են միմյանց հետ, ողջագուրվում և որոշում են հետայդու միաձայն ու միասիրտ քարոզել քրիստոնեությունը անխտիր և՛ հրեաների, և՛ հեթանոսների համար:

Այսպիսով, մի քանի դարերի ընթացքում հաստատվում է Քրիստոսի Եկեղեցին իբրև մեկ մարմին՝ ունենալով մեկ գլուխ, որ Հիսուս Քրիստոսն է: Թեպետև տարբեր ժողովուրդներ, տարբեր լեզուներով խոսող երկրներ դարձան քրիստոնյա և իրենց տեղական Եկեղեցիները ունեցան, սակայն բացահայտ էր այս բոլոր Եկեղեցիների միությունը, որովհետև նրանք ունեին նույն հավատքը և դավանում էին նույն Քրիստոսին ու ձգտում էին նույն փրկությանը:

12-րդ դարի վերջերին, 1179 թ., հռռավոր Կիլիկիայում Հայ Եկեղեցու Գերագույն Ժողովն էր գումարվել՝ քննելու այն հարցը, թե ինչպես կարող է Հայ Եկեղեցին զիջումներ կատարել կամ ոչ՝ ի խնդիր ընդհանուր քրիստոնեական միության: Այդ Ժողովի ժամանակ ապենաբանությամբ հանդես է գալիս Հայ Եկեղեցու մեծագույն աստվածաբաններից և քրիստոնեական աշխարհի մեծագույն էկումենիստներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, հիշեցնելով, որ Եկեղեցին մեկ էր առաջին հինգ դարերի ընթացքում: Սատանան կարողացավ, սակայն, որոմ սերմանել, և 5-րդ դարից սկսած Եկեղեցին պառակվեց ու բաժանվեց մի քանի ճյուղերի, և մեր՝ քրիստոնյաներիս պարտքն է հաղթել սատանային և վերականգնել Եկեղեցու միությունը:

Դժբախտաբար Սուրբ Ներսես Լամբրոնացու այս մտածումները տարածում չգտան քրիստոնյա աշխարհում, և բաժանումները շարունակվեցին: Նախ բաժանվեցին Օրթոդոքս և Կաթոլիկ աշխարհը, այնուհետև բաժանվեց և Բողոքական աշխարհը, և 18-19-րդ դդ. մենք մի այնպիսի քրիստոնյա աշխարհի առջև էինք կանգնած, որ տարբեր դավանությունների քրիստոնյաներ չէին ցանկանում միմյանց բարևել, չէին ցանկանում միմյանց հետ սեղան նստել:

Փա՛ռք Աստծո, սակայն 20-րդ դարը նշանավորվեց քրիստոնեական Եկեղեցիների միջև սիրո և միության անհրաժեշտության գաղափարների հաղթանակով: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, ինչպես նաև տարբեր տեղական, եկեղեցական միությունների, Եվրոպայում Եկեղեցիների Եվրոպական Կոնֆերանսի, Ամերիկայի Միացյալ Նահանգներում Եկեղեցիների Ազգային Խորհրդի և այլ կազմակերպությունների տքնաջան աշխատանքի շնորհիվ վերականգնվեց սերը քրիստոնեական Եկեղեցիների միջև: Եվ այժմ մենք ընթանում ենք այն ճանապարհով, որը առաջնորդում է մեզ դեպի մեկ Քրիստոս, դեպի մեկ Եկեղեցի:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նշում է 20-րդ դարի երջանկահիշատակ Հայրապետներից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ծննդյան 70-ամյակը: Հոգելույս Հայրապետը մի կարճ ժամանակ բազմեց Լուսավորչի գահին, 18 տարի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռի գահակալը լինելուց հետո: Ընդամենը չորս տարի եղավ նրա կաթողիկոսության շրջանը, մի փոքրիկ ժամանակաշրջան, որը, սակայն, բավական էր, որպեսզի նա կարողանար իր շունչը հաղորդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Այդ կարճ ժամանակաընթացքում երանաշնորհ Հայրապետը վերակազմեց Հայաստանի և Խորհրդային Միության տարածքում գործող Հայ Եկեղեցին՝ հինգ թեմերի կողքին ստեղծելով ևս վեց թեմեր՝ նրանց քանակը հասցնելով 11-ի, Հայաստանում չորս նոր թեմեր ստեղծելով, իսկ Հարավային Ռուսաստանում ու Ուկրաինայում ևս երկուսը՝ նրանց համար ձեռնադրելով առաջնորդ եպիսկոպոսներ և նաև ներշնչելով նրանց հավատք իրենց ուժերի և կարողությունների նկատմամբ և ոգեշնչելով, որպեսզի այդ առաջնորդները կարողանան կազմակերպել իրենց հանձնված նորաստեղծ թեմերը:

Երջանկահիշատակ Հայրապետը զարկ տվեց հրատարակչական գործունեությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, և հարյուրավոր գրքեր հրատարակվեցին այդ դժվարին չորս տարիների ընթացքում: Սակայն այն դաշտը, որտեղ Գարեգին Ա Կա-

թողիկոսը մեծ նպաստ բերեց Սուրբ Էջմիածնին և Հայոց Առաքելական Եկեղեցուն, դա էկումենիկ շարժումն էր: Լինելով 20-րդ դարի մեծագույն առաջնորդներից մեկը Եկեղեցիների միության և էկումենիկ շարժման, նա կարողացավ մի աստիճան ևս բարձրացնել Հայ Եկեղեցու նշանակությունը և հեղինակությունը համաշխարհային եկեղեցական շրջանակում, և պատահական չէ, որ 1997 թ. Ավստրիայի Գրաց քաղաքում գումարված Եվրոպայի Երկրորդ էկումենիկ համագումարի հիմնական խոսքը առաջարկվեց Գարեգին Ա նրջանկահիշատակ Հայրապետին:

Նա պաշտոնական այցելություններ տվեց գլխավոր Եկեղեցիներին և նրանց պետերին, ինչպես Ռուս Եկեղեցուն, Վրաց Եկեղեցուն, Հույն Տիեզերական Պատրիարքությանը, Հռոմ՝ Վատիկան, Քենթրբերիի Արքեպիսկոպոսին և այլ կարևոր եկեղեցական կենտրոններ: Եվ այդ այցելություններն անպատասխան չմնացին, որովհետև իմ թվարկած բոլոր Եկեղեցիների ղեկավարները փոխադարձ այցելություններ տվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Այսօր, գեղեցիկ մի զուգադիպությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում է գտնվում ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ գլխավոր քարտուղար Վերապատվելի դոկտոր Ռոբերտ Էդգարի: Պատվիրակության մեջ մենք ներկայացուցիչներ ենք տեսնում նաև Լյութերական Եկեղեցուց, Անգլիկան Եկեղեցուց, Բողոքական տարբեր հարանվանություններից, և, որ ուրախալի է, այդ պատվիրակության մաս է կազմում նաև ԱՄՆ-ի Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցին՝ իր ներկայացուցիչներով:

ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհուրդը միավորում է այդ երկրում գործող 36 տարբեր հարանվանությունների Եկեղեցիներ, և եթե հաշվի առնենք, որ այդ պատվիրակությանը մասնակցում է նաև Կաթոլիկ Եկեղեցին, ապա ավելի քան 200,000,000 քրիստոնյաների ներկայացնող մի պատվիրակություն է, որ այցելել է այստեղ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Այս Խորհուրդն է, որ անցյալ տարի Վաշինգտոնում կազմակերպեց Հայ Եկեղեցու 1700-ամյա հոբելյանը, որին ներկա գտնվեց նաև Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այս Խորհուրդն է, որ իր բողոքի ձայնը բարձրացրեց վերջերս Իսրայելի կառավարության կողմից հայկական հողերի, հատկապես «Պարոն Տեր» կալվածքի նկատմամբ ձեռնարկված ոտնձգությունների համար: Ես հանուն Վեհափառ Հայրապետի և հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և հանուն մեր հայ հավատացյալ ժողովրդի սիրով ողջունում եմ ներկայությունը մեր պատվարժան հյուրերի: Նրանք խաղաղություն են քարոզում իրենց երկրում, նրանք խաղաղությունը քարոզում են նաև իրենց երկրից դուրս՝ ամբողջ աշխարհով մեկ, և այդ խաղաղության ոգին է, որ իրենց հետ բերել են այստեղ և ուզում են միացնել իրենց ձայնը և իրենց ողջույնը հաղորդել Հայ Եկեղեցուն և մեզ բոլորիս, սիրելի հավատացյալներ:

Թող Աստված ուժ, կարողություն շնորհի և՛ մեր պատվիրակներին, և՛ այն կազմակերպությանը, որ իրենք ղեկավարում են, և՛ այն Եկեղեցիներին, որոնք իրենք ներկայացնում են: Թող Աստված իր հովանին անպակաս անի ամբողջ քրիստոնյա աշխարհի վրա, ի մասնավորի մեր Հայրենիքին, ուր այժմ մենք գտնվում ենք և ուր մենք աղոթքներն ենք բարձրացնում առ Աստված այժմ և հավիտյանս. ամեն:

# Տ. ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(11 օգոստոսի 2002 թ.)

*«Բայց արդ մնում են հավատքը, հույսը, սերը. այսինքն՝ երեքը, և սրանցից մեծագույնը սերն է»:*
(Ա Կորնթ. ԺԳ 13)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Համարձակության բարձալի ապրումի ուժով և կենսուրախ պոռթկումով միայն կարելի է արտասանել կենարար զգացմունքն արտահայտող սեր բառը:

Գրական, պատմական, բանաստեղծական և քնարական տարբեր ժանրերի գործերը ողողանջում են՝ դյութելու մարդկանց սրտերը սիրո զգացումով:

Հեքիաթային պատմությունները չեն դադարում համոզելու մարդկանց, որ սիրո համառ պայքարի արդյունքում՝ բարին հաղթում է չարին:

Փիլիսոփաների կամ իմաստասերների գլխապտույտ վերլուծությունները, բախվելով սիրո տարատեսակ ալեկոծ ու անկառավարելի ալիքներին, զգուշությամբ ետ են նահանջում՝ բացատրությունը թողնելով ապրելու մեջ:

Հայրենիքի, թագավորի, ընտանիքի, ընկերոջ հանդեպ սերը չի վարանել թշնամու առջև պաշտպանության սրբազան գործի համար ի զեն կոչելու ազգերի ու թագավորությունների:

**Աստված սեր է**:

Ո՞վ կարող է բացատրել այս նախադասությունը, սակայն ոչ լեզվաբանորեն կամ քերականական ու շարահյուսական վերլուծությամբ: Բոլոր մեջբերումներն ընկրկում ու տկարանում են, երբ հավատքի զորությամբ գիտակցում ես, որ **Աստված սեր է**:

Արարչագործությանը հաջորդող ընթացքն աստվածային փնօրինությամբ սիրո դրսևորումներ են, քանզի Աստված տեսավ, որ բարի են, և օրհնեց այն:

**«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց»** (Հովհ. Գ 16):

Քրիստոնեական սիրո թագավորությունն իջավ աշխարհի վրա: Մարդեղության խորհուրդն ապացուցեց անհավատներին, որ Աստված երբեք չի լքում մարդուն, քանզի «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»:

Աստված սիրում է յուրաքանչյուրիս, Աստծո սիրո ապացույցն իր նախախնամությունն է: Աստծո սիրով ապրող հավատացյալը չի կարող երկյուղել չարի երկրային ոչ մի ներգործությունից, այլ կապրի համարձակ՝ աղոթքի կենարար զորությամբ: Ոչ թե սիրո Աստվածը, այլ Աստծո սերը փրկեց մարդուն մեղքից: Ուր կա սեր, այնտեղ չի կարող լինել վախ, որը ծնում է մեղք, իսկ վերջինս՝ մահ:

Սերը պետք է ճանաչենք Քրիստոսով, Ով Իր կյանքը տվեց, և Քրիստոսի հանդեպ մեր սերը կատարյալ է, եթե միմյանց սիրենք:

Մե՛ր անուն Հիսուս, քո սիրով ճմլիր մեր քարեղեն սրտերը, որպեսզի հավատալով, հուսալով, բայց առավել սիրով մեր ծնկները ծալվեն Քո առջև, ու մեր շրթներից դուրս եկող աղոթքի մրմունջին ունկնդիր լինելով՝ օրհնես մեր կյանքը: Որպեսզի նախանձի, ամբարտավանության, գոռոզության, անվայել վարմունքի ու եսասեր փնտփնտուքի ընթացքը երբեք չհեռացնի մահկանացուներիս միմյանցից, այլ համբերությամբ, ներողամտությամբ, ճշմարտության համար ուրախության բերկրանքով լեցուն եույսով ու հավատքով յուրաքանչյուրս լծվենք մեր գործին՝ թե՛ ռամիկ և թե՛ իշխան, թե՛ եոգևորական և թե՛ աշխարհական՝ հայրենական և եկեղեցական սրբազան առաքելությանը:

***Քրիստոսի սէրը եւ ողորմութիւնը եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:***

# Տ. ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՇԱՔԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ «ՏՕՆ ՇՈՂԱԿԱԹԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԸՍՏ ՏԵՍԼԵԱՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ» ԱՌԻԹՈՎ

(17 օգոստոսի 2002 թ.)

*«Անուամբ անեղին Աստուծոյ, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:*

*«Սուրբ Եկեղեցաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց...»:*

*«Այս Սուրբ Եկեղեցիով աղաչենք Տիրոջը, որպեսզի սրանով մեզ փրկի մեղքերից...»:*

Սիրելի հավատավորք Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո.

Այսօր տոնն է «Շողակաթի Սրբոյ Էջմիածնի աստուածադիր Աթոռոյն եւ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի աստուածահրաշ տեսլեանն»:

Պայծառ ու հրաշալի է այս տոնի խորհուրդը, որ իբրև հայրենավանդ կտակ և անկորնչելի ավանդություն մեզ է փոխանցել հայ ոսկեդարյան գրականության ամենախորհրդավոր հեղինակ Ագաթանգեղոսը, որ հունարենից թարգմանաբար նշանակում է բարի լուր բերող:

Սիրելիներ, եթե սքանչելի պատկերացումով կարողանայինք մեր հոգու առաջ կենդանացնել շուրջ 1700 տարիների հեռապատկերներ, ապա մեր աչքերի առջև անցյալի մշուշի միջից կհառներ կեսգիշերին աղոթքի ծնկած Գրիգոր Լուսավորիչը՝ սքանչացած լուսահեղեղ և անհաղդու տեսիլքով:

Ջերմանք է ասելը և հիացմունք՝ լսելը, որ ինչպես երբեմն Թաբոր լեռան վրա, այնպես էլ այստեղ Հիսուս երևաց՝ Աստծո բոցանշույլ սերովբեների ուղեկցությամբ: Այստեղ էր, որ մեր հավատքի Հայրը՝ Խոր Վիրապի մեծ ճգնավորը, լուսահեղեղ իր տեսիլքի մեջ հանդիպեց Գողգոթայի Խաչեցյալին, որ ոսկե ուռամբ բախեց այս վայրը, ուր այժմ հավաքված ենք, և կործանեց մեհյանն ու սանդարամետները՝ ցույց տալով վայրը աղոթքի նոր տան, որը հայի ու հայ հավատացյալի համար պիտի դառնար խարիսխը գոյության, նեցուկը անվերջ մաքառումների և ամոքիչն անբուժելի ցավերի:

Աստվածային լույսի շողերով լուսավորված և Միածնի իջմամբ սրբագործված այս վայրում կանգնեց մի տաճար, որ Աստծո խնամարկությամբ դարձավ օրհնության աղբյուր Հայկազյան ազգի: Մարդկային մտքի և ստեղծագործության արգասիք չէ այս տաճարը, այլ Աստվածային հորինմամբ գծագրված և Արարատյան Մասիսի ստորոտներից հայոց Տրդատ արքայի թիկամբ բերված ապառաժ քարերի գեղեցկաքանդակ խոյացումը, մարմնավորումը հայ ժողովրդին առ Աստված տանող հավերժ ձգտումների: Մեր ժողովրդի եռանդուն հավատքի, հաստատուն առաքինության և նախանձախույզ համոզման առհավատչյան է այս տաճարը, որ դարե ի դար դարձավ հայի վերածնության ավազանը:

Սիրելի հավատացյալներ, Սուրբ Էջմիածինը մեր Մայր Եկեղեցին է, բոլորիս սնող, կրթող և դաստիարակող: Սուրբ Էջմիածինը հավիտենական այն խոստումն է, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, տվեց Սուրբ Գրիգոր Լուսավորչին «տեսլեամբ գիշերոյ յանուրջս երազոյ», ինչպես վկայում է Ագաթանգեղոս պատմիչը, թե բացված են երկինքը և բացված են Քրիստոսի մարդասիրության դռները:

***«Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց»:***

Այս աղերսով, սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր մենք միաբան դիմենք առ Բարձրյալն Աստված, որպեսզի վերահաս փորձություններից ու գայթակղություններից հեռու պահի մեզ ու թողություն շնորհի «անցելոյն եւ այժմիկ» մեր մեղքերին: Աղերսենք, որ Միածնաէջ այս Սուրբ Տաճարը մեր բարեխոսը լինի Տիրոջ առաջ՝ մեր մեղքերը զթությամբ քավելու համար, քանզի բաց են Քրիստոսի մարդասիրության դռները: Աղաչենք մեր Տիրոջը, որ անշարժ պահի այն, մաքուր և անսպառ մեր բոլոր եկեղեցիների պայծառության համար մինչև աշխարհի վերջը:

Սիրելիներ, սրբազան այս տաճարը իրոք որ 4-րդ դարի ճարտարապետական գլուխգործոցներից մեկն է, որ վեր խոյացավ Սուրբն Գրիգորի տեսիլքով: Սակայն Հայոց աշխարհի Լուսավորիչը մեկ այլ տաճար էլ կանգնեցրեց մեր ժողովրդի մեջ, որ պարտավոր ենք սրբությամբ պահել, փայփայել, որն ավելի տեսական, ավելի հոյակերտ է, որովհետև եկեղեցին սյունազարդ ու կամարակապ քարաշենքը չէ միայն: Եկեղեցին ժողովուրդն է՝ Սուրբ Հոգով մկրտված, մեր նախապապերի արյամբ սրբացած, ճգնավորների աղոթքներով զորացած:

Եկեղեցին՝ եկեղեցու մեջ անձանձիր աղոթող, աստվածախոս Ավետարանի պատգամներն ունկնդրող, Սուրբ Սեղաններին երկրպագող հավատացյալների բազմությունն է: Եվ ինչպես չերկրպագել այն վայրը, ուր Աստծո Միածինն իջավ, ինչպես ծունկի չգալ Իջման Սուրբ Սեղանի առջև, որ Աստծո արդար դատաստանի առջև մեր արդարացման խոսուն վկան է:

Ուխտենք ուրեմն՝ հավատարիմ մնալ Լուսավորչածին և Քրիստոսադավան մեր հավատքին, մեր հայրերի հավատքին, որպեսզի մեր բովանդակ կյանքի ամեն մեկ օրը լցվի ապագա տեսիլքների իրականացման հույսով, վստահությամբ և նախանձախնդրությամբ: Աղոթենք մեր Փրկչին և խնդրենք, որ զորացնի մեզ Իր Սուրբ անունով սիրո և հնազանդության մեջ:

Այսօր, առավել քան երբևէ, պարտ է մեզ հիշել Սողոմոն Իմաստուն թագավորի՝ Երուսաղեմի Տաճարի նավակատյաց աղոթքը, թե՝ Տեր Աստված, եթե ժողովուրդը դառնա դեպի Քեզ, փառք տա Քո անվանը, աղոթի ու աղաչի Քեզ այս տանը, Դու լսիր նրան երկնքում:

Արդ, սիրելի հավատացյալներ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, աղոթենք այս Սուրբ Տաճարում առ Բարձրյալն Աստված, որ Նա լսի մեզ և մնա մեզ հետ, ինչպես մեր սրբազան հայրերի հետ էր, որպեսզի մենք դառնանք նրանց խնկելի հոգվոց ժառանգները, ընթանանք նրանց շավիղներով, *«շնորհօք եւ ողորմութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

## ԱՆՑՅԱԼԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

# ԱՆՀԱՅՏ ՄԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՃԱՌԸ

Օգոստոսի 14-ին նախատոնակն է ամենօրհնյալ մեր տիրուհի Աստվածածնի Վերափոխման*:

Ամենասուրբ և անարատ մեր տիրուհին, կանանցից միակ օրհնված Աստվածածինն ու միշտ կույս Մարիամը, ով իր ծնողներին տրված ավետիսով ծնվեց և երեքամյա դառնալով, շուտով, ծնողներից Աստծու տաճարին ընծայվեց և երեք տարեկանից ի վեր այնտեղ սնվեց: Եվ մինչ տասնչորս տարեկան Աստծու տաճարին էր հանձնված: Հետո քահանաները նրան Հովսեփի խնամակալությանն են հանձնում, որին որպես նշանած էր խոստացված տնօրինաբար: Եվ մինչդեռ Հովսեփի տանն էր և նրա պահպանության ներքո, Գաբրիել հրեշտակապետի ավետմամբ Սուրբ Հոգով հղացավ Բանն Աստծով, կուսությամբ և անսերմնաբար սնելով ամենքին կերակրողին և լիացնողին, մինչև որ հասցրեց մարմնավոր հասուն տարիքի և իր կրծքով կերակրեց հանդերձյալ աշխարհի Հորը: Բերեց տաճարին ընծայելու տաճարի Տիրոջը և Նրան, Ում միջոցով բոլոր զոհաբերությունները սրբագործվում են: Իր ուսերի վրա Եգիպտոս փախցրեց և այնտեղից ետ բերեց Նրան, Ով Իր խոսքի զորությամբ կրում է այն ամենն, ինչ որ կա: Որ և մի անգամ [հին] Զատկի տոնին Երուսաղեմ տարավ, իսկ Նա դեռ տասներկու տարեկան լինելով, մինչ ծնողները ետ դարձան, Ինքը մնաց տաճարում՝ վարդապետների հետ խոսքի նստելով, որ և Ինքն էր Հոր իմաստությունը: Նրա մայրը և մեր Տիրուհին շրջելով տառապում էր և որոնում Նրան: Ով և մկրտությունից հետո Հորից և Հոգուց վկայություններով երկընքից փառավորվեց, որպես Իր Հոր հնազանդ Որդին՝ Սուրբ Հոգու ազդարարող ձայնով երկրի վրա Աստվածահայտնությամբ փառավորվեց և հայտնեց նախապատիվ առաջին հրաշքը՝ Աստվածահայտնությունը:

Քանզի, ըստ Հովհաննես ավետարանչի Մարիամն իր Որդուն հորդորում էր, և որպես ծնող հրահանգում էր Գալիլիայի Կանայում առաջին նշանը կատարել՝ հրաշքը գործել: Եվ երբ Տերը Իր անձի՝ Աստծու Որդի լինելը բացահայտեց և սկսեց քարոզել Երկնքի արքայությունը և աստվածագործ հրաշքներ կատարել, նույն ինքը Նրա կույս Մայրը հավատալով հետևում էր և հնազանդ հավանությամբ աշակերտում էր իր Որդուն որպես Տիրոջ: Նաև Որդու չարչարանքների ժամանակ, երբ բոլոր աշակերտները թողեցին ու փախան, նա չթողեց և միայն ինքն էր աղեխարշ գորովով Նրա ետևից գնում, քանզի ո՛չ կանացի տկարությամբ երկնչում էր և ո՛չ էլ թուլասրտությամբ վախից գայթակղված փախչում, և քանի որ կանացի տկարությամբ չերկնչեց, այլ արհամարհելով մահվան և զինվորների երկյուղը՝ խաչի մոտ էր և իր սրտի այրող տոչորմամբ Միածնին խաչակից և մահակից էր լինում:

---

* Զմմառի Մատենադարան, ձեռ. № 412, ԺԵ դար, թղ. 79բ–82ա:

Արդ, նաև անգամ նրան՝ Երանելի Կույս տիրուհուն, այս ամենի փոխարեն իր որդին և Տերը, անմիջապես Իր հարությունից և համբարձվելուց հետո Իր հետ երկինք՝ անճառելի և անտրտում կյանքի անմահություն չտարավ: Այլ այստեղ՝ աշխարհում, տասներկու տարի տառապանքների և չարչարանքների վայրում թողեց պանդխտության, աղքատության և բազմապատիկ նեղություններով վշտերի մեջ փորձվելու և ճգնելու ու անձի առաքինության վաստակով մրցելու, որ չթվար, թե ծրիաբար և ո՛չ էլ իբրև փոխատրաբար՝ արժանիքների համար, առանձնաշնորհ ստանալով առանց ջանքի և աշխատության՝ միայն Իր մայրը լինելու համար Տերը նրան [երկինք փոխադրելով] պիտի պսակեր: Այլ ինքն իսկ, ինչպես և իր Որդին էր ընդդիմամարտ պատերազմում, մարտնչելով ճգնության հանդեսում՝ ճշմարիտ հաղթության պսակներն ընդունում և ըստ տերունական հրամանի աստվածային հացի վայելքը քրտնաջան վաստակով ճաշակում: Նաև՝ որ մեզ բոլորիս քաջ հայտնի լինի և ճանաչենք նրա անհամեմատելի առաքինությունը և որ չնայած երկրի բոլոր ազգություններից և բոլոր արարվածներից առավել միայն նա ընտրվեց Աստծու Որդու մայրության համար և ծնեց Նրան որպես մայր: Ուստի այս ամենով մենք պետք է սովորենք, որ եթե այսպես եղավ մոր համար, որքան առավել նեղություններ է մեզ սպասվում, Աստծու Արքայություն մտնելու համար այն նեղ և անձուկ ճանապարհով, որով և Ինքը մարդ լինելուց հետո մարմնով չարչարվեց և հետո բարձրացավ հայրենի փառքին, որը միշտ ուներ: Նույնպես և ո՛չ մոր մայրությունը և ո՛չ առաքյալների աշակերտությունն է բավարար համարում, այլ թողնում է, որ նախ անձամբ առաքինանան և ամեն ինչով համբերությամբ պտուղներ տան, և սա՝ մեր օգուտը տնօրինելով և որպես քարոզության խրատ, որ մենք ծուլությամբ չանհոգանանք և միայն շնորհներին չհուսանք հեղգանալով:

Դրա համար էլ Քրիստոս համբարձվելուց հետո Իր մորը թողեց աշխարհում վշտերի և հրեաների պատճառած նեղությունների մեջ, քանզի մինչ Տիրամայրը երկրում էր, ինքն իսկ որպես որդի ուներ իր Միածին Որդի Քրիստոսին մարմնապես, և Տերը բավական էր Տիրամոր մեծագույն մխիթարության համար:

Իսկ երբ Միածնի երկինք համբարձվելուց հետո [Տիրամայրը] սուրբ առաքյալների ձեռքով մկրտվեց, մնում էր աղքատությամբ և խոնարհությամբ, ամեն տեսակի ճգնություններով հեզությամբ համբերում էր՝ չնայած Աստվածամայր լինելուն: Որպես [ուրիշ] մեկը նվաստ մարդկանցից և տառապյալներից, հազար անգամ ավելի էր ճգնում հանապազօրյա պահքով անդադար աղոթքներով, հսկմամբ և արտասուքով, և այսպես էր գործադրում ու նախ ինքն անձամբ վայելում քրիստոնեության շնորհները, օրինակ դառնալով մեզ ամենքիս և որպես տիպար և կանոն ընդունած շնորհի համար և արդարության վարքով՝ իր Միածնի նմանությամբ: Ինչպես Ինքը տվեց մեզ ամենայն բարության օրինակը, այնպես էր ահա Տիրամայրը մեզ վարդապետ և առաջնորդ լինում իր գործով, այսպես իրեն հավասարեցնելով այրիներին ու որբերին, և սրբությամբ աշակերտող կույսերի հետ հաղորդությամբ ու սիրով՝ չափավորությամբ ժուժկալ ամեն ինչում հանապազօրյա նեղություններով և աղքատությամբ զանազան ճգնություններով հանուն Քրիստոսի միշտ կրում էր մարտիրոսական զրկանքներ: Նաև տեսակ-տեսակ նեղություններին և վշտերին էր համբերում:

Քանզի նրանք, որ Որդուն այդքան հրաշագործություններից և բարեգործութ-

յուններից հետո խաչը համբարձվելիցին, ինչպե՞ս հետո Մորն ու Կույսին կենա-յեին: Որոնք և բազմիցս փորձեցին քարկոծել Իսկուհուն, որը միայն Աստծու շնորհով էր նրանցից ծածկվում և այն փոքրիկ տնակը, ուր ճգնում էր, բազմիցս փութացին հրի մատնել: Եվ երբ աղոթելու էր գնում [Հիսուսի] ծննդյան տեղին, Գողգոթա և Սուրբ Գերեզմանին, քարկոծելով փախուստի էին մատնում և նախատինքներով Երանուհուն շարունակ նեղում էին, և բազում անգամ ջանում էին սպանել: Էլ չասենք այլ վշտագին տրտմությունների և երկյուղալի խռովքների մասին, որ կրում էր քահանաներից և իշխաններից իր Որդու առաքյալներին բանտարկելու ու հալածելու համար: Նաև ողբագին լացն ու արտասուքները Ստեփանոս Նախավկայի, Հակոբոսի և աշակերտներից ուրիշների սպանման համար: Սակայն զորացած ամեն ինչ տանում էր համբերությամբ, ոչ մի բանից չէր զայրանում և չէր վնասում որևէ մեկին անեծքով, այլ աղքատությամբ և խոնարհությամբ այրիների հետ կենցաղավարելով, իր աշխատանքով էր կերակրվում ու ծառայությամբ կարոտյալների կարիքները առատապես հոգում, այցելելով ամեն տեսակ նեղությունների մեջ գտնվող որբերին, այրիներին ու հիվանդներին, և միշտ քարոզում էր ճշմարտությունը վկայելով:

Նաև տեսակ-տեսակ հրաշագործություններով շատերին էր Աստծու հավատքին բերում, խոնարհությամբ և հեզությամբ բոլորին ծառայելով, և չափավորության մեջ իրեն պահելով ու ծառայական առաքինությամբ իր անձն էր ճնշում և հավատի ճշմարտությունը բոլորին վկայելով հոգով նահատակվում էր:

Այլ նաև մխիթարում և քաջալերում էր առաքյալներին Ավետարանը քարոզելու, քանի դեռ տասներկու տարի մարմնով երկրի վրա էր: Մինչև հասավ սահմանված ժամը և հաճո եղավ իր Միածնին արդարակշիռ վճռով նրան ազատել այս աշխարհի վշտագին պանդխտությունից: Որտեղ, ըստ մարգարեի խոսքի, «Կեդարի վրաններում» մնալը, նրա համար չարչարանքներից ամենամեծն էր, ու անտանելի վիշտ էր իր Միածին Որդուց անջատումը և կարոտակեզ բաղձանքը, և Նրա նկատմամբ սիրո բորբոքումը, որով տոչորվում էր միշտ Նրա մոտ ելնելու:

Իսկ երբ լրացավ նրա վաթսուն տարին, այդ ժամանակ նրա մոտ առաքվեց Գաբրիել հրեշտակապետը, որն և նախ բերել էր Աստվածամայր լինելու ավետիսը, և հիմա էլ գալով կանչեց նրան Ձիթենյաց լեռ: Ուր երբ գնալով աղոթում էր, լեռան բոլոր տնկիները խոնարհվելով ծառաների նման նրա հետ երկրպագում էին, որտեղ էլ Գաբրիելը բերեց-տվեց նրան աշխարհի հաղթության պսակը, Աստծու դրախտի արմավենիների ոստերից, որը երբ երանուհին ստացավ, վերադառնալով Ձիթենյաց լեռից, նույն պսակը ցույց էր տալիս սուրբ կույսերին և այրիներին:

Եվ հետագա երեք օրերին, մինչև սուրբ առաքյալների հավաքվելը այս աշխարհից իր ճանապարհ ելնելու՝ վերափոխման գործերն էր կարգավորում մաքրելով տնակը, և մահիճը պատրաստելով վառում էր ջահերը և լապտերները, և սպասելով Միածնին և առաքյալներին, իր զգեստները տալիս էր որբերին և այրիներին, որ նաև մենք, մեր Տիրուհու հարսնության օրվա այս նախատոնին, սովորենք մեր հոգիները հարսանեկան զգեստներով զարդարել, որպեսզի Տանտիրոջից չկշտամբվենք, քանզի գալու է եկեղեցում գտնվողներիս մեջ և աքսորելու նրանց, ովքեր հարսանեկան զգեստներ չունեն:

Ապա ուրեմն, և մենք, որ աշակերտում ենք առաքյալներին, հրավիրում ենք միա-

բանությամբ համախմբվել այս տոնին, որին իրավամբ Տերը իր սուրբ առաքյալներին այն տեղերից, ուր կային քարոզելիս, և երկրի ծագերից հավաքելով նույն տեղը ժողովեց, և ինքն իսկ Միածինը և ամենքի Տերը երկնքից խոնարհվելով իջնում էր, և բոլոր անմարմինների դասերը Իր մոր պատվին վար բերում, որով նաև արդարների և նահատակների հոգիները երկրպագությամբ Տիրուհուն ընդառաջ էին գալիս, մարգարեները իրենց առաջին կանխագուշակ վկայությունները էին երգում, և նահապետները, ի պատիվ Նրա, իրենց օրհնությունները էին սփռում Նրա դիմաց, և Նրա իսկ հայրը՝ Դավիթ, հոգու քնարով երգում էր խայտալով Աստծու այս ճշմարիտ տապանակի դիմաց՝ Արքայություն մտնելու համար, որ նույն այս երանելին երբեմն նվագելով օրինակում էր կտակարանների տապանակի հանգչումը: Նաև բոլոր մարդկանց նախածնողներ Ադամն ու Եվան՝ իրենց բոլոր սերունդներով, բոլոր սրբերի հետ ընդառաջ գալով Տիրուհուն երկրպագում էին օրհնելով Դստերը, որ նրանց փառքի պարծանքն ու հանցանքները վերացնողը եղավ, որոնց հետ և մենք այսօր [միաբան] օրհնում ենք ամեն ազգերից ու ազգություններից երանելիին, նույն իրեն անսերմ հղացածին, անարատին, մաքուրին, Աստծու արժանավոր աթոռին, հոգևոր և կենսունակ դրախտի ծառի անթառամ պտղով, որից մեղքերը վերացնող Աստծու գառը պտղաբերվեց, մինչև երկինք սանդուղքը, որում և Աստծու խոնարհ էջքը երկիր և մարդկանց վերելքը երկինք միջնորդվեց, Օծյալի մարմնի և հոգու կրկնակի գրի՝ ներքուստ և արտաքուստ ոսկով օծված՝ կուսության անապական տապանակը, որում անխառն և անբաժանելի միավորությամբ Աստծու Բանն անփոփոխ կերպարանվեց, որով և անեծքների գետի ընթացքը առաջ և մահացու մեղքերի հորձանքը, ինչպես Հորդանանը ետ դարձավ, որով և մեզ ճշմարիտ Ավետյաց երկիր առաջնորդություն, ու դժոխքի արգելող պարսպի վերանալը հրաշագործվեց:

Ոսկյա սափորն անապական կուսությամբ, որն իր մեջ ամփոփեց երկնքից իջած անմահության մանանան, աստվածային տաճարը, որում սուրբ մարգարեներին ցույց տրվածով, Տերն էր գահին նստած, Ադամի մերկությունը ծածկող գեղմը, որում Աստծու Բանի խոնարհությամբ ցողի նման անաղմուկ էջքը եղավ, որն է կնդրուկի բլուր և ծաղկած հովիտ շուշանի, կնքված աղբյուր և սրբությամբ փակված նոր պարտեզ, և արևելյան փակված դուռ, որով Աստված մտավ և ելավ, և այն ծածկված մնաց, և մաքրությամբ հաստատուն երկնանման լեռը, որից անձեռագործ և առանց գործիքի հատվեց վեմը կենդանի, և ուրիշ այսպիսի օրինակներով էին մարգարեները գովում միշտ Կույսին, անապական հարսին, սուրբ ծնողին, հրեշտակներից ավետարանվածին, բոլոր մարդկային ազգերի լեզուներով օրհնաբանված երանելիին, քանզի և քարոզված էր բոլոր սրբերից, երկնքի դշխոն, և երկրի ծագերի թագուհին, Աստծու հարսը, և Սուրբ Հոգու բնակարանը, Քրիստոսի մայրը, և Միածնին էապես ծնողը, ճշմարիտ Աստվածածնողը Մարիամ, որին Գաբրիելի ավետմամբ պատրաստվենք պատվել սրբությամբ տոնելով, և ջանանք նրանով անդադար փառավորել Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս, ամեն:

Գրաբարից փոխադրեց
*ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ*

# ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*ՄԱՆԵ ՇԻՐԻՆՅԱՆ*

*Պատմական գիտությունների թեկնածու*

## «ՈՒԽՏԻ ՄԱՆԿՈՒՆՔ» ԵՎ «ՄԱՆԿՈՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ»

Հայոց Եկեղեցու դավանաբանական ավանդապահության շնորհիվ հայկական աղբյուրներում առկա են այնպիսի հասկացություններ, որոնք, թերևս, սերում են քրիստոնեության կազմավորման շրջանից: Դրանցից են «մանկունք» բաղադրիչով կազմված եզրերը, որոնք իրենցում կրում են վաղ քրիստոնեական շրջանից եկող կարևոր ըմբռնումներ և գաղափարներ: Պահպանվելով հայկական ու ասորական բնագրերում, Արևելյան Եկեղեցիների դավանաբանական հայացքների առանձնահատկությունների պատճառով դրանք մոռացվել են այլուր՝ թողնելով միայն անուղղակի վկայություններ մնացյալ գործերում:

Սույն հոդվածի նպատակն է ապացուցել, որ հայկական աղբյուրներում հաճախակի հանդիպող «ուխտի մանկունք», «ուխտի մանկունք Եկեղեցւոյ» կամ «մանկունք Եկեղեցւոյ» տերմինները սերտորեն կապված են վաղ քրիստոնեության շրջանում տարածված ու կարևոր նշանակություն ունեցող «մանկունք» եզրի և դրանից սերող ասորական bar Q'yāmā-յի հետ: Բառակապակցությունների նշանակությունը և ծագումը լիովին պարզ չէ: Ակներև է, որ այդտեղ «մանուկ» բառը օգտագործված է ոչ իր սովորական իմաստով: Մի քանի օրինակներ բավական են հասկանալու, որ մենք գործ ունենք բազմաբաղադրիչ տերմինների հետ:

Այս եզրերը մեզանում հատուկ ուշադրության չեն արժանացել: Դրանց անդրադարձել են որոշ հեղինակներ մի քանի փոքրածավալ հղումներով[1] ու մեկ-երկու

---

[1] **F. C. Conybeare.** Rituale Armenorum, being the Administration of the Sacraments and Breviary Rites of the Armenian Church. Oxford. 1905 , p. 535; **R.H.Rackam.** The Text of the Canons of Ancyra (The Latin Translation of the Armenian Version by F. C. Conybeare). - Studia Biblica et Ecclesiastica, 1891, vol.III, pp.139-216, որտեղ «մանկունք եկեղեցւոյ» արտահայտությունը Կոնիբերը մեկնաբանել է որպես "cleri iuvenes" «երիտասարդ կղերականներ», էջ 212, "cleri pueri, id est filii ecclesiae" «մանկահասակ կղերականներ, այսինքն՝ մանկունք եկեղեցւոյ», էջ 214, Համեմ. նաև ծանոթ. 8, **B. L. Zekian**, Elisse as Witness of the Ecclesiology of the Early Armenian Church - Dumbarton Oaks Papers Symposium. East of Byzantium: Syria nad Armenia in the Formative Period, Washington, Dumbarton Oaks 1982, pp. 187-197 (հոդվածի թարգմանությունը տե՛ս **Հ.Պ. Լ. Զեքիյան**, Եղիշեի երկը որպես վաղ հայկական Եկեղեցու եկեղեցաբանության վկայություն, «Էջմիածին» (Ա) 1990, էջ 40-49), Elishe. History of Vardan and the Armenian War. Translation and Commentary by R.W.Thomson. Cambridge, Mass., London, 1982, p. 6, 9-13, **R.W. Thomson**, The Teaching of Saint Gregory, Avant I, St. Nersess Armenian Seminary, New York, 2001, p. 142, **Մ. Է. Շիրինյան**, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում (Երևան, 2000, էջ 49-50), որտեղ մի պարբերություն է նվիրված այս եզրին:

հիշատակումով[2]: «Ուխտի մանկունք»-ի վերաբերյալ Ֆ. Կոնիբերը, հայկական ծիսակատարությանը նվիրված իր մենագրության, նման տերմինների բառարանում հետևյալ բացատրությունն է տալիս.

«Ուխտի մանկունք» = ի սկզբանե մկրտվածները, որոնք Եկեղեցու մի տեսակ ընտրյալ դաս են կազմել. ավելի ուշ (կիրարկվում է) ընդհանրապես «կղերականներ» իմաստով: Երբեմն, արտահայտությունը թարգմանում եմ որպես «մանկունք Եկեղեցւոյ»: Տե՛ս Ֆ. Ս. Բուրկիտ, Վաղ Արևելյան քրիստոնեությունը, 1904, 142 և հետագա էջերը»[3]:

Այստեղ նշված Բուրկիտի մենագրությունը[4] հատկանշական է այն առումով, որ դրանում առաջին անգամ ուշադրություն է դարձվել ասորական մի շատ կարևոր տերմինի՝ bar Q'yâmâ-յի[5] («ուխտի որդիներ կամ մանուկներ») վրա: Մատնանշելով այդ մենագրությունը, փաստորեն, Կոնիբերը առաջինն է, որ կապ է տեսել ասորերեն bar Q'yâmâ-յի ու հայերեն «ուխտի մանկունք» կամ «մանկունք Եկեղեցւոյ» եզրերի միջև:

Ավելի մանրամասն է անդրադարձել եզրերին Հ. Լ. Զեքիյանը փոքր, սակայն արժեքավոր մի ակնարկով փորձելով բացատրել «ուխտ» բառի նշանակության զարգացումը[6]: Հայր Զեքիյանը համարում է, որ տվյալ եզրը հուդա-ասորական ծագում ունի՝ bney nabbrit (օր., Եզեկ. Լ 5):

Նման եզրակացության է հանգել և Հ. Շ. Ռընուն մկրտության արարողությանը նվիրված «Քրիստոնեական հաղորդությունը» մենագրության մեջ: Բացատրելով «Միաբան ուխտ» բառակապակցությունը, նա ծանոթագրության մեջ նշում է.

«Ուխտ և ուխտաւոր տերմինները օգտագործվել են 5-րդ դարի երկրորդ կեսին՝ Ափրահատի q'yâmâ և b'nai q'yâmâ ասորական բանաձևը թարգմանելու համար»[7]:

Որոշ տեղեկություններ քննարկվող արտահայտությունների մասին առկա է նաև Թոմսոնի աշխատություններում[8]: Անդրադառնալով խնդրո առարկա տերմիններին, մասնավորապես Եղիշեի երկի անգլերեն թարգմանության առաջաբանում, Թոմսոնը քննարկել է այդ եզրերը ընդհանուր քրիստոնեական պատմագրության համատեքստից դուրս, դրանք ընկալելով միայն որպես Հայաստանի համար յուրահատուկ երևույթ: Այնուամենայնիվ, նա նշել է որոշ ընդհանրություններ «Մակաբայեցվոց Գրքի» հետ[9]:

---

[2] Ch. Renoux, Initiation Chrétienne, Paris 1997, p. 67, Գ. Մուրադյան. Համասիրական դիտողություններ, Իրան-Նամե, Երևան, 1996(4-5), էջ 24:

[3] Conybeare, 1905 , op. cit., p. 535 .

[4] F.C. Burkitt, Early Eastern Christianity, London 1904.

[5] "Bar" բառը նշանակում է թե՛ որդիներ, թե՛ մանուկներ: Ափրահատի գրքում արտահայտությունը հանդիպում է նաև bnai Q'yâmâ և bnay Q'yâmâ- «ուխտի դուստրեր և ուստրեր» տարբերակներով:

[6] Sbu Zekiyan, 1982, pp. 187-197, Զեքիյան, 1990, էջ 45-49:

[7] Renoux, 1997, p. 67:

[8] Thomson, 1982, p. 6, 9-13, Thomson, The Teaching, p. 142.

[9] Thomson, 1982, p. 6, 11-16.

4-րդ դարի հեղինակ Աֆրահատի գրքում[10] վկայված այդ եզրերը. 20-րդ դարի սկզբից, ասորագիտությունում պատճառ է դարձել շարունակական բանավեճերի: Բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել նվիրված այս հարցին[11]: Հայտնվել են զանազան կարծիքներ, որոնց ամփոփումը ներկայացված է Դունկանի[12], Վյոբուսի[13] ու Մակինայի[14] աշխատություններում: Սակայն մինչև այսօր էլ չի կարելի համարել, որ տրված է այդ տերմինների նշանակության հստակ իմաստը և սահմանումը: Ասորագետների հիմնական վեճի առարկան է, թե ովքեր են եղել «ուխտի որդիները կամ մանուկները»: Արդյոք այդ անվանումները վերաբերում են ճգնավորներին, թե՞ կրոնավորների հատուկ մի դասի: Բուրկիտը համարել է, որ Աֆրահատի երկում առկա «ուխտի որդիներ» եզրը պետք է հասկանալ որպես նոր մկրտվածների մի դաս, որին, ինչպես վկայում են վաղ քրիստոնյա գրողները (Կղեմես Ալեքսանդրացի, Որոգինես, Տերտուղիանոս, Կիպրիանոս և այլք), որոշ ժամանակ, տրվել է «մանուկ»-ի հատուկ կարգավիճակը:

«Այս ժուժկալների և կուսակրոնների դասի առկայությունը վկայված է մինչև 7-րդ դար»[15]:

Ս. Ժարգին գրում է: Ասորագետների ճնշող մեծամասնությունը համոզված լինելով, որ նշված եզրերը հատուկ են միայն վաղ ասորական քրիստոնեությանը, կարծում են, որ դրանք պետք է քննարկվեն միայն այդ շրջանակի սահմաններում: Ավելին. ոմանք, օրինակ՝ Ջ. Նեդունգաթը, նշում են, որ չի կարելի հիմնվել հետագա հեղինակների տվյալների վրա այս տերմինների նշանակությունը բացատրելու համար, և որ Աֆրահատի ամենալավ մեկնաբանը հենց ինքը Աֆրահատն է[16]: Թերևս

---

[10] Աֆրահատի երկը ընդունված է սահմանել որպես «խրատ», «քարոզ», «ցուցադրումն» և անգամ «նամակներ»:

[11] Հաճելի պարտականություն եմ համարում խորին շնորհակալություն հայտնել հայր Ռ. Ռընուին, որը բարյացակամորեն ուղարկեց ասորական եզրերին նվիրված այդքան անհրաժեշտ նյութերի պատճենները այս հետազոտության համար:

[12] **E. J. Duncan**, Baptism in the Demonstrations of Aphraates the Persian Sage, Washington D. C., 1945, pp. 82-103.

[13] **A. Vööbus**, Celibacy, A Requirement for Admission to Baptism in the Early Syriac Church, Stockholm 1951, pp. 35-58; **A. Vööbus**, History of Asceticism in the Syrian Orient, I (CSCO 184, subs. 14), Louvain 1958, pp. 184-208.

[14] **M. R. Macina**, Les bnay et bnat qyama de l'Église syriaque: une piste philologique sérieuse, La Monachisme Syriaque du VIIe si'ecle 'a nos jours, vol. 1, Liban 1999, pp. 15-29.

[15] **S. Jargy**, Les fils et filles du pacte dans la littérature monastique syriaque, Or. Chr. Per., 17 (1951), p. 309.

[16] **G. Nedungatt**, The Covenanters of the Early Syriac-Speaking Church, OCP, vol. 39, fasc. 1, Roma, 1973, p. 215. "We shall not ascertain their meaning at a given point in time, or in a given author, by taking for our guide subsequent authors and thus making the future our point of departure. Bearing this simple exegetical principle in mind, we have tried in the present survey to regard Aphrahat as his own best exegete."

նման մոտեցման պատճառով է, որ մասնագետները[17] չեն անդրադարձել անգամ Ափրահատի գրքի ոսկեդարյան հայերեն թարգմանությանը[18]: Աշխատությունների թվում կան հոդվածներ, որտեղ քննարկվող եզրերը համեմատված են որոշ հունահռոմեական աղբյուրների տվյալների հետ: Սակայն չկա և ոչ մեկը, որ օգտագործած լինի դրանց առնչվող հարուստ հայկական նյութը, որը թվում է, թե ասորականի հետ առաջիններից պետք է հաշվի առնվեր որպես Արևելյան Եկեղեցիների առանձնահատկությունները լուսաբանող աղբյուր:

Քննարկվող տերմինների առկայությունը հունական ու լատինական աղբյուրներում սակավաթիվ է. հիմնականում դրանք հանդիպում են վաղ քրիստոնեական շրջանում:

Եզրի հետքերը ակնհայտ են՝ Հուստինոս Վկայի ((100-165), Կղեմես Ալեքսանդրացու (150-215), Տերտուղիանոսի (160-220), Որոգինեսի (185-254), Արքելայոսի (216-277), Կիպրիանոսի (220-250), Կյուրեղ Երուսաղեմացու (315-386), Գրիգոր Նազիանզացու (329-390), Բարսեղ Կեսարացու (331-379), Գրիգոր Նյուսացու (335-394), Օգոստինոսի (354–430) և այլոց երկերում: Կղեմես Ալեքսանդրացու «Մանկավարժ» գրվածքը ամենակարևորն է հունական աղբյուրներից, որը ոչ միայն անդրադառնում է այդ եզրին, այլև պարունակում է դրան նվիրված հատուկ գլուխներ, հատկապես 1-ին գրքում: Օրինակ՝ այդ գրքի 5-րդ գլխի վերնագիրը շեշտում է. «Բոլոր նրանք, ովքեր քայլում են համաձայն ճշմարտության, Աստծու մանուկներ են»:[19] Ամբողջ գլուխը, ինչպես և հաջորդ 6-րդ գլուխը, որի վերնագիրն է՝ «Մանուկ եզրը չի նշանակում տարրական սկզբունքների ուսուցում», կարևոր տեղեկություններ են պարունակում մեզ հետաքրքրող եզրի վերաբերյալ:

Հունական ու լատինական երկերում հիշատակված «մանկունք», «որդիք», «ուխտ» բաղադրիչներով կազմված արտահայտություններին մասնագետները քիչ են անդրադարձել: Դրա պատճառներից են՝ 1. այն փոփոխությունները, որոնց ենթարկվել է քրիստոնեական վարդապետությունը առաջին դարերի ընթացքում, ուստի և դրա հետևանքով եզրերի առկայությունը վկայված է միայն վաղ ու որոշակի ուղղվածություն ունեցող գրվածքներում: 2. Որպես մեկ այլ պատճառ, կարելի է մատնանշել մեր գիտելիքների խիստ սահմանափակությունը քրիստոնյա Եկեղեցու հաստատման ու զարգացման գործընթացի, քրիստոնեության սկզբնական դարե-

---

[17] Համենայնդեպս՝ մեզ մատչելիների թվում: Նշված հեղինակներից միայն Վյոոբուսը (Vööbus, 1951, pp. 54-55) հիշատակում է, որ առկա է Ափրահատի հայերեն թարգմանություն, որում նկատելի է ասորերենից նման մոտեցում ճգնավորներին նկարագրելիս: Թվում է, որ նա անձամբ ծանոթ չէ թարգմանությանը, քանզի վերջինս, լինելով ստույգ ոսկեդարյան թարգմանություն, չի սահմանափակվում միայն նշված ընդհանրություններով: Տե՛ս նաև՝ էջ 55 , ծան. 20:

[18] Գիրք, որ կոչի Զգօն արարեալ Սրբոյն Յակոբայ եռիցս երանեալ Հայրապետին Մըծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց Նորոյս Սիովնի: Կոստանդնուպոլիս, 1824: Տե՛ս նաև՝ G. Lafontaine, La version ArmÁnienne des oeuvres d'Aphraate le Syrien, CSCO, Scriptores Armeniaci, Louvain 1977.

[19] Clement of Alexandria, The Instructor [Paedagogus], TLG, I,.5.t1.

ռում Արևելյան և Արևմտյան Եկեղեցիների փոխհարաբերությունների և դրանց մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ: 3. Աստվածաշնչում շատ տարածված, Քրիստոսին հատկանշական «որդի» մակդիրը, ցուցե. ևս խանգարել է մասնավցետներին ընկալել այն որպես «մանուկ» տերմինի հոմանիշ: 4. Ասորագետների վերը նշված վերաբերմունքը՝ ասորական եզրի ծագումը, զարգացումը և բացատրությունը փնտրել միմիայն ասորական աղբյուրներում: Ինչևէ, որքանով մեզ հայտնի է, մասնագիտական գրականության մեջ խնդրո առարկա եզրերի հունարեն ու լատիներեն տարբերակները հիշատակված են միայն վերոհիշյալ ասորական եզրի կապակցությամբ[20]:

Հարկ է նշել նաև, որ վերը նշված աշխատություններում շեշտը դրվել է «ուխտ» բառի վրա: Հետազոտողներից և ոչ մեկը ըստ պատշաճի չի քննել «մանկունք» բառը, մինչդեռ, ըստ իս, հենց դա է հիմնական, կապակցող տերմինն ու բաղադրիչ մասը բոլոր վերը նշված արտահայտություններում: «Մանկունք»-ը բազմաթիվ հարցերի վերաբերյալ չափազանց ուշագրավ տեղեկություններ պարունակող եզր է: Ընդ որում «մանկունք Եկեղեցւոյ» արտահայտությունը, ընդհանրապես անուշադրության է մատնվել ասորագետների կողմից, թեպետև այն նույնպես կիրարկության մեջ է եղել վաղ քրիստոնեության շրջանում (բոլոր դեպքերում, զանազան հուշարձաններում, ներառյալ ասորականները, առկա են դրա հետքերը): «Մանկունք»-ի օգտագործումը «եկեղեցի» բառի հետ լրացուցիչ իմաստ է տալիս «մանկունք» եզրին, տարբերակելով այն «ուխտի մանկունք»-ից: Հետագայում (5-6-րդ դարերից հետո), անհետանալով հունա-հռոմեական աղբյուրներում, «մանկունք Եկեղեցւոյ» եզրը պահպանվել է միայն հայկական ու ասորական երկերում: Այս ամենից ելնելով մեր ուշադրության կենտրոնում հիմնականում կլինի «մանուկ» եզրը, ավելի ստույգ՝ դրա ծագումը, նշանակությունը, կիրառումն ու զարգացման ընթացքը: Կարծում ենք, որ այս եզրերը ընդհանուր են եղել բոլոր վաղ քրիստոնյա համայնքների համար ու սերտորեն կապված են քրիստոնեության տարածման բազմազան հարցերի հետ: Դա է պատճառը, որ խնդրո առարկա տերմինների պատմությունը և զարգացումը պետք է ներկայացնել հայկական ու հունահռոմեա-ասորական համատեքստում:

Հայկական աղբյուրներում «մանուկ» եզրը կարող է փոխանցվել «որդի», «տղա», «աշակերտ», «փոքր», «համբակ»[21] և նման իմաստ ունեցող բառերով: Օրինակ՝ Ափրահատի գրվածքի հայերեն թարգմանությունը փոխանցում է այն երբեմն «որդիք» բառով[22], երբեմն էլ՝ «մանկունք» համարժեքով[23]: Նույն երևույթն առկա է նաև Եզնիկ Կողբացու և Ղազար Փարպեցու երկերի պարունակած օրինակներում, որ-

[20] Տե՛ս, օրինակ՝ M. Maude, Who were the B'nay Qêyâmâ? Journal of Theological Studies 36 (1935), pp. 13-21. Հոդվածը ինձ համար մատչելի չէր և դրա մասին պատկերացում եմ կազմել Նեդունգաթի հոդվածից՝ Nedungatt, 1973, p. 420.

[21] Օրինակ՝ «Ի հարցն մատենագրեցան մանրամասն քննութեամբ. առ Ռոսս առաքեցուց գնորախնդիր աշխատասէր համբակսն Սիոնի:», ՆԲՀԼ, էջ 455 :

[22] «մանկունք ժողովրդեան» Ափրահատ-Զգօն, էջ 164:

[23] «որդիք ժողովրդեան» Ափրահատ-Զգօն, էջ 165:

տեղ ավելի շատ օգտագործված են «որդիք», «տղայք» բառերը: Հունական աղբյուրներում «մանուկ» տերմինի գաղափարը ևս արտահայտված է «փոքրի» իմաստ ունեցող բառերով.

*νήπιον, παῖς, παιδίον, υἱός, τέκνον, μικροί, ἄκακοι:*

Թեև եզրը տարիքային հատկանիշ չի կրում, այնուամենայնիվ, հնարավոր է, որ այն մատնանշում է տարիքով երիտասարդ (բայց ոչ երեխա) անձի: Աստվածաշնչում հաճախ առկա են դեպքեր, երբ հունարեն «մանուկ» իմաստ ունեցող բառի (օրինակ՝ παῖς-ի) դիմաց հայերենում ունենք «ծառա» բառը[24]:

Վերադառնանք քննարկվող եզրերին ու փորձենք պարզել առաջադրված հարցերը, անդրադառնալով նախ հայկական նյութին: «Ուխտի մանկունք», «ուխտի մանկունք Եկեղեցւոյ» կամ «մանկունք Եկեղեցւոյ» արտահայտությունները վկայված են 5-րդ դարից թե՛ բուն հայկական բնագրերում, թե՛ թարգմանական գրվածքներում: Եզրերը հանդիպում են վաղ շրջանի հայ պատմիչների՝ Ագաթանգեղոսի[25], Եզնիկի[26], Եղիշեի[27], Մովսես Խորենացու[28] և Ղազար Փարպեցու[29] երկերում: Բերենք ասածը հաստատող մի քանի օրինակ: Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում ասվում է.

«Արդ՝ եւ Յովհաննէս զքահանայութիւնն եւ զօրութիւնն եւ զմարգարէութիւնն եւ զթագաւորութիւնն զՓրկիչն մեր Քրիստոս. եւ Քրիստոս եւ առաքելոցն, եւ առաքեալքն՝ Եկեղեցւոյ մանկանց»[30]:

Մովսես Խորենացու «Պատմության» մեջ կարդում ենք.

«Այլ մեծն Սահակ ոչ ինչ կասեաց զհոգևոր կաթսն դիեցուցանել մանկանց Եկեղեցւոյ հանդերձ Մեսրոպաւ»[31]:

Հատկանշական է, որ «մանուկ» բառը Խորենացու երկում օգտագործվում է նաև բացասական իմաստով՝ «մանուկ սատանայի»[32]:

Բազմաթիվ են «մանկունք» եզրի օրինակները «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հարանց» ժողովածուում, հատկապես դրանց վաղ թարգմանական շերտում:

---

[24] Օրինակ՝ ἵνα ἀξίαν ἀποικίαν δέξηται θεοῦ παίδων ἡ παρὰ σοὶ πασῶν τιμιωτάτη γῆ. [Wis. Sol. 12:7)՝ «զի արժանի զերութիւն ընկալցի ծառայից Աստուծոյ. որ առ ի քէն քան զամենայն առաւել պատուական էր երկիրն» (Իմաստ. Սող., ԺԲ, 7):

[25] Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց: Էջմիածին-Տփղիս, 1909, էջ 355: Հայոց Պատմություն, Ա. Տեր-Ղևոնդյան, Երևան, 1983, էջ 232:

[26] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, աշխատասիրութեամբ Մ. Մինասեանի, Ժնև, 1992, էջ 34, 37, 111, 112, 113:

[27] Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե. Տէր- Մինասեան, Երևան, 1989, էջ 14, 56, 108, 114, 118, 128, հմմտ. նաև Քեբիյան, 1990, էջ 46-48:

[28] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Սարգսեանի, Երևան, 1991, էջ 199, 329, 354:

[29] Ղազար Փարպեցի, Հայոց Պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 80:

[30] Ագաթանգեղոս, 1983, էջ 258:

[31] Խորենացի, 1991, էջ 354:

[32] Նույն տեղում, 1991, էջ 92:

Հաճախ տվյալ եզրը արտացոլված է վերնագրում, օրինակ՝ «Վկայաբանութիւն սրբոց Քառասնից (մանկանց-Մ.Օ), որք ի Սեբաստիա կատարեցան», որոնց մասին ասված է, որ նրանք «Լուսապսակ քաջ նահատակք և յաղթող զորականք երկնաւոր զորապետին՝ Քառասուն սուրբ Մանկունք, այս ժիրաժիր երիտասարդք»[33], կամ «Ննջումն եւ յարութիւն եօթն խոստովանօղ սուրբ Մանկանցն Եփեսոսի»[34]:

Քննարկվող եզրերը իրենց տարատեսակներով բազմիցս օգտագործվել են «Կանոնագրքում», մանավանդ դրա վաղ շերտը կազմող կանոններում: Հունարենից թարգմանված կանոնախմբերը տարբեր թարգմանական շերտեր են ներկայացնում և ունեն տարբեր թարգմանչական մոտեցում («ոսկեդարյան», «նախահունաբան» ու հունաբան): Հայկական կանոնների բաղդատումը հունարենի հետ բացահայտում է, որ բոլոր այն տեղերում, ուր հայերեն տեքստում առկա են քննարկվող եզրերը, հունարենն ունի κλήρος կամ κληρικός բառերը. հաճախ էլ դրանք պարզապես բացակայում են հունարենում: Օրինակ՝

Գլուխ ԺԸ. «Վասն արուագիտաց»... այլ եթէ քահանայ ոք ըմբռնեսցի յախտին՝ ելցէ ի քահանայութենէն, եւ եթէ ուխտի մանկանց՝ ի կարգէն ելցէ, եւ ապաշխարութիւն անասնագիտացն ի վերայ եղիցի»[35]:

կամ՝

«Վասն աշխարհականաց եւ վասն ուխտի մանկանց Եկեղեցւոյ... ապա եթէ յուխտէ ոք իցէ, արժան է մատուցանել յաշտիճան քահանայութեան եւ մանաւանդ թէ առաջին վարքն ուղղութեամբ վարեալ իցէ, կամ եղեւ մեծ ժողովյն:[36]

«Ուխտական» կամ «ուխտաւոր» եզրերը նույնպես միշտ հանդես են գալիս κληρικός կամ κλήρος բառերի դիմաց, օրինակ.

Գլուխ ԺԵ. «Վասն ուխտաւորաց որք կամիցին միս ճաշակել:՝ «Ոյք յուխտի անդ իցեն երիցունք կամ սարկաւագունք կամ այլ ոք ի պաշտաւնէից եւ հեռի իցեն ի մսոյ»[37]:

---

[33] Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց, որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց: Հ. Մ. Աւգերեան, Վենետիկ, 1810, էջ 206:

[34] Լիակատար վարք, 1810, էջ 206-207: Նշենք, որ Ա. Մնացականյանի կողմից ուսումնասիրված «թուխ մանուկ» հուշարձանները (Ա. Մնացականյան, «Թուխ մանուկ» հուշարձանների մասին, ՊԲՀ, 1976 (2), էջ 189-204), թերևս այս համատեքստին են պատկանում:

[35] Նիկ. XVIII.129.12,13 «ուխտի մանկունք»- հունարենը չունի: Այստեղ և ստորև հղումները Նիկիական կանոնների համար արվում են ըստ հետևյալ հրատարակությունների, հայերենը՝ *Կանոնագիրք Հայոց*, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ա, Երևան, 1964, էջ 116-131, հունարենը՝ Fonti, fasc. IX. Discipline générale antique (IV-IX s.), par P.-P. Joannou: t.I.1, Les canons des concils oecumeniques, Roma, 1962,էջ 23-41: Համտ. նաև հետևյալ օրինակները՝ Նիկ. XIX.130.5 «ըստ ուխտին» - XIX.40.14 "ἐν τῷ κλήρῳ", Նիկ. XVI.128.5 «որ ի կարգին եւ ի կանոնին եւ յուխտի Եկեղեցւոյ» (համտ. II Նիկ. XVII «ժառանգաւորք») - XVII "ἐν τῷ κανόνι ἐξεταζόμενοι":

[36] Կանոնագիրք, Ա. Անկ. III.154.13-155. & Անկյուրայի կանոնների հղումները ըստ՝ Կանոնագիրք, Ա, էջ 151-167, և Die Kanones der altkirchlichen Concilien, von F.Lauchert. Freiburg, Leipzig, 1896, pp. 29-34, Համտ. նաև Անկ. III.155.6 - III. 30.25 κλήρος, Անկ. X.161 2,9 «ուխտի մանկունք»՝ հունարենը չունի:

[37] Անկ. XV.163.14-164.4 - II Նիկ. XXIV- XIV 32.27 "κλήρος". Համտ. նաև Laod. XXVII.235.4 - XXVII.75.11 κληρικός. Laod. XXXVI.237.3 - XXXVI.76.12 κληρικός: Laod. XL.238.3 - XLII.76.31 κληρικός":

Հաճախ «ժառանգաւոր» ու «վիճակաւոր» հոմանիշները օգտագործվում են «ուխտաւոր» եզրի փոխարեն, մասնավորապես «Առաքելական կանոններում», որոնք թարգմանվել են ասորերենից: «Կանոնագրքի» ընձեռած օրինակները քննարկվող եզրերի վերաբերյալ բազմաթիվ են և անհնար է այստեղ նշել բոլորը: Ավելացնենք միայն, որ «ուխտի մանկունք Եկեղեցւոյ» ձևի օրինակները հաճախ հանդիպում են եկեղեցական պաշտոնների թվարկումից առանձին[38]:

«Մանկունք» եզրը վկայված է նաև այլ թարգմանական գրվածքներում: Թվում է, որ Եվսեբիոս Կեսարացու ու Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական Պատմություն»-ներում առկա օրինակները ևս պատկանում են «մանկունք» եզրի համատեքստին: Ընդ որում՝ այստեղ նորից հանդիպում ենք նման երևույթի՝ հայերենում առկա «մանկունք» եզրը ոչ միշտ է ներկա հունարեն բնագրում: Օրինակ՝ Եվսեբիոս Կեսարացու գրքի հայերեն թարգմանության մեջ կարդում ենք. «Ապողոնիոս՝ այր օրինակագիրր մանուկ եկեղեցւոյ»:[39] Հունարեն բնագիրը ունի.

"Ἀπολλώνιος, ἐκκλησιαστικὸς συγγραφεύς"[40]: Հայտնի է, որ այս երկը թարգմանվել է հայերեն ասորերենից, և, հավանաբար, խմբագրության մեջ առկա «մանուկ Եկեղեցւոյ» եզրը ասորերենի ազդեցությունն է: Երևույթը բացատրելու համար հարկ է ստուգել ասորերեն թարգմանությունը, ինչը թողնում ենք մասնագետներին: Սոկրատի երկի հայերեն թարգմանության մեջ Ապողինարիոսը երկու անգամ անվանված է «մանուկ»՝ «մանգունն զեղեալսն»[41] հունարեն "ὁ παῖς"[42] («մանուկ») բառի փոխարեն, և՝ «Իսկ մանուկն Ապողինարիոս»[43], "ὁ δὲ νεώτερος Ἀπολλινάριος"[44] («Իսկ երիտասարդ Ապողինարիոսը») արտահայտության դիմաց: Երկու դեպքերում էլ վիճելի է, թե օգտագործված «մանուկ» բառը եզր է, թե ոչ: Այնուամենայնիվ, առաջին դեպքում, երբ խոսքը արդեն գիտնական դարձած, մեծահասակ մարդու մասին է, «մանուկ» անվանումը ուղիղ իմաստով բավական զարմանալի է թվում: Նույն երկում առկա է մեկ այլ նման օրինակ.

«...συνῆν δὲ αὐτῷ καὶ ὁ μακροβιώτατος Αὐξάνων, νέος ὢν πάνυ καὶ τὰ τοῦ μοναχικοῦ βίου ὑπ᾽ αὐτῷ παιδευόμενος.»

«Ընդ նմին եւ երկայնակեացն Աւքսանոս մանուկ գոլով ամենեւիմբ. եւ զմիայնութեան վարուց խրատեալ ի նմանէ»[45]:

---

[38] Հմմտ. Nedungatt, 1973, էջ 202:

[39] Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, յեղեալ յասորւոյն ի հայ ի հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, 1877, էջ 383:

[40] Eusebius, 1890, V, 18, p. 221:

[41] Սոկրատ, էջ 213,13:

[42] G. Ch.Hansen, M. Shirinjan, Socrates Kirchengeschichte., Akademie Verlag, Berlin 1995, S. 185,15.

[43] Սոկրատ, էջ 255 , 8-9:

[44] Hansen, Sirinyan , 1995, S. 210, 16-17.

[45] Մ. Տեր-Մովսեսեան, Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսի Հռովմայ, Վաղարշապատ, 1897, էջ 37, 4-5:

«Մանկունք Եկեղեցւոյ» դասը, որոնց մեծ մասամբ հասցեագրվում են միայն ընտրյալների համար գրված երկերը. հաճախ են հիշատակվում նախերգանքներում կամ հիշատակարաններում: Օրինակ՝ «Պիտոյից Գիրք»-ը գրված է «ի վարժումն եւ ի կրթութիւն ուսումնասէր մանկանց Եկեղեցւոյ»[46]: Այդ գրքում վկայված են նաև այլ «մանկունք» բաղադրիչով կազմված բառակապակցություններ, որոնք մենք հակված ենք վերաբերել այստեղ քննարկվող համատեքստին: Ըստ իս, դրանք «Քրիստոսի և առաքյալների խորհրդանիշներն են: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ «Պիտոյից Գրքի» թեմաների ու նախակրթությունների օրինակների ընտրությունը պատահական չէ: Հիշատակարաններում վկայված օրինակներից կարևորագույնը կարելի է համարել Կիրակոս Դրազարկցու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» երկի տեղեկությունը, որտեղ պարզ սահմանված է, որ «մանկունք Եկեղեցւոյ» արտահայտությունը նշանակում է կրոնավորների դաս.

> «Արդ եւ դուք, ով սուրբ մանկունք Եկեղեցւոյ, հրեշտակերամ լուսածիր դասք կրօնաւորաց, որք էք յընդհանուրս առկայացեալ, եւ ունիք փոյթ աշխատածիր կրօնից գտանել յառաջակաց, եւ սիրով սրտի, ծարաւեալ ոգւով դիմէք ի սուրբ պատուիրանս ի գիտել եւ յառնել կամ առնել օրինակ ի նորակերտել, ի խորոց սրտէ մաքուր մտօք եւ բազկատարած պաղատանօք հայելով առ Աստուած...»[47]:

Ընդգծված բառերը «մանկունք»-ի հատկանիշներն են ու հաճախ են քննարկվում տերմինին վերաբերող գրվածքներում: Հաջորդ օրինակը՝ Պողոս Տարոնացու «Թուղթ ընդդէմ Թէոփիստէ հոռոմ փիլիսոփայի» «Ջատագովութիւն Հայոց» հատվածում է.

> «Եւ մեք զմերս ոչ գրեցաք ըստ հակառակս ինչ, այլ սիրական յօժարութեամբ ծանուցանել մանկանց Եկեղեցւոյ, և ցուցանել զպատոփրանսն Աստուածաշունչ Գրոց:...և տացուք յօգնականութիւն մանկանց Եկեղեցւոյ սրբոյ...»[48]:

Խնդրո առարկա տերմինը վկայված է նաև Հովհաննես Իմաստասերի «Ցաղագս խրատու մանկանց» գրվածքում: Ա. Աբրահամյանը բացատրում է այն հետևյալ կերպ. «Հովհաննես Իմաստասերի մանկավարժական-փիլիսոփայական երկն է, գրված աշակերտների համար»[49]: Ս. Արևշատյանը չհամաձայնելով հրատարակչի հետ, իրավացիորեն նշում է, որ դա ոչ թե «մանկավարժական գործ» պետք է համարել, այլ «մի փիլիսոփայական-բարոյագիտական թուղթ», որով նա խրատում է իշխող բարոյական նորմերը և, հավանաբար, պաշտոնական դավանանքից շեղվող, «բարձրագույն ուսմունքը աղավաղող մարդկանց»[50]: Այս եզրակացությանը հեղինակը հանգում է Գրիգոր Մագիստրոսի երկերում առկա «մանուկների» մասին եղած

---

[46] Գիրք պիտոյից, աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 14-15:

[47] Կիրակոս Դրազարկցի, էջ 962:

[48] Պօղոս Տարօնացի, Թուղթ ընդդէմ Թէոփիստէ, Կ.Պոլիս, 1752, էջ 80:

[49] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 355:

[50] Ս. Ս. Արևշատյան, «Ցաղագս խրատու մանկանց» գրվածքը և նրա հեղինակի հարցը, Բանբեր Մատենադարանի Երևան, 1973, N11, էջ 35:

տեղեկությունների հիման վրա, որոնք կարծես թե ևս առնչվում են քննարկվող եզրին[51]:

Կաթողիկյաց թղթերի մեկնության սկզբում Սարգիս Շնորհալին ևս անդրադառնում է «մանկանց Եկեղեցւոյ».

«Եւ արդ ես աղօթիւք զսոյն խնդրէի ամենայն մանկանց Եկեղեցւոյ յայսպիսի գործս պարապիլ եւ ի սոյն դեգերիլ»[52]:

Նույն երկում Սարգիս Շնորհալին հայտնում է ուշագրավ տեղեկություններ Եկեղեցու «մանկանց» վերաբերյալ:

«Բայց արթնութիւն թուի ինձ աստանօր ոչ մարմնականն պահանջել ի նոցանէ (զաչացն բացութիւն), այլ ըզհոգւոցն և զմտացն (զզաստութիւն): Վասն զի են բազումք և մանաւանդ յԵկեղեցւոյ մանկանց, որ թէպէտ և մարմնով արթունք են և սթափք, և ի հսկման (կան) զօրն ողջոյն քան զայնոսիկ՝ որ ի խոր քուն թանձրութեան խորդան, եւս առաւել դանդաչեն՝ հոգովք աշխարհականօք զբաղեալք»[53]:

Հատվածը շատ կարևոր է, քանզի այն նշում է «մանկանց» գլխավոր հատկանիշներից մեկը՝ լինել հոգով արթուն, ինչը ընդգծված է նաև Ափրահատի 6-րդ ճառում.

«զուցէ յանկարծակի գայցէ տանուտէրն. զի յորժամ եկեսցէ, գտցէ զմեզ ի զարթնութեան»[54]:

Նշենք, որ Ափրահատի հենց 6-րդ ճառն է, որ նվիրված է bar Q'yāmā եզրին: Հայերեն թարգմանության մեջ այն ներկայացված է «Օրինակ ուխտաւորաց» վերնագրի ներքո: Դավիթ Քոբայրեցու «Ցիշատակարան Մեկնութեանն Եսայեայ» երկում կարդում ենք.

Եւ առի զբանս սրբոցս այսոցիկ մեկնողաց, եւ համառատելով զուգեցի, զի դիւրընթեր եւ առձեռն պատրաստ գտցի ուսումնասէր մանկանց Եկեղեցւոյ սրբոյ...»[55]:

Եզը կա նաև Գրիգոր Աքանյանի «Գիրք պատճառաց»-ում.

«Կերակուր եւ ըմպելի յոգնոր պատրաստէ վարդապետս սուրբ մանկանց Եկեղեցւոյ»[56]:

Արդեն իսկ վերը բերված օրինակներից հասկանալի է, որ խոսքն այստեղ ոչ թե հասակով փոքր անձանց, այլ որոշակի հատկանիշներ ունեցող հատուկ մի խմբի մասին է: Այդպիսի մի աղբյուր, որը պարզորոշ նշում է, թե «մանուկ»-ը յուրահատուկ եզր է, անդրադառնալով դրա ծագմանը, առկա է 13-րդ դարում, Հովհաննես

[51] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Կ. Կոստանեանց. Ալէքսանդրապոլ, 1910, էջ 20 («սուղ ինչ իմաստասիրել պղատոնական ... մանկանցդ վարժման առ այնոսիկ, որ հակամիտաբար հեգնիչք լինին»). Համտ. նաև էջ 46, 153, 166:

[52] Սարգիս Շնորհալի, Նախաբան, էջ 11, տե՛ս նաև Ղազարյան, 1995, էջ 70. «.... եւ խորհուրդն ոչ է ամենեցուն յայտնի, այլ՝ սակաւուց....»:

[53] Սարգիս Շնորհալի, ա. պ. ծք., էջ 384:

[54] Ափրահատ-Զգօն, ճառ Զ, էջ 106:

[55] Նորայր Եպս. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 268:

[56] «Գիրք պատճառաց», ՄՄ, N1879, 232ա:

Երզնկացու խրատներից մեկում[57]:

Ծավալով փոքր այս խրատը կրում է հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Նորին Յոհանէս վարդապետի Երզնկացւոյ կրկին կանոնք եւ խրատք տղայահասակ մանկանց աշխարհականաց, որք մարմնաւոր եւ երկրաւոր խորհրդով վարեն զկեանս աշխարհիս, զորս եւ մեք յաստուածային աւրինացն եւ ի սուրբ գրոց ուղղեմք զայնպիսիսն ի հոգեւորն շնորհաւքն Աստուծոյ»: «Տղայահասակ մանկանց»[58] բառերը զարմանալի են այստեղ, քանզի «մանկունք» կարող էին լինել քահանաներ, ճգնավորներ, ինչը պահանջում էր որոշակի տարիք: Պետք է ենթադրել, որ վերնագրում «մանուկ»-ը եզր չէ, ու «Խրատ»-ը գրված է «տղայահասակ» աշխարհիկ աշակերտների համար, ինչպես և նշում է հեղինակը:

Մեզ հետաքրքրող եզրին նվիրված այս երկը եզակի աղբյուր է: «Խրատում» կան տերմինին առնչվող բազում հետաքրքրական խնդիրներ, որոնք ցաք ու ցրիվ վիճակում առկա են նաև այլ, թե՛ հայալեզու, թե՛ օտարալեզու գրվածքներում: Ուստի հարկ ենք համարում մանրամասն կանգ առնելով այս աղբյուրի վրա՝ քննարկել «Խրատ»-ի հիմնական հարցերն ու համեմատել դրանք այլ երկերի տեղեկությունների հետ: Փաստորեն խախտելով ժամանակագրային գործոնը, ուրվագիծը ետ կտանենք «Խրատ»-ից դեպի տերմինի ակունքները: Նման մոտեցման անհրաժեշտությունը պայմանավորված է Երզնկացու գրվածքի բացառիկությամբ: Փորձենք ապացուցել, որ «Խրատում» վկայված «մանկունք»-ը, Աֆրահատի երկի bar Q'yāmā-ն նույնն են, որոշ առանձնահատկություններով ամեն մեկի դեպքում: Դրանք իրենց հերթին կապված են հունական ու լատինական աղբյուրներում վկայված համապատասխան եզրերի հետ:

Խրատը կարելի է բաժանել նախաբանի և երեք մասի: Նախաբանում, որը սկսվում է Պողոս առաքյալի «Առ Հռովմայեցիս» նամակի երկու վկայակոչումից[59], իսկույն ևեթ, գլխավոր շեշտը դրվում է հոգու և մարմնի հակադրության վրա: Ընդգծելով հոգևորի առաջնությունը մարմնականի հանդեպ, նա ասում է.

> «Արդ, խորհուրդ մարմնոյ զանգիտութեանն և զմեղացն առնէ զգործ, և խորհուրդ հոգւոյ՝ զշնորհն Աստուծոյ և զգիտության պատուիրանաց նորա և զամենայն գործս բարիս: Վասն որոյ պարտ է զխորհուրդ մարմնոյն, որ է անգիտութիւնն և մեղքն, փոխել ի հոգեւորն, որ է գիտութիւն և [սուրբ] կեանքն»[60]:

Պատահական չէ, որ Հովհաննես Երզնկացին խրատը սկսում է հենց հոգևորի և մարմնականի հարաբերակցության քննարկմամբ, մեջբերելով Պողոս առաքյալի խոսքը մարմնի և հոգու վերաբերյալ: Հոգևորի առաջնությունը մարմնականի նկատ-

---

[57] Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977:

[58] Բառակապակցությունը օգտագործված է ևս մեկ անգամ խրատում (Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 231):

[59] Հռովմ., Ը, 5 և Հռովմ., Ը, 6:

[60] Հովհ. Երզնկացի, Խրատ, 230:

մամբ[61] հիմնական հատկանիշն է: Նման մոտեցում առկա է նաև Աֆրահատի գրվածքի 6-րդ գլխում: Այստեղ դարձյալ վկայակոչված է Պողոս առաքյալի «Առ Հռոմեացիս» թուղթը: Այսինքն՝ երկու հեղինակներն էլ օգտագործում են միևնույն աղբյուրը, առաջինը «մանկունք» եզրը բացատրելու համար, իսկ Աֆրահատը «ուխտի որդիք կամ մանկունք» արտահայտության պարզաբանման համար: Դա կարելի է դիտել որպես ապացույց, որ խոսքը երկու տեղերում էլ նույն երևույթի մասին է: Բացի դրանից, հենց նույն այդ գլխում, Աֆրահատն անդրադառնում է «մարմնականին» ու հոգևորին.

«Հոգեւորքն տեսանեն զնա մինչդեռ պատերազմի նա. և ոչ տիրէ զէն նորա ի մարմինս նոցա»[62]:

Եզրին անդրադարձած հեղինակների մեծամասնությունը պարզությունը և հոգևորի նախընտրությունը ընդգծում են որպես «մանուկների» կարևորագույն հատկանիշներ: Կիպրիանոսը, օրինակ, քաջ տեղյակ է հոգևոր վերածնունդ առած «մանկանց» մասին.

«Տիրոջ մարգարեությունն է, որ օտարները կայրվեն և կսպառվեն, ինչը նշանակում է, որ նրանք, ովքեր օտար են աստվածային ցեղին, ովքեր հիմար են, ովքեր հոգևորապես նոր ծնվածներ չեն, և Աստծու «մանուկներ» չեն դարձել»[63]:

Կիպրիանոսը հայտնում է, որ որպես հայր մենք պետք է ընդունենք ոչ թե թույլ և փոփոխական մեկին, այլ Նրան, ով հավիտենական է ու անփոփոխ, ով հոգևոր մանկանց Հայրն է[64]: Հոգևորի և մարմնավորի հակադրության մասին է խոսում նաև Կյուրեղ Երուսաղեմացին՝ օրինակ բերելով Սիմոն Կախարդին[65]:

Գրիգոր Նյուսացին խոսելով «Աստծու մանկանց» մասին՝ հատուկ ուշադրություն է դարձնում հոգևորին և մարմնականին.

«Հակառակ դրան, յուրաքանչյուր աստվածայինով ներշնչված սուրբ գիրք, որը գրված է Հոգու շնչով (διὰ τῆς ἐπιπνοίας τοῦ πνεύματος) հաստատում է Հոգու աստվածայնությունը (τῷ πνεύματι τὴν θεότητα): Օրինակ (քանզի ավելի լավ է ապացուցել իմ վերաբերմունքը իրական տվյալներով)՝ ովքեր ուժ են ստանում Աստծու մանուկներ դառնալու,

[61] Եզնիկ Կողբացին իր երկում բազմիցս անդրադարձել է այս հարցերին. այդ օրինակները շատ ընդարձակ են այստեղ մեջբերելու համար, տե՛ս օրինակ՝ Եզնիկ Կողբացի, 1992, էջ 37-42, 113-115:

[62] Աֆրահատ-Զգօն, էջ 112, տե՛ս նաև էջ 111:

[63] Cyprian, Treatise V, 22. An Address to Demetrianus: Հմմտ. նաև, Treatise IV, 11, 13, On the Lord's Prayer.

[64] Cyprian, Three Books of Testimonies against the Jews, III, 19.

[65] Տե՛ս Cyrill Jer. Catecheses, p. 336՝ «...Սիմոն Կախարդը մկրտվեց, սակայն չլուսավորվեց, այսինքն, նա միայն մարմինը ջրով մկրտեց և ոչ թե հոգին լուսավորեց Հոգով. նա մարմնով իջավ և բարձրացավ, բայց նրա հոգին չթաղվեց Քրիստոսի հետ և ոչ էլ հարություն առավ նրա հետ»: Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն Ընծայութեան» հայերեն թարգմանության մեջ այս նախաբանը (Procatechesis) բացակայում է: Հմմտ. նաև Կյուրեղ Երուսաղեմացի, էջ 2՝ «հոգեւոր ծնունդ»-ի մասին, Cyrill Jer. Catecheses, p. 372.

կրում են Հոգու աստվածայնության վկայությունը[66]: Ո՞վ չգիտի Տիրոջ այն արտահայտությունը, որն ասում է մեզ՝ Հոգուց ծնվածները Աստծո մանուկներ են (τὰ ἐκ τοῦ πνεύματος γεννηθέντες θεοῦ τέκνα εἰσίν): Այսպիսով, Նա հստակորեն վերագրում է Աստծու մանկանց ծնունդը Սուրբ Հոգուն, ասելով, որ այն, ինչ ծնվել է մարմնից՝ մարմին է, իսկ այն, ինչ ծնվել է Հոգուց՝ հոգի է: Նրանք, որ ծնվել են Հոգուց, անվանվում են Աստծու մանուկներ (τοῦ θεοῦ τέκνα)»[67]:

Օգոստինոսը, ներկայացնելով իր ընդարձակ մեկնաբանությունները Հին և Նոր Ուխտերի վերաբերյալ, հստակորեն սահմանում է մարմնավորի ու հոգևորի կապը Նոր և Հին Ուխտերի հետ[68]: Հարցի վերաբերյալ բացատրությունները և խնդիրները քննարկելիս, այս հեղինակները մերթ ընդ մերթ ամրապնդում են իրենց մեկնաբանությունները աստվածաշնչային, հիմնականում Նոր Կտակարանի մեջբերումներով: Զարմանալի է, որ նրանք որպես հոգևորի ու մարմնավորի մեկնաբանության աղբյուր մատնանշում են Պողոս առաքյալի «Առ կորնթացիս» ուղղված առաջին թուղթը, ուր ասվում է.

«Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրեւ ընդ հոգեւորս, այլ իբրեւ ընդ մարմնաւորս: Իբրեւ տղայոց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ եւ ո՛չ կերակուր, զի ոչ եւս կարէիք. նա եւ արդ իսկ ոչ կարէք, քանզի դեռ մարմնաւոր էք»[69]:

Այս տողերը խիստ կարևոր են թվում, քանի որ, ըստ իս, հենց այս և մեկ այլ[70], «մանուկ» եզրի վերաբերյալ բացասական կարծիք հայտնող հատվածի հիման վրա է, որ հետագայում հրաժարվել են «մանկության» գաղափարներից: Կղեմես Ալեքսանդրացին, լուսաբանելով Պողոս առաքյալի ասածը, նշում է այդ հակասությունը.

«Բայց «մանկությունը», որ ի Քրիստոս է, հասունություն է, Օրենքի «մանկության» հետ համեմատ: Հասնելով այս կետին, մենք պետք է պաշտպանենք այն: Եվ մենք դեռ պետք է բացատրենք այն, ինչ ասված է առաքյալի կողմից. «Իբրև մանուկներ ի Քրիստոս կաթ տվեցի ձեզ և ո՛չ կերակուր, քանզի դեռ չէիք կարող, այժմ էլ չեք կարող»: Ինձ թվում է, որ այս արտահայտությունը չպետք է հասկանալ հրեական իմաստով, քանի որ ես կարող եմ հակադրել դրան Սուրբ Գրքի մեկ այլ արտահայտություն. «Ես կտանեմ ձեզ այն լավ երկիրը, ուր կաթ ու մեղր է հոսում»[71]: Մեծ դժվարություն է ծագում այս երկու աստվածաշնչային մեջբերումները համեմատելիս: Քանզի, եթե մանկությունը, որը բնութագրվում է կաթով, ի Քրիստոս հավատի սկիզբն է, ապա այն թերագնահատված է որպես երեխայական և անկատար»[72]:

---

[66] Հմմտ. Առ Հռոմ. Ը, 16, «Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ»:

[67] Gregorius Nyssenus, Refutatio confessionis Eunomii, TLG, p.191

[68] St. Augustine, On Baptism, Against the Donatists, 1, chap. 15, 24՝ «Մարմնավորը պատկանում է Հին Ուխտին, իսկ հոգևորը՝ Նոր Ուխտին»:

[69] Ա Կորնթ., Գ, 1, 2, հմմտ. նաև՝ Եբր., Ե, 12:

[70] Ա Կորնթ., ԺԳ, 11:

[71] Հմմտ. Ելք, Գ, 8՝ «Եւ տանել զնոսա յերկիր բարի եւ յընդարձակ, յերկիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր», հմմտ. նաև Ղևտ., Ի, 24, Երկրդ., ԻԶ 9, 15:

[72] Clement, The Instructor, I.6.34-35.

Կղեմեսը փորձում է հաշտեցնել Պողոս առաքյալի ասածը «մանկության» գաղափարների հետ, ի թիվս բազում մեկնաբանությունների ասում է նաև հետևյալը.

«Ես ուսուցանեցի ձեզ ի Քրիստոս պարզ, ճշմարիտ և բնական կաթի սնուցմամբ (կերակրով), այսինքն այն, ինչը հոգևոր է։ Ուստի այն կարելի է հասկանալ հետևյալ կերպ. ինչպես որ դայակները կերակրում են նորածին երեխաներին կաթով, այնպես էլ ես անում եմ դա Բանով, որը Քրիստոսի կաթն է, պատվաստելով ձեր մեջ հոգևոր սնունդ»[73]։

Այլաբանական խորհրդով լի, ոչ պակաս կարևոր «հոգևոր սննդի» անհրաժեշտությունը, հաճախ են ընդգծում վաղ քրիստոնյա հեղինակները հոգևորի մասին խոսելիս։ «Կաթը» հոգևոր սնունդն է, որ պետք է ստանային «մանուկները» սկզբնական շրջանում, երբ դեռ չէին կարող «կոշտ կերակուր» (հաճախ ենթադրվում է «միս») ուտել։ Սակայն «միսն» էլ է երբեմն անվանվում «հոգևոր կերակուր» ու համարվում ավելի բարձր մակարդակի հոգևոր սնունդ, որը ստանալուց հետո «մանկունք» չեն կարող վերադառնալ պարզ կաթին, ինչպես տեղեկանում ենք դրա մասին Արքեղայոսից[74]։ Հակառակ նրան, Կղեմես Ալեքսանդրացու վերաբերմունքը այդ «հոգևոր խմիչքի» նկատմամբ շատ ավելի դրական է։ Մատնանշելով «կաթի» խորհրդանշական բոլոր իմաստները[75] նա համարում է, որ կաթը փոխաբերական իմաստով ներկայացնում է Աստծու Բանն[76]։ Կղեմես Ալեքսանդրացին անգամ օրինակ է բերում Հոմերոսին, որը կաթնակեր է անվանել արդարամիտ մարդկանց[77]։

«Հոգևոր կաթի» մասին են հաղորդում և հայ պատմիչները[78]։ Եզնիկ Կողբացու հետևյալ հատվածը հստակորեն պարզաբանում է քննարկվող հարցերը.

«Ձենն Քրիստոս ի տղայութեան աշխարհի, զի տղայոցն կաթն պիտոյ էր, եւ ո՛չ հաստատուն կերակուր եւ ո՛չ յետանդսն երիտասարդութեանն, յորժամ եղեալ զեղոյր մոլորութիւն դիւապաշտութեանն։ Այլ նախ կրթեաց քարոզաւքն եւ մարգարէիւք իբրեւ կաթամբ եւ ապա եկն տալ զկատարեալ վարդապետութիւնն իբրեւ հաստատուն կերակուր, քանզի եւ ոչ տղայոյ ոք հաստատուն կերակուր տայ եւ ոչ մեծամեծ խորհուրդս յայտնէ եւ ոչ աւագ բանս խաւսի, մինչեւ ի կատարեալ չափ հասակին հասանիցէ...»[79]։

Այսինքն՝ այստեղ «տղայութեան» ու «տղայոցն» նույն խնդրո առարկա «մանկություն» և «մանուկ» եզրերն են։ Նկատենք, որ այս եզրերի քննարկումը տվյալ դեպքում օգնում է ճիշտ հասկանալ Եզնիկ Կողբացու մեջբերած հատվածը։ Հոգևոր

---

[73] Clement, The Instructor, 1.6.35.3 - 1.6.36.1.

[74] Archelaus, The Acts, chap. 48.

[75] Clement, The Instructor, 1.6.34.3-1.6.36.2.

[76] Clement, The Instructor, 1.6.36.1, Համտ. նաև վերը նշված օրինակը։

[77] Clement, The Instructor, 1.6.36.1-1.6.36.2.

[78] Հիշենք Խորենացու նշված խոսքը «հոգևոր կաթով» «մանկանց Եկեղեցւոյ» սնուցանելու մասին (Խորենացի, 1991, էջ 354)։

[79] Եզնիկ Կողբացի, 1992, էջ 91, Եզնիկ Կողբացին նույն իմաստով օգտագործում է նաև «որդի» բառը։ Համտ. նաև՝ Եզնիկ Կողբացի, 1992, էջ 111, որտեղ հեղինակը խոսում է ուխտավորների և մանկության մասին. այդ հատվածը նույն համատեքստին է պատկանում։

կաթի մասին վկայում է նաև Ագաթանգեղոսը.

«Եւ զի՞նչ իցեն երկու առատ ստինքն՝ եթէ ոչ կտակարանքն Աստուծոյ, որ արբուցանեն զամենայն տղէտս հոգևոր կաթամբն գիտութեան»[80]:

Անցնելով գիտության և իմաստության քննությանը, Երզնկացին տալիս է գիտության բաժանումը՝ տեսական և գործնական[81]: Ըստ Երզնկացու՝ մարդիկ բաժանվում են 3 տեսակի՝ ովքեր ունեն միայն գիտելիքներ, բայց չեն գործածում, ովքեր գործում են առանց գիտելիքների ու ովքեր համատեղում են երկուսն էլ: Առաջին 2 տեսակը նման են միակնանի[82] մարդկանց, 3-րդը՝ կատարյալ մարդիկ են[83]:

Այս ամենը անհրաժեշտ է, որպեսզի Երզնկացին անցնի գլխավոր թեմային, «որ պիտանացու է մեզ»[84], և, որտեղ խոսվում է մարդկության մեջ եղած մի հին սովորության մասին, համաձայն որի «մանկտաւագ» կոչվող մարդիկ «որդեգրել» են մանկանց ու տվել նրանց գոտիներ.

«Տեսաք յաշխարհի գործ մի, որ սովորութեամբ լեալ է յաշխարհի ի մէջ մարդկան, որ լինին ի մարդկանէ, որ անուանին մանկտաւագ, եւ կոչեն զտղայահասակ մանկունս իւրեանց յորդեգիրս, եւ տան նոցա գօտիս: Եւ չկայր հնար, որ բառնայր այս ի յաշխարհէ, զի հին էր սովորութիւնն, եւ քաղցր եւ անուշ թուէր նոցա, որք զայս գործէին: Բայց մարմնական եւ երկրաւոր եւ անգիտաբար էր գործն նոցա: Վասն այսորիկ կամեցաք մեք նոցա գրել խրատ եւ ցուցանել նոցա ճանապարհ, զի գիտութեամբ եւ իմաստութեամբ եւ աւրինաւք լիցի գործն, եւ անխառն ի չարէ, եւ վկայութեամբ Սուրբ Գրոց եւ մի՛ մոլոր գիտութեամբ»[85]:

Հատվածի սկզբնաբառերը՝ «Որ սովորութեամբ լեալ է յաշխարհի ի մէջ մարդկան», կարծես թե արձագանքում է Կղեմես Ալեքսանդրացու հետևյալ տողերին, ուր խոսվում է մարդկանց մեջ հանդիպող «մանկավարժ» լինելու սովորույթի մասին, որոնք կոչված էին ուսուցանելու Աստծու նկատմամբ հավատքի փրկության ճանապարհը[86]: «Եւ չկայր հնար, որ բառնայր այս ի յաշխարհէ»՝ թվում է, վկայում է այն մասին, որ այդ հին սովորույթը հետապնդվում էր: Այդպիսի եզրակացությունը հաստատվում է և այլ աղբյուրների տվյալներով, որոնց կանդրադառնանք հետագայում:

---

[80] Ագաթանգեղոս, 1983, էջ 242:

[81] Տեսական և գործնական բաժանումը, որը, ի դեպ, նորպլատոնական դասակարգում է համարվում, զարմանալիորեն գտնում ենք նաև Կղեմես Ալեքսանդրացու երկում, սակայն ոչ թե գիտելիքների, այլ մանկավարժի վերաբերյալ. (**Clement of Alexandria**. The Instructor **I.1.1.44 TLG**), հմմտ. նաև նույն երկի երրորդ գլուխը, ուր խոսվում է գործնական և տեսական առաքինությունների մասին. **Clement of Alexandria**, The Instructor I.3.9):

[82] Հմմտ. Կղեմես Ալեքսանդրացու հետևյալ բառերը. «Ըմբռնումը ոգու աչքն է, այս է պատճառը, որ «Իսրայել» բառը նշանակում է. «Նա, ով տեսնում է Աստծուն, այսինքն՝ նա, ով հասկանում է Աստծուն»: Clement of Alexandria, The Instructor I.9. 77 2.

[83] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 231:

[84] Նույն տեղում, էջ 231:

[85] Նույն տեղում, էջ 231:

[86] **Clement**, The Instructor, I.1.1. 2-I.1.1.3.

1. Երզնկացու արծարծած կատարյալ մարդիկ՝ մանկտավագներն ու մանուկներն են: Խրատի առաջին մասում Հովհաննես Երզնկացին նշում է, որ պետք է տեղյակ լինել հետևյալ խնդիրներին՝ 1. «Նախ՝ թէ ո՞ր են մանկտիքն.», 2. «Բ. եւ թէ ո՞ր է արժանի լինել մանկտեացն աւագ.» 3. «Գ. թէ ուստի՞ է սկսեալ այս գործս»:

«Արդ, մանկութիւնն Գ իրք է. մինն այն է, զի բարիսն, որ յԱստուծոյ առեալ է, ամուր պահէ եւ ոչ կորուսանէ. Բ. ի պատերազմն, յոր մտեալ է, արի կենայ եւ ոչ յաղթի Գ. այնմ իրաց, որ խոստացած է, ջանք դնէ, որ չզրկի: Բարի, զոր առեալ է յԱստուծոյ, այն է, որ հոգովն պատկեր է Աստուծոյ, սուրբ եւ անմեղ եւ անմահ է հոգին: Մանուկն ա՛յն է, որ չկորուսանէ զպատկերին գեղեցկութիւնն եւ նման լինի_անասնոց: Պատերազմ է մեզ ընդ սատանայի, իբրեւ զմանուկ արիացի՛ր եւ յաղթէ՛, եւ մի՛ յաղթիր եւ խոց առնուլ ի մեղացն նետից: Եւ Աստուած զարքայութիւնն յերկնից է խոստացեալ եւ հանգիստ յաւիտենական, ջանա՛ եւ փութացի՛ր մտանել յայն հանգիստն: Արդ, որ յայսոսիկ ժիր գտանի, նա՛ է մանուկ, եւ որ զայս առնէ եւ զայս ուսուցանէ, նա՛ է մանկտեացն աւագ»[87]:

Հատվածում ընդգծել ենք հիմնական արտահայտությունները, որոնց դեռ կհանդիպենք այլ աղբյուրներում: Նկատենք, որ այստեղ էլ է առկա մանուկների պարզության գաղափարը և նրանց «ժիր» լինելու հատկանիշը, որին արդեն հանդիպեցինք քննարկված օրինակներում («մանկունք, այս ժիրաժիր երիտասարդք», «աշխատաժիր»):

2. Արդ՝ ովքեր են, «մանկտաւագները» ըստ Հովհաննես Երզնկացու և որոնք են նրանց առանձնահատկությունները. Մանրամասն կանգ առնելով «մանկտաւագի» հատկանիշների վրա, Երզնկացին նշում է դրանցից չորսը՝ Սուրբ Գրքի ու Աստծու պատվիրանների գիտությունը, քանզի այն լուսավորում է ճանապարհը, և առանց դրան մարդը նման է կույրի, որը չի կարող առաջնորդել մյուսներին, ինչպես ասել է Քրիստոսը[88]: Երկրորդը՝ «մանկտաւագը» պետք է վարի սուրբ կյանք, որը նման է «անուշահոտ խնկի և ծաղկի, որ ամենայն մարդ հեշտանայ ի տեսն և ի հոտն»: Երրորդ հատկանիշը՝ բարի գործերն են, որոնցով պետք է առաջնորդվի «մանկտաւագը»՝ լինի մարդասեր, ողորմած, խղճա որբերին և այրիներին ու, ընդհանրապես, յուրաքանչյուրին, ով կարիք ունի ողորմության ու ցավակցության: Չորրորդը՝ «մանկտաւագը» պետք է հնազանդ լինի Եկեղեցուն, քանզի «Աստուծոյ շնորհաբաշխութեանն տեղի Եկեղեցին է, և արքունիք թագաւորութեանն Աստուծոյ»: «Մանկտաւագի» մասին խոսելիս, Երզնկացին հիշատակում է, որ քրիստոնյաների միջավայրում սովորություն կար նաև կնքահայր ունենալ: Միգուցե վերջինս «մանկտաւագ» գաղափարի զարգացման ձևն է, քանզի «մանկտաւագն» էլ ունի իր նախօրինակը:

3. «Գ. թէ ուստի՞ է սկսեալ այս գործս»՝ Երզնկացին բացատրում է նաև, թե որտեղից են ծագել «մանուկ» և «ճանապարհորդ» անվանումները.

---

[87] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 231-232:

[88] Մատթ., ԺԵ 14:

«Եւ թէ ուստի՞ սկսաւ այս մանուկ կոչիլ եւ ճանապարհորդ անուանիլ. ասեմ, թէ ի Քրիստոսէ եւ յիւր սուրբ առաքելոցն»[89]։

Եվ իրոք, Աստվածաշնչում հաճախ կարելի է հանդիպել «մանուկներ», «որդիներ», «Աստծու ուստրեր և դուստրեր»[90] եզրերի, որոնք սերտորեն կապված են միմյանց: Օրինակ՝ Հին Կտակարանում.

«Եւ մանուկ մատաղ ածցէ զնոսա»[91]։

Նման օրինակները շատ են Նոր Կտակարանում, հատկապես՝ Պողոսի թղթերում, ուր խոսվում է «որդիների» ու «մանուկների» մասին[92]: «Ճանապարհորդ» բառը Հովհաննես Երզնկացին բացատրում է այսպես.

«Զի մինչ ի մարմնով գալն Քրիստոսի, հնացեալ մեղաւք շրջէին մարդիկ եւ մոլոր ճանապարհաւ ընթանային՝ մեղաւք եւ անգիտութեամբ եւ անաստուածութեամբ. Քրիստոս Աստուածն մեր աւազանին մկրտութեամբն ի հնութենէ մեղաց մանկացոյց զմարդիկս եւ Աւետարանին գիտութեամբն իմաստնացոյց, աստուածային ձայնիւն կոչեաց եւ դարձոյց ի մոլոր ճանապարհէն։ զԱստուած Հայր եւ զինքն եւ զՀոգին Սուրբ ծանոյց աշխարհի եւ եցոյց զճշմարիտ ճանապարհ՝ ասելով. «Ե՛ս եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք»[93]։ ... Եւ յետ Քրիստոսի համբառնալոյն սուրբ առաքեալքն եղեն քարոզք եւ ուսուցիչք աշխարհի, եւ յետ առաքելոցն՝ սուրբ հարքն եւ վարդապետքն, որք ուսուցանեն զճանապարհ աւրինացն Աստուծոյ»[94]։

Կյանքի ճանապարհին, տիրող իրավիճակին մինչև Քրիստոսի մարմնով գալն այս աշխարհ՝ մարդեղությանը և, ընդհանրապես, հին ու նորի համեմատությանը անդրադարձել են վաղ շրջանի հեղինակներից շատերը[95]: Ստորև կտեսնենք, որ հինի և նորի հակադրությունը[96] ևս այս եզրին վերաբերող կարևոր գաղափարներից է:

II. «Խրատի» երկրորդ մասը տեղեկություն է պարունակում «մանուկներին» տրվող գոտիների, դրանց խորհրդի և զորության մասին: «Խրատը» հաղորդում է, որ «սրբասէր մանկանց» տրվում էր հինգ տեսակի գոտի: Գոտիների տեսակների մանրամասն բացատրությունը, փաստորեն մատնանշում է, որ առկա են եղել «մանուկների» հինգ խումբ[97]: Դրանք են, առաջինը՝ քրիստոնեական, սպիտակ և կարմիր գոտին, որ նոր մկրտվածի սպիտակ հանդերձի վրա է կապում քահանան: Սպիտակ

---

[89] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 232:

[90] Երկ. Օր., ԺԴ, 1, Սաղ., Ը, 2, Սաղ., ՁԲ, 6, Բ. Կոր., Զ, 18 և այլն:

[91] Եսայի, ԺԱ, 6, հմմտ.՝ Իմաստ. Սող., Բ, 13:

[92] Մատթ., Ե, 22; Մատթ., Թ, 40,42; Մատթ., ԺԱ, 25 (=Ղուկ. Ժ, 21); Ա. Կորնթ., Ա, 27; Ա. Կորնթ. Գ, 1; Ա. Կողոս., Գ, 1; Ա. Թեսաղ. Բ, 7; Ա. Պետրոս, Բ, 2; Հռովմ., Բ, 20; Հռովմ., Ը, 14, Հռովմ., Ը, 16, Հռովմ., Ը, 17, Հռովմ., Ը, 21; Հռովմ., Թ, 6-8 և այլն:

[93] Յովհ., ԺԴ, 6, Եղ., ԺԸ, 20, Եղ., ԼԳ, 13:

[94] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 233:

[95] Օրինակ՝ Օգոստինոսը (St. Augustine, On Baptism, Against the Donatists, I, chap. 15, 24, chap. 16, 25):

[96] Օրինակ՝ «ի հնութենէ—մանկացոյց» Երզնկացու երկից մեջբերված հատվածում:

[97] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 233-239:

հանդերձը խորհրդանշում է Ադամի անմեղությունը, իսկ գոտու գույները՝ սպիտակը խորհրդանշում է Քրիստոսի աստվածությունը, կարմիրը՝ «մարդկութեանն մարմնոյն և արեանն, որ միաւորեաց Քրիստոս»[98]: Գոտու խորհուրդն է.

«Զի որպէս գաւտին զմէջսն պնդի, այսպէս եւ քրիստոնեայն յԱստուծոյ սէրն պնդի եւ անքակտելի զհոգին իւր ի Քրիստոս կապէ, եւ ելանելով մեղացն ծառայութենէ՝ Աստուծոյ միշտ ծառայէ»[99]:

Երկրորդ գոտին քահանայական է, որ տալիս է եպիսկոպոսը քահանաներին ու սարկավագներին, որպեսզի նրանք «պնդակազմ եւ ժիր կայցեն, եւ ի գործ սպասաւորութեան Եկեղեցւոյն՝ փոյթ եւ արագ»[100]: Հավանաբար, այս խումբն է, որ կոչվում էր «մանկունք Եկեղեցւոյ»: Երրորդը՝ ճգնավորներինն է, որ կրում էին Եղիան ու Հովհաննես Մկրտիչը ուղտի բրդից պատրաստված իրենց հանդերձների վրա: Այդ գոտին կաշվից էր, քանզի

«որպէս մաշկն մեռած մորթ է, նոյնպէս եւ որ վասն Աստուծոյ սիրոյն ճգնի, զամենայն մեղս եւ զցանկութիւն եւ զախտ մեռուցանէ եւ ցամաքեցուցանէ պարտ է»[101]:

Չորրորդ գոտին՝ զինվորականն է, «յորում և իցեն ամենայն պատերազմական գործիքն»: Փոխաբերական իմաստով օգտագործված «զինուորականն» բառի բացատրությունը Երզնկացին տալիս է հետագա նախադասությամբ.

«Նոյնպէս եւ որ յայս կրաւնս քրիստոնէութեան զինուորի, ի կռիւ է ընդ սատանայի՝ եւ զկռուոյն զգեստն ի զգաւտին»[102]:

Այս գոտին Երզնկացին անվանում է նաև ճշմարտության գոտի ու մեջբերում մի հատված «Առ Եփեսացիս» թղթից[103] ասածները փաստելու համար:

Հինգերորդ գոտին՝ «ճանապարհորդացն է, որ գաւտի կապեն եւ զդրաւշակս հանդերձիցն ի վեր զարնեն, որ ոտիցն հեշտ լինի ի գնալն»[104]: Այս գոտին անվանված է նաև ողջախոհության գոտի և տրված է դրա բացատրությունը.

Հեղինակը զգուշացնում է, որ գոտի ցանկացողին «մանկտաւագը» պետք է սովորեցնի այս բոլոր խորհուրդները, իսկ «որդեգիրն այս իմաստութեամբ սիրէ զգաւտին»[105]: Գոտիների սահմանումից հետո Երզնկացին գրում է ճանապարհորդների, ճանապարհի և նրանց մասին, ովքեր սուտ ու մոլոր գիտությամբ են առաջնորդվում, չգիտեն ճանապարհը ու չեն կարող ճանապարհորդ կոչվել: Նա անգամ մեջ է բերում «բարակ ու նեղ» ճանապարհին և ճանապարհորդներին նվիրված մի չափածո: Հիշենք, որ «մանկունք» եզրը սահմանելիս Երզնկացին նշում է նաև, թե ում է պետք

---

[98] Նույն տեղում, էջ 234:

[99] Նույն տեղում:

[100] Նույն տեղում:

[101] Նույն տեղում, էջ 235:

[102] Նույն տեղում, էջ 235:

[103] Առ Եփես., Զ, 14, 17:

[104] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 235:

[105] Նույն տեղում, էջ 236:

ճանապարհորդ անվանել[106]։ Նկատենք, որ այստեղ էլ նորից առկա են ընդհանրություններ Ափրահատի նույն 6-րդ ճառի տվյալների հետ: Երզնկացու երկի աստվածաշնչային նեղ դռան կամ ճանապարհի[107] «ճանպհաս (այսպէս է բնութագրում- Մ.Շ.) է բարակ ու նեղ»[108], արտահայտությունը, կրկին համահունչ է «Զգօն» գրքում վկայված «նեղ և նուրբ ճանապարհին»[109], ընդ որում՝ երկու տեղերում էլ այն վերաբերում է «մանկանց» կամ «որդիներին»:

Այս առումով, հետաքրքրական է մեկ այլ զուգահեռ . նեղ դռան կամ անցքի մասին, որով անցնում է կաշին փոխած օձը, պատմում են Կյուրեղ Երուսաղեմացին[110] և Ագաթանգեղոսը.

Ագաթանգեղոսը, սակայն, այս պատմությունը ներկայացնում է մանկության» հետ կապակցված.

«Եւ եղերո՛ւք դուք, ասէ, խորագէտք իբրեւ զօձս»: Եւ զի՞նչ իցէ խորագիտութիւն օձին, եթէ ոչ՝ իբրեւ ծերասցի նա եւ տեսցէ ապականեալ զմարմին իւր՝ զխորհուրդս խորագիտութեանն իւրոյ ի մէջ բերէ: Զի դիմէ նա ընդ տեղի ինչ նեղաձերպ վայրաց, եւ ընդ կրթելն կեղեւէ զապականեալ մորթն ծերացեալ մարմնոյն, ի բաց մերկանայ եւ միւսանգամ ի մանկութիւն դառնայ, եւ նորոգեալ զծերութիւնն իւր զարդարէ: Սոյնպէս եւ արդարքն զանցաւոր մարմնոյս խորհուրդս յանձանց ի բաց մերկանան, զի մտցեն ընդ նեղ դուռն եւ ըմբռնեսցեն զանմահ թագաւորութիւնն»[111]:

Ավելին, որ, այսպես կոչված, «մանուկները» պետք է ընտրեն նեղ և նուրբ ճանապարհը, վկայված է և այլ հեղինակների կողմից[112]։ Այլաբանական իմաստ կրող «ճանապարհորդ» եզրը առկա է նաև Նոր Կտակարանում, Պետրոս առաքյալի «Ընդհանրական առաջին թղթում»[113]։

Այսինքն, այս տողերից պարզորոշ է, որ «մանկունք»-ը համախմբված էին ինչ-որ մի միաբանության կամ համայնքի ներքո: Մինչև գոտի ստանալը, նրանք պետք է կանգնեին այդ միաբանների առջև ու իրենց հնազանդությունը հայտնեին և համաձայնեին թվով տասնհինգ պատվիրանների, որոնցով առաջնորդվելու են հետագա կյանքում: Որո՞նք են այդ պատվիրանները կամ օրենքները[114]։ 1. Առաջինը՝ սերը դեպի Աստված և մարդիկ: 2. Ամենօրյա աղոթքները, որ պետք է կարդացվեն երեք անգամ՝ «առաւաւտուն և ճաշոյ ժամուն և յերեկոյին»: 3. Պատվել և հնազանդ լինել

---

[106] Նույն տեղում, էջ 232, տե՛ս նաև՝ նույն տեղում, էջ 233, հմմտ. վերը մեջբերված հատվածները:

[107] Մատթ. Է, 13-14, հմմտ. նաև Հակ. Զ, 11:

[108] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 236:

[109] Գիրք, որ կոչի Զգօն, էջ 106.

[110] Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ Հայրապետի կոչումն Ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 35 -36, հմմտ. նաև հունարենը՝ St. Cyril of Jerusalem, Catecheses, P.G. XXXIII, p. 437:

[111] Ագաթանգեղոս, 1983, էջ 336:

[112] Օրինակ՝ Կղեմես Ալեքսանդրացու (Cment, The Instructor, I.9.85 .4), Կիպրիանոսի (Treatise II, 21, հմմտ. նաև Treatise VII, 14, Cyprian, Treatise XI, 11, Cyprian, Testimonies, III, 6)

[113] Ա Պետ. Բ 11:

[114] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 237-239:

ծնողներին: 4. Սիրել աշխատանքը և ապրել քո վաստակով: 5. Լինել խաղաղասեր, և ոչ կովասեր, քանզի առաջինը Որդին է Աստուծոյ, իսկ երկրորդը՝ սատանայի[115]: 6. Որչափ որ հնարավոր է՝ մնա՛ առանց կին, սակայն եթե անպայման ուզում ես ամուսնանալ, ապա արա՛ դա օրինավոր ձևով և երբեք ուրիշի կնոջ վրա ցանկությամբ չնայես. «զի շուն կոչի եւ ոչ է մարդ, որ յաւտար կին խառնակի»[116]: Այս պատվիրանը կարևորներից մեկն է, որը հանդիպում է նաև այլ գործերում: 7. Մի՛ սիրիր գինի ու հարբեցողություն, քանզի նավի պես կխորտակվես, կորցնելով ամենայն բարիք: 8. Վատ ընկերների հետ մի շրջիր, այլ ընկերություն արա սուրբ, իմաստուն և գիտուն մարդկանց հետ, ջանալով նրանց նմանվել: Այս խրատից հետո, «մանկտաւագը» բարակ, գունավոր գոտի է տալիս «մանկանը»՝ ասելով.

««Կուտամ քեզ գաւտի ու կու կապեմ զքո մէջքդ յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Գաւտովդ զքո մէջքդ պնդեա՛, եւ դու սրտովդ յԱստուծոյ սէրն պնդեաց: Եւ վասն Աստուծոյ սիրոյն զԱստուծոյ պատուիրանն պահեա»[117]:

9. Քրիստոնեության անունը սուրբ պահիր և մի՛ թերացիր, մի՛ խնայիր մարմինդ, եթե հարկ լինի մահացի՛ր Քրիստոսի համար, ինչպես Նա արեց դա մարդկանց համար: 10. Աստվածապաշտությունդ ու հավատդ հաստատ պահիր և ոչ մի գանձ մի խնայիր դրա համար: 11. Ընկերներիդ կարիքը քոնդ համարիր, լացիր լացողի հետ, և ծիծաղիր ծիծաղողի հետ: 12. Եթե չարախոսես, դու կկորչես, իսկ եթե խոստովանես, կարդարացվես: 13. Քո ձեռքերով վաստակիր ու «տուր, և առ մեկին հազար»[118]: 14. Անգործ ու պարապ մի մնա, «զի պարապ մարդն տեղի սատանայի է, և աշխատաւորն տեղի Աստուծոյ է»[119]: 15. Կեր միայն քո քրտինքով ու գրկանքով վաստակած արդար հացը, այլ ոչ՝ գողացածը կամ ուրիշի վաստակածը:

Քրիստոնեության տասը պատվիրանների նմանօրինակ հրահանգներ առկա են նաև Աֆրահատի երկում, որոնք հիմնականում համահունչ են վերը քննարկված պատգամներին[120]: Բացի դրանից, նման պատվիրաններ է պարունակում Եդեսիայի եպիսկոպոս, Ռաբուլայի (5-րդ դար) «Հորդորներ և հրահանգներ երկրում ապրող քահանաներին և ուխտի որդիներին» գրվածքը, որը ընդունված է անվանել «Ռաբուլայի հրահանգներ»[121]: Դրանք ևս նմանություն ունեն թե՛ Աֆրահատի, թե՛ Երզնկացու պատգամների հետ[122]:

---

115 Հիշենք այստեղ Մովսես Խորենացու գրքում վկայված «մանուկ սատանայի» (Խորենացի, 1991, էջ 92) արտահայտությունը:

116 Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 238:

117 Նույն տեղում, էջ 238:

118 Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 239:

119 Նույն տեղում, էջ 239:

120 Համտ. «օրինակ ուխտաւորաց»-ում տրված կանոնները. Աֆրահատ-Զզօն, էջ 106-110:

121 Burkitt, 1904, p. 143-148. A. Vööbus, Syriac and Arabic Documents, 1 (CSCO 184, subs. 14), Stockholm 1960, pp. 34-50.

122 Օրինակ՝ «Ռաբուլայի հրահանգներում» առկա է ոմն «περιοδευτης»՝ (տե՛ս, օրինակ, հրահանգ 13, 14, 22 և այլն), բառացիորեն՝ վերակացու, որը, միգուցե, հնարավոր է նույնացնել «մանկտաւագի» հետ:

«Խրատսի» վերջում Է. Բաղդասարյանը, որի շնորհիվ և հրատարակվել է այս արժեքավոր գրվածքը, ծանոթագրությունով նշում է.

«Բնագրին հետևում է «Յակոբ, զարթիր ի քնոյ մեղաց» տաղի մի տարբերակ, որի վերնագիրը հատկապես արժանի է ուշադրության». «Նորին Յոհաննու առաքելաշնորհ եւ բանիբուն վարդապետի բան խրատական եւ յորդորումն յաղօթս զառաջին մանկտաւագն Յակոբ, զոր փոխեաց ի մարմնաւորէն ի հոգեւորն, աւրհնեաց զնա եւ ետ նմա զօտի և ասաց առ նա զերգս ոտանաւորս»[123]:

Տեսանելի է, որ վերնագիրը ամփոփում է գրվածքի հիմնական դրույթներից մի քանիսը՝ տեղեկություն է տալիս առաջին մանկտավագ Հակոբի, մարմնավորի փոփոխության ի հոգևորս և գոտի շնորհելու մասին: Սակայն ո՞վ է առաջին մանկտավագ Հակոբը: Հարցը սերտորեն կապված է «մանկտաւագ» եզրի ծագման ու զարգացման հետ: Աղբյուրների տվյալների բաղդատությունը հուշում է, որ «մանկտաւագ»-ը նույն իմաստն ունի «հայր», «հովիվ», «ուսուցիչ» և նման բառերի հետ, ինչը բազմիցս արծարծված և սահմանված է վաղ քրիստոնեական երկերում:

«Ջգօն» գրքի 10-րդ գլխից տեղեկանում ենք, որ առաջին «հովիվ»-ը եղել է Հակոբը՝ Իսահակի որդիներից կրտսերը: Նա, ըստ Աստվածաշնչի[124] և ըստ Ափրահատի, երկար տարիներ եղել է Աբրահամի ազգական Լաբանի «խաշանց» հովիվը՝ «Հովուեաց Յակոբ խաշանցն Լաբանու»[125], ասել է, թե՝ «մանկտաւագ»-ը: Արդյոք դա նույն Հակոբը չէ՞, որը որպես առաջին «մանկտաւագ» հիշատակվեց Հովհաննես Երզնկացու «Խրատում»:

Այս առումով ուշադրության է արժանի Գրիգոր Լուսավորչի «դայեակ մանկութեան եւ դաստիարակ»[126] բառերը: Նույն աղբյուրից՝ «Բանք իմաստասիրաց»-ից տեղեկանում ենք, որ Գրիգոր Լուսավորչը, ինչպես և այլ կարևոր մանկավարժները, իմա՝ «մանկտաւագ»-ները, նույնպես սերում է Աբրահամից.

«...յԱբրահամէ մեծէ եւ Աստուծոյ սիրելոյ սա սկզբնաւորեալ...»[127]:

Անգամ Հովհաննես Երզնկացու եզրին նվիրված հատուկ երկից հետո դժվար է ստույգ պատասխանել, թե ովքեր էին վերը նշված՝ հայկական աղբյուրներում կամ այլուր հիշատակված «մանուկները»:

Այս հոդվածում ներկայացրինք այն հիմնահարցերը, որոնց պատասխանները ստանալու համար հարկ է դիմել նաև ասորական, հունական և լատինական աղբյուրների տվյալներին, ինչին և առաջիկայում մտադիր ենք անդրադառնալ առանձին մեկ այլ հոդվածով:

---

[123] Հովհ. Երզնկացի, Խրատ, էջ 239:

[124] Ծննդ., 25-31:

[125] Ափրահատ-Ջգօն, էջ 192:

[126] Սոփերք հայկականք, 22 հտ, Վենետիկ, 1853-1862, հտ. Ե, էջ 103:

[127] Նույն տեղում, հտ. Ե, էջ 107, հմմտ. նաև ՄՄ. 2173, 395ա:

*ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿԸ

Հայ բառարանագրության հնագույն տեսակը համաբարբառներն են, որոնք ըստ ծագման և թեմատիկայի կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) Ավետարանների միանման, միաբարբառ վկայությունները կամ մեկնությունները Նոր Կտակարանում, և բ) որևէ հեղինակի մեկ կամ բոլոր ստեղծագործություններում գործածված բառերի այբբենական դասավորությունը՝ բնագրային վկայություններով կամ առանց դրանց և գործածության տեղի (էջի) նշումով: Նման համաբարբառները անվանում են նաև հեղինակային բառարաններ:

Ա) Սուրբ Գրքին վերաբերող համաբարբառների պատմությունը սկսվում է երկրորդ դարից: Մատենագրական տվյալների համաձայն՝ համաշխարհային գրականության մեջ առաջին համաբարբառի հեղինակ է համարվում Տատիանոս Ասորին, որն ապրել է երկրորդ դարում: Դա քրիստոնեության պատմության մեջ մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ սուր պայքար էր մղվում քրիստոնեական և հեթանոսական կրոնների միջև: Քրիստոնեության հակառակորդները անողոք քննադատության էին ենթարկում չորս Ավետարանները՝ դրանցում գտնելով զանազան հակասություններ Քրիստոսի կյանքի և վարդապետության վերաբերյալ: Այդ հակասությունները վերացնելու նպատակով Տատիանոս Ասորին միմյանց հետ է համադրում չորս Ավետարանները, վերացնում հակասությունները և թողնում միայն նման նախադասություններն ու մտքերը: Այդպիսով, նա չորս Ավետարաններից կազմում է մեկը, որը հունա-լատինական աղբյուրներում կոչվում է diatessaren, որ նշանակում է չորս Ավետարաններից կազմված մի նոր Ավետարան[1]:

Չորրորդ դարի ասորական մատենագիր Եփրեմ Խուրի Ասորին կատարել է Տատիանոս Ասորու համաբարբառի մեկնությունը, որն էլ հինգերորդ դարում թարգմանվել է հայերեն և վերնագրվել «Մեկնութիւն համաբարբառի, որ ըստ չորից աւետարանչաց»[2]:

Սփյուռքահայ հայագետ-լեզվաբան Պողոս Էսապալյանը (1910-1973 թթ.) քննական ուսումնասիրություն է գրել Տատիանոսի համաբարբառի վերաբերյալ[3]: Նա ցույց է տալիս, որ այդ համաբարբառը 5-րդ դարում թարգմանվել է հայերեն և լայն գործածություն ունեցել: Տատիանոսի համաբարբառից, Աստվածաշնչից, Ագա-

---

[1] Տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, «Էջմիածին», 1971, ԺԱ, էջ 52:

[2] Տե՛ս «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք» քառահատոր աշխատության 2-րդ հատորը, Վենետիկ, 1836:

[3] Պ. Էսապալեան, Տատիանոսի համաբարբառն եւ հայերէն Աւետարաններու առաջին թարգմանութիւնը (քննական ուսումնասիրություն), Վիեննա, 1937:

թանգետոսի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու երկերից վերցրած առանձին հատվածներ համադրելով միմյանց հետ՝ նա ցույց է տալիս համաբարբառի ազդեցությունը վերջիններիս վրա: Ըստ նրա՝ այդ հատվածները համաբարբառին ավելի մոտ են, քան Աստվածաշնչին, հետևաբար համաբարբառն ավելի շուտ է թարգմանվել, քան Ավետարանները[4]:

Մինչև 13-րդ դարը կազմվել են տարբեր տեսակի համաբարբառներ՝ աղյուսակաձև, կանոնաձև և այլն: Նման կանոններ կան Աստվածաշնչի 1805 թ. Զոհրապյան հրատարակության միհատորյակում[5]: 13-րդ դարից հանդես է գալիս բառարանային սկզբունքով կազմված համաբարբառը, որի հեղինակն է Փարիզի դոմինիկյան գիտնական, կարդինալ դե-Սանկտո Կառո Հուգոնը: Նա 1263 թ. ավարտում է ամբողջ Աստվածաշնչի լատիներեն բնագրի համաբարբառը[6]:

Մինչև 17-րդ դար ինչպես շատ այլ ժողովուրդներ, այդպես էլ հայերը օգտվել են թարգմանական համաբարբառներից, իսկ հետո կազմել ինքնուրույն համաբարբառներ: Ղազար Բաբերդացին 1619 թ. կազմել է Աստվածաշնչի հայերեն բնագիրը և վերջում զետեղել երկու բառացանկ՝ «Ցանկ ի վերայ այբուբենից Աստուածաշունչ սուրբ մատենիս, ըստ հայկական թուոց», «Ցանկ ի վերայ այբուբենից Աստուածաշունչ սուրբ մատենիս, ըստ լատինացւոց թուոց»[7]:

Նույն դարի երկրորդ կեսին Ոսկան Երևանցին հրատարակել է Աստվածաշունչը[8], որի վերջում զետեղել է Նոր Կտակարանի երկու համաբարբառ[9]: Իրականում դրանք համաբարբառներ չեն, այլ բառացանկեր: Հայերեն իսկական համաբարբառները հանդես են գալիս 18-րդ դարից սկսած: Էրզրումեցի Անանիա Ալավերդյանը 1709 թ. Շամախիում բառարանային սկզբունքով կազմում է չորս Ավետարանների համաբարբառը, որն ունի հետևյալ վերնագիրը. «Ցանկ սրբոց չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու: Հաւաքեցեալ ի վերայ այբբենի, գեմի եւ դայի մինչեւ վերջ քէի եւ օյի, բազում աշխատասիրութեամբ, վասն զի ոչ ունելով օրինակ իմն ցանկի, հազիւ կարացի այսքանս հաւաքել ի սուրբ Աւետարանէ, սակս դիւրաւ գտանելոյ զբանս յԱւետարանոչ»[10]: Այդ համաբարբառի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բերենք *եղանիմ* բայի վկայությունները.

| | |
|---|---|
| Եղիցի ձեր բան այոյ(ն) այո եւ ոչն ոչ | Մատ. Ե 37 |
| Եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինս է | Մատ. Ե 45 |

---

[4] Նույն տեղում, էջ 101-102:

[5] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805, էջ 647, 669, 683-684, 706:

[6] Энциклопедический словарь Брокгауза и Эфрона, С.-Петербург, 1900, հատոր 58, էջ 954:

[7] Տե՛ս Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 351 ձեռագիրը:

[8] Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց ներ պարունակող շարակարգութեամբ նախնեաց մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց, Ամստերդամ, 1666:

[9] Համաբարբառը վերնագրված է՝ «Ցանց վկայութեանց ի Քրիստոսէ եւ յառաքելոց ներ Նորում Կտակարանում համառօտելոց ի Հնոյն», էջ 760-830: Ըստ որում տրված է երկու տեսակի համաբարբառ՝ ըստ գրքերի (էջ 760-773) և ըստ այբբենական կարգի (էջ 774-830):

[10] Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2099 ձեռագիրը, էջ 5ա-59բ:

Եղերուք կատարեալք որպէս Հայրն ձեր — Մատ. Ե 48
Եղերուք այսուհետեւ խորագէտ իբրեւ — Մատ. Ժ 16
Եղիջիք ատեցեալք ամենեցուն վասն անու — Մատ. Ժ 22

Ինչպես երևում է բերված օրինակներից, Ալավերդյանը որպես վկայություն վերցրել է տվյալ տողում եղող հատվածը՝ անտեսելով ոչ միայն հաջորդ տողն անցնող բառը, այլև նույնիսկ բառի տողադարձված մասը: Այսպես, օրինակ՝ չորրորդ նախադասության *զօձն* բառը (*իբրեւ զօձն*) բաց է թողնված, իսկ հաջորդ նախադասության *անուան* բառի *ան* տողադարձված մասը չի վերցված, որի պատճառով ստացվել է *վասն անու* անհասկանալի կապակցությունը: Այդուհանդերձ, հարկ է շեշտել այն փաստը, որ Ալավերդյանի աշխատանքը մեզանում բառարանային համաբարբառի ստեղծման առաջին փորձն է, որը, դժբախտաբար, մնացել է անավարտ ու անտիպ:

18-րդ դարի կեսից հանդես են գալիս հայկական տպագիր համաբարբառներ: Առաջինը հայ խոշոր քերական, տաղերգու Բաղդասար Դպիրի (1683-1768 թթ.) համաբարբառն է, որն ունի հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Անուամբ Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գրքոյկ որ կոչի Ցանկ Գիրք Նոր Կտակարանին: Որ պարունակէ յինքեան զբանս ոմանս երեւելիս, եղեալ ըստ այբբենական կարգին հանդերձ համարաթուով գլխոցն եւ համաձայն տնատմանց: Առ ի դիւրապէս գտանել զոր ինչ եւ խնդրիցէ ոք բանս ի սուրբ Նոր Կտակարանին: Կ. Պոլիս, 1753: Ի փառս միշտ փառաւորեալ անուանն վերեղնելոյ ցեր քան զգեր վեհացոյն միոյ ցերացոյական աստուածութեանն ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

Իհարկե, հայ մատենագրության մեջ այն հիշատակված է ոչ թե այդքան ընդարձակ, այլ շատ համառոտ՝ «Ցանկ Գիրք Նոր Կտակարանին» վերնագրով: Հարկ է նշել, որ Բաղդասար Դպիրը հենց վերնագրում շատ համառոտակի ներկայացնում է համաբարբառի կառուցվածքն ու նպատակը: Նրա համաբարբառը 176 էջանոց մի աշխատանք է, որ պարունակում է 10512 բառ-վկայություն: Բառերի կիրառությունների համար բերված են շատ համառոտ, երբեմն՝ կցկտուր վկայություններ: Այսպես, օրինակ՝

Ազգաց եւ լեզուաց — Յայտ. ԺԳ 7
Ազգաւ անմտաւ — Հռոմ. Ժ 19
Ազգն քո եւ քահա — Յովհ. ԺԸ 35
Ազգս ազգս եթէ — Հռոմ. ԺԲ 6

Խոնարհվող բայերը չնայած տրված են ըստ թվի և դեմքի հաջորդականության, բայց միշտ չէ, որ ամենայն ճշգրտությամբ պահպանված է այդ հերթականությունը. օրինակ՝ *եղեալ, եղեալք, եղելոյ, եղեն, եղեր, եղերուք, եղեւ, եղէ, եղէց, եղէք, եղիջիք, եղիցին, եղիցուք* և այլն:

Համաբարբառում տեղ են գտել նաև չթեքվող խոսքի մասերը՝ մակբայները, շաղկապները, նախդիրները, նախադրությունները:

Բաղդասար Դպիրն իր աշխատության վերջում (էջ 173-176) համառոտակի ներկայացնում է համաբարբառի կազմման սկզբունքները և օգտագործման եղանակը:

նաև նշում է, որ համաբարբառը նախատեսված է ոչ թե բոլորի, այլ մասնագետների համար. «...ամենայն կարդացողի ոչ է պիտոյ, այլ միայն գրոց աշակերտաց եւ բանասէր անձանց, որ սէր ունին գրոց գիտութեան» (էջ 175):

Մեր երկրորդ տպագիր համաբարբառը Զմյուռնիայի Նոր Կտակարանի համաբարբառն է[11], որի կազմողի անունը չնայած չի նշված, սակայն հետազոտողները այն վերագրում են Դիոնեսիոս Վարդապետին[12]:

Ծանոթանալով այդ համաբարբառին՝ կարող ենք ասել, որ այն կազմված է հետևյալ հիմնական սկզբունքներով: Բայերի համար որպես գլխաբառ տրված է անորոշ դերբայը, ըստ որում ներգործական և կրավորական սեռի բայերը տրված են իրար կողքի: Այսպես, օրինակ՝

Ագանել. իլ[13]:

Մատթ. Զ 25: Եւ մի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ Ագանիցիք

ԻԱ 17: Ել...ի Բեթանիա եւ անդ Ագաւ:

Երբեմն երկրորդ բաղադրիչն էլ է տալիս ամբողջությամբ. օրինակ՝

Բազմել. Բազմիլ

Կազմողը հետևողականություն չի ցուցաբերում նաև բայերի գլխաբառերի ընտրության ժամանակ. սովորաբար որպես գլխաբառ է դնում դերբայական ձևերը, բայց հանդիպում ենք դիմավոր ձևերով գլխաբառերի. օրինակ՝

Առաքեցայ:

Մատթ. ԺԵ 24: Ոչ ուրեք Առաքեցայ՝ եթէ:

Որպես ինքնուրույն գլխաբառ է ներկայացվում նաև դիմավոր բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալի (երբեմն էլ՝ ստորադասական եղանակի երկրորդ ապառնու) եզակի թվի երրորդ դեմքը, այսպես՝ *ասացաւ*, *բացաւ*, *բացցի*, *բերաւ*, *եբարձ*, *եբաց*, *եբեկ*, *եբեր*, *եթող*, *ելաց*, *եկեաց*, *եկեր*, *եկուլ*, *եհան*, *եհաս*, *եհատ*, *եհար*, *էանց* և այլն: Բերենք մեկ օրինակ իր վկայությամբ հանդերձ.

Ասացաւ:

Մատթ. Ե 27: Զի ասացաւ, մի՛ շնար:

Բայական հարադրությունները ներկայացվում են երկու անգամ. նախ տրվում է առաջին բաղադրիչը, որից հետո դրվում է երեք կետ, և ապա բերվում է ամբողջ հարադրությունը, օրինակ՝

Ազդ...:

Մատթ. Բ 8: Ազդ արասջիք ինձ, զի եւ

Ազդ առնել

Մատթ. Բ 8: Ազդ արասջիք ինձ, զի եւ...

Զմյուռնիայի համաբարբառի ամենամեծ թերությունը բերված վկայությունների

---

[11] Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի այբբենական կարգաւ շարադրեալ, Զմիւռնիա, 1848:

[12] Վահան Սահակեան, Համաբարբառ Աստուածաշունչ մատեանի Հին և Նոր Կտակարանաց արդի աշխարհաբարով, Պէյրութ, 1963, էջ Գ:

[13] Օրինակները բերվում են այնպես, ինչպես բնագրում են:

շատ համառոտ լինելն է:

Այնուամենայնիվ, մեր առաջին (մանավանդ՝ Զմյուռնիայի) համաբարբառների նշանակությունը շատ մեծ է նոր, ավելի կատարելագործված համաբարբառի կազմման գործում, ինչպիսին եղավ Թադևոս Աստվածատրյանի կազմած Աստվածաշնչի համաբարբառը[14]:

Բ) Համաբարբառի երկրորդ տեսակին պատկանում են հեղինակային համաբարբառները, որոնք կազմվել են հիմնականում Թ. Աստվածատրյանի համաբարբառի օրինակով: Դրանցում ընդհանուր են բառերի այբբենական դասավորությունը և բնագրային վկայությունները բերելը: Ի տարբերություն աստվածաշնչյան համաբարբառների՝ նոր համաբարբառները ընդգրկում են հեղինակի օգտագործած բոլոր բառերն անխտիր, որոնք ներկայացվում են քերականական որոշակի դասավորությամբ, և յուրաքանչյուր բառագործածության համար բերվում է ընդարձակ վկայություն: Աշխարհի շատ ժողովուրդներ (անգլիացիներ, իսպանացիներ, ռուսներ և ուրիշներ) կազմել են նման համաբարբառներ: Ի դեպ, այդ բնագավառում շատ ավելի մեծ աշխատանք է կատարվել մեզանում: Այդ տեսակետից չի կարելի մոռանալ Մխիթարյանների դերը. նրանք կազմել են գրաբարագիր շատ հեղինակների երկերի համաբարբառներ, որոնք, ցավոք, անտիպ են:

Սկզբունքների կատարելագործման և համաբարբառների կազմման ու մատենագրային հրատարակման գործում հսկայական աշխատանք է կատարվել ՀՀ Գիտությունների Ակադեմիայում: Անվանի հայագետ-լեզվաբան Ա. Ղարիբյանի ընդհանուր ղեկավարությամբ 1960-70-ական թվականներին կազմվել ու հրատարակվել է 5-րդ և հետագա դարերի գրաբարագիր մատենագիրների ավելի քան չորս տասնյակ հատոր համաբարբառ: Ըստ կազմության սկզբունքների՝ այդ համաբարբառները բաժանվում են երկու տեսակի՝ բառաքերականական և բնագրային: Առաջին տեսակի համաբարբառներում տրված են հեղինակի օգտագործած բոլոր բառերը՝ քերականական որոշակի դասավորությամբ և էջերի նշմամբ: Բերենք մեկ օրինակ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համաբարբառից:

Աթոռ - աթոռոյ - 255, 275, 348.
զաթոռ - 306…, 358 (ծն. զաթոռն).
յաթոռ - 244…, 269 (ծն. զաթոռ).
զաթոռսն - 275, 306, 354.
յաթոռոյն - 349, 362 (ծն. յաթոռոցն):

Այդ սկզբունքով են կազմված նաև Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերի համաբարբառները:

Ավելի մեծ է բնագրային համաբարբառների հայագիտական արժեքը: Այդպիսի համաբարբառներում ամեն մի բառագործածության համար բերվում են այնպիսի հատվածներ, որոնցում գլխաբառը հանդես է գալիս իր լրացում-լրացյալ կապակ-

---

[14] Թադէոս Աստուածատուրեան, Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց, Երուսաղէմ, 1895: Այս համաբարբառի մասին տե՛ս մեր «Աստվածաշնչի համաբարբառները և նրանց կազմման սկզբունքները», «Էջմիածին», 1985, Ը, էջ 38-42:

ցությունններով: Այդ սկզբունքը հետազոտողին հնարավորություն է տալիս, առանց բնագրին դիմելու, համաբարբառի միջոցով անմիջապես լուծել իրեն հետաքրքրող հարցը: Բնագրային համաբարբառների մասին ընդհանուր գաղափար կազմելու համար օրինակ բերենք Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի համաբարբառից[15].

ՀԱԶԱՐ (գոյական) - *Զհազար* եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք...զտապս ի փորոյն փարատէ - 44.

ՀԱԶԱՐ (թվական) - Զրուան... *զհազար* ամ յաշտ արար - 113:

Մեծանուն հայագետ Հր. Աճառյանը, քննելով մեսրոպյան հայերենը, նրան հատուկ 18 առանձնահատկությունները և դրանց վերաբերյալ օրինակներ բերելով դասական հայերենից, գրում է. «Այս օրինակները ցույց են տալիս, որ մեսրոպյան մեծագույն վարպետները անգամ կարող են սայթաքել: Հետևաբար անհրաժեշտ է ունենալ մեսրոպյան հայերենի ամբողջական համաբարբառը, ուր լեզվի բոլոր օրինակները մանրամասն հավաքված ու դասավորված լինեն: Մխիթարյանները կազմել են այդ աշխատությունը, բայց դա գտնվում է միայն իրենց մոտ ձեռագիր վիճակում, որովհետև այդպիսի ահագնածավալ աշխատություններ անհրապարակելի են»[16]:

Ինչ խոսք, այսօր համակարգիչները հնարավորություն են ընձեռում կատարելու նման «ահագնածավալ» աշխատանք, բայց, դժբախտաբար, շատերը դեռևս զրկված են նման սարքավորումներ ունենալու հնարավորությունից: Որպեսզի ընթերցողը ստույգ տեղեկություն ստանա այս կամ այն հեղինակի բառապաշարի վերաբերյալ, ակադեմիայի հրատարակած ամեն մի համաբարբառին կից տրվել են բառագործածության վիճակագրական տվյալներ՝ *ընդհանուր*, *բառարանային* և *մեկ անգամ գործածված բառեր* դասակարգմամբ: Բացի դրանից, հետազոտողի աշխատանքն էլ ավելի հեշտացնելու նպատակով համաբարբառների վերջում զետեղվել են նաև հաճախականության բառացանկեր, որոնցում նշվել է, թե տվյալ բառը քանի անգամ է գործածվել և համաբարբառի որ էջում:

Այսպիսով, համաբարբառը հարյուրավոր անգամ հեշտացնում ու արագացնում է հետազոտողի աշխատանքը: Ներկայումս էլ մեծ հետաքրքրություն կա համաբարբառների նկատմամբ: Դրանք օգտագործվում են մեր և օտարերկրյա հայագետների կողմից գիտական զանազան աշխատանքներ կատարելիս: Համաբարբառները օգտագործվում են նաև տարբեր տիպի բառարաններ (բացատրական, պատմական և այլն) կազմելու համար:

[15] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (բնագրային համաբարբառ). կազմող՝ Գ. Բ. Թոսունյան, խմբագիր՝ Ա. Ա. Աբրահամյան, Երևան, 1972: Համաբարբառը կազմված է Վենետիկի՝ 1826 թ. հրատարակության հիման վրա:

[16] Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 92-93:

ՆԱՄՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# ԳԵՎՈՐԳ ՄԿԵՎՌԱՑԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉԸ

Կիլիկյան Հայաստանում 12-րդ դարի երկրորդ կեսից մինչև 13-րդ դարի երկրորդ հիսնամյակը, գրքի ձևավորման արվեստի կազմավորման և վերելքի շրջանում, հանճարեղ վարպետների կողմից ստեղծվել են բազմաթիվ բարձրարվեստ ձեռագիր հուշարձաններ: Ձեռագրական հարուստ այս ժառանգության մեջ առանձնանում են գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող, բազմաթիվ մանրանկարներով հարուստ չորս հայտնի ձեռագրեր, որոնք պահվում են Մաշտոցյան Մատենադարանում և կրում 197, 979, 7651, 9422 համարները[1]:

Կիլիկյան այս հուշարձանները գրքի գեղարվեստական ձևավորման յուրատիպությամբ, մանրանկարչի կատարյալ կատարողական վարպետությամբ և բացառիկ երևակայությամբ, ինքնատիպ մեկնաբանությամբ, մանրանկարների բազմապլանայնությամբ, պատկերների կենդանությամբ, գույների հմուտ ընտրությամբ և տրամադրությամբ մեծ հետաքրքրություն են առաջացրել մանրանկարչության պատմության մասնագետների շրջանում:

Ձեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են հայ մանրանկարչական արվեստի տեսաբաններ Գ. Հովսեփյանը, Ս. Տեր-Ներսեսյանը, Լ. Ազարյանը, Վ. Ղազարյանը, Լ. Դուռնովոն, Գ. Դրամբյանը, Ա. Սվիրինը, որոնք իրենց ուսումնասիրություններում այս հուշարձանները համարում են «կիլիկյան մանրանկարչության բարձրակետը», «հայկական մանրանկարչության գոհարներ»:

Դժբախտաբար ձեռագրերի գլխավոր հիշատակարանների բացակայության կամ ոչ լրիվ լինելու պատճառով մասամբ են պարզաբանված գրչության հանգամանքները: Տարակարծությունների տեղիք է տվել նաև այն հանգամանքը, որ ձեռագրերը անստորագիր են:

Մանրանկարչության պատմության մեջ այս հուշարձանները իրենց ոճական ընդհանրություններով խմբավորվում են մեկ հեղինակի անվան շուրջ:

---

[1] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 197, 1287 թ., մագաղաթյա Ավետարան, գրչության վայրը՝ Ակներ, գրիչ և ստացող՝ Հովհաննես եպս. արքաեղբայր, մեծություն՝ 26.5x18.2:

ա) ՄՄ, ձեռ. № 979, Ճաշոց, 1286 թ., Նյութ՝ մագաղաթ, Ստացող՝ Հեթում Բ թագավոր, գրիչ՝ Ստեփանոս քահանա, վայր՝ Սկևռայի" վանք:

բ) ՄՄ, ձեռ. № 9422, 13-րդ դ. 80-ական թվականներ, Սկևռայի" վանք, գլխ. Հիշատակարան՝ չիք, վերանորոգվել է 1574-ին:

գ ) ՄՄ, ձեռ. № 7651, Ավետարան, Նյութ՝ մագաղաթ, 13-րդ դ. 80-ական թվականներ, գրիչ՝ Ավետիք, ստացող՝ Օշին թագավոր (Ա), Ստեփանոս եպս. Սեբաստիո (Բ), մեծություն՝ 22.5.x16.7, գլխ. Հիշատակարան՝ չիք: Հետագայի հիշատակարանը վկայում է, որ ձեռագիրը 1310-ին ավարտել է Սարգիս Պիծակը:

Մանրանկարների կատարողական բարձր արվեստը մասնագետներին թույլ է տվել ձեռագրերի արժանի հեղինակ համարել 13-րդ դարի կիլիկյան մանրանկարչական դպրոցի հայտնի մանրանկարիչ Թորոս Ռոսլինին՝ բացառելով մեկ այլ՝ ավելի տաղանդավոր մանրանկարչի գոյությունը, որն աշխատել է 13-րդ դարի 70-80-ական թվականներին[2], և քիչ հավանական համարել այն, որ պատմությունը կարող է պահպանած չլիներ նման նկարչի անունը[3]:

Թորոս Ռոսլինին ձեռագրեր վերագրելու միտումի դեմ լուրջ կասկածներ է հայտնել Լ. Ազարյանը՝ միանգամայն բնական համարելով այդ շրջանում Ռոսլինին իրենց տաղանդով չզիջող վարպետների գոյությունը, իսկ նրանց անունների անհայտ մնալը՝ սոսկ պատահականություն[4]:

Հայ մանրանկարչության գիտակ Ս. Տեր-Ներսեսյանը, համեմատելով Ռոսլինին վերագրվող և նրա ստորագրած մանրանկարները, գտնում է, որ այդ ստեղծագործությունները միևնույն հեղինակինը չեն[5]:

Անստորագիր ձեռագրերից ՄՄ № 978-ը Գ. Հովսեփյանը նույնպես չի համարում Ռոսլինի գործը[6]:

Վ. Ղազարյանն իր աշխատության մեջ ներկայացնելով Երևանի Մատենադարանի № 7651 ձեռագրի (որը հայտնի է «8 մանրանկարիչների ավետարան» անվանումով) ավետարանական սյուժեների պատկերային անմիջական վերարտադրության եղանակներն ու ակունքները, պատկերագրական խորհրդանշական կողմը, գտնում է, որ № 7651 ձեռագրի այն մանրանկարները, որոնք վերագրվել են Ռոսլինին[7], նրանը չեն, և նկատում է ոճական ընդհանրություններ ՄՄ № 989 ձեռագրի նույն թեմայով մանրանկարների հետ[8]:

Ուսումնասիրողների մի մասն էլ ոճական տարբերություններ են նշում անստորագիր մանրանկարների միջև[9]:

Միանգամայն հավանական է մասնագետների այն ենթադրությունը, որ 13-րդ դարի 70-80-ական թվականներին Կիլիկիայում աշխատել են տաղանդավոր վար-

---

[2] Р. Драмян, Из истории армянской миниатюры XIII-XIV в.в, Տեղեկագիր հայկական ՍՍՌ ԳԱ, 1948 թ., № 5, էջ 51:

[3] Л. Дурново, Портретные изображения на первом заглавном листе Чашоца 1288 г., Տեղեկագիր հայկական ՍՍՌ ԳԱ, 1946 թ., № 4, էջ 63: "Краткая история древнеармянской живописи", Ереван, 1957, стр. 40.

[4] Լ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դարերում, 1964, Երևան, էջ 126-147:

[5] Լ. Ազարյան, Նշվ. աշխատությունը, էջ 130: Թ. Ռոսլինին վերագրվող անստորագիր մանրանկարներով ձեռագրերի, որոնց թիվը 7-ն է, հեղինակային պատկանելության հարցի կապակցությամբ կասկածներ է հայտնել Մ. Տեր-Մովսիսյանը: Ազգագրական հանդես, 1910 թ., № 2, էջ 31, 1913 թ., № 1, էջ 79:

[6] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Գ: Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911:

[7] Ռ. Դրամբյանը գտնում է, որ № 7651 ձեռագրի 95 մանրանկարներից 41-ը պատկանում են Թ. Ռոսլինին:

[8] Վ. Ղազարյան, Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում, 1984 թ., Երևան (XIII-XIV դ. սկիզբ):

[9] А. Н. Свирин, Миниатюра древней Армении, Москва-Ленинград, 1939-ые годы, էջ 49-80:

պետներ: Այս ենթադրությունը հավաստվում է այնպիսի մի տաղանդավոր նկարչով, ինչպիսին է Գևորգ Սկևռացին[10]: Նա 13-րդ դարի ճանաչված գիտնական, գրիչ, վարդապետ, մեկնաբան, հռետոր, մանկավարժ, նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ էր, որն էլ, ենթադրվում է, հեղինակն է Մաշտոցյան Մատենադարանի Ռոսլինին վերագրված չորս անստորագիր ձեռագրերի:

Այս մասին ուշագրավ է 1322-ին «մեծաշուք եւ յերկնահանգէտ անապատս, որ կոչի Կարմրիկ» գրչության վայրում գրված ՄՄ № 8356 ձեռագրի[11] գրչի՝ Ստեփանոս դպիրի հաղորդածը. «... Այլ եւ ճոռոմ եւ ճոխ երևեցոյց յեկեղեցի սուրբ եւ յստակ տեսութիւնս լի իմաստութեամբ, զի ի բոլոր Աստուածաշունչ գիրս կարգեաց նախադրութիւնս եւ ցանցս գլխաւք յաւրինեալ եւ զոր յառաջին սրբոցն անփոյթ էր լեալ, զայն սմա պահեաց Աստուած... եւ գեղազարդ շքով նկարեալ, զոր տեսողացն եւ վայելողացն յայտնի է»[12]:

Վկայակոչած հատվածը հաստատում է այն ենթադրությունը, որ Գ. Սկևռացին զբաղվել է նաև մանրանկարչությամբ, և նրա նկարչական արվեստը գնահատվել է որպես երևույթ՝ թողնելով անմոռանալի տպավորություն:

Գ. Սկևռացի րաբունապետի գիտական և գրական գործունեության հետ է կապվում Սկևռայի վանքի գրական մշակութային կյանքը 13-րդ դարի երկրորդ կեսին: Կիլիկյան Հայաստանի տարբեր վայրերում, մասնավորապես Սկևռայի վանքում, Արմենի անապատում Սկևռացին զբաղվել է քարոզչությամբ, վարդապետությամբ, գրչությամբ, հռետորական արվեստի մշակմամբ, մանկավարժությամբ: Պատրաստել է բազմաթիվ աշակերտներ, որոնք պատմության մեջ հայտնի են որպես տաղանդավոր գրիչներ և մատենագիրներ:

Գ. Սկևռացու հեղինակությամբ մեզ հայտնի են բազմաթիվ աշխատություններ, որոնց գրչության ժամանակը թվագրվում է հիմնականում 13-րդ դարի 80-ական թվականներով:

1267-ին խմբագրել է «Տոնապատճառ» ժողովածուն[13]: Առանձնահատուկ նշանակություն ունեն գրչության արվեստի տեսությանը նվիրված նրա երեք աշխա-

[10] Գ. Սկևռացու կյանքի և գործունեության մասին ամբողջական և համակարգված տվյալներ չկան: Նրա «Վարքը» ընդարձակ խմբագրությամբ պահպանվել է ՄՄ ձեռ. № 8356 ձեռագրում: Տես Է. Բաղդասարյան, Բանբեր Մատենադարանի, Երևան, 1964 թ., № 7, էջ 399-433: «Վարքի» մի այլ օրինակ էլ պահպանվել է Երուսաղեմի № 99 ձեռագրում: Նրա կյանքին են անդրադարձել Մովսես Երզնկացի գրիչը «Դրուատ բանի սուղ ինչ պատմագրաբար յերջանիկ րաբունապետն եւ ի քաղցրաբարբառ վարդապետն Գէորգ Լամբրունեցի» ներբողյանում, Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 504-505: Պահպանվել է Սկևռացու «Վարքի» Հայսմավուրքային խմբագրությունը, Տաշյան, Մայր Ցուցակ ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի ի Վիեննա, 1895 թ., էջ 46: Կենսագրական որոշ վկայություններ են պահպանվել նրա մասին տեղեկացնող ձեռագիր հիշատակարաններում:

[11] ՄՄ № 8356 ձեռագրի 193բ-299բ էջերը բովանդակում են Գրիգոր Սկևռացու «Վարքը»:

[12] ՄՄ, ձեռ. № 8356, էջ 208 ա, բ:

[13] ՄՄ № 3082 ձեռագիրը:

տությունները[14]: Կատարել է արքունական պատվերներ: Բազմաթիվ քարոզների, գանձերի, խրատների, ներբողների հեղինակ է: Սկևռացին հմուտ է եղել հայերենի տաղաչափությանը և խազագրության արվեստին: Նրան է վերագրվում խլկցի նոտավոր շարականների ուղղումն ու խմբագրումը[15]:

Գ. Սկևռացու նկարչական և գրչական արվեստի մասին հիացմունքով և գովեստով են խոսել նրա աշակերտները, ժամանակակիցները ու հաջորդները:

Մովսես վարդապետն իր ուսուցչի մահվան առիթով գրած «Ողբում» ասում է.

*Եռակի կերպիւ կազմէր*
*Գեղապաճոյճ յաւէտ գործէր.*
*Բոլորակ եւ աղիւսակ*
*Եւ զվերջագիր տառս հրեշտակ:*
*Գեղեցիկ եւ հրաշալի*
*Եւ պճնազարդ յամենայնի*[16]:

Մխիթարյան մատենադարանի 1439 թ. գրված № 4 Ցայսմավուրքում Գ. Սկևռացու մասին կարդում ենք. «Սա էր ամենայն առաքինութեամբ զարդարեալ ... Առներ եւ զարուեստ գրչութեան գեղեցիկ եւ ճարտարութեամբ, քանզի ազնիւ էր եւ արագ առ ի գրել ըստ նմանութեան մեծին Եւագրեա, մանաւանդ թէ եւ առաւելեալ եւս գտանիւր: Զբոլորակ գիր յայտնի եւ զաղիւսակ հին տառ յարգի, նաեւ զնոխ վերադասի որ համայնից է բաղձալի… բազմաց առնէր արդիւնս եւ յոլովից գրէր տառս գեղեցիկ ոչ միայն ընկերակցած այլ եւ մենաստանից»[17]:

Գ. Սկևռացու գրչությամբ ձեռագրերը գնահատվել են որպես «ազնիվ», «լավ», «ընտիր», «գեղապաճույճ» օրինակներ, իսկ իրեն՝ «գրչաց մեծագունի»:

Հովհաննես գրիչը գրում է. «...Ես մեղաւորս Յոհաննէս, ըստ կարի զփափաքս իմ լցի յանկ ելանելովս եւ այս եղեւ ներոլովն Աստուծոյ, զի յանարժանէս թերեւս արժանաւոր այս գործ եղեւ յանկեալ եւ զայս ոչ ասեմ վասն գեղապաճոյճ շարագրութեանցս, այլ վասն ազնիւ աւրինակիս, զոր սուրբ եւ երանեալ վարդապետին Գէորգեայ ձեռացն շարահիւսեալք էին...»[18]:

Կարապետ գրիչն իր օրինակած ձեռագիր Ավետարանը համարում է «գոյժ ազնիւ», քանի որ այն է «ուղղեալ մեծիմաստ եւ սուրբ վարդապետն Գէորգ Լամբրունեցի»[19]: Հովհաննես գրիչը 1358 թ. օրինակել է Ավետարան «ի լաւ և յընտիր աւրինա-

[14] Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, 1962 թ., Երևան:

[15] Ալիշան, Նշվ. աշխատությունը, էջ 103:

[16] Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885 թ., էջ 105: Մ. Երզնկացու այս նկարագրությանը լրիվ համապատասխանում է Գ. Սկևռացու 1267-ին ընդօրինակած «Տօնապատճառ» ժողովածուի գրչությունը:

[17] Հ. Տաշյան, Մայր ցուցակ ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի ի Վիեննա, 1895 թ., էջ 46:

[18] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1901 թ., էջ 19-20:

[19] Տեր-Ավետիսյան, Մայր ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Վիեննա, 1970 թ., էջ 64:

կէ հռչակիր եւ գերիմաստ վարդապետին եւ քաջ րաբունոյն Գէորգեայ Սկեւռացւոյ»[20]:

Մեկ այլ գրիչ, օրինակելով Գ. Սկևռացու բնագիր օրինակից, հիշատակում է. «Ով երանեալ սուրբ ընթերցող ... ի տեսանելն զանհեղեղ եւ զանարհեստ գրիչս՝ աղաչեմ մի մեղադրէք, զի թէեւ գոյր կարողութիւն փոքր մի այլ լաւ գրել, սակայն ոչ կարացի, զի կարի ստիպով յարտորք էի վասն օրինակին եւ միայն յաւարտ եղանելոյն էր փոյթն եւ ոչ արուեստ գրոցն, զի թէեւ գիրս յոռի է, բայց օրինակիս ընտրութիւնն մեծարգոյ է ...»[21]:

Սկևռացու բնագիր օրինակները, լինելով կատարյալ ստեղծագործություններ, պահվել են արքունական գրադարաններում որպես արքունի հարստություններ: Նրանցից օգտվելը եղել է բավականին դժվար: Այդ մասին է գրում Գ. Սկևռացու աշակերտ Երեմիա քահանան ՄՄ № 4825 ձեռագրի հիշատակարանում. «Արդ, ես զայս տեսեալ՝ վերջինս ի բնաւիցս, փցնամիտ աշակերտս սորին Գէորգեայ, անարժան քահանայ, պիտակացործ անուանեալ Երեմիայ յորջորջեալ, հետիոտն աշխատեալ, երկու անգամ առ թագաւորն իմ երթեալ, խնդրեցի զարարեալ աւրինակն...»[22]:

Արդ, որո՞նք են այն կովանները, որոնք խոսում են անստորագիր ձեռագրերի մանրանկարների՝ Գ. Սկևռացու, և ոչ մեկ այլ ուրիշի, հեղինակության օգտին:

Մանրանկարչության պատմության մեջ, ինչպես նշեցինք, այս ձեռագրերի հեղինակ է ենթադրվում Թ. Ռոսլինը: Սակայն վերջինիս ստորագրությամբ 1268-ից հետո մեզ ձեռագիր չի հասել[23]: Այս հանգամանքը թույլ է տալիս մանրանկարները համարել մեկ այլ ոչ պակաս տաղանդավոր նկարչի ստեղծագործություններ[24]:

Գ. Սկևռացու ծննդյան թվականը հայտնի չէ: Ղ. Ալիշանը ենթադրում է, որ Սկևռացին ծնվել է «ի մերձ ի կէս ԺԳ դարու»[25]: Ավելի ստույգ թվական նշվում է 1246 կամ 1247 թվականները[26]: Այսպիսով, 13-րդ դարի 80-ական թվականները Սկևռացու համար եղել են ստեղծագործական ակտիվ և հասուն մի ժամանակաշրջան[27], որի հետ է կապված մեզ հասած նրա գրչական ժառանգությունը, և Մաշտոցյան

---

[20] Վենետիկի ձեռագրաց ցուցակ, հտ. Ա, էջ 500: Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950 թ., էջ 434:

[21] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 103:

[22] ՄՄ ձեռ. № 4825, էջ 207բ: Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1984, էջ 751: ՄՄ № 9422 ձեռագիրը կոչվել է «Հեթում թագաւորի խագինի սուրբ Աւետարան»՝ Հեթումի գանձատան Ավետարան:

[23] Ռոսլինի ստորագրությամբ հայտնի են 7 ձեռագրեր, որոնք ստեղծվել են 1256-68 թթ. ընթացքում:

[24] Հետաքրքիր հանգամանք է նկատում Լ. Դուռնովոն. Ռոսլինյան 7 ստորագիր ձեռագրերից 5-ը պահվել են Երուսաղեմում, իսկ անստորագիր հեղինակի ձեռագրերը՝ Հայաստանում: Հեղինակը ենթադրում է, որ Կիլիկիայում էլ այդ ձեռագրերը նույնպես պահվել են տարբեր վայրերում: Л. А. Дурново, Очерки изобразительного искуства средневековой Армении, Москва, 1979 г., էջ 238:

[25] Ղ. Ալիշան, Նշվ. աշխատությունը, էջ 102:

[26] Է. Բաղդասարյան, Նշվ. աշխատությունը, էջ 405:

[27] Գ. Սկևռացին 13-րդ դարի 80-ական թվականներին եղել է շուրջ 40 տարեկան:

Մատենադարանի վերոհիշյալ չորս ձեռագրերի գրչությունն ու մանրանկարչությունը:

Անստորագիր ձեռագրերի Գ. Սկեւռացու հեղինակության օգտին կա մի այլ հանգամանք եւս:

Ուսումը շարունակելու նպատակով Սկեւռացին, ինչպես նշում է վարքագիրը, «... գնաց յԱրեւելս առ երջանիկ րաբունին Վարդան»[28]: Հայաստանում հավանաբար ուսանել է 6-7 տարի, ինչպես նկատում է Է. Բաղդասարյանը՝ 1264-65-ից մինչեւ 1270-71 թվականները[29]: Վերադառնալով Կիլիկիա, Սկեւռացին «յայտնի եղեւ մեծամեծաց եւ փոքունց, Հայրապետին եւ եպիսկոպոսացն, թագաւորին եւ իշխանացն... Եւ ամենեքեան, իբր ճշմարիտ եւ հարկաւոր կերակուր ի բերան ունէին զսուրբս եւ ըղձային բանից բերանոյ նորա...»[30]:

Գ. Սկեւռացին գրավում է Լեւոն Բ թագավորի ուշադրությունը. «... զայս ամենայն տեսեալ ցնծայր եւ հրճուալից լեալ եռայր հոգւով ի սէր սրբոյս ... եւ թագաւորն զսորայս միայն համարէր ճշմարիտ զբան եւ ամենայն եկեղեցի կախեալ կայր զհրամանէ սրբոյս»[31]: Թագավորի մահից հետո գահն անցնում է որդուն՝ Հեթումին, որը նույնպես «սիրէր զսուրբն»[32]:

Վկայակոչված հատվածները հիմք են տալիս ենթադրելու, որ Սկեւռացին եղել է արքունական խորհրդատու[33]: Գ. Սկեւռացին նաեւ համագործակցել է լամբրոնյան տերերի հետ՝ կատարելով նրանց պատվերները: Հեթում Բ-ի խնդրանքով գրել է Եսայու մարգարության մեկնություն, իսկ Հովհաննես արքաեղբոր պատվերով՝ «Համառօտ մեկնութիւն Գործոց Առաքելոց»[34], և 1283-ին՝ «Դրուատ ներբողական

---

[28] ՄՄ ձեռ. № 8356, էջ 202բ:

[29] Այս մասին վարքագիրը ոչինչ չի հայտնում: Այս շրջանի մանրամասներ պարզում է ՄՄ □ 3082 «Տօնապատճառ» ժողովածուի Գ. Սկեւռացու ինքնագիր հիշատակարանը:

[30] ՄՄ ձեռ. № 8356, էջ 205ա:

[31] Նույնը, էջ 211ա, բ: Լեւոն Բ-ի թագավորության շրջանում, ինչպես գրում է Ստեփանոս դպիրը, «սիւնք եկեղեցւոյ սրբոյս համախոհքն ... ծաղկեալ ցնծայր եկեղեցի պսակաւոր հանդիսին եւ բազմապաճոյճ շքաւք զարդարէր զանձն տեղով պանծալի...»:

[32] Նույնը, էջ 211բ:

[33] Վարքագիրը մի հետաքրքիր տեղեկություն էլ է հայտնում. երբ մահանում է Հայոց Հայրապետը, կաթողիկոսության թեկնածու են առաջադրում Գ. Սկեւռացուն. «Թագաւորն՝ իշխանաւքն եւ եպիսկոպոսաւք, նաեւ ռամիկքն՝ կամաւք եւ մանկտաւք զսուրբս վերաձայնէին արժանի լինել աթոռոյ սրբոյն Գրիգորի» (էջ 205բ): Սակայն Սկեւռացին հրաժարվում է. «Եւ Հայրապետն տայր նմա ձիրս առաւել եւ նա ոչ առ: Ցայնժամ զգեստս, զոր արժան էր առնուլն, ետ նմա եւ ետ յոլով հարկ առնելոյն եւ աղաչանաւք հրամայէր առաջի իւր զգենուլ եւ սուրբս հակառակէր: Եւ երկարեալ Հայրապետն զաղաչանսն զգեցոյց նմա, եւ նա այնմ աւուր միայն զգեցաւ եւ ի միւս աւրն ետ զգեստն որոց եւ պատահեաց եւ ինքն զխաղաղական կեանս ողջունէր եւ անպաճոյճ եւ պատշաճ զգեստուք զմարմին ծածկէր, որպէս եւ կրաւնաւորաց վայել էր» (էջ 206ա):

[34] Այս երկու մեկնությունները Գ. Լամբրոնացին հորինել է 1292-ից առաջ, քանի որ այս թվականին արդեն կատարվել են ընդօրինակումներ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 103: Պալյան, Ցուցակ Կեսարիո, էջ 56-57:

բանք յաստուածաբան ատենաբանիչն Յովհաննէս» գործերը:

Մատենադարանյան չորս ձեռագրերից երկուսը (№№ 978, 9422) նույնպես կապված են Հեթում թագավորի անվան հետ և հայտնի են «Հեթում թագավորի Ճաշոցը»[35] և «Հեթումի գանձարանի Ավետարան» անուններով: Իսկ ՄՄ № 197 Ավետարանի պատվիրատուն և մի մասի գրիչը Հովհաննես եպիսկոպոս արքաեղբայրն է:

Լ. Ազարյանը ՄՄ № 9422 ձեռագիրը քննելիս նկատում է. «Այս պատկերների բնական ձևերը վկայում են, որ նկարիչը աշխատում է վերարտադրել այն, ինչ տեսնում է բնության մեջ: Հավանաբար նման տեսարաններ նա ականատես է եղել կիլիկյան իշխանների և թագավորների պալատներում»[36]:

Այս նկատառումը ևս ապացուցում է Գ. Սկևռացու արքունիքի հետ համագործակցությունը:

Այն, որ Գ. Սկևռացին հանճարեղ վրձին ունեցող անձնավորություն է եղել, հաստատում են և՛ «գեղազարդ շքով» նկարված վերոհիշյալ կիլիկյան չորս ձեռագրերը, և՛ նրանց «տեսնողները» ու «վայելողները»:

Աշխատելով թագավորի և եղբոր համար, հիմք կա եզրակացնելու, որ Գ. Սկևռացին եղել է ճանաչված արքունի նկարիչ:

Սակայն ինչո՞ւ այս հուշարձանները անստորագիր են: Հավանական է, որ Գ. Սկևռացին, որը ժամանակին ճանաչվել է որպես հայտնի գրիչ և նկարիչ, որի նկարչական արվեստը «զոր տեսողացն եւ վայելողացն յայտնի է», և կատարել է ոչ պակաս հայտնի պատվերներ, որոնք, հավանաբար, պատվիրվել են մեծ հանդիսությունների առիթով, կարիք չի ունեցել կամ պարզապես սովորություն չի ունեցել իր անունը թողնելու[37]:

Այսպիսով, Գ. Սկևռացին, որն իր ժամանակակիցների և աշակերտների կողմից մեծարվել է որպես «գրչաց մեծագունի», «երջանիկ եւ լուսաքան րաբունապետ», «սրբազան եւ հոգելից հռետոր», «սուրբ եւ երանեալ վարդապետ», «մեծիմաստ», «գերիմաց վարդապետ եւ քաջ րաբունոյն», «լուսատրիչ», «արդիւնական եւ աշխատասէր վարդապետ», «եռամեծար», «տիեզերահռչակ», եղել է 13-րդ դարի 2-րդ կեսի հայ գրքի գեղարվեստական ձևավորման հայտնի վարպետներից մեկը:

[35] ՄՄ № 979 ձեռագիրը Սկևռացու անվան հետ է կապվում որպես խմբագիր և պատմական հիշատակարանի հեղինակ: Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի հայկական ձեռագրերի հիշատակարաններ, էջ 582:

[36] Լ. Ազարյան, Նշվ. աշխ., էջ 145:

[37] Բացառություն են «Յոնապատճառ» (1267 թ.) և «Յանացոյց» (1300 թ.) ժողովածուները:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕՐՀՆԵՑ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օրհնվեց Շիրակի թեմի Մարմաշեն գյուղի վերանորոգված եկեղեցին:

Մարմաշենի վանական համալիրը երեք տաճարների մի գեղեցիկ համադրություն է, 11-րդ դ. կառույց և պատկանում է Անիի ճարտարապետական դպրոցին: Այն մեծապես վնասվել էր հատկապես 1988-ի երկրաշարժի հետևանքով: 1991 թ. իտալացի ճարտարապետներ Գայանե Կազնատին (մայրը հայ) և Մարիա Սիմոն ձեռնարկեցին վանքի վերանորոգության աշխատանքները: Հայ-իտալական վարպետների համատեղ ջանքերով վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին Հայաստանում Իտալիայի դեսպանության հովանավորությամբ և Հայաստանի Հուշարձանների պահպանության վարչության օժանդակությամբ:

Արարողության սկզբում Իտալիայի դեսպանը, Գայանե Կազնատին, Հուշարձանների պահպանության վարչության պետ Գագիկ Գյուրջյանը և ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը հանգամանալից ներկայացրեցին եկեղեցու վերակառուցման աշխատանքների ընթացքը:

Ապա Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքի խոսքը հղեց Իտալիայի դեսպանին, հանձին նրա՝ իտալացի ժողովրդին, վերնորոգության աշխատանքները նախաձեռնող և իրականացնող Գայանե Կազնատիին ու նրա աշխատակից ընկերներին, Հուշարձանների պահպանության վարչությանը և բոլոր նրանց, ովքեր աջակցել են այս աստվածահաճո ձեռնարկի իրականացմանը: Նորին Սրբությունը, անդրադառնալով հատկապես եկեղեցաշինության նշանակությանն ու կարևոր խորհրդին, նշեց. *«Այս եկեղեցին մեզ համար միայն պատմական հուշակոթող չէ: Եկեղեցու նորոգությունը նշանակում է նորոգություն հավատքի, ժողովրդի, նորոգություն Աստված-մարդ խախտված հարաբերության: Այսօր մենք այս վերանորոգված հարաբերության ճանապարհի անդրանիկ ուխտավորներն ենք, որ եկել ենք աղոթքի կանգնելու այս նվիրական տաճարի կամարների ներքո, ուր փառավորվում է եղբայրությունը Իտալիո և հայ ժողովուրդների: Հոգևոր արժեքների վերանորոգումը, պահպանությունը և այն սերունդներին ավանդելը միայն բավարար չեն: Այդ արժեքները պետք է դառնան ապրող սերնդի կյանքի անբաժանելի մասնիկը, շաղախը նրանց կյանքի, գոյության ու լինելության»:*

Արարողության վերջում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց նաև նորապսակ Գայանե Կազնատիին ու նրա ամուսնուն: Նորին Սրբությանը ուղեկցում էին Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Սիոն եպս. Ադամյանը, Տ. Գեղարդ աբղ. Վահունին, Շիրակի թեմի հոգևոր հայրեր: Արարողությանը ներկա էին բազմաթիվ հյուրեր, հավատացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Օգոստոսի 14-ին, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցում Անգլիկան Եկեղեցու Քենթրբերիի Արքեպիսկոպոսության ներկայացուցիչ Հ. Ֆիլիպ Սթորր Վենթերի՝ Հայաստանից մեկնման հրաժեշտի երեկոն: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններն ու աշխատակազմի ներկայացուցիչները:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը՝ անդրադառնալով Հայ և Անգլիկան Եկեղեցիների հարաբերություններին ու կապերին և դրանց ամրապնդմանը նպաստած Հ. Ֆիլիպի վեցամյա արդյունավոր գործունեությանը: Սրբազան Հայրն իր խոսքում նշեց, որ անցնող վեց տարիների ընթացում Հ. Ֆիլիպը կազմակերպել է երջանկահիշատակ Գարեգին Ա-ի պաշտոնական այցելությունը Անգլիա, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի այցելությունը Հայաստան՝ 1700-ամյակի առիթով, երկու երկրների բանակներում ծառայող հոգևորականների փոխադարձ այցելություններն ու հանդիպումները և Մայր Աթոռի երիտասարդ միաբանների ուսումն Անգլիայի աստվածաբանական համալսարաններում:

Ի գնահատություն Հ. Ֆիլիպի ծառայությունների, Հայրապետական սրբատառ Կոնդակով նրան շնորհվեց Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան (տե՛ս էջ 27): Հավարտ հանդիսության Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքը եղեց ներկաներին՝ բարձր գնահատելով Հ. Ֆիլիպի վեցամյա գործունեությունը Հայաստանում և նրա մատուցած ծառայությունները երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում:

Հանդիսությանը երաժշտական համարների կատարմամբ հանդես եկավ Մնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի «Լուսավորիչ» երգչախումբը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՏԱՐՎԵՑ ՆՈՐ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀՈՂՕՐՀՆԵՔԸ

Սույն թվականի օգոստոսի 31-ի երեկոյան Մայր Աթոռի շուրջը ծավալված մեծ շինարարականներին ավելացավ ևս մեկը, քանզի հիմք դրվեց Մայրավանքի միաբանական մի նոր կացարանի շինարարությանը: Երեկոյան ժամերգությունից առաջ Մայրավանքիս միաբանները, գլխավորությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ շինարարության հովանավորությունը ստանձնած բարեբարի քրոջ՝ Լուիզ-Սիմոն Մանուկյանի և նրա դստեր, ինչպես նաև հավաքված մեծաթիվ հավատացյալ ժողովրդի, կատարեցին հողօրհնեքը կառուցվող միաբանական նոր շենքի: Արարողությանը պատշաճող ավետարանական ընթերցվածներից հետո Նորին Սրբությունն օրհնեց հիմքերը: Ապա նաև մի գալարափաթեթով արձանագրություն դրվեց հիմքերի մեջ, ուր նշվում է կառուցման թվականը, բարերարի անունը և թե ո՞ր կաթողիկոսի գահակալության օրոք է կատարվել կառույցի շինարարությունը:

Հիմքերի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց բարերարներին և ներկաներին՝ քաջառողջություն և երկար տարիների արդյունաշատ ու հայրենանվեր կյանք մաղթելով բարերարին, ավելացրեց. «Մեր աղոթքն է, որ Տերը զորացնի մեր Եկեղեցին և ուժ, կորով պարգևի մեզ՝ եկեղեցականներիս, մեր առաքելությունն ամբողջանվեր իրականացնելու և արդարացնելու այն բոլոր հույսերն ու ակնկալիքները, որ ունի ժողովուրդը մեր հանդեպ»:

Ինչպես ասացինք, սույն եկեղեցաշեն ձեռնարկն իրականացվում է ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանի որդու՝ Ռիչարդ Մանուկյանի հովանավորությամբ և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ռուբեն Ազատյանի նախագծով: Կառուցվող երկհարկանի շենքն ունենալու է 50 միաբանական խուց և իր ավարտին կհասնի մինչև 2004 թ.:

*ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

# ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՆ

Արևի առաջին շողերի հետ արթնացած գյումրեցին վեր խառնեց խալյաքը, փառք տվեց Արարչին՝ նոր օրվա բերկրանքի պետությանն արժանանալու համար, և քայլերն ուղղեց դեպի նորակառույց Անի թաղամաս: Օգոստոսյան այգաբացը պոնական էր ու խորախորհուրդ. իրականության էր փոխարկվել նրա թաքուն փայփայած երազներից մեկը՝ ավերակներից փյունիկի պես հառնող հարազատ քաղաքի երիտասարդ թաղամասում տեսնել մի նոր աղոթատուն, որտ, բարեպաշտ հայրենակիցների հետ, իր աղոթքը կառաքի առ Բարձրյալը:

Տեղ հասավ, խառնվեց մյուս ներկաներին և սրտի թրթիռով սպասեց նրանց, ովքեր դույզն-ինչ լումա ունեին այդ գործում և կամ ում շնորհիվ երազը փոխարկվել էր իրականության:

### ՔԱՂԱՔԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

Օգոստոսի 29-ի վաղ առավոտյան, ժամը 9.45-ին, Գյումրի ուղևորված բարձրաստիճան հյուրերին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր շքախմբի հետ, Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյին, բարձրաստիճան պետական, դիվանագիտական այրերին, ինչպես նաև բարերարներ տեր և տիկին Սարգիս և Բաբի Հակոբյաններին ու նրանց թոռնուհուն և այլ հրավիրյալների քաղաքի սահմանագծին դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, քաղաքապետ Վարդան Ղուկասյանը և տեղական իշխանությունների այլ ներկայացուցիչներ և առաջնորդեցին դեպի նորակառույց Ս. Հակոբ եկեղեցի:

### ՄՈՒՏՔ «ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ

Այստեղ պատվարժան հյուրերին դիմավորեցին թեմի հոգևորականաց դասը և մեծաթիվ հավատացյալներ ոչ միայն Գյումրիից, այլև մարզի այլ բնակավայրերից ու Հայաստան աշխարհի տարբեր տարածաշրջաններից:

Հանդիսավոր թափորը Նորին Սրբության «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդեց եկեղեցի, ուր քիչ հետո պետք է կատարվեր Խորանի և Սեղանի հանդիսավոր օծումը Սրբալույս Մյուռոնով՝ ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

### ՄԵԿ ՕՐ ԱՌԱՋ...

Օգոստոսի 28-ի երեկոյան դարձյալ մարդաշատ էր Ս. Հակոբ եկեղեցու բակը: Հավատավոր գյումրեցիների ներկայությամբ առաջնորդ Սրբազանը, քահանայից

դասի հետ, կատարեց եկեղեցու լվացումը և օծումը՝ հաջորդ օրվան թողնելով Ս. Խորանի և Ս. Սեղանի օծումը:

Անի թաղամասում վեր խոյացած այս հրաշակերտ կառույցն ունի իր արարման պատմությունը: Ամերիկաբնակ մեր հայրենակից բարերարների ընտանիքում երբ ծնվում է Անի թոռնուհին, նրանք ցանկություն են հայտնում նոր եկեղեցի կառուցել Բագրատունյաց մայրաքաղաքի հազար ու մի եկեղեցիների կողքին: Սակայն քանի որ այդ երազանքն առայժմ անհնար էր իրագործել, ուստի Նորին Սուրբ Օծության խորհրդով, վճռում են իրենց երազանքը կյանքի կոչել Գյումրիի Անի թաղամասում:

Ջվարթնոցատիպ տաճարը նախագծում է, այսօր արդեն ցավոք մեզանից հեռացած, հայտնի ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը, ում այրին ներկա գտնվեց եկեղեցու օծմանը:

### *ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ՕԾՈՒՄ*

Երեկոյան ժամը 19.00-ին սկսվեց եկեղեցու լվացումը՝ համաձայն նախնյաց սրբազան կանոնի: Ըստ այդմ լվացվեց ողջ աղոթատունը նախ սովորական ջրով, ապա՝ գինով: Որից հետո հանդիսավորաբար կատարվեց օծումը: Հավուր պատշաճի զգեստավորված քահանայից դասը, գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, թափոր կազմած և «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը: Հենց մուտքի մոտ, դրսի կողմից, համաձայն «Մաշտոց» ծիսարանի, ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ և համապատասխան սաղմոսներ:

«Բաց մեզ Տեր» շարականի երգեցողությունից հետո, մտնելով տաճար, դարձյալ Սուրբգրային ընթերցվածներով, սաղմոսասացությամբ և շարականների երգեցողությամբ, ձեռամբ առաջնորդ Սրբազանի, կատարվեց աղոթատան օծումը: Սրբալույս Մյուռոնով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու չորս անկյունները, սյուները և դռները:

Օգոստոսի 29-ի առավոտյան ժամը 10.15-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի և ընթերակայությամբ Տ. Փառեն եպս. Ավետիքյանի, սկսվեց Ս. Խորանի և Ս. Սեղանի լվացումն ու օծումը:

Օծման արարողությունից առաջ Նորին Սրբությանը, եկեղեցու բարերարներին, պատվարժան ներկաներին, կառուցող վարպետներին, ինչպես նաև բարեպաշտ գյումրեցիներին շնորհակալության ու երախտիքի խոսքեր ուղղեց Միքայել Սրբազանը՝ շեշտելով, որ «Ավելի լավ է տալը, քան վերցնելը, խոնարհվելը, քան սեփական անձը վեր դասելը: Այս սկզբունքով առաջնորդվելով էր, որ մեր բարերարներն այս նորակառույց եկեղեցիով իրենց սիրտը կապեցին Գյումրիի Անի թաղամասի հետ, կառուցեցին այս սքանչելի տաճարը՝ որպես նվեր մեր բարեպաշտ հայորդիներին»:

Այնուհետև օծվեցին նաև 12 առաքյալների և մեր հավատո հոր և առաջին Հայրապետի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի սյուները: «Պահպանիչ» աղոթքից հետո Գարեգին



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ Է ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԱՆԻ ԹՈՌՆՈՒՀԻՆ



ՆՈՐԱՕԾ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՆ

Բ Կաթողիկոսը ներկաներին ուղղեց իր Հայրական պատգամ-խորհուրդն ու շնորհավորանքի ջերմ խոսքը՝ ասելով.

*«Սիրելի բարեպաշտ գյումրեցի հավատացյալներ,*
*Գյումրիի մարզային իշխանությունների ներկայացուցիչներ,*
*Միացյալ Նահանգների մեծարգո դեսպան,*
*Պատվարժան հյուրեր.*

*Գոհության աղոթք ու փառք ենք առաքում առ Աստված, որ արժանի դարձրեց մեզ տեսնել հայոց անկախ պետականության վերահաստատումը և ազատության ու մեր նորոգ հավատի խորհուրդը մարմնավորող ևս մեկ եկեղեցու նորակառույցը: Թոթափած անաստվածության բռնությունը, այսօր մենք հնարավորություն ունենք վերստին վեր խոյացնել մեր խոնարհված եկեղեցիները, նաև կառուցել նորերը, որպեսզի հավատավոր մեր ժողովուրդը կարողանա սուրբ տաճարներում իր սրտի խոսքն ուղղել Աստծուն: Վերջին շրջանում շատ եկեղեցիներ իրենց դռները բացեցին հավատացյալների առջև: Եվ այսօր բերկրալի հոգով օրհնաբանում ենք Տիրոջը, որ արժանի է դարձնում Մեզ Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցու օծումը կատարելու ուրախությունն ապրելու:*

*Մծբնա մեծ Հայրապետի՝ հավատի պահանջկոտ ու աննահանջ առաքյալի անունով օծված այս եկեղեցին, սիրելի գյումրեցիներ, աստվածային պարգև է Ձեր քաղաքին և մեզ բոլորիս: Լուսեղեն այս հարկի տակ դուք պիտի կանգնեք աղոթքի, թողություն հայցեք Բարձրյալից, խաղաղություն ու բարօրություն՝ մեր Հայրենիքին, օրհնություն՝ մեր ժողովրդին, որպեսզի հավատով զորացած, հույսի ու սիրո մեջ հաստատված աստվածապարգև մեր կյանքը ապրենք իբրև հաղթություն:*

*Եկեղեցու օծման այս բերկրալի առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ենք ուղղում Մայր Աթոռիս մեծազնիվ բարերարին՝ Սարգիս Հակոբյանին, ինչպես նաև մեր սիրելի բարերարի թոռնուհուն, ով իր ձեռնեղով մասնավոր պատճառը եղավ, որպեսզի Ձեր քաղաքասում կառուցվի այս շքեղաշուք եկեղեցին:*

*Փառք Տիրոջը, որ ծնողաց զորավոր սերը մեր բարերարների հոգում դարձավ եկեղեցի կառուցելու հանձնառություն: Սուրբ Հակոբ եկեղեցին նաև վկայությունն է մեր բարերարների՝ առ Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին ունեցած սիրո, որը նրանց ԱՄՆ-ից բերեց Հայաստան, որպեսզի Ձեր քաղաքասում, իբրև աղետի վերքերի ամոքության նոր արտահայտություն, հառնի նաև Տաճար Աստծո և տուն աղոթից»:*

Վեհափառ Հայրապետը օծման այս բերկրալի առիթով նորաօծ եկեղեցուն նվիրեց Ս. Հաղորդության սկիհ, որպեսզի եկեղեցի եկող հավատացյալը Տիրոջ Մարմնին ու Արյանը հաղորդ դառնա շնորհիվ հենց այդ սկիհից բաշխվող նշխարի:

Իր գնահատանքը հայտնելով թեմակալ առաջնորդին և բարերարներին՝ Վեհափառ Հայրապետը 1700-ամյակի պատվո հուշանշան հանձնեց բարերարներ տեր և տիկին Հակոբյաններին, իսկ նրանց թոռնուհուն՝ փոքրիկ Անիին, հրավիրելով Ս. Խորան, նվիրեց եկեղեցու մանրակերտ պատկերը և ոսկյա խաչ:

*ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ*

Օծման հանդիսավոր արարողությունից անմիջապես հետո, ժամը 11.05-ին, սրբագործված փաճարում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Եպիսկոպոսական հանդիսավոր Ս. Պատարագի ընթացքում նորոգ օծյալ եկեղեցում Ս. Հաղորդություն ստացան մեծաթիվ հավատացյալներ:

Հավարտ Ս. Պատարագի, Հայրապետական մաղթերգի երգեցողությամբ, հանդիսավոր թափորն Ամենայն Հայոց Վեհափառ Հորն իր շքախմբի և բարձրաստիճան հյուրերի հետ առաջնորդեց եկեղեցու բակ: Այստեղ մեծաթիվ ներկաներին շնորհավորանքի ու երախտիքի խոսքեր ասացին մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանը: Ապա քաղաքապետը պատվավոր քաղաքացու կոչում շնորհեց տեր և տիկին Սարգիս և Բաբի Հակոբյաններին:

Բարեպաշտ գյումրեցիներին սրտի խոսք ասաց նաև Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյը:

Տոնական փրամադրությունը շարունակվեց եկեղեցուց դուրս ես: Բարձրաստիճան հյուրերը ներկա գտնվեցին հենց նորաօծ եկեղեցու բակում կազմակերպված գրական-գեղարվեստական ճոխ հայտագրին, որին մասնակցում էին Գյումրիի արվեստների քոլեջի, Առաջնորդարանի մշակույթի բաժնի և այլ երգի ու պարի համույթներ:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Մեսրոպ եպս. Զուլջյանը, Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, գավազանակիր Տ. Գեղարդ աբղ. Վահունին, հյուրաբար Հայաստանում գտնվող Մայր Աթոռի բարերար Լուիզ-Սիմոն Մանուկյանը, պաշտոնատար այլ անձինք:

Պատվավոր հյուրերի թվում էին Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյը, Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի Կաթոլիկ հայերի առաջնորդ և Սեբաստիո հայոց Արքեպիսկոպոս հայր Ներսես Տեր-Ներսեսյանը, պետական և դիվանագիտական բարձրաստիճան պաշտոնյաներ, մարզային, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ ու մեծաթիվ հրավիրյալներ Հայաստանի տարբեր շրջաններից:

*ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# «Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԸ» ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Ապրիլի 16-ից հուլիսի 13-ը Կաթոլիկ Եկեղեցու Վիեննայի Արքեպիսկոպոսարանի թանգարանում կազմակերպվել էր «Հայաստանի ոսկին» խորագրով ցուցահանդեսը, որում ցուցադրվում էին Մայր Աթոռ Ս Էջմիածնի թանգարաններում պահվող Հայոց Եկեղեցու ավանդական սրբություններից և հայ եկեղեցական արվեստի գործերից 67 ցուցանմուշ, որոնց թվում Նոյյան տապանի մասանց պահարանը, Ս. Թադեոս առաքյալի մատունքով աջը, Խոտակերաց Ս. Նշանը, Բագրատունյաց շրջանի Անին խորհրդանշող Աշոտ Երկաթ թագավորի խաչը և այլ գործեր:

Ցուցանմուշների ընտրության և ցուցահանդեսի կազմակերպման հայաստանյան բաժնի աշխատանքներն իրականացրեց Մայր Աթոռի վարչա-կազմակերպական գործերի կառավարիչ և թանգարանների պատասխանատու վարիչ-տնօրեն Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Առաջին անգամ Մայր Աթոռի այս գանձերն արտերկրում ցուցադրվել են 1997 թ., Մոսկվայում՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի առիթով Կրեմլում կազմակերպված ցուցահանդեսում: Հետագայում նմանատիպ ցուցահանդեսներ կազմակերպվել են աշխարհի տարբեր երկրներում՝ Ֆինլանդիայում, Անգլիայում, Հունաստանում, Վատիկանում, Հոլանդիայում և այլուր:

Վիեննայում բացված ցուցահանդեսը կազմակերպվել էր Արևելյան Եկեղեցիները, նրանց մշակույթն ու արվեստը արևմտյան աշխարհին ներկայացնող «Պրո Օրիենտե» կազմակերպության նախաձեռնությամբ: Վիեննայի համալսարանի պրոֆեսորներ տեր և տիկին Հելմուտ և Հայդե Բուշհաուզենների աշխատասիրությամբ մինչ ցուցահանդեսի բացումը հրապարակվել էր նաև գունազարդ կատալոգը, որը սկսվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Վիեննայի կարդինալ Քրիստոֆեր Շոյնբորնի ողջույնի խոսքերով:

Կատալոգում ներկայացված ցուցանմուշների գունավոր լուսանկարներն ուղեկցվում են նրանց արվեստագիտական վերլուծությամբ: Կատալոգը պատմական տեղեկություններ է հաղորդում նաև Վիեննայի հայ համայնքի մասին: Քանի որ «Պրո Օրիենտե» կազմակերպության գլխավոր նպատակներից մեկը մշակույթի բնագավառում Արևմտյան և Արևելյան Եկեղեցիների համադրական ներկայացումն է նրանց միջև եղած ընդհանրությունների ու յուրահատկությունների վերհանմամբ, ուստի կազմակերպիչների գեղեցիկ մտահղացմամբ հայկական նյութը ցուցադրվում էր թանգարանի արևմտաեվրոպական արվեստի նմուշներին զուգահեռ: Շնորհիվ նման մոտեցման, այցելուներին առավել ցայտուն կերպով են տեսանելի դառնում եկեղեցական երկու արվեստների պատկերագրությունը և ծիսաարարողական սպասքի ու հանդերձների կառուցվածքային և կոմպոզիցիոն բնորոշ գծերը:

Ցուցահանդեսի այս նպատակաուղղվածությունը նկատի ունենալով է, որ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը ողջույնի և օրհնության իր խոսքում գրել էր. *«Հայոց Հայրապետիս համար առանձնակի ուրախություն է, որ ցուցադրությունը կազմակերպում է «Պրո Օրիենտե» էկումենիկ կազմակերպությունը՝ քրիստոնյա աշխարհին ծանոթ Եկեղեցիների միությանն ուղղված անհոգնաբեկ գործունեությամբ, ի մասնավորի նվիրված Կաթոլիկ և Հին Արևելյան Եկեղեցիների միջև փոխադարձ ճանաչողության և համագործակցության զորացմանը»:*

Ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ավելի քան 300 մտավորականներ, արվեստագետներ ու ավստրիահայ գաղութի ներկայացուցիչներ: Գեղարվեստական հայտագրով ուղեկցվող հանդիսության ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկան Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Վիեննայի Արքեպիսկոպոս Քրիստոֆ Շյոնբորնը, Վիեննայի Արքեպիսկոպոսարանի թանգարանի տնօրեն Գերհարդ Էղերնդորֆերը և «Պրո Օրիենտե»-ի գործադիր քարտուղար Ֆիլիպ Հարնոնքուրտը:

Ցուցահանդեսի հաջողության մասին է վկայում այն հանգամանքը, որ, ինչպես կազմակերպիչներն էին նշում, այս ամիսների ընթացքում ցուցադրությունը դիտելու եկան մեծ թվով այցելուներ, և վաճառվեց կատալոգների մեծ մասը, ինչպես նաև ցուցահանդեսը լայնորեն մեկնաբանվեց ավստրիական մամուլով և հեռուստատեսությամբ: Այս ցուցադրությանը առանձին էջ էր նվիրված «Պրո Օրիենտե»-ի ինտերնետային բաժնում:

Ավստրիայում ընդունված ավանդույթով, այցելուների մեծ հոսք է լինում հատկապես ցուցադրության վերջին շաբաթվա ընթացքում: Վիեննայի աչքի ընկնող տարբեր տեղերում ցուցահանդեսի փակցված ազդագրերի վրա վերջին շաբաթվա ընթացքում կարմիրով հատուկ ընդգծվեց, որ արդեն ցուցադրության վերջին շաբաթն է, և Վիեննայի շատ բնակիչներ ու զբոսաշրջիկներ այդ յոթ օրերի ընթացքում շտապեցին տեսնելու այն՝ ցուցադրության դիտմանը պատրաստվելով մինչ այդ գնված կատալոգներով և առանձնակի ուշադրությամբ դիտելով այդ հրապարակությունից իրենց ուշադրությունը գրաված ցուցանմուշները:

Ցուցահանդեսը փակվեց հուլիսի 13-ին, և Մայր Աթոռի արժեքները բարեհաջող վերադարձվեցին Ս. Էջմիածին և այժմ վերստին ցուցադրվում են Մայր Տաճարի թանգարանում և Գանձատանը: Ցուցահանդեսում Մայր Աթոռը ներկայացնում էր պատերիս հեղինակը:

*ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ 40 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՍՏԱՑԱՆ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Օգոստոսի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունիքի թեմում վերապատրաստման երկամյա դասընթացներն ավարտած Գեղարքունիքի մարզի 40 ուսուցիչ-ուսուցչուհիների Հայ Առաքելական Եկեղեցու պատմության և կրոնի դասավանդման վկայականներ հանձնեց: Գեղարքունիքի թեմի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում ուսուցիչներին վկայականներ հանձնեցին առաջնորդական փոխանորդ Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը, Ս. Էջմիածնի ՔԴԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Ղևոնդ քահանա Մայիսյանը և թեմի Քարոզչական Կենտրոնի տնօրեն Տ. Գնել քահանա Սողոմոնյանը: Վկայագիր ստացած ուսուցիչները, մինչ նոր ուսումնական տարվա սկիզբը որակավորման նս մի քանի դասընթացներ անցնելուց հետո, Հայ Առաքելական Եկեղեցու պատմություն և քրիստոնեական կրոնի դրույթներ կդասավանդեն մարզի 23 հանրակրթական դպրոցներում, Գավառ քաղաքի երկու պրոֆտեխուսումնարաններում և ԵՊՀ-ի Գավառի մասնաճյուղում:

Արարողությունից հետո մասնակիցները մեկնեցին Այրիվանք՝ ուխտագնացության:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՃԱՊՈՆԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Օգոստոսի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ճապոնիա-Հայաստան բարեկամություն» միության անդամներին՝ միության նախագահ Նակաջիմա Հիդեհարուի գլխավորությամբ:

Շուրջ 15 տարի առաջ ստեղծված այս կազմակերպությունը նպատակ ունի ճապոնացի ժողովրդին ներկայացնել Հայաստանը, հայ ժողովրդին, նրա պատմությունը, մշակույթն ու լեզուն: Իսկ միության հայ անդամների ջանքերով ուսումնական այս տարվանից Հայաստանի հանրակրթական դպրոցներից մեկում ճապոներենը կարող է ուսուցանվել որպես օտար լեզու:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով ժողովուրդների բարեկամությունը, նկատեց, որ Ճապոնիան այն եզակի երկրներից է, ուր չկա հայկական գաղթօջախ, ինչն էլ առավել գնահատելի է դարձնում միության առաքելությունը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը հյուրերի խնդրանքով անդրադարձավ նաև հայ ժողովրդի կյանքում Եկեղեցու ունեցած կարևոր դերակատարությանը, ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը:



# ՀԱՆԳԻՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԿԵՊԵՆՅԱՆԻ

2002 թ. հուլիսի 12-ին, կյանքի 80-րդ տարում, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, ի Տեր հանգյավ Տ. Հակոբ ավագ քահանա Կեպենյանը:

Հանգուցյալ Տեր Հայրը ծնվել է 1922 թ. Թուրքիայի Բեյլան քաղաքում, բանվորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական դպրոցում:

1939 թ. ընտանիքով տեղափոխվել են Լիբանան՝ Սուր քաղաք:

1949 թ. ընտանիքով ներգաղթել են Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում, ուր մինչև 1966 թ. աշխատել է կահույքի գործարանում:

1966 թ. մասնակցել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի կրոնական և աստվածաբանական դասընթացներին: Նույն տարվա հունիս ամսին Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Տ. Վահան եպս. Տերյանի, ձեռնադրվել է քահանա:

1966-1971 թթ. պաշտոնավարել է Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում: Այնուհետև երջանկահիշատակ Վազգեն Ա-ի թույլտվությամբ տեղափոխվել է Լենինականի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցի, որտ և պաշտոնավարել է մինչև 2000 թ.:

Ի գնահատումն իր անբասիր և բազմանվեր ծառայության, Վազգեն Ա-ի տարբեր տարիների կոնդակներով Արժանապատիվ Տեր Հայրն արժանացել է լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունքի և ավագ քահանայության պատվի:

Հուլիսի 14-ին, Երևանի Ս. Աստվածածին եկեղեցում մատուցված Ս. Պատարագի ժամանակ, կատարվեց հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի:

Արժանապատիվ Տեր Հայրը ավանդապահ և բարեխիղճ հոգևորական էր: Ուր էլ որ նա ծառայել է, վայելել է համայնքի և իրեն ճանաչողների սերն ու հարգանքը:

Թող Աստված երկնային խաղաղություն պարգևի հանգուցյալ Տեր Հոր հոգուն:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Օգոստոսի 4-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ո՞չ սա է որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն եւ զմայր» (Յովհ. Զ 42) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Օգոստոսի 11-ին, կիրակի.- Զ. կիր. զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ արդ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր, առքա երեքեան. եւ մեծ քան զառսա՝ սէր է» (Ա Կորնթ. ԺԳ 13) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 82):

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Օգոստոսի 17-ին, շաբաթ.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի բաց գեղեցեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբղ. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Սուրբ եկեղեցեաս աղաչեսցուք զՏէր, զի առվաս փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 84):

***Օգոստոսի 18-ին, կիրակի.- ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին՝ Մարիամ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.- Բ. օր Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին արք. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համօրեն ննջեցելոց:

***Օգոստոսի 25-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 79):

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ հրջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (Август 2002)


1. **ДЬЯКОН ВАГЕ ОГАНИСЯН** – Его Преосвященство Джукка Паарма, Архиепископ Евангелическо-лютерианской церкви Финляндии, в Первопрестольном св. Эчмиадзине, 19-20 августа 2002 г. (с. 3-12).
2. **ИЕРОМОНАХ ОВАКИМ МАНУКЯН** – Представители Конференции Совета Национальных церквей США и католических епископов в Первопрестольном св. Эчмиадзине, 22-25 августа 2002 г. (с. 13-18).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


3. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, архимандриту Шнорку Гаспаряру по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 6 августа 2002 г., № 101 (с. 19-20).
4. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Масису Етеряну по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 30 августа 2002 г., № 107 (с. 21-22).
5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-же Шаке Етерян-Скейлен по случаю её награждения орденом «Св. Григория Просветителя», 30 августа 2002 г., № 108 (с. 23-24).
6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Преосвященству архиепископу Месропу Григоряну по случаю его награждения орденом «Св. Нерсеса Шнорали», 6 августа 2002 г., № 100 (с. 25-26).
7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Представителю Англиканской церкви Преподобному Филиппу Стору Вентеру по случаю его награждения орденом «Св. Нерсеса Шнорали», 12 августа 2002 г., № 103 (с. 27-28).
8. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Преосвященству архиепископу Сурену Гатарояну по случаю 40-летия его священнослужения и 25-летия руководства епархией Берии (Алеппо), 21 августа 2002 г., № 293 (с. 29-30).
9. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю правительственного решения о признании Духовной семинарии Геворкян высшим учебным заведением, 21 августа 2002 г., № 104 (с. 31-33).
10. Патриаршие награды (пожалование в течение августа 2002 г. энциклик, благословений, ордена «Св. Нерсеса Шнорали», трудовой оценки и чести старшинства раду духовных и светских лиц, оказавших неоценимые услуги Армянской церкви) – (с. 34).
11. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Аркадию Гукасяну по случаю его вторичного избрания на пост Нагорно-Карабахской Республики, 21 августа 2002 г. (с. 35).
12. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю начала учебного года, 1 сентября 2002 г. (с. 36).

13. Соглашение между Армянской Апостольской церковью и Правительством РА по поводу преподавания предмета «История Армянской церкви» в общеобразовательных школах Республики Армения, начиная с января 2003 г., 22 августа 2002 г. (с. 37).
14. Его Святейшество Патриарх Москвы и Всея Руси Алексий II и Его Преосвященство Джордж Керри, архиепископ Кантерберский, выразили свою поддержку Его Святейшеству Гарегину II, по поводу земельных угодий Армянского Патриархата Иерусалима, 21 августа 2002 г. (с. 38).
15. Патриаршим решением Его Святейшества Гарегина II иеромонах Хорен Оганисян был лишен сана, 8 августа 2002 г. (с. 39).

## Торжества, посвященные 70-летию со дня рождения светлой памяти Католикоса всех армян Гарегина I

16. Торжественное заседание в Национальной Академии наук РА, посвященное 70- летию со дня рождения светлой памяти Католикоса всех армян Гарегина I, 22 августа 2002 г. (с. 40).
17. Торжества, посвященные 70-летию со дня рождения светлой памяти Католикоса всех армян Гарегина I в Первопрестольном св. Эчмиадзине, 25 августа 2002 г. (с. 41-44).
18. Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в Национальной Академии наук РА, на торжествах, посвященных 70-летию со дня рождения светлой памяти Католикоса всех армян Гарегина I, 23 августа 2002 г. (с. 45-46).
19. Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в Церемониальном зале Резиденции Католикоса на торжествах, посвященных 70-летию со дня рождения светлой памяти Католикоса всех армян Гарегина I, 25 августа 2002 г. (с. 47-48).
20. **АРХИЕПИСКОП ШАГЕ АДЖЕМЯН** – Великий священнослужитель Гарегин I (Доклад на научной конференции Академии Наук) – (с. 49-51).
21. **АРХИЕПИСКОП МЕСРОП АШДЖЯН** – Помянем добрым словом отца Гарегина (Доклад на научной конференции Академии Наук) – (с. 52-59).
22. **ВЛАДИМИР БАРХУДАРЯН** – Научные и культурные заслуги великого церковного деятеля (Доклад на научной конференции Академии Наук) – (с. 60-67).
23. **ВАРДАН ДЕВРИКЯН** - Св. Эчмиадзин в размышлениях Гарегина I в его бытность Католикосом всех армян (Доклад на научной конференции Академии Наук) – (с. 68-72).
24. **ЕПИСКОП НАВАСАРД КЧОЯН** – Мудрый и преданный патриарх (Выступление в Церемониальном зале Резиденции Католикоса) – (с. 73-75).
25. **РАФАЭЛЬ ПАПАЯН** – По случаю 70-летия со дня рождения Католикоса всех армян Гарегина I (Выступление в Церемониальном зале Резиденции Католикоса) – (с. 76-78).

## ПРОПОВЕДИ

26. Проповедь Его Преосвященства епископа Езника Петросяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина, 18 августа 2002 г.

(с. 79-81).
27. Проповедь иеромонаха Торгома Тоникяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина, 11 августа 2002 г. (с. 82-83).
28. Проповедь иеромонаха Савка Шакаряна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина на «Праздник св. Эчмиадзина по видению св. Григория Просветителя», 17 августа 2002 г. (с. 84-85).

## Из культурного наследия прошлого

29. Речь неизвестного автора, посвященная Успению Богоматери (переложение с грабара – Ара Зографяна) – (с. 86-89).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

30. **МАНЕ ШИРИНЯН** – «Дети обета» и «Дети церкви» (научное исследование) – (с. 90-110).
31. **ГЕВОРК ТОСУНЯН** – Древнейший виб лексикографии (научное исследование) – (с. 111-116).
32. **АСМИК БАДАЛЯН** – Миниатюрист Геворк Скевраци (научное исследование) – (с. 117-123).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

33. Освящение обновлённой церкви Мармашена Католикосом Гарегином II, 3 августа 2002 г. (с. 124).
34. Вручение ордена «Св. Нерсеса Шнорали» представителю Англиканской церкви Преподобному Филиппу Стору Вентеру, 14 августа 2002 г. (с. 125).
35. **ДЬЯКОН АРТУР ОГАНИСЯН – В** Первопрестольном св. Эчмиадзине Католикос Гарегин II освятил землю, где будет построено новое здание конгрегации, 31 августа 2002 г. (с. 126).
36. **МАРИАМ ВАРДАНЯН** - Освящение церкви Св. Акопа в Гюмри Католикосом Гарегином II, 28-29 августа 2002 г. (с. 127-130).
37. **ВАРДАН ДЕВРИКЯН** – «Сокровища Св. Эчмиадзина в Вене» (выставка с 16 апреля до 13 июля 2002 г.) – (с. 131-132).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВ. ЭЧМИАДЗИНЕ

38. Сорок учителей Гегаркуника получили право на преподование «Истории Армянской Апостольской церкви», 1 августа 2002 г. (с. 133).
39. Аудиенция у Его Святейшества Гарегина II членов Общества дружбы «Япония-Армения» во главе с его Председателем г-ном Накаджима Хидехару,10 августа 2002 г. (с. 134).
40. Скончался старший священник Акоп Кепенян (1922-2002) – (с. 135).
41. Краткие церковные новости. Информация о святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Св. Эчмиадзине в течение августа 2002 г. (с. 136-137).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN (August 2002)

1. **DEACON VAHE HOVHANNISSIAN** – Visit of Most Reverend Jukka Paarma, Archbishop of the Evangelical Lutheran Church of Finland, to the Mother See of Holy Echmiadzin, August 17-20, 2002, (p. 3-12).
2. **REVEREND FR. HOVAKIM MANUKIAN** – Visit of the Representatives of the National Churches Council of the USA, and the Catholic Bishops Conference to the Mother See of Holy Echmiadzin, August 22-25, 2002, (p. 13-18).

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

3. Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to Supreme Archimandrite Shnorhk Gasparian on the Occasion of His Decoration with the Insignia "St. Gregory the Illuminator", August 6, 2002, no. 101, (p. 19-20).
4. Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to Mr. Masis Eterian on the Occasion of His Decoration with the Insignia "St. Gregory the Illuminator", August 30, 2002, no. 107, (p. 21-22).
5. Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to Mrs. Shake Eterian-Scalene on the Occasion of Her Decoration with the Insignia "St. Gregory the Illuminator", August 30, 2002, no. 108, (p. 23-24).
6. Pontifical Encyclical of His Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Mesrob Krikorian on the Occasion of His Decoration with the Insignia "St. Nerses the Gracious", August 6, 2002, no. 100, (p. 25-26).
7. Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to Very Rev. Fr. Phillip Storr Venter, Representative of the Anglican Church, on the Occasion of His Decoration with the Insignia of "St. Nerses the Gracious", August 12, 2002, no. 103, (p. 27-28).
8. Letter of Blessing of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Suren Gataroyan on the Occasion of the 40[th] Anniversary of His Priesthood and the 25[th] Anniversary of His Service as the Primate of the Diocese of Beria (Aleppo), August 21, 2002, no. 293, (p. 29-30).
9. Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, on the Occasion of the Governmental Decision Recognizing Kevorkian Theological Seminary as an Accredited Institution of Higher Education, August 21, 2002, no. 104, (p. 31-33).
10. Patriarchal Awards (Pontifical Encyclicals, Letters of Blessing, Insignia "Saint Nerses the Gracious", Letters of Appreciation, Honor of Seniority Granted by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, during August, 2002, to the Clergymen and the Laymen Having Rendered Services to the Armenian Church), (p. 34).
11. Letter of Congratulations of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to Mr. Arkady Ghukasian on the Occasion of His

Reelection to the Presidency of the Nagorno-Karabagh Republic. August 12. 2002. (p. 35).
12. Message of Congratulations of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, on the Occasion of the New Academic Year Start. September 1, 2002, (p. 36).
13. Agreement between the Armenian Apostolic Church and the Government of the Republic of Armenia about Teaching the Subject "History of the Armenian Church" in the Public Schools of the Republic of Armenia beginning from January 1, 2003. August 22, 2002, (p. 37).
14. His Holiness Alexy II, Patriarch of Moscow and All Russia, and His Grace George Carey, Archbishop of Canterbury, Expressed Their Support to the Catholicos of All Armenians regarding the Problem of the Property of the Armenian Patriarchate of Jerusalem, August 21, 2002, (p. 38).
15. Upon the Pontifical Order of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, Fr. Khoren Hovhannisian was defrocked, August 8, 2002, (p. 39).

## Ceremonies dedicated to the 70Th Aniversary of Birth of His Holiness Karekin I, Catolocos of All Armenians, of Blessed Memory

16. Solemn Session in the National Academy of Sciences of the Republic of Armenia, Dedicated to the 70th Anniversary of Birth of His Holiness Karekin I Catholicos, of Blessed Memory, August 23, 2002, (p. 40).
17. Ceremonies Dedicated to the 70th Anniversary of Birth of His Karekin I Catholicos, of Blessed Memory, in the Mother See of Holy Echmiadzin, August 25, 2002, (p. 41-44).
18. Speech of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, Delivered during the Solemn Session Held in the National Academy of Sciences of the Republic of Armenia, Dedicated to the 70th Anniversary of Birth His Holiness Karekin I Catholicos, of Blessed Memory, August 23, 2002, (p. 45-46).
19. Speech of His Holiness Karekin II, Supreme Patriarch Catholicos of All Armenians, Delivered during the Ceremony Dedicated to the 70th Anniversary of Birth of His Holiness Karekin I Catholicos, of Blessed Memory, in the Hall of the Catholicosal Residence, August 25, 2002, (p. 47-48).
20. **ARCHBISHOP SHAHE AJEMIAN** – "The Great Clergyman - Karekin I" (Report Made during the Session Held in the National Academy of Sciences of the Republic of Armenia), (p. 49-51).
21. **ARCHBISHOP MESROP ASHJAN** - "The Great Teacher - Karekin I"(Report Made during the Session Held in the National Academy of Sciences of the Republic of Armenia), (p. 52-59).
22. **VLADIMIR BARKHUDARIAN** – "Scientific-Cultural Services of the Great Clergyman (Report Made during the Session Held in the National Academy of Sciences of the Republic of Armenia), (p. 60-67).
23. **VARDAN DEVRIKIAN** – "Holy Etchmiadzin in the Thoughts of Karekin I during the Period of His Reign as the Catholicos of All Armenians" (Report Made during the Session Held in the National Academy of Sciences of the Republic of Armenia), (p. 68-72).

24. **BISHOP NAVASARD KJOYAN** – "The Wise and Devoted Pontiff" (Lecture Delivered during the Session held in the Hall of the Catholicosal Residence), (p. 73-75).

25. **RAFAEL PAPAYAN** – "On the Occasion of the 70th Anniversary of Birth of His Holiness Karekin I, Catholicos of All Armenians" (Lecture Delivered during the Session held in the Hall of the Catholicosal Residence), (p. 76-78).

## SERMONS

26. Sermon Set forth by His Grace Bishop Yeznik Petrossian in the Cathedral of Holy Echmiadzin, August 18, 2002, (p .79-81).

27. Sermon Set forth by Reverend Fr. Torgom Tonikian in the Cathedral of Holy Echmiadzin, August 11, 2002, (p. 82-83).

28. Sermon Set forth by Reverend Fr. Sahak Shakarian in the Cathedral of Holy Echmiadzin: "The Feast of "Shoghakat" of Holy Etchmiadzin according to the Vision of St. Gregory the Illuminator", August 17, 2002, (p. 84-85).

## From the spiritual heritage of the past

29. The Speech Dedicated to the Assumption of St. Mary, the Holy Mother of God, by an Unknown Author (translated from Old Armenian Language by Ara Zohrabian), (p. 86-89).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

30. **MANE SHIRINIAN** - "Children of the Vow" and "Children of the Church" (Investigation), (p. 90-110).

31. **GEVORK TOSUNIAN** – "The Oldest Type of Lexicography" (Investigation), (p. 111-116).

32. **HASMIK BADALIAN** – "The Miniature Painter Kevork of Scevra" (Investigation), (p. 117-123).

## IN THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN AND IN THE DIOCESES

33. Consecration of the Renovated Monastic Complex of the Village Marmashen by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, August 3, 2002, (p. 124).

34. Solemn Ceremony of Granting the Insignia "St. Nerses the Gracious" by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, to Very Rev. Fr. Phillip Storr Venter, Representative of the Anglican Church, August 14, 2002, (p. 125).

35. **DEACON ARTHUR HOVHANNISSIAN** – "Blessing of the Foundation for a New Building for the Members of the Brotherhood of Holy Etchmiadzin by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, in the Mother See of Holy Echmiadzin", August 31, 2002, (p.126).

36. **MARIAM VARDANIAN** – "Consecration of the Church St. Hacop (St. James) of Gumri by His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, August 28-29, 2002, (p. 127-130).
37. **VARDAN DEVRIKIAN** - "Treasures of Holy Echmiadzin in Vienna" (Exhibition Lasting from April 16 to July 13, 2002), (p. 131-132).

## RECEPTIONS IN THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

38. Forty Teachers of Gegharkounik Diocese were Granted Certificates for Teaching the Subject "History of the Armenian Apostolic Church and Religion", August 1, 2002, (p. 133).
39. His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, Received the Members of Japan-Armenia Friendship Union headed by Mr. Nakajima Hideharu, President of the Union, August 10, 2002, (p. 134).
40. Passing away of the Senior Priest Hacob Kepenian (1922-2002), (p. 135).
41. Brief Church News. Information about Divine Liturgies, Sermons Set forth in the Cathedral of the Mother See of Holy Echmiadzin and Other Festivities Held in the Mother See of Holy Echmiadzin during August, 2002. (p. 136-137).

# "ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (Août 2002)

1. **DIACRE VAHE HOVHANNISSIAN** – Visite de Jukka Paarma, Archevêque de l'Eglise Evangélique-Luthérienne de Finlande au Saint-Siège d'Etchmiadzine, 17-20 août 2002 (p. 3-12).
2. **REVEREND FR. HOVAKIM MANOUKIAN** – Les représentants de la conférence du Conseil des Eglises nationales des Etats-Unis d'Amérique et des évêques catholiques au Saint-Siège d'Etchmiadzine, 22-25 août 2002 (p.13-18).

## ENCYCLIQUES PONTIFICALES ET LETTRES DE BENEDICTION

3. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, au Révérend Chnorhk Gasparian, archimandrite supreme, à l'occasion de sa décoration de l'ordre de «St. Grégoire l'Illuminateur», 6 août 2002, no.101 (p.19-20).
4. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à M. Massis Etérian, à l'occasion de sa décoration de l'ordre de «St. Grégoire l'Illuminateur», 30 août 2002, no.107 (p.21-22).
5. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Mme Chaké Etérian-Scalene, à l'occasion de sa décoration de l'ordre de «St. Grégoire l'Illuminateur», 30 août 2002, no.108 (p.23-24).
6. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'archevêque Mesrop Grigorian a l'occasion de sa décoration de l'ordre de «St. Nerses Chnorhali», 6 août 2002, no.100 (p.25-26).
7. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, au Révérend Philip Store Venter, représentant de l'Eglise Anglicane, à l'occasion de sa décorationde l'ordre de «St. Nerses Chnorhali», 12 août 2002, no.103 (p.27-28).
8. Message de bénédiction de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'archevêque Souren Gataronian à l'occasion du 40e anniversaire de son sacerdoce et du 25e anniversaire de sa primatie au Diocèse de Béria (Alep), 21 août 2002 (p.29-30).
9. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la décision du Gouvernement de la République d'Arménie reconnaissant au Séminaire Guévorkian le statut d'école supérieure, 21 août 2002, no. 104 (p.31-33).
10. Distinctions patriarcales (encycliques, lettres de bénédiction, ordre de «St. Nerses Chnorhali», accordés au cours du mois d'août 2002 à des personnalités ecclésiastiques et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne) – (p.34).

11. Message de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à M. Arkadi Ghoukassian à l'occasion de sa réélection au poste de Président de la République du Haut-Karabagh, 12 août 2002 (p.35).
12. Message de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion du commencement de l'année scolaire, 1[er] septembre 2002 (p.36).
13. Accord entre l'Eglise Apostolique arménienne et le Gouvernement de la RA, concernant l'enseignement de la matière Histoire de l'Eglise arménienne dans les écoles de la République d'Arménie, 22 août 2002 (p.37).
14. Sa Sainteté Alexy II, Patriarche de Moscou et de toute la Russie, et Son Eminence l'Archevêque de Canterbury ont exprimé à Sa Sainteté Garéguine II leur soutien concernant les terres appartenant au Patriarcat arménien de Jérusalem, 21 août 2002 (p.38).
15. Par autorité de Sa Sainteté Garéguine II, le Fr. Khoren Hovhannissian a été défroqué, 8 août 2002 (p.39).

## Cérémonies consacrées au 70[e] anniversaire de la naissance de Garéguine I[er], Catholicos de tous les Arméniens, de radieuse mémoire

16. Réunion solennelle à l'Académie Nationale des Sciences d'Arménie, consacrée au 70[e] anniversaire de la naissance de Garéguine I[er], Catholicos de tous les Arméniens, de radieuse mémoire, 23 août 2002 (p.40).
17. Cérémonies consacrées au 70[e] anniversaire de la naissance de Garéguine I[er], Catholicosde tous les Arméniens, de radieuse mémoire, à la Salle de cérémonies du Saint-Siège, 25 août 2002 (p.41-44).
18. Intervention de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'Académie Nationale des Sciences d'Arménie, à la Réunion solennelle, consacrée au 70[e] anniversaire de la naissance de Garéguine I[er], Catholicos de tous les Arméniens, de radieuse mémoire, 23 août 2002 (p.45-46).
19. Intervention de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, consacrée au 70[e] anniversaire de la naissance de Garéguine I[er], Catholicos de tous les Arméniens, de radieuse mémoire, à la Salle de cérémonies de la Résidence du Catholicos (p.47-48).
20. **ARCHEVEQUE CHAHE ADJEMIAN** – Garéguine I[er], un grand homme d'Eglise (Exposé à la Conférence de l'Académie Nationale des Sciences d'Arménie (p.49-51).
21. **ARCHEVEQUE MESROP ACHDJIAN** – A la radieuse mémoire du Catholicos Garéguine (Exposé à la Conférence de l'Académie Nationale des Sciences d'Arménie (p.52-59).
22. **VLADIMIR BARKHOUDARIAN** – Le mérite scientifique et culturel du grand homme d'Eglise (Exposé à la Conférence de l'Académie Nationale des Sciences d'Arménie (p.60-67).
23. **VARDAN DEVRIKIAN** – Saint-Etchmiadzine dans les pensées de Garéguine I[er] lors de son pontificat (Exposé à la Conférence de l'Académie Nationale des Sciences d'Arménie (p.68-72).

24. **EVEQUE NAVASSARD KEDJOYAN** – Catholicos sage et dévoué (Intervention à la Salle de cérémonies de la Résidence du Catholicos (p.73-75).
25. **RAPHAEL PAPAYAN** – A l'occasion du 70ᵉ anniversaire de Garéguine Iᵉʳ, Catholicos de tous les Arméniens (Intervention à la Salle de cérémonies de la Résidence du Catholicos (p.76-78).

## SERMONS

26. Sermon prononcé par Son Eminence l'évêque Ezmik Pétrossian à la Cathédrale de St.-Etchmiadzine, 18 août 2002 (p.79-81).
27. Sermon prononcé par le Révérend Fr. Torgom Tonikian à la Cathédrale de St.-Etchmiadzine, 11 août 2002 (p.82-83).
28. Sermon prononcé par le Révérend Fr. Sahak Chakarian à la Cathédrale de St.-Etchmiadzine à l'occasion de «la Fête de Saint Etchmiadzine d'après la Vision de Saint Grégoire l'Illuminateur», 17 août 2002 (p. 84-85).

## L'héritage spirituel du passé

29. Discours d'un auteur inconnu, consacré à la Dormition de la Vierge (traduction du grabar par Ara Zohrabian) – (p.86-89).

## ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES

30. **MANE CHIRINIAN** – «Les Enfants du vœu» et les «Enfants de l'Eglise» (recherche scientifique) – (p.90-110).
31. **GHEVORK TOSSOUNIAN** – Le type le plus ancien de la lexicographie (recherche scientifique) – (p.111-116).
32. **HASMIK BADALIAN** - L'enlumineur Guévork Skévratsi (recherche scientifique) – (p.117-123).

## AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

33. Bénédiction de l'église remise à neuf de Marmachen par le Catholicos Garéguine II, 3 août 2002 (p.124).
34. Remise de l'ordre de «St. Nerses Chnorhali», au Révérend Philip Store Venter, représentant de l'Eglise Anglicane, par le Catholicos Garéguine II, 14 août 2002 (p.125).
35. **DIACRE ARTHUR HOVHANNISSIAN** – Bénédiction du sol du futur bâtiment de la congrégation du Saint-Siège d'Etchmiadzine par le Catholicos Garéguine II, 31 août 2002 (p.126).
36. **MARIAM VARDANIAN** – Bénédiction de l'église St.-Hacop de Gumri par le Catholicos Garéguine II, 28-29 août 2002 (p.127-130).
37. **VARDAN DEVRIKIAN** – «Les Trésors de Saint-Etchmiadzine» à Vienne (Exposition du 16 avril au 13 juin 2002) – (p.131-132).

## AUDIENCES AU SAINT- SIEGE

38. Quarante instituteurs de Guégharkounik sont titulaires de la licence pour enseigner l'Histoire de l'Eglise Apostolique arménienne et de la religion. 1er août 2002 (p.133).
39. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à la délégation des membres de l'Association pour «L'amitié Japon - Arménie», menée par M. Nakajima Hidéharu, Président de l'Association, 10 août 2002 (p.134).
40. Décès du Révérend protoprêtre Hacop Képérian, (1922-2002) – (p.135).
41. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine au mois d'août 2002 (p.136-137).

[1000 գր.]


ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"**
**Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie**

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ